

1686

С. П. Р.
45444740

$\frac{225}{\alpha - 76}$

1914

2010

ՆՈՐ

ԿՏԱԿԱՐԱՆ

ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

ՅՈՒՆԱԿԱՆ ԲՆԱԳՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԱԾ

Խառ 28300

Rusi

A. B. S.

47,000

02224

Mon - 9 - 5

ԿՈՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

1914

ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԵՈՍԻ

ԳԼՈՒԹ Ա

Գրքը ճննդեան Յիսուսի Բրիտանոսի, Դաւիթի որդւոյն, Աբրահամի որդւոյն:

2 - Աբրահամ ծնաւ Իսահակը. Իսահակ ծնաւ Յակոբը. Յակոբ ծնաւ Յուդան ու անոր եղբայրները. 3 - Յուդա ծնաւ Փարէսը ու Զարան Թամարէ. Փարէս ծնաւ Եսրոնը. Եսրոն ծնաւ Արամը. 4 - Արամ ծնաւ Ամինադարը. Ամինադար ծնաւ Կաստոնը. Կաստոն ծնաւ Սաղմոնը. 5 - Սաղմոն ծնաւ Բոսոր Արաբալէ. Բոսո ծնաւ Ովբէզը Հաութէ. 6 - Ովբէզ ծնաւ Յեսոսէն. Յեսոս ծնաւ Դաւիթ Թագաւորը. Դաւիթ Թագաւորը ծնաւ Սողոմոնը Աւրիայի կնոջմէն. 7 - Սողոմոն ծնաւ Բորզամբ. Բորզամբ ծնաւ Արիան. 8 - Արիա ծնաւ Ասան. Ասա ծնաւ Յովտափաոր. Յովտափաոր ծնաւ Յովրամը. Յովրամ ծնաւ Ազիան. 9 - Ազիա ծնաւ Յովամբամբ. Յովամբամբ ծնաւ Աբագը. Աբագ ծնաւ Եղեկիան. 10 - Եղեկիա ծնաւ Մանասէն. Մանասէն ծնաւ Ամոնը. 11 - Ամոն ծնաւ Յովսիան. Յովսիա ծնաւ Յեքոնիան ու անոր եղբայրները Բարեյոնեան գերութեան տակները. 12 - Բարեյոն գերութեան երթալնէն ետե Յեքոնիա ծնաւ Սաղաթիէլը. 13 - Սաղաթիէլ ծնաւ Զորարաբէլը. Զորարաբէլ ծնաւ Աբիուդը. Աբիուդ ծնաւ Եղիակիմը. 14 - Եղիակիմ ծնաւ Ազովրը. Ազովր ծնաւ Սաղովկը. Սաղովկ ծնաւ Աբինը. Աբին ծնաւ Եղիուզը. 15 - Եղիուզ ծնաւ Եղիազարը. Եղիազար ծնաւ Մատթանը. 16 - Մատթան ծնաւ Յակոբը. Յակոբ ծնաւ զՅովսէփ, զյոյրն Մարիամայ, որմէ ծնաւ Յիսուս, որ կ'ըսուի Բրիտանոս: 17 - Արդ բոլոր ազգերը Աբրահամէ մինչև Դաւիթ տասներջորս ազգ, և Դաւիթէ մինչև Բարեյոնեան գերութիւնը տասներջորս ազգ, ու Բարեյոնեան գերութեան մինչև Բրիտանոս տասներջորս ազգ:

18 - Եւ Յիսուսի Բրիտանոսի ծնունդը այս կերպով էր. անոր մայրը Մարիամ

Յովսէփի նշանուած, զեւ իրարու քով չեկած՝ Սուրբ Հոգին յղացած գտնուեցաւ: 19 - Եւ Յովսէփ անոր այլը արդար չուր ըլլալով ու չուզելով որ զանկա խայտառակ ընէ, մտածեց որ ծածկարար արձակէ զանկիւս: 20 - Եւ քանի որ անկա այս բառ կը մտածէր, ահա Տէրօջը Տրեշտակը երազի մէջ երեցաւ անոր ու ըսաւ, Յովսէփ, Դաւիթի որդի, մի վախնար ընդի առնել թաւ Մարիամ կինդ, զան զի անոր ներսիդին ծնածը Սուրբ Հոգին է: 21 - Եւ որդի մը պիտի ծնանի, ու անոր անունը Յիսուս զնեւ, զանդի առնկա իր ժողովուրդը իրենց մեղքերէն պիտի փրկէ: 22 - Եւ այս ամէնը եղաւ, որպէս զի կատարուի Տէրօջէն ըսուածը մարգարէին ձեռքով, որ կ'ըսէ, 23 - Ահա կոյսը պիտի յղանայ ու որդի պիտի ծնանի, և անոր անունը Իմ մանուէլ պիտի կոչեն, որ կը թարգմանուի Աստուած մեզի հետ: 24 - Եւ Յովսէփ թուէն արթննալով ինչպէս Տէրօջը Տրեշտակը իրեն հրամայեց, առաջ ըրաւ ու իր կինը քովն առաւ: 25 - Եւ չէր գիտեր զանկիւս մինչև իր անդամիկ որդին ծնալ, ու անոր անունը Յիսուս դրաւ:

ԳԼ. Բ

Ու երբ Յիսուս ծնաւ Հրեաստանի Բեթլէհէմին մէջ Հերովդէս Թագաւորին օրերը, ահա արեւելքէն մտեր եկան Երուսաղէմ՝ 2 - Աւ ըօին, Ո՛ւր տեղ է ան՝ որ Հրեաներուն թագաւոր ծնաւ. զան զի մենք արեւելքի մէջ անոր ստորը տեսանք, ու եկանք անոր երկրպագութիւն ընելու: 3 - Աւ երբ Հերովդէս թագաւորը լսեց, խռովեցաւ, և բոլոր Երուսաղէմ իրեն հետ: 4 - Եւ ժողովելով բոլոր քահանայապետները ու ժողովուրդին գաղտնիքը, հարցուց անոնց թէ Բրիտանոս ո՞ր պիտի ծնանի: 5 - Անոնք ալ իրեն ըսին, Հրեաստանի Բեթլէհէմին մէջ. զան զի

*Այ-Ի-Ի, Փրկիչ



2985-88

108 121 - 42

այսպէս գրուած է մարգարեին ձեռքով. 6 - Եւ դուք, ինթիւնէ՛՛հէմ: Յուրայի երկիրը, Յուրայի իշխաններուն մէջ բնաւ պատիկ մը չես. վասն զի քեզմէ իշխան մը պիտի ելլէ որ իմ Խորայէլ ժողովուրդս պիտի հովուէ: 7 - Այն ատեն Հերովդէս ծածկաբար մագերէ կանչեց, ու ստուգեց աննցմէ աստղին երեցած ատենը: 8 - Եւ զաննք ինթիւնէ՛՛հէմ զրիկով ըսաւ, Գացք ստոյգը իմացէք այն մանուկին վրայով, ու երբ գտնէք, ինծի իմացուցէք, որպէս զի ես այ դամ, անոր երկրբազաւթիւն ընեմ: 9 - Աւ երբ աննք թագաւորէն այս Բաւլ լսեցին, զացին. և ահա այն աստղը զոր արեւելքի մէջ տեսեր էին, աննց առջևէն գնաց, մինչև եկաւ կեցաւ մանուկին եղած տեղին վրայ: 10 - Երբ տեսան աստղը, շատ մեծ ուրախութիւնով ուրախացան: 11 - Եւ ասնք մանկով տեսան մանուկը իր մօրը Մարիամի հետ, ու ինկան երկրպագութիւն ըրին անոր, և իրենց գանձերը բանալով ընծաներ տաւին անոր, սակի ու կնիքուկ և զմուսու: 12 - Աւ հրաման աննելով երազի մէջ, որ նորէն Հերովդէսի չդատնան, ուրիշ ճամբով գացին իրենց երկիրը:

13 - Աւ երբ անկէ գացին աննք, ահա Տէրոջը հրեշտակը երազի մէջ երեցաւ Յովսէփի ու ըսաւ, Ելի՛ր, առ մանուկը ու անոր մայրը, ու Եգիպտոս փախիր, և հոն կեցիր մինչև ես քեզի ըսեմ, քանզի Հերովդէս պիտի փնտռէ այդ մանուկը կորսնցնելու համար: 14 - Ան այլ ելաւ, մանուկը ու անոր մայրը զիշերով առաւ և գնաց Եգիպտոս, ու մինչև Հերովդէսի մահը հոն էր: 15 - Որպէս զի կատարուի Տէրոջմէն բուսածը մարգարեին ձեռքով, որ կ'ըսէ, Եգիպտոսէ կանչեցի իմ որդիս: 16 - Այն ատեն երբ տեսաւ Հերովդէս թէ Խարուեցաւ մոգերէն, սաստիկ որդողեցաւ, ու զրիկց ջարդեց ինթիւնէ՛՛հէմի և անոր ամէն սահմաններուն մէջ գտնուած բոլոր տղաքը՝ երկու տարեկան և առջև վար, այն ժամանակին համեմատ զոր մոգերէն ստուգեց: 17 - Այն ատեն կատարուեցաւ Երեմիա մարգարեին ձեռքով ըսուածը, որ կ'ըսէ, Ռամայի մէջ ձայն մը

լսուեցաւ, որը, լաց ու մեծ կոծ. 18 Ռաբէլ կուրար իր տղաքը համար, չէր ուզէր միթէտրուիլ, վասն չկային:

19 - Աւ երբ Հերովդէս մեռաւ, ահ Տէրոջը հրեշտակը Եգիպտոս երազի մէջ Յովսէփի երեցաւ, 20 - Աւ ըսաւ, Ելի՛ր առ մանուկը ու անոր մայրը, և գն Ռարայէլի երկիրը, քանզի մեռան աննք որ մանուկին կեանքը կը փնտռէին: 21 - Ան այլ ելաւ, մանուկը ու անոր մայրը առաւ և եկաւ Ռարայէլ երկիրը: 22 - Իսկ երբ լսեց թէ Արքեղայոս թագաւորեց Հրեաստանի վրայ իր Տօրը Հերովդէսի տեղ, վտանգաւ հո երթալու, ու երազի մէջ պատգամ տա նելով Գայիելայի կողմը գնաց: 23 - Եւ եկաւ Նազարեթ բուսած քաղաքը բնակեցաւ, որպէս զի մարգարէներուն խօսքը կատարուի թէ Նազովրեցի պիտի կոչուի:

ԳԼ. Գ.

Այն օրերը Յովհաննէս մկրտիչը եկաւ, ու Հրեաստանի անապատին մէջ կը քարոզէր, 2 - Ան կ'ըսէր, Ապաշտուրեցէք, վասն զի երկինքի թագաւորութիւնը մօտեցած է: 3 - Վասն զի ապիկա ան է որու համար Եսայի մարգարեին ձեռքով ըսուեցաւ, որ կ'ըսէ, Անապատի մէջ կանչողին ձայնը, Տէրոջը ճամբան պատրաստեցէք, անոր շաւիղները շիտկեցէք: 4 - Եւ այս Յովհաննէսը իր հանդերձը ուղտի մազէ, ու իր մէջը կաշիէ գօտի ունէր. և իր կերակուրը մարսիս ու վայրենի մեղք էր: 5 - Այն ատեն Երուսողէմ և բոլոր Հրեաստան ու Յորդանանու բոլոր կողմեր իրեն կ'ելլէին, 6 - Եւ կը մկրտուէին իրմէ Յորդանանու մէջ, ու իրենց մեղքերը կը խոտովանէին: 7 - Աւ երբ տեսաւ փարիսեցիներէն ու սադուկիսիներէն շատերը իր մկրտութեանը եկած, ըսաւ աննց, Ի՞ժերու ծնունդներ, ո՞վ իմացուց ձեզի գայու բարկութեանէ փախչիլ: 8 - Ուրեմն ապաշտարութեան արժանաւոր պտուղ բերէք: 9 - Եւ մի խորհիւր զուք ձեր ներսիդին ըսել, թէ Մենք Ժոզ Տայր՝ Աբրահամը ունինք. քանզի կ'ըսեմ ձեզի որ Աստուած կարող է այս քարեկան Սքրահամի որդիներ հանել: 10 - Այլ հիմա կացինը ծառերուն արմատին քով կը

*Գ.Ն. ծաղրուեցաւ

գրուի. ուստի ամէն ծառ որ բարի պտուղ չըրեր, կը կտրուի ու կրակը կը ձգուի: 11 - Ես ձեզ ջրով կը մկրտեմ՝ ապաշտարութեան համար, բայց իմեակեւ եկողը ինձմէ զօրաւոր է, ու ես անոր կօշիկները կըրել տրժանի չեմ: անիկա ձեզ պիտի մկրտէ Հողուով Սքրով ու կրակով: 12 - Որուն հեծանացը իր ձեռքն է, և իր կայր պիտի մտքէ ու իր ցորենը համարը պիտի ժողով, և յարդը պիտի սյրէ չմարող կրակով:

13 - Այն ատեն Յիսուս Գալիլեայէ Յորդանանու եկաւ Յովհաննէսի, որպէս զի անկէ մկրտուի: 14 - Եւ Յովհաննէս կ'արգիկէր զանիկա ու կ'ըսէր, Ինձի՛ պիտի է որ քեզմէ մկրտուիմ, ու դուն ինձի՛ կուգաս: 15 - Յիսուս պատասխան տուաւ ու ըսաւ անոր, Թող տար հիմա, վասն զի այսպէս կը վայելէ մեզի որ բոլոր արգարութիւնը կատարենք. ետքը թող առաւ անոր: 16 - Աւ երբ Յիսուս մկրտուեցաւ, շուտ մը ջուրէն գուրս ելաւ, և ահա երկինքը անոր բացուեցաւ, ու տեսաւ Աստուծոյ Հոգին որ տղանիկ պէս կ'իջնէր, ու կու գար իր վրայ: 17 - Եւ ահա երկինքէն ձայն մը ելաւ՝ որ կ'ըսէր, Ասիկա է իմ սիրելի Որդիս, որու հաւանք եմ:

ԳԼ. Գ.

Այն ատեն Յիսուս անապատը տարուեցաւ Սաւրէ Հոգիէն, որպէս զի Սասանայէ փորձուի: 2 - Եւ քառասուն ցորեկ ու քառասուն զիշեր ծոմ պահելէն Լաքը անթիւեցաւ: 3 - Եւ փորձողը անոր մօտենալով ըսաւ, Եթէ՛ գուն Սասուծոյ Որդին ես, բոկ որ այս քարերը հաց ըլլան: 4 - Անիկա պատասխան տուաւ ու ըսաւ, Գրուած է թէ՛ Ոչ միայն հացով կ'ուպրի մարդ, հասցաւ այն ամէն խօսքով՝ որ Աստուծոյ բերնէն կ'ելլէ: 5 - Այն ատեն Սասանայ առաւ տարաւ զանիկա ուրը քաղաքը, և կայնեցուց զանիկա քառաւորն աշտարակին վրայ, 6 - Աւ ըսաւ անոր, Եթէ՛ գուն Աստուծոյ Որդին ես, քեզ առջև վար ձգէ, վասն զի գրուած է թէ՛ Իր հրեշտակներուն պիտի ապսպրէ քեզի համար, ու ձեռքերնուն վրայ պիտի վերցնեն քեզ, որպէս զի ըլլույ թէ՛ ստորք քարի զարնեա: 7 - Յիսուս ըսաւ

անոր, Դարձեալ գրուած է թէ՛ ՔուՏեր Աստուածդ չփորձու:

8 - Սասանայ նորէն առաւ հանեց զանիկա ինստ բարձր լեռան մը վրայ, և ցուցուց անոր աշխարհի բոլոր թագաւորութիւնները ու աննց փառքը: 9 - Աւ ըսաւ անոր, Աստիք ամէնք քեզի կուտամ, եթէ՛ քո ինստ ինձի երկրպագութիւն ընես: 10 - Այն ատեն Յիսուս ըսաւ անոր, [Ետիս] գնա, Սասանայ, վասն զի գրուած է թէ՛ ՔուՏեր Աստուծոյդ երկրպագութիւն ընես, ու միայն զանիկա պաշտես: 11 - Այն ատեն Սասանայ զանիկա թողուց. և ահա հրեշտակներ եկան ու անոր սպասուորութիւն կ'ընէին:

12 - Եւ երբ լսեց Յիսուս թէ Յովհաննէս մանուկեցաւ, էլ լու գնաց Գալիլեա, 13 - Աւ ձգելով Նազարեթը, եկաւ բնակեցաւ Կափառնայոսմ, ծովեզերեայ +առաջ, Զարուզոնի ու Նեփթաղի մի սահմաններուն մէջ: 14 - Որպէս զի կատարուի Եսայի մարգարեին ձեռքով ըսուած խօսքը, 15 - Զարուզոնի երկիրը ու Նեփթաղի երկիրը, ծովը ճամբով Յորդանանու անդի կողմը, Հիթանոսաց Գալիլեան: 16 - Խաւարի մէջ նստող ժողովուրդը մեծ լոյս տեսաւ, և լոյս ծաղկեցաւ աննց՝ որնք մահուան երկրին ու շուքին մէջ կը նստէին: 17 - Անկէ ետեւ Յիսուս սկսաւ քարոզել ու բռնի, Ապաշտարեցէք, վասն զի երկինքի թագաւորութիւնը մօտ է:

18 - Երբ Յիսուս Գալիլեացուց ծովուն քովը կը պարտէր, տեսաւ երկու եղբայրներ, Պետրոս կոչուած Արմանը և անոր եղբայրը Անդրէասը, որնք ծովը ուսկան կը ձգէին, վասն զի ձկնորս էին: 19 - Եւ ըսաւ աննց, Իմեակեւ կեկէք, ու ձեզ մարդոց որսորդ ընեմ: 20 - Աննք ալ շուտ մը ուսկանները թողուցին ու անոր ետեւէն գացին: 21 - Եւ անկէ յառաջ ելթալով տեսաւ ուրիշ երկու եղբայրներ, Զեբեդեան Յակոբոսը ու անոր եղբայրը Յովհաննէսը, նուազ մէջ իրենց Տօրը Զեբեդեոսի հետ, երբ իրենց ուսկանները կը կորհալէին. ու կանչեց զաննք: 22 - Աննք ալ շուտ մը նսւք ու հայրերին թողուցին ու անոր ետեւէն գացին: 23 - Եւ Յիսուս բոլոր Գալիլեա պարտեղք քարի զարնեա: 7 - Յիսուս ըսաւ

րաններուն մէջ, և արքայութեան աւետարանը կը քարոզէր, ու ժողովուրդին մէջի ամէն կերպ հիւանդութիւնները ու ամէն կերպ ցաւերը կը բժշկէր: 24 - Եւ անոր համարը բարձր Սուրբա տարածուեցաւ, և բերին անոր բոլոր հիւանդները որոնք կերպ կերպ ցաւերով ու ամանջանքներով կը նեղուէին, և դիւահայերը ու լուսնասները և անգամայնները, ու բժշկէց զանոնք: 25 - Եւ շատ ժողովուրդներ անոր ետեւէն կ'երթային, Գալիլեայէ ու Գեկապոլիսէ և Երուսաղէմէ ու Հրէաստանէ և Յորդանանու անդի կողմէն:

ԳԼ Ե

Եւ տեսնելով ժողովուրդները, լեւաբ ելաւ. ու երբ նստաւ հռն, իր աշակերանները քովը գացին. 2 - Եւ իր բերանը բանալով կը սորվեցնէր անոնց ու կ'ըսէր,

3 - Երանի՛ հոգւով աղբատներուն, վասն զի երկինքի թագաւորութիւնը անոնցն է: 4 - Երանի՛ սգաւորներուն, վասն զի անոնք պիտի միեթարուին: 5 - Երանի՛ հեղեղուն, վասն զի անոնք պիտի ժառանգեն երկիրը: 6 - Երանի՛ անոնց որ անօթի ու ծարաւ են սրգարութեան, վասն զի անոնք պիտի կշտանան: 7 - Երանի՛ ողորմածներուն, վասն զի անոնք ողորմութիւն պիտի գտնեն: 8 - Երանի՛ անոնց որ սրտով մտքուր են, վասն զի անոնք պիտի տեսնեն զԱստուած: 9 - Երանի՛ խաղաղութիւն ընողներուն, վասն զի անոնք Աստուծոյ որդիներ պիտի կոչուին: 10 - Երանի՛ անոնց որ հալածուած են սրգարութեան համար, վասն զի երկինքի թագաւորութիւնը անոնցն է: 11 - Երանի՛ է՛ ձեզի, երբ կը նստատեսն ձեզ ու կը հալածեն, և սառ տեղը ամէն կերպ գէշ խօսքեր կը խօսին ձեր վրայ ինծի համար: 12 - Տի՛մացէք և ուրախ եղէք, վասն զի ձեր վարձքը շատ է երկինքը: քանզի այս կերպով հայածեցին ձեզմէ առաջ եղած մարգարէները:

13 - Ի՞նչ էք երկրի աղբ. ապա եթէ աղբ իր համը երկրոցնէ, ինք ինչո՞վ պիտի աղուի. անկէ ետեւ բանի մը չգար, միայն թէ՛ դուրս ձգուելու և մարդոց ստրին տակ կոխուելու: 14 - Ի՞նչ էք աշխարհի լոյսը. քաղաք մը որ լեւուս վրայ կ'եցած է, կ'ընար պահ-

ուել: 15 - Ու ճրագը չեն վաւեր և դներ գրուանի տակ, հապա աշտանակի վրայ, և լոյս կուտայ բոլոր տանը մէջ եղողներուն: 16 - Այնպէս թող լուսաւորէ ձեր լոյսը մարդոց առջև, որ տեսնեն ձեր բարի գործերը, ու փառաստանեն ձեր Հայրը որ երկինքն է:

17 - Մի կարծէք թէ ես եկայ որէնք կամ մարգարէները աւերու. չեկայ աւերու, հապա կատարելու: 18 - Քանզի ճշմարտագուս կ'ըսեմ ձեզ, Մինչև երկինք ու երկիր անցնին, որէնքէն յովս մը կամ Նշանագիր մը պիտի չանցնի, մինչև բոլորն ալ կատարուին: 19 - Ուստի ով որ այս ամենափոքր պատուիրանքներէն մէկը աւերէ, ու մարդոց այնպէս սորվեցնէ, անիկա ամենափոքր պիտի կոչուի երկինքի թագաւորութեանը մէջ. բայց ով որ ընէ և սորվեցնէ, անիկա մեծ պիտի կոչուի երկինքի թագաւորութեանը մէջ: 20 - Քանզի կ'ըսեմ ձեզի, եթէ ձեր արգարութիւնը դպիրներուն ու փարիսեցիներուն արդարութեան աւերէ չըլլայ, բնաւ պիտի չմտնէք երկինքի թագաւորութիւնը:

21 - Լսե՛ր էք որ բուռեցաւ առաջիններուն, Ապանութիւն մի ընէր. և ով որ սպանութիւն ընէ, դատաստանի պարտաւոր պիտի ըլլայ: 22 - Բայց ես ձեզի կ'ըսեմ, Ով որ իր եղբորը պարագ տեղը սրդողի, դատաստանի պարտաւոր պիտի ըլլայ: և ով որ իր եղբորը Յիմար բռնէ, տեսանի պարտաւոր պիտի ըլլայ. և ով որ էր եգիպտացի, գեհէնի կրակին պարտաւոր պիտի ըլլայ: 23 - Ուրեմն, եթէ քու ընծադ սեղանին վրայ բերես, ու հոն միտքդ գայ թէ քու եղբայրդ քեզի դէմ ըսմ մը ունի, 24 - Հոն ձգէ քու ընծադ սեղանին առջև, և դնաւ առաջ եղբորդ հետ հաշտուէ, ու ետքը եկուր որ քու ընծադ մատուցանես: 25 - Քու սուխիդ հետ շատով միարանէ, քանի որ անոր հետ շատուսն մէջ ես. չըլլայ որ քու սուխդ քեզ դատաստան մտնէ, և դատաւորը դահիճին, և բանալը ձգուի: 26 - Ճշմարիտ կ'ըսեմ քեզ, Պիտի չելլես անկէ՛ մինչև որ վերջնաւարարակիւր չմկճարես:

27 - Լսե՛ր էք որ բուռեցաւ, Ենթութիւն մի ընէր: 28 - Բայց ես ձեզի

*Որան + կ'աւելցնեն, առաջիններուն

կ'ըսեմ, Ով որ կին մարդու կը նայի անոր ցանկանայու համար, ալ անիկա իր սրտին մէջ շնութիւն բրտաւ անոր հետ: 29 - Արդ եթէ քու աջ աչքդ քեզ կը գայթակղեցնէ, հանէ զանիկա ու քեզ մէ ձգէ. վասն զի աղէկ է քեզի որ անդամներէդ մէկը կորսուի, ու քու բոլոր մարմինդ դժոխքը չձգուի: 30 - Եւ եթէ աջ ձեռքդ քեզ կը գայթակղեցնէ, կտրէ զանիկա ու քեզմէ ձգէ. վասն զի աղէկ է քեզի որ անդամներէդ մէկը կորսուի, ու քու բոլոր մարմինդ դժոխքը չձգուի: 31 - Իւս, բուռեցաւ թէ Ով որ իր կինը կ'արձակէ, թող անոր արձակման թուղթ տայ. 32 - Բայց ես ձեզի կ'ըսեմ թէ Ով որ իր կինը կ'արձակէ առանց պատուութեան պատճառի, ինք պատճառ կ'ըլլայ անոր շնութիւն ընելուն, և ով որ այն արձակուածը առնէ, շնութիւն կը գործէ:

33 - Իարձեալ յսեր էք որ բուռեցաւ առաջիններուն, Սուա երգում մի ըներ, հապա բրած երգումներդ վճարէ Տերաջը: 34 - Բայց ես ձեզի կ'ըսեմ, Անեւնին երգում մի ընէք, ոչ երկինքի վրայ՝ որ Աստուծոյ արժանէ, 35 - Եւ ոչ երկրի վրայ՝ որ անոր ոտքերուն պատուանդանն է, ոչ ալ Երուսաղէմի վրայ՝ որ մեծ թողաւորին քաղաքն է: 36 - Եւ սուք զիտուդ վրայ երգում ընես, վասն զի չես կրնար մէկ մտղ ձերմկցնել կամ սեղնել: 37 - Հապա ձեր խօսքը ըլլայ այնն՝ այր, ե- ոչը՝ ոչ. ու ասկէ աւելին չարեն յառաջ կուգայ:

38 - Լսե՛ր էք որ բուռեցաւ, Աչքի տեղ աչք, ու ախալի տեղ ախալ: 39 - Բայց ես ձեզի կ'ըսեմ, Չարին հալաւակ մի կենաք, հապա եթէ մէկը ապասկ մը գարնէ աջ ձեռքիդ, դարձուր անոր միւսն ալ: 40 - Եւ մէկը որ կ'ուզէ քեզի հետ դատ վարել ու քու շապիկդ առնել, թող անոր անոր աս վերարկուդ ալ: 41 - Եւ ով որ քեզ պահակ ընէ ու մշոն մը ճամայ քէ, զնա անոր հետ երկու: 42 - Բեզմէ ուղղին տուր, ու երես մի դարձներ անկէ՛ որ կ'ուզէ քեզմէ փոխ առնել:

43 - Լսե՛ր էք որ բուռեցաւ, Քու ընկերք սերես ու թշնամիդ ստուր: 44 - Բայց ես ձեզի կ'ըսեմ, Մերեցէք ձեր թշնամիները, օրհնեցէք ձեզ անիծողները, բարի բրէք անոնց որ ձեզ կ'ատեն, և աղօթք բրէք անոնց համար որ

ձեզ կը չարչրկեն ու կը հայածեն: 45 - Որպէս զի ձեր երկնաւոր Հօրը որդիներն ըլլաք. վասն զի իր արեւը կը ծագեցնէ թէ՛ չարերուն և թէ՛ բարիներուն վրայ, և անձրև կը դրկէ թէ՛ արգարներուն և թէ՛ մեղաւորներուն վրայ: 46 - Վասն զի եթէ դուք ձեզ սիրողները սիրէք, ինչ վարձք կ'ունենաք. չէ՛ որ մտքաւորներն ալ նոյնը կ'ընեն: 47 - Եւ եթէ միայն ձեր եղբայրներուն բարեւ տայք, ինչ աւելի կ'ընէք - արէ՛նքէն. չէ՛ որ մտքաւորներն ալ նոյնը կ'ընեն: 48 - Ուրեմն դուք կատարեալ եղէք, ինչպէս ձեր երկնաւոր Հայրն ալ կատարեալ է:

ԳԼ Զ

Չգայջ եղէք որ ձեր ողորմութիւնը մարդոց առջև չընէք՝ անոնց երեւնայու համար, եթէ ոչ՝ վարձք չէք առնէր ձեր Հօրմէն որ երկինքն է: 2 - Ուստի երբ ողորմութիւն կ'ընես, առջևդ փող մի հնչեցնէր, ինչպէս կեղծասորները ժողովարաններուն ու փողոցներուն մէջ կ'ընեն, որպէս զի մարդոցմէ փառաստանին. Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Անոնք իրենց վարձքը առած կ'ըլլան: 3 - Իսկ դուք երբ ողորմութիւն կ'ընես, ձախ ձեռքդ թող չգիտնայ աջ ձեռքիդ ինչ գործիդ: 4 - Որպէս զի քու ողորմութիւնը գաղտուկ ըլլայ, և քու Հայրդ որ գաղտուկը կը տեսնէ, քեզի յայտնապէս հաստուցում պիտի ընէ:

5 - Ու երբ աղօթք կ'ընես, կեղծաւորներուն նման չըլլաւ, որնք կը սիրեն ժողովարաններու մէջ ու հրապարակներուն անիւնները կայնելով աղօթք ընել, որպէս զի մարդոց երեւնան. Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Անոնք իրենց վարձքը առած կ'ըլլան: 6 - Իսկ դուք երբ աղօթք կ'ընես, մտիր բուներքին սենեակիդ ու դուռդ գոցէ, և աղօթք բրէ քու Հօրդ որ գաղտուկ տեղ կը գործուի. և քու Հայրդ որ գաղտուկը կը տեսնէ, քեզի յայտնապէս հաստուցում պիտի ընէ: 7 - Ու երբ աղօթք կ'ընէք, հեթմտաններուն պէս շատախօս մի ըլլաք, վասն զի կը կարծեն թէ իրենց շատ խօսելուն համար պիտի լուսին: 8 - Ուրեմն տննից չնմանիք, վասն զի ձեր Հայրը ձեզի պէտքերուդ գիտէ՝ դեռ դուք իրմէ չինչորած: 9 - Ուստի աշայէս աղօթք բրէք դուք:

Ով Հայր մեր որ երկինքն էս, բուսանանդ սուրբ ըլլայ. 10 - Բու թագաւորութիւնդ գայ. քու կամբդ ըլլայ, ինչպէս երկինքը նոյնպէս երկրի վրայ.

11 - Մեր ամէն օրուան հացը այսօր մեզի տուր. 12 - Եւ մեզի ներէ մեր պարտքերը, ինչպէս մեք այ կր ներենք մեր պարտասպաններուն. 13 - Ու մեզ փորձութեան մի տանիր, հապա չարէն մեզ ազատէ. քանզի քուկդ է թագաւորութիւնը և զօրութիւնը ու փառքը յաւիտեանս Ամէն.

14 - Վասն զի եթէ դուք ներէք մարդոց իրենց յանցանքները, ձեր երկնաւոր Հայրն այ ձեզի կր ներէ. 15 - Հապա եթէ դուք չներէք մարդոց իրենց յանցանքները, ձեր Հայրն այ ձեզի չներէր ձեր յանցանքները:

16 - Ու երբ ծով կը պահէք, կեղծաւորներուն պէս արտուներես մի ըլլաք. քանզի իրենց երեսները կ'աւրեն որպէս զի մարդոց երեսան թէ ծով կը պահեն. Ճշմարտ կ'ըսեմ ձեզի, Անտր իրենց վարձքը աւած կ'ըլլան: 17 - Բայց դուք երբ ծով կը պահէս, գլուխդ օծէ ու երեսդ լուս, 18 - Որպէս զի մարդոց ծով պահողի պէս չերեւտս, հապա քու Հօրդ՝ որ զաղտուկ տեղ էր քոսի. և քու Հայրը որ գաղտուկը կը տեսնէ, չքեղի հատուցում պիտի ընէ:

19 - Երկրի վրայ ձեզի դանձեր մի գիղէք, ուր ցեղը ու ժանդը կ'ապահանեն, և ուր գողերը պար կը ծակեն ու կը գողնան. 20 - Հապա ձեզի դանձեր գիղէցէք երկինքը, ուր ոչ ցեղը և ոչ ժանդը կ'ապահանէ, ու ոչ գողերը պար կը ծակեն և կը գողնան: 21 - Բանզի ձեր գանձը ուր որ է, սիրտերնիդ այ հոն պիտի ըլլայ: 22 - Մարմինն ճրագը աչքն է. հապա եթէ քու աչքդ պարզ է, բոլոր մարմինդ լուսոււոր կ'ըլլայ: 23 - Բայց եթէ քու աչքդ վատ է, բոլոր մարմինդ մութ կ'ըլլայ. ուրեքն եթէ քու մէջդ եղած լոյս խաւար է, ու այն խաւարը օրջափ է:

24 - Մարդ մը չկրնար երկու տերոջ ծառայութիւն ընել. վասն զի կ'ամ մէկը պիտի առնէ և միւսը սիրէ, կ'ամ մէկը պիտի պիտի յարի և միւսը պիտի տրհամարէ. չէք կրնար ծառայել Աստուծոյ ու մամոնայի: 25 - Ուստի կ'ը-

սեմ ձեզի, Հոգ մի ընէք ձեր կեանքին համար թէ ինչ պիտի ուտէք, կամ ինչ պիտի խմէք. ոչ ուր ձեր մարմիններուն համար թէ ինչ պիտի հագնէք. չէ՛ որ կեանքը կերակուրէն աւելի է, ու մարմինը հաղաւտան: 26 - Եւ ոչ ցեղ երկինքի թաւառներուն սրտը ոչ կը սերմաննէ և ոչ կը հնձնէ և ոչ ամբարի մէջ կը ժողվեն, ու ձեր երկնաւոր Հայրը կը կերակուրէ զանոնք. չէ՛ որ դուք անոնցմէ աւելի լուս էք: 27 - Հիմա ձեզմէ ո՞վ կրնայ իր հոգ ընելովը իր հասակին վրայ կանգուն մի աւելցնել: 28 - Ու հազուատի համար ինչօ՞ւ հոգ կ'ընէք. նոյնիցէք դաշտի շուշաններուն, ինչպէս կ'ամծին. ոչ կաշխատին և ոչ կը մտնեն. 29 - Բայց ձեզի կ'ըսեմ որ Սողոմոն այ իր բոլոր փառաւորութեանը մէջ անոնցմէ մէկուն պէս չհաղուեցաւ: 30 - Ուստի եթէ գաշտի խոտը, որ այսօր կայ և վաղը փուռը կը ձգուի, Աստուած այնպէս կը հաղուեցնէ, հապա սրբափ աւելի ձեզ, թերահաւատներ: 31 - Ուրեքն հոգ մի ընէք բոլորով. Ինչ պիտի ուտէք, կամ Ինչ պիտի խմէք, կամ Ինչ պիտի հագնէք. 32 - (Բանզի այդ բոլոր բաները չեմ անանքերը կը խնդրեն.) վասն զի ձեր երկնաւոր Հայրը գիտէ թէ այդ բոլոր բաները ձեզի պէտք են: 33 - Բայց առաջ խնդրէք Աստուծոյ թագաւորութիւնը և անոր արդարութիւնը, ու այդ բոլոր բաներն այ ձեզի պիտի արուին: 34 - Ուստի վաղուան համար հոգ մի ընէք, վասն զի վաղուան օրը իրեն համար հոգ պիտի ընէ. հերեք է օրուան իր ներութիւնը:

ԳԼ Է

Սի գատէք, որպէս զի չգատուիք: 2 - Բանզի ինչ գատասանով որ գատէք, անով պիտի գատուիք, և ինչ չափով որ չափէք, անով պիտի չափուի ձեզի: 3 - Եւ ինչօ՞ւ քու եղբորդ աչքին մէջի շիւղը կը տեսնես, ու քու աչքիդ մէջի գերանին չես նայիր: 4 - Կամ ինչպէս կրնաս բռնի քու եղբորդ թող տուր աչքիդ շիւղը քոսին: և ահա քու աչքիդ մէջ գերան կայ: 5 - Կեղծաւոր, առաջ քու աչքիդ գերանը հանէ, ու ետք պարզ պիտի տեսնես եղբորդ աչքին շիւղը հանուի:

*Ո՞րն է, քեզի յայտնապէս Կիւս, մէկը պիտի մեծարէ

6 - Սուրբ բանը շուներուն մի տաք, և ձեր մարգարիտները խողերուն առջև մի ձգէք, որպէս զի սուրբնուն տակ չկրկուտեն զանոնք, ու դառնան ձեզ պատուան:

7 - Եւ ոչ ցեղ երկինքի փնտուեցէք, և պիտի արուի ձեզի. փնտուեցէք, և պիտի գտնէք. Դուք զարկէք, և պիտի բացուի ձեզի: 8 - Վասն զի ամէն ուր կը խնդրէ՛ կ'առնէ, և ուր որ կը փնտուէ՛ կը գտնէ, և ուր որ Դուք Դուք մարդ կայ՝ որմէ կը որդի եթէ՛ հաց ուղէ, միթէ՛ քա՞ր պիտի տայ անոր: 10 - Եւ կամ եթէ ձուկ ուղէ, միթէ՛ օ՞ճ պիտի տայ անոր: 11 - Ուստի եթէ դուք որ չար էք, ձեր զաւակներուն աղէկ ընծաներ տալ գիտէք, սրբափ աւելի ձեր Հայրը որ երկինքն է, բարի բաներ պիտի տայ անոնց որ իրմէ կը խնդրեն:

12 - Ուստի ամէն ինչ որ կ'ուզէք որ մարդիկ ձեզի ընեն, դուք ալ անոնց այնպէս բրէք, քանզի այս է օրէնքը ու մարգարէները:

13 - Ենչ դռնէն ներս մտէք. վասն զի լայն է այն դուռը ու ընդարձակ այն ճանապարհ, որ դէպ կ'ընդունուի կը մտնեն: 14 - Վասն զի նեղ է այն դուռը ու նեղուցը է այն ճանապարհ, որ դէպ կ'ընդունուի կը մտնեն: 15 - Զգոյշ կեցէք սուս մարգարէներէն, որմէ ձեզի կու գան ոչխարի հանդերձներով, բայց ներսէն յափշտակող զայլեր են: 16 - Իրենց պտուղէն պիտի ծանննաք զանոնք. միթէ՛ փուշերէն խաղող կը քաղէն, կամ տաւտակէն թուզ: 17 - Այսպէս ամէն բարի ծառ բարի պտուղ կուտայ, և չար ծառ չար պտուղ կուտայ: 18 - Բարի ծառը չկրնար չար պտուղ տալ, ոչ ալ չար ծառը բարի պտուղ տալ:

19 - Ամէն ծառ որ բարի պտուղ չտար, կը կտրուի ու կրակը կը ձգուի: 20 - Ուրեքն իրենց պտուղէն պիտի ծանննաք զանոնք: 21 - Այ թէ ամէն մէկը որ ինծի Տէր, Տէր, կ'ըսէ, պիտի մտնէ երկինքի թաւառութիւնը, հապա անկա՞ որ իմ երկնաւոր Հօրս կամքը կը կատարէ: 22 - Դատերը այն օրը ինծի պիտի բռնէ, Տէր, Տէր, չէ՛ որ քու անունովդ մարգարէութիւն ըրինք, և քու անունովդ

դէեր հանցինք, ու քու անունովդ շատ հրաշքներ ըրինք: 23 - Եւ այն տանն անոնց յայտնապէս պիտի բռնէ թէ երբ քու ձեռք ձեռի ծաննար. մէկը զի գացէք քովէս դուք որ անօրէնութիւն կը գործէիք:

24 - Արդ ուր որ այս իմ խօսքերս կը լսէ և կը կատարէ զանոնք, զանկա պիտի անանցնէ ինչպիսի մարդու մը՝ որ իր տունը վէճի վրայ չինեց. 25 - Եւ անձրեւ իջաւ ու գետերը վաղեցին ու հովերը փչեցին, և զարկին այն տանը, ու չիբաւ, վասն զի վէճի վրայ հատատուած էր: 26 - Եւ ուր որ այս իմ խօսքերս կը լսէ ու չկատարէր զանոնք, կը նմանի անխել մարդու մը՝ որ իր տունը աւաղի վրայ չինեց. 27 - Եւ անձրեւ իջաւ ու գետերը վաղեցին ու հովերը փչեցին, և զարկին այն տանը, ու փլաւ, և մեծ էր անոր կործանումը:

28 - Ու երբ Յիսուս լմնցուց այս խօսքերը, Ժողովուրդները կը զարմանային անոր վարդապետութեանը վրայ: 29 - Վասն զի իշխանութիւն ունեցողի մը պէս կը սորվեցնէր անոնց, ու ոչ թէ դպիրներուն պէս:

ԳԼ Ը

Ու երբ այն լեռնէն վար իջաւ, շատ Ժողովուրդներ գացին անոր ետեւէն: 2 - Եւ ահա բորտս մը եկաւ, երկրպագութիւն կ'ընէր անոր ու կ'ըսէր, Տէր, եթէ ուղես, կրնաս զիս մարդել: 3 - Եւ Յիսուսը ձեռքը երկնցնելով գալաւ անոր ու բուս, Կուղես, մարդու. և շուտ մը անոր բորտութիւնը մարդու բորտութիւնը ընծաւ տուր, անոնց վկայութիւն ըլլայու համար:

5 - Ու երբ կափառանայում մտու, հարեալպետ մը եկաւ քովը, կ'աղաչէր անոր, 6 - Ու կ'ըսէր, Տէր, իմ ծառաս տունը անգամայնջ՞ պառկած չարաչար կը տանջուի: 7 - Եւ Յիսուս բուս անոր, Ես կու գամ ու զանկա կը բժշկեմ: 8 - Եւ հարեալպետը պատասխան տալով՝ բուս, Տէր, Ես արժանի չեմ որ դուք իմ յարկիս տակ

*Ո՞րն է, երբ Յիսուս

մտնես. միայն թէ խօսքով զրուցէ, ու իմ ծառայա պիտի բժշկուի: 9 - Վասն զի ես ալ իշխանութեան տակ մտրդ մըն եմ, ու իմ հրահանգն տակ զինուորներն ունիմ. և ասոր կ'ըսեմ, Գնա, ու կ'երթայ. և միւսին թէ Եկուր, ու կուգայ. և ծառայիս թէ Այս բանը բրէ, ու կ'ընէ: 10 - Յիսուս երբ լսեց, զարմացաւ, և էբ ետեւէն դաջողներուն ըսաւ, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Խրատելի մէջ անգամ ես պիտի հաստաք չգտայ: 11 - Եւ ձեզի կ'ըսեմ որ արեւելքէն ու արեւմուտքէն շատեր պիտի գան, ու երկինքի թագաւորութեանը մէջ պիտի բազմին Աբրահամի ու Իսաակի և Յակոբի հետ: 12 - Իսկ թագաւորութեանը որդիները դուրսի խաւարը պիտի հանուին. հոն պիտի ըլլայ լաւ ու անպահանջ կրճար: 13 - Եւ Յիսուս հարիւրապետին ըսաւ, Գնա, ու ինչպէս դուն հաւատացիր, այդպէս թող ըլլայ քեզի. և նոյն ժամուն անոր ծառան բժշկուեցաւ:

14 - Եւ Յիսուս Պետրոսի տունը գալով, տեսաւ որ անոր զբանջը ջերմէն բռնուած՝ պառկած էր: 15 - Եւ անոր ձեռքէն բռնեց, ու ջերմը թող տուաւ զանիկա. ան ալ ոտքի վրայ ելաւ և անոնց սպասաւորութիւն կ'ընէր: 16 - Երբ իրեկուն եղաւ, շատ դիւաւահարներ բերին անոր, ու խօսքով հանեց շար ոգիները և բոլոր հիւանդները բժշկեց: 17 - Իրպէս զի Եսայի մտրդարէին ձեռքով բուսած խօսքը կատարուի, Անիկա մեր հիւանդութիւնները վերցուց և ժբ ցաւերը կրեց:

18 - Յիսուս իր բոլորապէր շատ ժողովուրդ տեսնելով, հրաման ըրաւ որ միւս կողմը երթան: 19 - Եւ դպիր մը մտնելով ըսաւ անոր, Վարդապետ, ես քու ետեւէդ պիտի գամ ուր որ երթաս: 20 - Եւ Յիսուս ըսաւ անոր, Ազուէսները որքէր ունին, ու երկինքի թագաւորները բայներ, բայց Որդին մտրդոյ Ինչ չունի, ուր իր գլուխը դնէ: 21 - Եւ մէկ ուրիշը, որ անոր աշակերտներէն էր, ըսաւ անոր, Տէր, ինձի հրաման տուր, որ երթամ առաջ իմ հայր թաղում: 22 - Յիսուս ըսաւ անոր, Եկուր իմ ետեւէս, ու թող տուր մեռելներուն որ թաղեն իրենց մեռելները:

23 - Ու երբ նաւը մտաւ, իր աշակերտները իր ետեւէն դաջին: 24 - Եւ ահա մեծ ալեկոծութիւն մը եղաւ ծովուն մէջ, այնպէս որ նաւը այրերէն կը ծածկուէր. իսկ ինք կը քնանար: 25 - Եւ աշակերտները մտն գացին, արթնցուցին զանիկա ու ըսին, Տէր, աղաւտ մեզ, այն կը կորսուի: 26 - Եւ ըսաւ անոնց, Թերահաւատներ, ինչո՞ւ այդպէս վախկոտ էք. այն ատեն ելաւ հովերուն ու ծովուն սաստեց, և մեծ խաղաղութիւն եղաւ: 27 - Ու մտրդիկը զարմացան և կ'ըսեին, Ինչպիսի մտրդ է աս որ հովերը ու ծովը ասոր կը հնազանդի:

28 - Ու երբ միւս կողմը Գերգեսացաց երկիրը անցաւ, երկու դիւաւահար պատահեցան իրեն զերեզմաններէն ելած՝ աստիկ կատարած, այնպէս որ հնար չէր մտրդու այն ճամբայէն անցնել: 29 - Եւ ահա տղաքակցին ու ըսին, Յիսուս, Որդի Աստուծոյ, դուն մեզի հետ ի՞նչ բան ունիս, ատենէն առաջ մեզ ատնջելով համար հոս եկար: 30 - Եւ անոնցմէ հեռու շատ խողերու երամակ մը կար, որոնք կ'արածուէին: 31 - Ու գեւերը կ'աղաչէին իրեն ու կ'ըսէին, Եթէ մեզ կը հանես, հրաման տուր մեզի որ երթանք խողերուն երամակին մէջ մտնելու: 32 - Եւ ըսաւ անոնց, Գացէք. ու անոնք ելան դաջի խողերուն երամակին մէջ մտնելու, և ահա բոլոր երամակը դահալէթ տեղէն ծովը վազեցին, ու ջուրերուն մէջ մեռան: 33 - Խողարածներն ալ փախան, և քաղաքը երթալով բոլորը պատմեցին, ու դիւաւահարներն դարձան ըսները: 34 - Եւ ահա բոլոր քաղաքը Յիսուսի դէմը ելաւ, ու երբ անոնք գանիկա, աղաչեցին որ իրենց սահմաններէն երթայ:

ԳԼ Թ

Եւ նաւը մտնելով անդիլի կողմ անցաւ, ու եկաւ իր քաղաքը: 2 - Եւ ահա բերին իրեն անդամալոյց մը, որ մահիճի մէջ պառկած էր. և Յիսուս անոնց հաւատք տեսնելով, ըսաւ անդամալոյցին, Գաջայեքուէ, որդեակ քու մեղքերդ քեզի ներուած են:

*Ունի, Գաղարացաց

3 - Եւ ահա դպիրներէն ոմանք իրենց Գործի մէջ ըսին, Ատիկա հայհոյութիւն կ'ընէ: 4 - Յիսուս ալ անոնց խորհուրդները իմանալով ըսաւ, Ինչո՞ւ սիրտներուդ մէջ չար բաներ կը խորհի: 5 - Բանդի ո՞րը աւելի դիւրին է. Բու մեղքերդ ներուած են ըսելը, թէ Ելիր ու քաղէ՝ բսելը: 6 - Բայց որպէս զի գիտեսք թէ Որդին մտրդոյ իշխանութիւն ունի երկրի վրայ մեղքերու թողութիւն տալու, (այն ատեն անդամալոյցին ըսաւ,) Ելիր, մահիճդ առ ու տունդ դնա: 7 - Ու անիկա ելաւ իր տունը գնաց: 8 - Ժողովուրդները երբ տեսան, զարմացան, ու փառաւորեցին զԱստուծով, որ մտրդոց այնպիսի իշխանութիւն տուէր էր:

9 - Եւ Յիսուս անկէ առաջ անցնելով մտրդ մը տեսաւ Մատթէոս անունով, որ մտք ընդունելու տեղը նստեր էր, ու ըսաւ անոր, Ետեւէս եկուր. ան ալ ելաւ անոր ետեւէն գնաց: 10 - Ու եղաւ որ ասունք սեղան նստած ատենը ահա ուրիշ շատ մտրդարներ և մեղաւորներ եկած ու սեղան նստած էին Յիսուսի ու անոր աշակերտներուն հետ: 11 - Եւ փարիսեցիները երբ տեսան, ըսին անոր աշակերտներուն, Ինչո՞ւ ձեր վարդապետը մտրդարներուն ու մեղաւորներուն հետ կ'ուտէ: 12 - Բայց Յիսուս երբ լսեց՝ ըսաւ անոնց, Առողջներուն բժշկի պէտք չէ, հասցա հիւանդներուն: 13 - Գացէք սորվեցէք թէ ինչ է այն խոսքը, Ողորմութիւն կ'ուզեմ և ոչ թէ զոհ. վասն զի ես արդարները խնչելու չեկայ, հասցա մեղաւորները ապաշխարութեան:

14 - Այն ատեն Յովհաննէսի աշակերտները անոր եկան ու ըսին, Ինչո՞ւ մենք ու փարիսեցիները շատ անգամ ծով կը պահենք, և քու աշակերտներդ չեն պահէր: 15 - Ու Յիսուս ըսաւ անոնց, Մի՞թէ կարելի է որ հարսնիքին տղաքը սուգ պահեն, քանի որ փեսան իրենց հետ է. բայց օրեր պիտի գան որ երբ փեսան իրենցմէ վերցուի, այն ատեն ծով պիտի պահեն: 16 - Ու մէկը չձգէր նոր լաթիկ կտոր հին հանդերձի վրայ, քանզի այն որ անոր լրութեանը համար բրահած է, կ'առնէ հանդերձէն, ու պատուուածքը ալ աւելի գէշ կ'ըլլայ: 17 - Ոչ ալ նոր զինին հին սրկե-

րու մէջ կը դնեն. եթէ ոչ՝ տիկերը կը պատուին ու զինին կը թափի, և տիկերը կը կորսուին. հասցա նոր զինին նոր տիկերու մէջ կը դնեն, ու երկուքն ալ կը պահուին:

18 - Երբ անիկա անոնց հետ այս բաները կը խօսէր, ահա իշխան մը եկաւ, երկարագութիւն կ'ընէր անոր ու կ'ըսէր, Աղջիկ ալ մինչև հիմա մեռած է, բայց եկուր ձեռքդ անոր վրայ դիր, ու պիտի ապրի: 19 - Եւ Յիսուս ելաւ ու իր աշակերտներուն հետ անոր ետեւէն գնաց:

20 - Եւ ահա տառուերկու տարուան տեսաւ կին մը մտնեցաւ ետեւէն, անոր հանդերձէն քշանցքին դպաւ: 21 - Բանդի իր Գործի մէջ կ'ըսէր, Եթէ միայն անոր հանդերձին դպչիմ, պիտի բժշկուիմ: 22 - Բայց Յիսուս երբ տեսնէր զանդերձէն, քու հաւատքդ քեզ բժշկեց. և կինը նոյն ժամէն բժշկուեցաւ:

23 - Ու երբ Յիսուս իշխանին տունը եկաւ, ու տեսաւ փողահարները և խոռոված բազմութիւն, 24 - Ըսաւ անոնց, Մէկդի գացէք, վասն զի աղջիկը մեռած չէ, հասցա կը քնանայ. և ծաղր կ'ընէին զանիկա: 25 - Ու երբ բազմութիւնը դուրս ձգուեցաւ, ինք ներս մտաւ, անոր ձեռքէն բռնեց, ու աղջիկը ոտք ելաւ: 26 - Եւ այս լուրը բոլոր երկիրը տարածուեցաւ:

27 - Ու երբ Յիսուս անկէ՛ առաջ անցաւ, երկու կոյր ինկան անոր ետեւէն, կ'աղաղակէին ու կ'ըսէին, Ողորմէ մեզի, Որդի Իսաի: 28 - Ու երբ տուն եկաւ, կոյրերը իրեն եկան. և Յիսուս անոնց ըսաւ, Կը հաւատասք թէ կրնամ այս բանը յեզբ ընել. բնին անոր, Այս, Տէր: 29 - Այն ատեն անոնց աչքերուն դպաւ ու ըսաւ, Չէր հաւատքին պէս ըլլայ ձեզի: 30 - Ու անոնց աչքերը բացուեցան. և Յիսուս աստիկ պատուէր տուաւ անոնց ու ըսաւ, Զգոյշ կեցէք, մէկը չիմանայ: 31 - Բայց անոնք ելան, այն բոլոր երկիրն մէջ անոր համբաւը տարածեցին:

32 - Եւ երբ անոնք դուրս ելան, ահա համր դիւաւահար մտրդ մը բերին իրեն: 33 - Ու երբ դեր ելաւ, համրը խօսեցաւ. և ժողովուրդները զարմացան ու կ'ըսէին թէ Խրոյսելի մէջ բնաւ սյապիսի բան մը տեսնուած չէ:

*Ունի, Էրանի

*Ունի, անոր

34 - Բայց փարիսեցիները կ'ըսեն թէ Ատիկա գեւերուն էշխանութիւնը գեւերը կը հանէ:

35 - Եւ Յիսուս կը պարտէր բոլոր քաղաքները ու գեղերը, և անոնց ժողովարաններուն մէջ կը սորովեցներ ու կը քարոզէր արքայութեան աւետարանը, և կը բժշկէր բոլոր ատերը ու բոլոր հիւանդութիւնները ժողովարաններուն մէջ: 36 - Եւ ժողովարանները անանկով, անոնց վրայ խղճաց, վասն զի յոգնած ու ջերուցան եղած էին հովիւ չունեցող ոչխարներու պէս: 37 - Այն ատեն ըստ իր աշակերտներուն, Հունձքը լաւ է, բայց մշակները քիչ: 38 - Ուստի հունձքին Տէրոջը աղաչեցէք, որ մշակներ հանէ իր հունձքին:

ԳԼ Ժ

Եւ իր քով կանչելով իր աստուերկու աշակերտները, անոնց էշխանութիւն ասուս պիղծ ոգիներուն վրայ, որպէս զի զանոնք հանեն, և ամէն ցուէրը ու ամէն հիւանդութիւնները բժշկեն:

2 - Ու աստուերկու աւարեայներուն անունները ասոնք են. աւաջներ Աիման, Պետրոս ըսուածը և անոր եղբայրը Անդրէաս, 3 - Յակոբոս Չերեզեան և անոր եղբայրը Յովհաննէս, Փիլիպոս և Բարթողոմէոս, Թովմաս և Մատթէոս մարտաւոր, Յակոբոս Ալփեան և Ղերէս որ թագէտու մականունանցու, 4 - Սիմոն կանանացի և Յուզա Իսկարիօտացի, որ նաև մասնեց զանիկա: 5 - Այս աստուերկուքը Յիսուս զրկեց, և անոնց պատուիրեց՝ բռնելով, Հեթանոսներու ճամբայ մի երթաք ու Սամարացիներու քաղաք մի մտնէք, 6 - Հապա աւելի Խորայէի տանը կորսուած ոչխարներուն գացէք: 7 - Ու երբ կ'երթաք, քարոզեցէք ու բռնք թէ երկինքի թագաւարութիւնը մտաւցած է: 8 - Հիւանդները բժշկեցէք, բորոտները *մաքրեցէք, գեւերը հանեցէք. ձրի աւեր էք, ձրի տուէք: 9 - Մի ստանձք ոսկի, և ոչ արծաթ, և ոչ պղինձ ձեր գօտիներուն մէջ, 10 - Ոչ ճամբու համար պարկ, և ոչ կրկին

հանդերձ, ոչ կօշիկ, ոչ գաւազան. վասն զի մշակը իր կերտուրքին արծառն է: 11 - Եւ ո՛ր քաղաք կամ գեղ մտնէք, հարցուցէք թէ ո՛վ է անոր մէջ արժանաւոր, ու հոն կեցէք մինչև ա՛յլ ելլէք: 12 - Ու երբ տունը կը մտնէք, բարև տուէք *անոր: 13 - Եւ եթէ այն տունը արժանաւոր է, ձեր բարեւր անոր վրայ գայ. հապա եթէ արժանաւոր չէ, ձեր բարեւր ձեզի դառնայ: 14 - Եւ ով որ ձեզ չընդունի, ու ձեր խօսքերը մտիկ չընէ, երբ այն տունէն կամ քաղաքէն կ'ելլէք, ձեր ոտքերուն փոշին թօփ վեցէք: 15 - Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Սողոմոնացու ու Գոմերացուց երկրին աւելի դիւրին պիտի ըլլայ դատաստանին օրը քան թէ այն քաղաքին:

16 - Ահա եւ ձեզ կը զրկեմ իրեն ոչխարներ գալլելու մէջ. ուստի օձերու պէս խորազէտ եղէք և աղանձիններու պէս միամիտ: 17 - Իսկ մտորացած զգուշացէք. վասն զի ձեզ աստաններու պիտի մտանն, ու իրենց ժողովարաններուն մէջ ձեզ պիտի ծեծեն: 18 - Եւ իմ առաւանձ համար կուտակայներու ու թագաւորներու առջև պիտի տարուէք, անոնց և Տեթմաններուն վկայութիւն ըլլալու համար: 19 - Բայց երբ ձեզ մտանն, հոգ մի ընէք թէ ինչպէս կամ ինչ պիտի խօսիք, վասն զի ձեզ պիտի տրուի այն ժամուն՝ ինչ որ պիտի խօսիք: 20 - Վասն զի ոչ թէ դուք էք որ կը խօսիք, հապա ձեր Հօրը Հոգին՝ որ ձեր ներսիդին կը խօսի: 21 - Ու եղբայր եղբայրը մահաւան պիտի մտան, և հայրը՝ որդին: Եւ որդիներ էրեւոյ ծնողքներուն վրայ պիտի ելլեն ու մեռցնեն զանոնք: 22 - Եւ իմ անուանս համար ասնուն տասնի պիտի ըլլաք. բայց ով որ մինչև վերջը համբերէ, անիկա պիտի ապրի: 23 - Ու երբ այս քաղաքին մէջ ձեզ կը հայտնեն, ուրիշ *ուրտ փոխէք. քանզի Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Իսրայէլի քաղաքները պիտի չհասցնէք, մինչև Որդին մտորայ գայ: 24 - Աշակերտը իր վարդապետէն աւելի չէ, և ոչ ծառան իր տէրոյմէն: 25 - Հերիք է աշակերտին՝ որ իր վարդապետին պէս ըլլայ, ու ծառային՝ իր տէրոջը պէս. թէ

*Ո՞րտ, մաքրեցէք, մեռելները յարուցէք

*Ո՞րտ, անոր՝ ու ըսէք, Բարև այս տանը

ԳԼ ԺԱ

ասնուտերը Բեեղզերուց կուչցին, ո՛րչափ աւելի անոր ընտանիքը: 26 - Ուստի մի վախճաք անոնցմէ, վասն զի բան մը չկայ ծածուկ որ պիտի չչայտնուի, և քաղաքում որ պիտի չզիտացուի: 27 - Ինչ որ ձեզի մուկի մէջ կ'ըսեմ, զա՛յլ լցոյի մէջ խօսեցէք, և ինչ որ ականջնի վար կը լսէք, ասնիքներուն վրայ քարոզեցէք: 28 - Եւ մի վախճաք անոնցմէ՝ որ մարմինը կը սպաննեն, ու չեն կրնար հոգին սպաննել. հապա աւելի անիկ վախցէք դուք, որ կրնայ հոգին ու մարմինը գեհնէն մէջ կորսնցնել: 29 - Չէ՞ որ երկու ծրնճը մէկ դանկի կը ծախուին, և անոնցմէ մէկը գետինը չինար առանց ձեր Հօրը: 30 - Բայց ձեր գիտուն բոլոր մտքերն ալ համրուած են: 31 - Ուրեմն մի վախճաք, Լուսն չէ շատ ծնծղուկներէն լաւ էք դուք: 32 - Արդ ով որ մտորաց առջև զիս կը դաւանի, ես ալ զանիկա պիտի դաւանիմ իմ Հօրս առջև՝ որ երկինքն է: 33 - Եւ ով որ մտորաց առջև զիս կ'ուրանայ, ես ալ զանիկա պիտի ուրանիմ իմ Հօրս առջև՝ որ երկինքն է: 34 - Մի կարծէք թէ ես երկեք վրայ խաղաղութիւն ձգելու եկայ. խաղաղութիւն ձգելու չեկայ՝ հապա սուր: 35 - Վասն զի եկայ մտորը իր Յօրմէն գատելու, ու աղջիկը իր մօրմէն, ու հարսը իր կետուրէն: 36 - Եւ մտորուն թշնամիները իր ընտանիքը պիտի ըլլան: 37 - Ան որ հայրը կամ մայրը ինձմէ աւելի կը սիրէ, ինձի արժանի չէ. և ան որ տղան կամ աղջիկը ինձմէ աւելի կը սիրէ, ինձի արժանի չէ: 38 - Եւ ան որ իր խաչը չաւանդ ու իմ ետեւէս գար, ինձի արժանի չէ: 39 - Ան որ իր անձը կը գտնէ, պիտի կորսնցնէ զանիկա. և ան որ իր անձը ինձի համար կը կորսնցնէ, պիտի գտնէ զանիկա: 40 - Ան որ ձեզ կ'ընդունի, զիս կ'ընդունի. և ան որ զիս կ'ընդունի, զիս զրկողը կ'ընդունի: 41 - Ան որ մտորարէ մը կ'ընդունի մտորարէի անունով, մտորարէի վարձք կ'առնէ. և ան որ արդար մը կ'ընդունի արդարի անունով, արդարի վարձք կ'առնէ: 42 - Ու ան որ այս պղտրիկներէն մէկուն միայն գաւաթ մը պող ըսւր կը խմցնէ աշակերտի անունով, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, ընտու իր վարձքը պիտի չկորսնցնէ:

Եւ եղաւ որ էրը Յիսուս լնացուց իր աստուերկու աշակերտներուն պատուէր ապրը, գնաց անիկ անոնց քաղաքներուն մէջ քարոզելու և սորովեցնելու:

2 - Իսկ Յովհաննէս բանտին մէջ էր լսեց Գրիստոսի գործերը, իր աշակերտներէն երկուքը զրկելով: 3 - Ըսաւ անոր, Իսկ ան էս որ գայու էիք, թէ ուրիշի մը սպաննէք: 4 - Եւ Յիսուս պատասխան տալով՝ անոնց ըսաւ, Գացէք պատմեցէք Յովհաննէսի ինչ որ կը լսէք ու կը տեսնէք: 5 - Կայրերը կը տեսնեն, կաղերք կը բայլեն, բորոտները կը մաքրուին, խուլները կը լսեն, մեռելները յարութիւն կ'առնեն ու աղքատներուն աւետարան կը քարոզուի: 6 - Եւ երանի անոր որ իմ վրայովս չգայ թաղիք:

7 - Ու երբ անոնք գացին, Յիսուս սկսաւ ժողովուրդներուն բռն Յովհաննէսի համար, Ինչ տեսնելու ելաք անապատին մէջ. եղէ՞ք մը հովէն շարժուած: 8 - Հապա ինչ տեսնելու ելաք. փափուկ հանդերձներ հագած մտոր մը. ահա փափուկ հանդերձնէր հագնողները թագաւորներուն տուններն են: 9 - Հապա ինչ տեսնելու ելաք. մտորարէ՞ք. այս, կ'ըսեմ ձեզի, մտորարէ՞ մըն ալ աւելի: 10 - Վասն զի աստուերկու որս Գոմերուց գրուած է, Ահա ես իմ գետապան կը զրկեմ. քու երեսիդ առջևէն, որ քու ճամբադ պիտի պատրաստէ քու առջևէդ: 11 - Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Կիներեն ծնածներուն մէջ Յովհաննէս մկրտչէն մեծը ելած չէ. սակայն երկինքի թագաւորութեանը մէջ ամէնէն պզտիկը անիկ մեծ է: 12 - Ու Յովհաննէս մկրտչէն օրերէն մինչև հիմա երկինքի թագաւորութիւնը ուժով կ'առնուի, և ուժեղները կը յարգուակեն զանիկա: 13 - Վասն զի բոլոր մտորարէները ու օրերէն մինչև Յովհաննէս մտորարէութիւն ըրին: 14 - Եւ եթէ կ'ուզէք ընդունիլ, անիկա է Եղիան՝ որ պիտի գար: 15 - Ան որ լսելու ակնայ ունի, թող լսէ: 16 - Բայց որո՞ւ նմանցնեմ այս ազգը. կը նմանի աղոց, որոնք շուկաները նստելով՝ իրենց ընկերներուն կը կանչեն, 17 - Ու կ'ըսեն, Փող հնէցուցինք ձեզի՝ ու չխաղացիք, որք ըս կարգացինք ձեզի՝ ու կոծ չըրիք ով

18 - Վասն զի Յովհաննէս եկաւ, ոչ կ'ուտէր և ոչ կը խմէր, ու կ'ըսեն, Ինչ կայ անոր ներքինին: 19 - Որդին մարդոց եկաւ, կ'ուտէ ու կը խմէ, և կ'ըսեն, Ահա ուսումը և արեւոց մարդ մը, մարտաւորներու ու մեղաւորներու բարեկամ: Եւ իմաստութիւնը արդարացաւ իր որդիներէն:

20 - Այն ատեն սկսաւ նախատել այն քաղաքները, որոնց մէջ գործուեր էին իր հրաշքներէն շատերը, քանզի չապաշտարեցին: 21 - Վա՛յ քեզ, Բոսորդին, վա՛յ քեզ, Բեթսայից, վասն զի եթէ Տիբրոսի ու Միդոնի մէջ եղած բլլային այն հրաշքները որոնք ձեր մէջ եղան, շատնոցով քործով ու միեւրոյ ապաշխարած պիտի բլլային: 22 - Բայց ձեզի կ'ըսեմ, Տիբրոսի և Միդոնի աւելի զիւրին պիտի բլլայ դատաստանին օրը՝ քան թէ ձեզի: 23 - Եւ դուն, Կափառնայում, որ մինչև երկիրը բարձրացած ես, մինչև դժոխք պիտի իջնես, վասն զի եթէ Սողոմի մէջ եղած բլլային այն հրաշքները որոնք քեզ մէջ եղան, երբ որ մինչև այսօր դեռ պիտի մնար: 24 - Բայց ձեզի կ'ըսեմ որ Սողոմացոց երկրին աւելի զիւրին պիտի բլլայ դատաստանին օրը՝ քան թէ քեզի:

25 - Եղի ժամանակ պատասխան տուաւ Յիսուս ու բաւ, Դնորհակալ եմ քեզմէ, ով Հայր, Տէր երկնի և երկրի, որ այս բաները ծածուկ պահեցիր իմաստուններէն ու զիտուներէն, ու տղոց յայտնեցիր: 26 - Այս, ով Հայր, վասն զի քու առջև ոչ ոք պիտի հաճելի եղաւ: 27 - Ամէն բան ինձի տրուեցաւ իմ Հօրմէս, ու մէկը չճանաչար Որդին, բայց Հայրը, և մէկը չճանաչար Հայրը, բայց Որդին, և ան՝ որու Որդին կ'ուզէ յայտնել: 28 - Եկեք ինձի, բոլոր յոգնած ու բեռնաւորստաններ, և ես ձեզ պիտի հանգչեցնեմ: 29 - Իմ լուծս ձեր վրայ աւելք, և ինձմէ սորվեցէք՝ որ Տեղ եմ ու սրտով խնարհ, և ձեր անձերուն հանգութիւն պիտի գտնեք: 30 - Վասն զի իմ լուծս քաղցր է, և իմ բեռս թեթեւ:

ԳԼ ԺԲ

Այն ատեն Յիսուս շարաթ օրը գնաց արաբերուն մէջէն, և իր աշակերտները անթեցան, ու սկսան քրէնէ հասկեր փրցնել և ուտել: 2 - Փարիսե-

ցիները երբ տեսան, ըսին անոր, Ահա քու աշակերտներդ կը գործեն ինչ որ արժան չէ շարաթ օրը գործել: 3 - Ան ալ անոնց բաւ, Զեք կարգացեր դուք Դաւիթի բրածը, երբ անթեցաւ ինք ու անոնք որ իրեն հետ էին: 4 - Ինչ պէս մտաւ Աստուծոյ տունը, և առաջաւորութեան հացերը կերաւ, որ ոչ իրեն օրինաւոր ըլլաւ: և ոչ անոնց որ իրեն հետ էին, բայց միայն քահանաներուն: 5 - Կամ թէ օրէնքին մէջ չէք կարգացեր, որ քահանաները շարաթ օրերը ստաճարէն մէջ շարաթը կը պղծեն ու անծաղ են: 6 - Բայց ձեզի կ'ըսեմ որ այս տեղ տաճարէն մեծ մէկը կայ: 7 - Եւ եթէ զիսանայթ թէ ինչ շէտէ, Ողորմութիւն կ'ուզեմ ու ոչ թէ զո՛ք, այն արեւմտայնները չէիք դատապարտեր: 8 - Քանզի Որդին մարդոց շարաթին աւերն է:

9 - Եւ անկէ երթալով եկաւ անոնց ժողովարանը: 10 - Եւ հոն մարդ մը կար, որուն ձեռքը չարցած էր. և հարցուցին անոր, ու բախ թէ Դարաթ օրը բժշկել արժան է, որպէս զի անոր վրայով ամբաստանութիւն ընեն: 11 - Ան ալ բաւ անոնց, Զեզմէ ո՛ր մարդը կայ, որ ոչխար մը ունենայ, և անիկա շարաթ օրը փոսի մէջ կանչի, պիտի չբռնէ՝ ու վեր հանէ ձեռնիկա: 12 - Արդ ո՛րչափ աւելի է մարդը ոչխարէն, ուրեմն շարաթ օրը բարի գործել արժան է: 13 - Այն ատեն՝ բաւ այն մարդուն, Երկնցուր ձեռքը՝ ան ալ երկնցուց, ու ողջացաւ միւսին պէս: 14 - Իսկ փարիսեցիները դուրս ելլելով անոր վրայ խորհուրդ կ'ընէին թէ ինչ պէս զանիկա կորսնցնեն:

15 - Եւ Յիսուս երբ դիտցաւ, զատուեցաւ անկէ. և շատ ժողովուրդներ անոր ետեւէն գացին, ու ամէնը բժշկեց: 16 - Եւ սաստիկ պատուերեց անոնց որ զինք բարբա՛ն - չյայտնեն: 17 - Որպէս զի կատարուի Եսայի մարգարէին ձեռքով բաւած խօսքը, 18 - Ահա իմ ծառաւ, զոր ընարեցի, և իմ սիրելիս, որու հաւնեցաւ իմ անձս. իմ Հօրիս անոր վրայ պիտի դնեմ, ու հեթանոսներուն իրաւունքը պիտի պատմէ: 19 - Ոչ պիտի վիճի, և ոչ պիտի աղաղակէ, և ոչ մէկը պիտի լսէ անոր ձայնը հրապարակներուն մէջ: 20 - Զախճախուած

*Որտե՛ս, շարաթին ալ

եղէզը պիտի չփշրէ, ու պլլաւած պատուրդը պիտի չմարէ, մինչև որ դատաստանը յաղթութեան հանէ: 21 - Եւ հեթանոսները անոր անուանը պիտի յուսան:

22 - Այն ատեն կըր ու համը դիւախար մը բերին իրեն, և զանիկա բժշկեց, այնպէս որ համըր ու կըրըր խօսեցաւ ու տեսաւ: 23 - Եւ բոլոր ժողովուրդները զարմացան ու կ'ըսէին, Արդեօք ասիկա է Դաւիթի որդին: 24 - Բայց փարիսեցիները երբ լսեցին ըսին, Ասիկա որտէ՛ս է հասնող դեւերը, բայց ինչպէս ինչո՞ղ չհասնող դեւերն ալ: 25 - Եւ Յիսուս անոնց խորհուրդները իմանալով՝ բաւ անոնց, Ամէն թաղաւորութիւն իրեն դէմ բաժնուած կ'ուտեն: և ամէն քաղաք կամ տուն իրեն դէմ բաժնուած՝ չկըրնար կենալ: 26 - Եւ եթէ Սասանայ Սասանայ կը հանէ, իրեն դէմ բաժնուեցաւ. ուստի ինչպէս պիտի կենայ անոր թաղաւորութիւնը: 27 - Եւ եթէ ես ինչեղիցուողով դեւերը կը հանեմ, ձեր օրդիները ինչո՞ղ կը հանեն. ուրեմն անոնք պիտի բլլան ձեր դատաստանները: 28 - Բայց եթէ ես Աստուծոյ Հոգիովը կը հանեմ դեւերը, ուրեմն Աստուծոյ թաղաւորութիւնը ձեր վրայ հասած է: 29 - Կամ ինչպէս կրնայ մէկը զօրաւոր մարդու մը տունը մտնել, և անոր կարասիները յափշտակել եթէ տուջ այն զօրաւոր մարդը չկապէ, ու ետքը անոր տունը կողոպտէ: 30 - Ան որ ինձի հետ չէ, ինձի հակառակ է, և ան որ ինձի հետ չժողովէր, ցիր ու ցան կ'ընէ: 31 - Անոր համար ձեզի կ'ըսեմ, Ամէն մեղք ու հանցութիւն պիտի ներուի մարդոց, բայց Սուրբ Հոգւոյն դէմ եղած հայտնութիւնը պիտի չներուի մարդոց: 32 - Եւ ով որ Որդւոյ մարդոց դէմ բան կ'ըսէ, պիտի ներուի անոր, բայց ով որ Հոգւոյն Սրբոյ դէմ կ'ըսէ, պիտի չներուի անոր, ոչ այս աշխարհին մէջ, և ոչ գալուստի արեւի մէջ: 33 - Կամ ծառք բարի ըրէք, ու անոր պտուղը բարի, կամ ծառք չար ըրէք, ու անոր պտուղը չար. վասն զի ծառք պտուղէն կը ծանցուի: 34 - Ի՞ծերու ծնունդներ, ինչպէս կրնաք բարի խօսիլ, որ չար էք. և ան զի որտե՛ս աւելցուեցէն բերանը կը խօսի: 35 - Բարի մարդը իր սրտին բարի գանձէն բարի բաներ կը հանէ, և չար մարդը

էր որտէ՛ս չար գանձէն չար բաներ կը հանէ: 36 - Բայց ձեզի կ'ըսեմ թէ Ամէն դատարկ խօսքի համար՝ զոր մարդիկ կը խօսին, դատաստանին օրը հաշու պիտի տան: 37 - Վասն զի քու խօսքերէդ պիտի արդարանաս, և քու խօսքերէդ պիտի դատապարտուես:

38 - Այն ատեն զպիղծներէն ու փարիսեցիներէն անոնք պատասխան տուին իրեն ու ըսին, Վարդապետ, կ'ուզենք քեզմէ նշան մը տեսնել: 39 - Անիկա պատասխան տուաւ ու անոնց բաւ, Զար և Հնացող ազգը նշան կ'ուզէ, և որտէ՛ս նշան պիտի չտրուի անոր, բայց միայն Յովնան մարգարէին նշանը: 40 - Քանզի ինչպէս Յովնան երեք օր ու երեք զիշեր կէտ ձուկին փորկի մէջ էր, այնպէս Որդին մարդոց պիտի բլլայ երկրի սրտին մէջ երեք օր ու երեք զիշեր: 41 - Ինչու՞նէ մարդիկ դատաստանին օրը այս ազգին դէմ պիտի ելլեն ու պիտի դատապարտեն ասիկա, վասն զի Յովնանի քորոզութիւնովը զեզլի եկան. և ասա Յովնանէ թե՛ մէկը կայ հոս: 42 - Հարաւի թաղաւորութիւնը կ'ըսէ ու պիտի դատապարտէ ասիկա, վասն զի ինք երկրի ծայրերէն եկաւ Սողոմոնի իմաստութիւնը լսելու. և ասա Սողոմոնէ մեծ մէկը կայ հոս:

43 - Ու երբ պիղծ ոգին մարդէ մը կ'ելլէ, անճաք տեղեր կը պարտի, հանգստութիւն կը փնտռէ ու չգտնէր: 44 - Այն ատեն կ'ըսէ, Դաւանամ նորէն իմտուաւ, ուրկէ ելայ, և կու գայ զանիկա կը գտնէ պարսպ, մարտուած ու յարգարուած: 45 - Այն ատեն կ'երթայ և իրեն հետ կ'առնէ եօթը ուրիշ ոգիներ իրմէ աւելի չար, ու մտնելով հոն կը բնակին, և այն մարդուն վերջը առաջինէն գէշ կ'ըլլայ. այսպէս պիտի բլլայ այս չար ազգին ալ:

46 - Ու քանի որ ինք ժողովուրդին կը խօսէր, ասա իր մայրը ու եղբայրները դուրսը կայներ էին, և կ'ուզէին իրեն հետ խօսիլ: 47 - Ու մէկը իրեն բաւ, Սհա բու մայրք ու եղբայրներդ դուրսը կայներ են, և կ'ուզէին զեզլի հետ խօսիլ: 48 - Ան ալ իրեն քաղին պատասխան տուաւ ու բաւ, Ո՞վ է իմ մայրս, և ո՞վ են իմ եղբայրներս: 49 - Եւ իր ձեռքը գէպի իր աշակերտները երկնցնելով բաւ, Ահա իմ մայրս և իմ եղբայրներս: 50 - Վասն զի ով

որ իմ երկնաւոր Հօրս կատարէ, անկեղծ է իմ եղբայրս և քոյրս ու մայրս:

ԳԼ. ԺԳ

Այն օրը Յիսուս տունէն ելլելով ծովուն եզերքը նստաւ: 2 - Եւ շատ ժողովուրդներ քովը ժողովուցեան, այնպէս որ ինք նստը մտաւ ու նստաւ, և բոլոր ժողովուրդը ծովեզերքը կայներ էր: 3 - Աւ շատ բաներ խօսեցաւ անոնց առականքով, և բաւ:

4 - Ահա սերմցանողը էլաւ որ սերմ ցանէ. ու երբ կը ցանէր, մէկ բանկները ճամբուն քով ինկան, և թռչունները եկան ու կերան զանոնք: 5 - Եւ ուրիշները ապստամբուտ տեղերու վրայ մեկան, ուր շատ հող չկար, և շուտ մը բուսան՝ հողին խորունկութիւն չունենալուն համար: 6 - Սակայն արեւուն ծագած ատենը այրեցան, ու արմատ չունենայնուն համար չորացան: 7 - Եւ ուրիշները ինկան փուշերու մէջ, և փուշերը էլան ու խեղդեցին զանոնք: 8 - Եւ ուրիշները ինկան աղէկ հողի մէջ, ու պտուղ կուտային՝ ո՛րը հէտն ունէր հարուր, ո՛րը վաթսուս, և ո՛րը երեսուն: 9 - Ան որ լսելու ականջ ունի թող լսէ:

10 - Աւ աշակերտները մօտենալով՝ բռին իրեն, ինչպէս համար առականքով կը խօսիս անոնց: 11 - Ան ալ պատասխան տուաւ ու բաւ անոնց, Անոր համար՝ որ ձեզի տրուած է գիտնալ երկինքի թագաւորութեան խորհուրդները, և անոնց արուած չէ: 12 - Վասն զի ով որ ունի, անոր պիտի տրուի ու պիտի աւելնայ. և ով որ չունի, ունեցածն ալ անկէ պիտի աւանդուի: 13 - Անոր համար առականքով կը խօսիս անոնց, որ կը տեսնեն ու չեն տեսներ, և կը լսեն ու չեն լսեր ու միտք չեն առներ: 14 - Եւ անոնց վրայ կը կատարուի Եսայիի մարգարէութիւնը որ կ'ըսէ, Լսելով պիտի լսէք, ու պիտի չիմանաք, և տեսնելով պիտի տեսնէք, ու պիտի չտեսնէք: 15 - Վասն զի այս ժողովուրդին սիրտը թանձրացաւ, և իրենց ականջներովը ծանր լսեցին, ու աչքերնին զոցեցին, որպէս զի չըլլայ թէ բնաւ աչքերով տեսնեն և ականջներով լսեն և արտով իմանան ու դարձի գան, և ես զանոնք բժշկեմ: 16 - Բայց երանի է ձեր աչքերուն որոնք կը տես-

նեն, ու ձեր ականջներուն որոնք կը լսեն: 17 - Բանգի ճշմարտ կ'ըսեմ՝ ձեզի որ շատ մարգարէներ և արդարներ փափաքեցան ձեր տեսածները տեսնել՝ ու չտեսան, և ձեր լսածները լսել ու չլսեցին:

18 - Հիմա դուք սերմ ցանողին առականք լսեցէք: 19 - Այն ամէնը որ թագաւորութեան խօսքը կը լսէ ու միտք չառներ, չարը կաւ դայ ու անոր արտին մէջ ցանուածը կը յափշտակէ. սահկա այն է որ ճամբուն քով ցանուեցաւ: 20 - Եւ ապստամբուտ տեղերու վրայ ցանուածը այն է որ երբ կը լսէ խօսքը, շուտ մը ուրախութեամբ կ'ընդունի զանկա: 21 - Բայց իր մէջ արմատ չունենալով, քիչ ժամանակ կը տեւէ. ու երբ նեղութիւններ հարածանք ըլլայ խօսքը, շուտ մը կը դադարի: 22 - Եւ փուշերուն մէջ ցանուածը այն է որ երբ կը լսէ խօսքը, աշխարհիս զրոյցները և հարստութեան խաբէութիւնը խօսքը կը խեղդեն, ու կ'ըլլայ անպտուղ: 23 - Իսկ աղէկ հողի մէջ ցանուածը այն է որ երբ կը լսէ խօսքը, միտք կ'առնէ, և պտուղ կուտայ, ո՛րը հարուր, ո՛րը վաթսուս, ու ո՛րը երեսուն:

24 - Ուրիշ առականք մըն ալ յառաջ բերաւ անոնց ու բաւ, Երկինքի թագաւորութիւնը նմանեցաւ մարդու մը, որ իր արտին մէջ բարի սերմ ցանեց: 25 - Ու երբ մարդիկ կը քննախոյն, իր թշնամին եկաւ ու ցորենին մէջ որով ցանեց և գնաց: 26 - Աւ երբ խոտը բուսաւ ու պտուղ բերաւ, անկէ ետեւ որոմն ալ երեւեցաւ: 27 - Աւտի տանուտերոց ծառաները մօտեցան ու իրեն բռին, Տէր, չէ՞ որ դուն քու արտի մէջ բարի սերմ ցանեցիր. ուրոմն որով ուրիշ ունի: 28 - Եւ անկեղծ բաւ անոնց, թշնամի մարդ մը բրած և ատիկա. ծառաները իրեն բռին, Հիմա կ'ուզե՞ս որ երթանք զանկա մէկդի քողերք: 29 - Ան ալ բաւ, Այ, չըլլայ թէ որովք քաղած ատեննիդ ցորենն ալ անոր հետ փոցնէք: 30 - Թող առէք որ երկուքն ալ մէկտեղ աճին մինչև հունձքի ատենը. և հունձքի ատենը հնձողներուն պիտի բռնի, Առաջ որովք քողեցէք, և զանկա խորձ խորձ կապեցէք այբելու համար, իսկ ցորենը իմ ամբարս ժողվեցէք:

31 - Ուրիշ առականք մըն ալ յառաջ

բերաւ անոնց ու բաւ, Երկինքի թագաւորութիւնը մանանեկի հասակն է, զոր մարդ մը առաւ, իր արտին մէջ ցանեց: 32 - Որ ամէն սերմերէն պղտուկ է, ու երբ աճի, ամէն խոտեղէններէն մեծ է, ու ծառ կ'ըլլայ, այնպէս որ Երկինքի թագաւորները կուգան և անոր ճիւղերուն վրայ կը հանգչին:

33 - Ուրիշ առականք մըն ալ զրուցեց անոնց - Ըստ, Երկինքի թագաւորութիւնը խմորի նման է, զոր կին մը առաւ, երբ գրեւ պիւրի մէջ պահեց, զինչև ամէնն ալ խմորեցաւ:

34 - Յիսուս այս ամէն բաները առականքով խօսեցաւ ժողովուրդին, ու առանց առականք բան մը չէր խօսեր անոնց: 35 - Որպէս զի կատարուի մարգարէին ձեռքով բուսած խօսքը, Առականքով պիտի բանամ իմ բերանս, աշխարհի սիղբէն ի վեր ծածկուած բաները յառաջ պիտի բերեմ:

36 - Այն ատեն Յիսուս ժողովուրդները թողուց, տունը եկաւ, և իր աշակերտները մօտեցան իրեն ու բռին, Արտին որովք բուսան ու առականք մեկէ մեկի:

37 - Ան ալ պատասխան տուաւ ու բաւ անոնց, Բարի սերմը ցանողը Ուրիշ մարդիկ է: 38 - Եւ արքայ աշխարհի մարդիկ են, որ թագաւորութեանը որդիներն են, բայց որովք չարին որդիներն են: 39 - Եւ թշնամին որ զանկա ցանեց, Սատանան է, և հունձքը աշխարհիս վերջն է, ու հնձողները հրեշտակներն են: 40 - Արդ ինչպէս՝ որ որովք կը ժողվուի ու կրակի մէջ կ'այրի, աշխարհիս վերջն ալ այնպէս պիտի ըլլայ: 41 - Որդին մարդիկ իր հրեշտակները պիտի զրկէ, ու պիտի ժողվին անոր թագաւորութենէն բոլոր գայթակղութիւնները, և զանոնք որ անօրէնութիւն կը գործեն, 42 - Ու կրակի հնոցին մէջ պիտի ձգեն զանոնք. հան պիտի ըլլայ լալ ու ակուններ կը ձուտը: 43 - Այն ատեն արեւի պէս պիտի փայլին արդարները իրենց Հօրը թագաւորութեանը մէջ: Ան որ լսելու ականջ ունի, թող լսէ:

44 - Գարձալ երկինքի թագաւորութիւնը արտի մէջ պահուած զանձի նման է, զոր մարդ մը գանձով կը ծածկէ, և ուրախութիւնէն կ'երթայ բոլոր ունեցածը կը ծախէ, ու այն արքայ կը գնէ:

45 - Գարձալ երկինքի թագաւորութիւնը վաճառական մարդու մը նման է, որ գեղեցիկ մարգարիանք կը փնտռէ: 46 - Եւ պատուական մարգարիս մը գանձելով, գնաց իր բոլոր ունեցածը ծախեց, ու զանկա կ'ընց:

47 - Գարձալ երկինքի թագաւորութիւնը ծովը ձգուած ուսկանի մը նման է, որ ամէն տեսակէն կը ժողվէ: 48 - Զոր երբ լեցուեցաւ, ցամաքը հանեցին, ու նստան՝ աղէկները ամաններու մէջ ժողվեցին և ոնշաջը դուրս ձգեցին: 49 - Այսպէս պիտի ըլլայ աշխարհիս վերջը. հրեշտակները պիտի ելլեն, ու արգարներուն մէջէն չարերը պիտի գտան, 50 - Եւ պիտի ձգեն զանոնք կրակի հնոցին մէջ, հան պիտի ըլլայ լալ ու ակուններ կը ձուտը:

51 - Ըստ անոնց Յիսուս, Համալսէք այս ամէն բաները. բռն անոր, Այո, Տէր: 52 - Եւ անկեղծ բաւ անոնց, Անոր համար ամէն դպիր որ երկինքի թագաւորութեան աշակերտեալ է, նման է տանուտէր մարդու մը որ իր գանձէն նոր ու հին բաներ կը հանէ:

53 - Աւ երբ կատարեց Յիսուս այս առականքը, անկէ մեկնեցաւ: 54 - Եւ եկաւ իր գաւառը, ու անոնց կը արժեցներ իրենց ժողովուրդներն մէջ. մինչև որ կը զարմանային անոնք ու կ'ըսէին, Ասիկա ուրիշ ունի այս իմաստութիւնը և հրաշքերը: 55 - Ասիկա հրեշտակներն չէ՞. ասոր մայրը Մարիամ չ'է՞ կուզուի, ու ասոր եղբայրները՝ Յակոբոս և Յովնէս ու Սիմոն և Յուզա: 56 - Աւ ասոր քոյրերը ամէնը մեր քով չէ՞ն. ալ ինք ուրիշ ունի այս ամէն բաները: 57 - Եւ անոր վրայով կը դայ այն իր գաւառին ու իր տանը մէջ: 58 - Եւ հոն շատ հրաշքերը չըբաւ անոնց անհաստատութեանը համար:

ԳԼ. ԺԵ

Այն ժամանակ Հերովդէս չորսդարեայ Յիսուսի համբաւը լսեց: 2 - Ու իր ծառաներուն բաւ, Անկեղծ Յովհաննէս մկրտիչն է. անկեղծ մեռելիներէն յարութիւն առած է, և անոր համար հրաշքեր կ'ըլլան անով:

3 - Բանկի Հերովդէս Յովհաննէսը բռնեց, զանկա կապեր ու բանար դրեք

էր, եր եղբոր Փրիսպարոս կնոջ, Հերովդ-
 քիայի, համար: 4 - Վասն զի Յովհան-
 նէս անոր կ'ըսէր, Բեդի օրինաւոր չէ
 զանիկա կն ունենայ: 5 - Ուստի կ'ու-
 ղէր զանիկա սպանելը, բայց ժողովուր-
 դէն կը վախնար, վասն զի իբրև մար-
 գարէ կ'ընդունէին զանիկայ: 6 - Ու
 երբ Հերովդէսի ծննդեան օրը եղաւ,
 Հերովդէսի աղջկը խաղաց հանդէսի
 արահի մէջ, ու Հերովդէսի հասնելի ե-
 դաւ: 7 - Ուստի երգումով խոտացաւ
 որ տայ անոր ի'նչ որ ուզելու ըլլայ:
 8 - Եւ անիկա առաջ իր մօրմէն խրատ-
 ուելով ըսաւ, Տուր ինծի հոս Յովհան-
 նէս մկրտչին զըսելք սիւտատեղի մը վրայ:
 9 - Եւ թագաւորը արտանցաւ. բայց
 երգումներուն համար ու իրեն հետ
 նաողներուն համար հրաման ըրաւ որ
 արուի: 10 - Եւ Ֆարք զրկելով Յով-
 հաննէսը բանտին մէջ գլխատեց: 11 -
 Եւ անոր գրուելք սիւտատեղով բերուե-
 ցաւ ու արուեցաւ աղջկան, ան ալ իր
 մօրը տարաւ: 12 - Եւ անոր աշակերտ-
 ները եկան ու մարմնը վերցնելով թու-
 ղեցին, և զացին Յիսուսի պատմեցին:
 13 - Ու երբ լսեց Յիսուս, անկէ նա-
 ըով անապատ տեղ մը գնաց առանձին.
 երբ լսեցին ժողովուրդները, ոտքով ա-
 նոր ետեւէն գացին իրէն, բաղաբներէն:
 14 - Ու *երբ դուրս ելաւ, շատ ժո-
 ղովուրդ տեսնելով խղճաց անոնց վրայ,
 ու անոնց հիւանդները բժշկեց:
 15 - Եւ իրիկուան ատեն իր աշա-
 կերտները իրեն եկան ու ըսին, Հոս
 անապատ տեղ մըն է, և ժամանակը
 ուշացած է. արձակէ ժողովուրդները,
 որպէս զի գեղերը երթան ու իրենց կե-
 րակուր գնեն: 16 - Եւ Յիսուս անոնց
 ըսաւ, Հարկ չէ որ ատոնք երթան,
 դուք առէք ատոնց որ ուսանին: 17 -
 Անոնք ալ ըսին անոր, Հոս ուրիշ բան չ
 չունինք, բայց միայն հինգ նիւանակ ու
 երկու ձուկ: 18 - Ու ըսաւ անոնց, Հոս
 ինծի բերէք զանոնք: 19 - Եւ հրաման
 ըրաւ որ ժողովուրդները խոտին վրայ
 նստին. և հինգ նիւանակը ու երկու
 ձուկը առաւ, ու դէպ ի երկինք նայի-
 ւով օրհնեց, ու կարելով նիւանակները
 աշակերտներուն տուաւ, և աշակերտ-
 ները ժողովուրդին: 20 - Եւ ամէնը
 կերան ու կշտացան. և տասուերկու
 կողով լեցուն աւելցած կտորուանք.

*Ուրիշ, երբ Յիսուս

ները վերցուցին: 21 - Եւ անոնք որ
 կերան, հինգ հազարի չափ այր մարդիկ
 էին, կհնեւէն և տղաքներէն զատ:
 22 - *Եւ շուտ մը աշակերտները ար-
 տորցուց որ նաւը մտնեն, և իրմէ ա-
 ռաջ անդին կողմը տնցնին, մինչև որ
 ինք ժողովուրդները արձակէ: 23 - Եւ
 ժողովուրդները արձակէն ետքը, ինք
 լեռը ելաւ առանձին սղօթք բնկու.
 ու երբ իրիկու եղաւ, հոն մինակ էր:
 24 - Իսկ նաւը արդէն ծովուն մէջ
 տեղը այլեւուրեւ թափու մէջ էր, վասն
 զի հովը դեմ էր: 25 - Ու զիշերուան
 չորրորդ պահուն Յիսուս դէպ ի անոնք
 գնաց, ծովուն վրայ քայլելով: 26 - Եւ
 աշակերտները երբ զանիկա տեսան որ
 ծովուն վրայ կը քայլէր, խուսկեցան, և
 ըսին թէ աչքի երևոյթ ըստ մըն է. ու
 վախերնէն կանչուըւտեցին: 27 - Եւ
 շուտ մը Յիսուս խօսեցաւ անոնց ու
 ըսաւ, Բաջ եղէք, ես եմ, մի վախնաք:
 28 - Պետրոս պատասխան տուաւ անոր
 ու ըսաւ, Տէր, եթէ դուն ես, հրաման
 ըրէ ինծի որ քեզի գամ ջուրերուն
 վրայէն: 29 - Ան ալ ըսաւ, Եկուր.
 Պետրոս ալ նուէն իջաւ, ջուրերուն
 վրայէն քայլք օրպէս զի Յիսուսի քով
 երթայ: 30 - Բայց հովը անստիկ տես-
 նելով վախցաւ, ու երբ սկսաւ ընկզմիլ,
 աղաղակեց ու ըսաւ, Տէր, ազատէ զիս:
 31 - Եւ Յիսուս շուտ մը իր ձեռքը
 երկնցուց, ըսնեց զանիկա ու անոր
 ըսաւ, Թերահաւատ, ինչո՞ւ երկմտե-
 ցար: 32 - Ու երբ նաւը ելան, հովը
 դադարեցաւ: 33 - Եւ անոնք որ նա-
 ըուն մէջ էին, եկան երկրպագութիւն
 ըրին անոր ու ըսին, Կրտսերն Արդի
 Աստուծոյ ես դուն:
 34 - Ու անդի կողմը անցնելով,
 Գեննեպոսթի երկիրը հասան: 35 -
 Ու երբ այն տեղի մարդիկ ճանչցան
 զանիկայ, Ֆարք զրկեցին բոլոր շքակալ
 տեղերը, ու բոլոր հիւանդները անոր
 բերին: 36 - Եւ կ'աղաչէին անոր, որ
 միայն իր հանդերձին թղանցնէր զպղին.
 և անոնք որ գպան, բժշկուեցան:

ԳԼ ԺԵ

Այն ատեն Յիսուսի եկան գալի-
 ները ու փաբիսեցնելը, որոնք Երու-
 սաղէմէ էին, ու ըսին, 2 - Ինչո՞ւ քու

*Ուրիշ, Եւ Յիսուս

աշակերտներդ ձերերուն աւանդու-
 թիւնը զանց կ'ընեն, վասն զի ձեռքեր-
 նին չեն լուար, երբ հաց կ'ուտեն:
 3 - Ան ալ պատասխան տուաւ ու ըսա-
 ւանց, Հապա դուք ինչո՞ւ Աստուծոյ
 պատուիրակը զանց կ'ընէք ձեր աւան-
 դութեան պատճառաւ: 4 - Բանցի
 Աստուած պատուիրակը ըսելով, Գու-
 հարդք ու մայրք պատուէ: 5 - Եւ,
 Ով որ էր հայրը կամ մայրը անիծէ, մա-
 հավ թող մեռնի: 6 - Բայց դուք կ'ը-
 սէք, Ով որ էր հօրը կամ մօրը բռն թէ
 Այն բանը զոր ինծմէ պիտի շահիս,
 Աստուծոյ արարչութեան պատճա-
 կամ իմ մայրը զպատուէ, ապա է. և
 ոչպէս ձեր աւանդութեան պատճա-
 ըաւ Աստուծոյ պատուիրակը խա-
 փանծ էք: 7 - Կեղծաւորներ, աղէկ
 մարգարէութիւն ըրաւ ձեր վրայ ի-
 սայի ու ըսաւ, 8 - Այս ժողովուրդը
 Գոյն շրթանքներով զիս կը պատուէ,
 բայց իրենց սիրտը հեռացած զատուած
 է ինծմէ: 9 - Ան պարզապէս զիս կը
 պաշտեն մարդոց պատուիրակը բաները
 էէք: 10 - Եւ ժողովուրդները իրեն կան-
 չելով ըսաւ անոնց, Լսեցէք ու միտք
 առէք: 11 - Ոչ թէ ինչ որ բերանը կը
 մտնէ կ'զգո՞՞ծ մարդը, հապա ինչ որ
 բերնէն կ'ելլէ անիկա կը պղծէ մարդը:
 12 - Այն ատեն իր աշակերտները
 եկան՝ ըսին իրեն, Գիտես որ փաբիսե-
 ցիները զայլթակեցան երբ լսեցին այն
 կողքը: 13 - Ան ալ պատասխան տա-
 ւով ըսաւ, Ամէն տունը զոր իմ երկ-
 նաւոր Հայրս չէ անկեր, պիտի խլուի:
 14 - Թող առէք զանոնք. էէք: Կյոյր
 են, կյոյրերու առաջնորդ. իսկ եթէ
 կյոյր կյոյրին առաջնորդէ, երկուքն
 ալ փոքր պիտի իշխան: 15 - Եւ Պե-
 տրոս պատասխան տալով անոր ըսաւ,
 Մեկնէ մեզի այս առակը: 16 - Ըսաւ
 Յիսուս, Ի՞նչ ալ տակուան անիտ
 էք: 17 - Ու չէք հասկնար թէ ամէն
 ինչ որ բերանը կը մտնէ՞ փոքր կ'եր-
 թայ ու արտաքնոյրը կը ձգուի: 18 -
 Բայց բերնէն ելած բաները որտէն
 յառաջ կու գան, և անոնք կը պղծեն
 մարդը: 19 - Վասն զի արտէն կ'ելլեն
 չար խորհուրդներ, սպանութիւններ,
 շնութիւններ, պրանկութիւններ, գո-
 ղութիւններ, սուս վկայութիւններ,
 հայհոյութիւններ: 20 - Անոնք են որ
 կը պղծեն մարդը, բայց անկողայ ձեռ-
 քով հոյ ուտելը չպղծը մարդը:
 21 - Եւ Յիսուս անկէ ելլելով՝ Տի-
 բուրի ու Սիդոնի կողմերը գնաց: 22 -
 Եւ ահա Գաւանացի կին մը այն սոս-
 մաններէն ելած՝ կ'աղաղակէր անոր ու
 կ'ըսէր, Աղբրմէ ինծի, Տէր, որք ի՞նչ
 թի. աղբիկս դեւէն ստատիկ կը չար-
 չարուի: 23 - Եւ ինք բնաւ պատաս-
 խան մը չտուաւ անոր. ու իր աշա-
 կերտները մօտենալով՝ կ'աղաչէին իրեն
 ու կ'ըսէին, Արձակէ ատիկա, վասն
 զի մեր ետեւէն կ'աղաղակէ: 24 - Եւ
 ինք պատասխան տուաւ ու ըսաւ, Ես
 ուրիշ չէ չըրկուեցայ, բայց միայն իս-
 րայելի ատնը կորուած ոչխարներուն:
 25 - Եւ անիկա եկաւ երկրպագու-
 թիւն կ'ընէր անոր ու կ'ըսէր, Տէր,
 օգնէ ինծի: 26 - Ան ալ պատասխան
 տուաւ ու ըսաւ, Աղէկ չէ տղոց հացը
 առնել ու շուններուն ձգելը: 27 - Եւ
 անիկա ըսաւ, Այո, Տէր, վասն զի
 շուններն ալ իրենց տեղով սեղանէն
 ինձած փշաքերներէն կը կերակուին:
 28 - Այն ատեն Յիսուս պատասխան
 տուաւ անոր ու ըսաւ, Ով կին, բու-
 հաւատարմ մեծ է, քու ուզածիդ պէս
 ըլլայ քեզի. և նոյն ժամէն անոր աղ-
 ջիկը բժշկուեցաւ:
 29 - Ու Յիսուս անկէ գնաց, Գա-
 լիլէտի ծովեզերքը եկաւ, և լեռը ել-
 լելով հոն նստաւ: 30 - Եւ շատ ժո-
 ղովուրդներ իրեն եկան, որոնք իրենց
 հետ ունէին կաղեր, կյոյրեր, համբեր,
 հաշմանդաններ և ուրիշ շատեր. ու
 ձգեցին զանոնք Յիսուսի ոտքը. և
 բժշկեց զանոնք: 31 - Այնպէս որ ժո-
 ղովուրդները զարմացան, տեսնելով
 որ համբերը կը խօսէին, հաշմանդան-
 ները կը բժշկուէին, կաղերը կը քա-
 լէին և կյոյրերը կը տեսնէին, ու Իս-
 րայելի Աստուածը կը փառաւորէին:
 32 - Եւ Յիսուս իր աշակերտները
 քովը կանչելով ըսաւ, Կը խղճամ այդ
 ժողովուրդին վրայ, վասն զի հիմա
 երեք օր է որ իմ քովն են, և բան մը
 չունին ուտելու. ու զանոնք անօթի
 արձակել չեմ ուզեր, ըլլայ որ ճամ-
 արն մարին 33 - Իսկ աշակերտները

Մինք անապատի մէջ ուր-
 յայտարարեց թագութիւնը կշտացնենք:

*Ուրիշ, բերնովը ինծի կը ծածկուինք: Եւ շրթանքներովը



2985-88

34 - Եւ Յիսուս ըսաւ անոնց, Գտնի՞ նկանակ ունիք. ուստիք ալ ըրին, Եօթը, ու բանի մը մանր ձուկեր: 35 - Եւ Տրաման ըրաւ ժողովուրդին որ գեանին վրայ նստին: 36 - Ու եօթը նկանակը և ձուկերը առաւ, գոհացաւ և կարեց ու սուսաւ աշակերաններուն, աշակերաններն ալ ժողովուրդին: 37 - Կերան ամենը և կշտացան, ու եօթը գամբիւղ լեցուն՝ աւելցած կտորուանքները վերցնուցին: 38 - Եւ անոնք որ կերան՝ չորս հողաբ այր մտրդիկ էին, կրներէն և տղորքներէն գտաւ: 39 - Ու երբ ժողովուրդը տրձակեց, նսար մտաւ ու Մագդալայի սահմանները եկաւ:

ԳԼ ԺԶ

Եւ փարիսեցիները ու սադուկեցիները քովը եկան, փորձելով՝ իրձ կ'ուզէին որ երկինքէն նշան մը ցուցնէ իրենց: 2 - Անիկա պատասխան տուաւ ու ըսաւ անոնց, Երբ երկուն կ'ըլլայ, կ'ըսէ թէ Պարզ պիտի ըլլայ, վասն զի երկինք կարմրած է: 3 - Եւ առաւանց՝ Այսօր միտիկ պիտի ըլլայ, վասն զի երկինք միգապարս ու կարմրած է: Կեղծաւորներ, երկինքի երեսքննյ գիտէք, բայց ժամանակներուն նշանները չէ՞ք կրնար գէտնալ: 4 - Չար ու շնացող ազգը նշան կ'ուզէ, և ուրիշ նշան պիտի չտորուի անոր, բայց Յովնան մարգարէին նշանը. և թողուց զանոնք ու գնաց:

5 - Ու երբ իր աշակերտները անդիկ կողմը անցան, հաց առնելու մտնցեր էին: 6 - Եւ Յիսուս անոնց ըսաւ, Ես յեղէք ու զգուշացէք փարիսեցւոց ու սադուկեցւոց խմորէն: 7 - Անոնք իրենց մէջ կր խորհէին ու կ'ըսէին թէ Հաց չըբերէք զիչ զիչ: 8 - Իսկ Յիսուս անոնց խորհուրդը գիտնալով՝ ըսաւ անոնց, Չեք մէջ ինչո՞ւ կր խորհիք, թե ըսահաւատներ, թէ հաց չաւելք: 9 - Ըստկարին չէ՞ք հասկնար և չէ՞ք յիշեր հինգ նկանակը՝ հինգ հողաբին, ու բանի՞ կողով վերցուցէք: 10 - Ո՞չ ալ եօթը նկանակը՝ չորս հողաբին, ու բանի՞ գամբիւղ վերցուցէք: 11 - Ինչպէս չէք հասկնար թէ ես հացի համար չբահ ձեզի՞ փարիսեցւոց և սադուկեցւոց խմորէն զգոյշ կենայ: 12 - Այն ստան հասկցան որ հացի խմորէն զգու-

շանալ չբաւ, հապա փարիսեցւոց ու սադուկեցւոց վարդապետութենէն:

13 - Եւ Յիսուս Փիլիպպոսի Կեսարիային կողմերը երթալով՝ իր աշակերաններուն հարցուց ու ըսաւ, Մտրդիկ մի կ'ըսեն թէ եմ ես Որդի մտրդոյ: 14 - Ու անոնք ըբին, Ոմանք է՞ք: 15 - Եւ Յովհաննէս մկրտիչն ես, ուրիշները՝ Եղիշն, ուրիշներն ալ՝ Երեմիայ կամ մտրգարներէն մէկը: 15 - Ըսաւ անոնց, Հապա դուք ինձի համար ո՞վ կ'ըսէք թէ եմ: 16 - Սիմոն Պետրոս պատասխան տուաւ ու ըսաւ, Գու՞ն ես Քրիստոս, կենդանի Աստուծոյ Որդին: 17 - Եւ Յիսուս պատասխան տուաւ ու ըսաւ անոր, Երանի՞ քեզ Սիմոն, Յովնանի որդի. վասն զի մտրմինը և արիւնք քեզի չչոյանց արիւնք, հապա իմ Հայրս՝ որ երկինքն է: 18 - Եւ ես քեզի կ'ըսեմ որ Գու՞ն Պետրոս ես, ու այս վէսին վրայ պիտի շինեմ իմ եկեղեցին, և դիտարիս դուները զանիկա պիտի չչոյթեն: 19 - Ու երկինքի թագաւորութեան բռնայները քեզի պիտի տամ: և ինչ որ երկի վրայ կ'ապեւ, երկինքի մէջ կ'ապուած պիտի ըլլայ: 20 - Այն ատեն աշակերաններուն պատուիրեց, որ մտրդու չըսեն թէ ինք Քրիստոսն է:

21 - Անկէ ետեւ սկսաւ Յիսուս իր աշակերաններուն ցուցնել թէ պետք է որ ինք Երուսաղէմ երթայ, ու շատ չարչարանքներ կրէ ձերբերէն և քահանայապետներէն ու դպիրներէն, և սպաննուի, ու երրորդ օրը յարութիւն առնէ: 22 - Եւ Պետրոս մէկդի առաւ զանիկա, և սկսաւ յանդիմանել զանիկա ու ըսել, Գա՛ւ լեզիքդ, Տէր, այդ բանք քեզի չըլլայ: 23 - Եւ ինք դառնալով Պետրոսի ըսաւ, Ետի գնա, Ստամայ, ինձի գոյթմտկորութիւն ես դուն. վասն զի Աստուծոյ բռնները չեւ մտածեր, հապա մտրդոց բաները:

24 - Այն ատեն Յիսուս իր աշակերաններուն ըսաւ, Եթէ մէկը իմ տուեւ գայ կ'ուզէ, թող իր անձը ուրանայ և իր խաչը վերցնէ ու իմ ետեւէս գայ: 25 - Վասն զի ով որ կ'ուզէ իր անձը ապրեցնել, պիտի կորսնցնէ

*Այսինքն, Վէմ
†Ոմանք, Յիսուս Քրիստոսն

զանիկա. և ով որ ինձի համար իր անձը կր կորսնցնէ, պիտի գտնէ զանիկա: 26 - Գանդի ինչ կը շահի մտրդ մը՝ եթէ բայթ աշխարհք վտատի և իր անձը կորսնցնէ, կամ իր անձին համար ինչ ազապէք պիտի ապ մտրդ: 27 - Վասն զի Որդին մտրդոյ իր Հօրք փառքով պիտի գայ իր հրեշտակներուն հետ, և այն ատեն ամէն մէկուն իր գործերուն համեմատ հատուցում պիտի ընէ: 28 - Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի որ Հոս ներկայ եղողներէն մէկ քանիները կան որոնք մահուան համբ պիտի չառնեն, մինչև տեսնեն Որդին մտրդոյ իր թագաւորութիւնովը եկած:

ԳԼ ԺԷ

Եւ վեց օրէն ետեւ Յիսուս իրեն հետ առաւ Պետրոսը ու Յակոբոսը և անոր էղբայրը Յովհաննէսը, ու զանոնք քարձր լեռ մը հանց առանձին: 2 - Եւ անոնց առջև պլակիքսկացաւ, ու իր երեսք փայլեցաւ արեգակի պէս, ու իր հանդերձները ձերմկցան լցոյի պէս: 3 - Եւ ահա երեցան անոնց Մովսէսն ու Եղիա ու իրեն հետ իր խօսէին: 4 - Պատասխան տուաւ Պետրոս ու ըսաւ Յիսուսի, Տէր, աղէկ է որ հոս էնանք. եթէ կ'ուզես, երեք խրճիթ շինեք հոս. մէկը քեզի, և մէկը Մովսէսի, ու մէկը Եղիայի: 5 - Եւ քանի որ անիկա կը խօսէր, ահա լուսաւոր ամպ մը անոնց վրայ հովանի եղաւ. և ահա ամպէն ձայն մը իւր ըսելով, Աստիկա է իմ սիրելի Որդիս, որս հաւանք եմ, ասոր մտիկ ըրէք: 6 - Աշակերանները երբ լսեցին, երեսուն վրայ ինկան ու խիտ վախցան: 7 - Եւ Յիսուս ժօտեանալով դպաւ անոնց ու ըսաւ, Ելէք ու մի վախնաք: 8 - Աչքերնի վերցնեցին ու մէկը չտեսան, բայց միայն Յիսուսը:

9 - Ու երբ այն լեռնէն վար կ'իջնէին, Յիսուս պատուիրեց անոնց ու ըսաւ, Այդ տեսիլքը մտրդու մի գրուցէք, մինչև Որդին մտրդոյ մեռելներէն յարութիւն առնէ: 10 - Եւ իր աշակերտները իրեն հարցուցին ու ըբին, Արեւմ ինչո՞ւ համար դպիրները կ'ըսեն թէ Պետք է որ առաջ Եղիա գայ: 11 - Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ անոնց, Յիսուսի առաջ Եղիա կու գայ և ամէն բան կարգի կը դնէ:

12 - Բայց ձեզի կ'ըսեմ որ Եղիա արդէն եկած է, և զանիկա չճանչցան, հապա ինչ որ ուզեցին՝ ըրին անոր. նոյնպէս ալ Որդին մտրդոյ անոնցմէ պիտի չարչարուի: 13 - Այն ատեն հասկցան աշակերտները որ Յովհաննէս մկրտիչն համար ըսաւ անոնց:

14 - Ու երբ ժողովուրդին քով եկան, մտրդ մը մտտեցաւ անոր, և ծուռկի վրայ գալով՝ կ'ըսեր, Տէր, իմ որդւոյս սղորմէ, որ կը լուսնոտի և սարաչար կը տանջուի, քանզի շատ տնգամ կրակի մէջ կ'իյնայ, ու շատ անգամ ջուրի մէջ: 15 - Եւ զանիկա քու աշակերաններուդ ըբի, ու չկրցան զանիկա բժշկել: 16 - Յիսուս պատասխան տուաւ ու ըսաւ, Ով անհաւատ և խտտորեալ ազգ, մինչև երբ ձեզի հետ պիտի ըլլամ, մինչև երբ ձեզի պիտի համբերեմ. զանիկա հոս ինձի բերէք: 17 - Եւ Յիսուս աստեց անոր, ու զեք անկէ ելաւ, և բժշկուեցաւ աղան նոյն ժամէն: 18 - Այն ատեն աշակերանները առանձին Յիսուսի քով երթալով ըբին, Մենք ինչո՞ւ չկրցանք զանիկա հանել: 19 - Եւ Յիսուս ըսաւ անոնց, Չեք թերահաւատութեանը համար. քանզի ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Եթէ մտնանիսի հատի չափ հաւատք ունենաք, այս լեռանք պիտի ըսէք, Ասկէ անդին փոխադրուէ, և պիտի փոխադրուի. ու բան մը անհնարին պիտի չըլլայ ձեզի: 20 - Սակայն այս տեսակը ուրիշ բանով չեղլեր, բայց միայն ազօթքով և ծոմնազհուսութեամբ:

21 - Ու երբ անոնք Գալիլէայի մէջ կը պտրտէին, Յիսուս ըսաւ անոնց, Որդին մտրդոյ պիտի մտանուի մտրդոց ձեռքը, 22 - Եւ զանիկա պիտի մեացնեն, ու երրորդ օրը յարութիւն պիտի առնէ. ու խիտ տրամեցան:

23 - Երբ անոնք Կափառնայում եկան, երկգրամեան քահանայները Պետրոսի եկան ու ըբին, Եւ մտրդապետը երկգրամեանք չո՞ հատուցաներ. և անիկա ըսաւ, Այո, և քահանայնէ: 24 - Ու երբ տուճը մտաւ, առաջ Յիսուս խօսեցաւ անոր ս ըսաւ, Քեզի ինչպէս կ'երևնայ, Սիմոն. երկրի թագաւորները որմ՞ կ'առանն հարկը կամ տուրքը. իրենց սրգիներէն թէ օտարներէն: 25 - Պետրոս անոր ըսաւ թէ Օտարներէն. Յիսուս անոր ըսաւ, Ուրեմն որդիները ազատ են: 26 - Բայց

չըլայ որ զանոնք գայթակղեցնենք, գնա ծովը և կարթ ձգէ, ու առաջին ձուկը որ կ'ելլէ՝ առ, և անոր բերանը բանալով աստի մը պիտի գտնես. զանիկա առ, անոնց սուր ինծի և քեզի համար:

ԳԼ ԺԸ

Մոյն ժամանակ աշակերտները Յիսուսի թով եկան ու բռին, Ո՛վ է մեծ երկինքի թագաւորութեանը մէջ: 2 - Եւ Յիսուս տղայ մը կանչեց իրեն, զանիկա անոնց մէջտեղը կայնեցուց: 3 - Աւ բառ, ձշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի, եթէ դարձի չգաք և տղաց պէս չըլաք, երկինքի թագաւորութիւնը բնաւ պիտի չմտնէք: 4 - Առտի ով որ իր անձը այս աղան պէս խնայող չեցնէ, անիկա է մեծ երկինքի թագաւորութեանը մէջ: 5 - Եւ ով որ սյապիտի տղայ մը կ'ընդունի իմ անունովս, զիս կ'ընդունի: 6 - Եւ ով որ գայթակղեցնէ կայ պատիկներէն մէկը որոնք ինծի կը հաւատան, աղէկ է անոր՝ որ իր պարանոցէն իշու աղացքի քար մը կ'առնուի, ու ծովուն սնորհաբեր մէջ ընկողմի: 7 - Վայ սպառհի՛ր գայթակղութիւնները պատճառու. վասն զի հարկ է որ գայթակղութիւնները գան, բայց վայ սյն մարդուն՝ որուն ձեռքով գայթակղութիւնը կու գայ: 8 - Արդ եթէ քու ձեռքը կամ ոտքը քեզ կը գայթակղեցնէ, կտրէ զանիկա ու քեզմէ ձգէ. աղէկ է քեզի կող կամ պտկատուար մտնել կեանքը, քան թէ երկու ձեռք կամ երկու ոտք ունենալ ու յաւիտեանական կրակին մէջ ձգուիլ: 9 - Եւ եթէ աչքք քեզ կը գայթակղեցնէ, հանէ զանիկա և քեզմէ ձգէ. աղէկ է քեզի մէկ աչքով կեանքը մտնել, քան թէ երկու աչք ունենայ ու կրակին գիշեանը ձգուիլ: 10 - Զգոյշ կեցեք որ չամառաք այս պղտիկներէն մէկը. քանզի կ'ըսեմ՝ ձեզի որ երկինքի մէջ անոնց հրեշտակները միշտ կը տեսնեն իմ՝ Հօրս երեսը՝ որ երկինքն է: 11 - Վասն զի Որդին մարդոյ եկաւ կորուսածը փրկելու: 12 - Ի՞նչ պէս կ'երևնայ ձեզի. եթէ մարդ մը հասնուի ոչխար ունենայ, և անոնցմէ մէկը մարդի, իննասերինը ուրիշ չ'ընեները

*Ո՛րսն, չը՝ ձգեր, ու լեւները

չը՝ ձգեր, ու՝ երթար մտրածը փըն ուեր: 13 - Եւ եթէ գտնելու ըլլա զանիկա, ձշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի որ աւելի ուրախ կ'ըլլայ անոր վրայ, քան թէ իննասերիննը որոնք մտրած չ'են: 14 - Այսպէս ձեր երկնաւոր Հայրը չ'հաճեր որ այս պղտիկներէն մէկը կորուսի:

15 - Եթէ քու եղբայրդ քեզի դէմ մեղանչէ, գնա յանդիմանէ զանիկա երբ դուն և ան մինակ է.ք. եթէ քեզի մտիկ ընէ, շահեցար քու եղբայրդ: 16 - Հապա եթէ մտիկ չ'ընէ քեզի, քեզի հետ ուրիշ մը կամ երկուք այ առ, որպէս զի երկու կամ երեք վկաներու բերնէ ամէն բան հաստատուի: 17 - Եւ եթէ անոնց ալ մտիկ չ'ընէ, եկեղեցիին բռէ. իսկ եթէ եկեղեցիին ալ մտիկ չ'ընէ, հետանալիս ու մաքսաւորի պէս թող ըլլայ քեզի: 18 - Ձշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի, երկրի վրայ ինչ որ կ'ապէք, երկինքի մէջ կ'ապուած պիտի ըլլայ. ու երկրի վրայ ինչ որ արձակէք, երկինքի մէջ արձակուած պիտի ըլլայ: 19 - Գարձեալ կ'ըսեմ՝ ձեզի, եթէ ձեզմէ երկու հոգի երկրի վրայ մարտնչին, ամէն ինչ բանի համար որ խնդրեն, պիտի ըլլայ անոնց իմ՝ Հօրմէս որ երկինքն է: 20 - Քանզի ուր երկու կամ երեք հոգի ժողովուած ըլլան իմ անունովս, հոն կ'ամ ես անոնց մէջ:

21 - Այն ատեն Պետրոս մտնեցաւ անոր ու բառ, Տէր, քանի՞ անգամ եթէ եղբայրս ինծի դէմ մեղանչէ, ներեմ անոր. մինչև եթէ թը անգամ: 22 - Յիսուս անոր բառ, Քեզի չեմ բեր թէ մինչև եթէ թը անգամ, հապա մինչև եթէ անոնք անգամ եթէ թը: 23 - Ատր համար երկինքի թագաւորութիւնը կը նմանի թագաւորի մը, որ իր ծառաներէն հաշիւ առնել ուղեց: 24 - Ու երբ սկսաւ անել, սասար հապար տաղանդի պարտական մը բերուեցաւ իրեն: 25 - Բայց անիկա վճարելու կարողութիւն չունենալով, իր տէրը հրաման բրուս որ անիկա և անոր կինը ու որդիները և անոր բոլոր ունեցածը ծախուին, ու պարտք վճարուի: 26 - Իսկ ծառան անոր առջև իյնալով երկրպագութիւն կ'ընէր ու կ'ըսէր, Տէր, համբերէ ինծի և ամէն քեզի կը վճարեմ: 27 - Եւ այն ծառային տէրը վրան խղճալով արձակեց

զանիկա, ու պարտքը շնորհեց անոր: 28 - Եւ նոյն ծառան ելաւ, իր ծառայակիցներէն մէկը գտաւ որ իրեն հարեալ գահեկան պարտք ունէր, ու զանիկա բռնելով կը խեղդէր ու կ'ըսէր, Վճարէ ինծի ունեցած պարտքդ: 29 - Առտի անոր ծառայակիցը անոր ոտքը ինկաւ, կ'աղաչէր անոր ու կ'ըսէր, Համբերէ ինծի ու՝ քեզի կը վրձարեմ: 30 - Եւ ինք չէր ուզեր, հասպա զնաց՝ բանալոր դրաւ զանիկա, մինչև որ պարտքը վճարէ: 31 - Երբ իր ծառայակիցները տեսն իրած բռնեցը, խիտ տրտմեցան, ու եկան իրենց տէրոջը հասկցուցին բոլոր եղածը: 32 - Այն ատեն անոր տէրը կանչեց զանիկա ու բառ անոր, Չար ծառայ, այն բոլոր պարտքը ես քեզի շնորհեցի՝ ինծի աղաչելուդ համար: 33 - Ուրիշ անոր տէրը քեզի ալ քու ծառայակիցիդ ողորմիլ, ինչպէս ես քեզի ողորմեցայ: 34 - Եւ անոր տէրը բարեխնալով գահեկանըն ժամանեց զանիկա, մինչև որ բոլոր պարտքը վճարէ: 35 - Այսպէս իմ երկնաւոր Հայրը պիտի ընէ ձեզի, եթէ ձեր սիրտներն չ'էք ներք ամէն մէկդ իր եղբորը իրենց յանցանքները:

ԳԼ ԺԹ

Աւ եղաւ որ երբ Յիսուս այս խոսքերը լսեցուց, Գալիլեայէ ելաւ ու եկաւ Հրէաստանի սահմանները Յորդանանու անդին կողմը: 2 - Եւ անոր ետեւէն շատ ժողովուորներ գացին, ու հոն բժշկեց զանոնք: 3 - Եւ փառիքեցիները անոր մտնելով զանիկա կը փորձէին, ու կ'ըսէին թէ Արժան է որ մարդ մը իր կինը արձակէ ամէն պատճառի համար: 4 - Անիկա ալ պատասխան տուաւ ու անոնց բառ, Չէք կարգաք թէ ան որ սկիզբէն ստեղծեց, արու և էգ ստեղծեց զանոնք՝ ու բառ, 5 - Ատր համար մարդ էք հայրը ու մայրը պիտի ձգէ և իր կնոջ պիտի ըլլան: 6 - Առտի ալ երկուք չ'են, հապա մէկ մարմին. ուրիշ զայն որ Աստուած միաւորեց՝ մարդ թող չ'ըլլա: 7 - Ըսին իրեն, Հապա Մովսէս

ինչո՞ւ պատուիրեց արձակման թուղթ տալ և արձակել: 8 - Ըսաւ անոնց, Մովսէս ձեր սիրտներն կարծաթեանը համար ձեզի հրաման տուաւ կիններինդ արձակել, բայց սկիզբէն սյնպէս չեղաւ: 9 - Մովսէս ձեզի կ'ըսեմ, Ով որ առանց պառնկութեան պատճառի իր կինը արձակէ և ուրիշ մը առնէ, շուտիւն կ'ընէ. և ով որ արձակուածը առնէ, շուտիւն կ'ընէ: 10 - Իր աշակերտները բռն իրեն, եթէ այդպիսի բան կայ երկան ու կնոջ մէջտեղ, չամուսնանալը աղէկ է: 11 - Եւ ինք անոնց բառ, Ամէնը բաւական չ'են այդ բանին, հապա անոնք ներքինները որոնք երէց մօրը որովայնէն սյնպէս ծնան, և կան ներքիններ որոնք մարդոցմէ ներքին եղան, և կան ներքիններ որոնք իրազինքին ներքին բրին երկինքի թագաւորութեանը համար. ով որ կրնայ տանել թող տանի:

13 - Այն ատեն մանր տղաք բերուեցան իրեն, որպէս զի անոնց վրայ ձեռք դնէ և աղօթք ընէ, ու աշակերտները կը յանդիմանէին զանոնք: 14 - Բայց Յիսուս բառ, Թող տուէք այդ մանր տղան, և մի արգիլէք ատենք ինծի գալէն, վասն զի երկինքի թագաւորութիւնը այդպիսիներուն:

15 - Եւ անոնց վրայ ձեռք դնելու ետև զնոց անկէ: 16 - Եւ ահա մէկը մտնեալով ըս ու անոր, Բարի վարդապետ, ինչ բարի բոք գործեմ որպէս զի յախտնական կեանքը ընդունիմ: 17 - Եւ անիկա բառ անոր, Ինչո՞ւ գիտ բարի կ'անուանես. մէկէն զատ բարի չկայ, ու է Աստուած. հապա եթէ կ'ուզես կեանքը մտնել, պատուիրաքները պահէ: 18 - Ըսաւ անոր, Որսն. և Յիսուս բառ, Ատենք. Ազանութիւն մի բներ, Դնութիւն մի բներ, Գողութիւն մի բներ, Սուս վկայութիւն մի բներ, 19-Քու հայրը ու մայրը պատուէ, և Քու ընկերք քու անձիդ պէս սիրես: 20 - Պատասխան բառ անոր, Ատենք ալ ինչ բանով պակաս եմ: 21 - Ըսաւ անոր Յիսուս, եթէ կ'ուզես կատարեալ ըլլալ, գնա ունեցածդ ծախէ և սուր աղքատներուն, ու երկինքը զանձ պիտի ունենաս, և եկուր իմ

*Ո՛րսն, ամէնը քեզի

եռեւէս 22 - Երբ պատանին այս խօսքը լսեց՝ արտանձ գնաց, վասն զի շատ առաջուածք ունէր:

23 - Եւ Յիսուս ըսաւ աշակերտներուն, ձըմարբիս կ'ըսեմ՝ ձեզի որ հաւուսար դժուարաւ պիտի մտնէ երկինքի թագաւորութիւնը: 24 - Գարձեալ կ'ըսեմ ձեզի, Գիւրջին է որ ուղարար ստեղծեալ ճակէն անցնի, քան թէ հարուստը Աստուծոյ թագաւորութիւնը մտնէ: 25 - Աշակերտները երբ լսեցին, շատ զարմացան ու բռին, Աւրեմն ո՞վ կրնայ փրկուիլ: 26 - Յիսուս անոնց նայելով՝ ըսաւ, Ատիկա մարդոց կողմանէ անկարելի է, բայց Աստուծոյ կողմանէ ամէն բան կարելի է:

27 - Այն ատեն Պետրոս պատասխան ատաւաւ ու ըսաւ անոր, Ահա մեզի ամէն բան թողուցնիք եւ քու ետեւէդ եկանք. ուստի մեզի ինչ պիտի ըլլայ: 28 - Ըսաւ անոնց Յիսուս, ձըմարբիս կ'ըսեմ՝ ձեզի թէ դուք որ իմ ետեւէս եկաք, շինուանալով զայլուստիք երբ Արդին մարդոց իր փառաց ամօտք նստի, դուք ալ տասուերկու ամօտներու վրայ պիտի նստիք: Իսրայէլի տասուերկու ցեղերը գտատելու: 29 - Եւ ով որ թողուց տուներ, կամ եղբայրներ, կամ քոյրեր, կամ հայր, կամ մայր, կամ կին, կամ որդիներ, ում արտեր իմ անուանս համար, որիւրապատիկ պիտի առնէ, եւ յատենական կեանք պիտի ժառանգէ:

30 - Բայց շատ առաջինք պիտի ըլլան յետին, եւ յետինք՝ առաջին:

ԳԼ Ի

Քանզի երկինքի թագաւորութիւնը տանուաւոր մարդու մը նման է, որ առաւուսանց կանուխ ելաւ՝ իր այգիին համար բանուորներ ըռնելու: 2 - Եւ բանուորներուն հետ օրը մէկ դահեկանի խօսք կապեց, ու զանոնք զրկեց իր այգիին: 3 - Եւ ժամը երեքին ատենները ելաւ՝ ուրիշները տեսաւ, ուրոնք շուկային մէջ պարսպ կայներ էին: 4 - Աւ ըսաւ անոնց, Ի՞նչքա՞նչ ալ գացէք ի՞նչ այգիս, եւ ինչ որ արժան է՝ կու տամ ձեզի: 5 - Անոնք ալ գացին. ու նորէն ժամը վեցին եւ ժամը իննին

ատենները ելաւ՝ այնպէս ըրաւ: 6 - Եւ ժամը տասնութ կին ատենները ելաւ, ուրիշները գտաւ՝ որոնք պարսպ կայներ էին, ու անոնց ըսաւ, Ինչո՞ւ հոս բոյր օրը պարսպ կայներ էք: 7 - Ըսին իրեն, Անոր համար որ մէկը մեզ վարձքով չըռնեց. ըսաւ անոնց, Ի՞նչքա՞նչ ալ այգին գացէք, ու ինչ որ արժան է՝ պիտի առնէք: 8 - Եւ երբ երկուսն եղաւ, այգիին տերը իր անտեսին ըսաւ, Բանուորները կանչէ, եւ անոնց վարձքը տուր՝ վերջիններէն սկսելով մինչեւ առաջինները: 9 - Աւ երբ եկան անոնք որ ժամը տասնութ կին բացէր էին, մէկ մէկ դահեկան առին: 10 - Եւ առաջինները գալով՝ կը կարծէին որ աւելի պիտի առնեն, ու անոնք ալ առին մէկ մէկ դահեկան: 11 - Երբ առին տանուաւորը գէմ արտունջ կ'ընէին ու կ'ըսէին թէ 12 - Այդ վերջինները մէկ ժամ գործեցին, եւ զանոնք հաւասար ըրիբ մեզի, որ օրուան ծանրութիւնը ու աւարութիւնը քաշեցնիք: 13 - Անիկա պատասխան ատաւաւ անոնցմէ մէկուն ու ըսաւ, Ընկեր, ես քեզ չեմ զրկեր. չէ՞ որ դուն ինծի հետ մէկ դահեկանի խօսք կապեցիր: 14 - Աւ քուեդ ու գնա. կ'ուզեմ որ այս վերջինին քեզի բացի պէտք տամ: 15 - Միթէ ես իշխանութիւն չունիմ իմ բաներու վրայ՝ ինչ որ ուզեմ ընելու. կամ թէ քու աչքդ չ'որ է՝ որ ես բարերար եմ: 16 - Այսպէս յետինները առաջին պիտի ըլլան, եւ առաջինները յետին. վասն զի կանչուածները շատ են, բայց ընտրուածները քիչ:

17 - Աւ երբ Յիսուս Երուսաղէմ կ'իլէր, ճամբան տասուերկու աշակերտները իրեն հետ տաւա առանձին, ու ըսաւ անոնց, 18 - Ահա Երուսաղէմ կ'երկնք, եւ Արդին մարդոց պիտի մատուտի քահանայապետներուն ու գպիրներուն, եւ զանիկա մահուան պիտի դատապարտեն: 19 - Եւ զանիկա հեթանոսներուն պիտի մտանեն՝ ճաղը ընելու ու ծեծելու. եւ խաչը հանելու. ու երբորդ օրը յարութիւն պիտի առնէ:

20 - Այն ատեն Չերեղէտի որդիներուն մայրը իր որդիներուն հետ եկաւ անոր, երկրպագութիւն կ'ընէր ու բան մը կը խնդրէր անիկէ: 21 - Ան ալ ըսաւ անոր, Ի՞նչ կ'ուզես: Ըսաւ

անոր, Ըսէ որ այս իմ երկու որդիներս մէկը ալ կողմի՞ր՝ եւ միւսը ձախ կողմի՞ն անիք. քու թագաւորութեանդ մէջ: 22 - Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ, Չէք գիտեր ինչ կը խնդրէք. կրնա՞ք իմել այն գաւաթը զոր ես պիտի խմեմ, կամ այն մկրտութիւնով մկրտուիլ զոր ես պիտի մկրտուիմ: Ըսին իրեն, Կրնանք: 23 - Եւ ըսաւ անոնց, Իմ գաւաթս պիտի խմէք, եւ այն մկրտութիւնով զոր ես մկրտուելու եմ, պիտի մկրտուիք. բայց իմ աջ կողմս ու ձախ կողմս նստիլ իմն չէ տայր, հապա որոնց որ պատրաստուած է իմ Հօրմէս: 24 - Աւ երբ գոտար ու իւրիշները լսեցին, այն երկու եղբայրներուն նեղուցան: 25 - Իսկ Յիսուս իրեն կանչեց զանոնք ու ըսաւ, Գիտե՞ք որ սպգեկուն իշխանները կը տիրեն անոնց, եւ մեծամեծները կ'իշխեն անոնց. 26 - Բայց ձեր մէջ այնպէս պիտի չըլլայ, հապա ձեզմէ ով որ մեծ ըլլայ կ'ուզէ, թող անիկա ձեր սպասուորը ըլլայ: 27 - Աւ ձեզմէ ով որ առաջին ըլլայ կ'ուզէ, թող անիկա ձեր ծառայուն ըլլայ: 28 - Ինչպէս Արդին մարդոց չեկաւ սպասուորութիւն ընդունելու, հետա սպասուորութիւն ընելու. եւ իր կեանքը շատերու համար փրկանք տալու:

29 - Աւ երբ անոնք Երեքովէ ելան, մեծ բազմութիւն անոր ետեւէն գնաց: 30 - Եւ ահա ճամբան քով երկու հոյր նստած էին. երբ լսեցին թէ Յիսուս կ'անցնի, աղաղակեցին ու ըսին, Բարձր մեզի, Տէր, Արդի Գաւթի: 31 - Եւ բազմութիւնը կը յանդիմանէր զանոնք որ լռեն, բայց անոնք ալ ուրիշ կ'աղաղակէին ու կ'ըսէին, Աղբորմէ մեզի, Տէր, Արդի Գաւթի: 32 - Եւ Յիսուս կոնք առնելով կանչեց զանոնք ու ըսաւ, Ի՞նչ կ'ուզէք որ ձեզի ընեմ: 33 - Ըսին անոր, Տէր, որ աչքերնիս բացուին: 34 - Եւ Յիսուս խղձով անոնց աչքերուն դաւաւ, եւ լուստ մը անոնց աչքերը բացուեցան, ու անոր ետեւէն գացին:

ԳԼ ԻԱ

Աւ երբ Երուսաղէմի մտեցան ու եկան Բեթփագէ դէպ ի Զիթենեաց լեռ, այն ատեն Յիսուս էր աշակերտներէն երկուքը զրկեց: 2 - Եւ ըսաւ

անոնց, Գացէք այդ ձեր զիմացի գէղը, եւ շուտ մը պիտի գտնէք կապուած էշ մը ու անոր հետ աւանակ մը. արձակեցէք զնոնք՝ ու ինձի բերէք: 3 - Եւ եթէ մէկը ձեզի բան մը ըսէ, բաց թէ Տէրոջը պէտք էն. եւ շուտ մը զանոնք պիտի զրկէ: 4 - Այս ամէն բաները եղան, որպէս զի կատարուի մարգարէին խօսքը որ կ'ըսէ. 5 - Ըսէք Աիծի աղջկան, Ահա քու թագաւորդ քեզի կու գայ, հեղ, ու իշու վրայ հեծած եւ իշու ձագի, աւանակի, վրայ: 6 - Եւ աշակերտները գացին, եւ ինչպէս Յիսուս իրենց պատուերէր էր՝ ըրին. 7 - Աւ բերին էշը ու աւանակը, եւ անոնց վրայ իրենց հանդերձները զրկին, ու նստան անոնց վրայ: 8 - Եւ ժողովուրդէն շատեր իրենց հանդերձները ճամբուն վրայ փռեցին, եւ ուրիշներ ճառերէն ծիւղեր կը կարէին ու ճամբուն վրայ կը տարածէին: 9 - Եւ ժողովուրդները, որոնք առջեւէն ու ետեւէն կ'երթային, կ'աղաղակէին ու կ'ըսէին, Ավանան Արդին Գաւթի, որ Տէրոջը մտնուած կու գայ. Ավանան ա բարձուն:

10 - Աւ երբ անիկա Երուսաղէմ մտաւ, բոլոր քաղաքը շարժեցաւ ու ըսաւ, Ո՞վ է սա: 11 - Եւ ժողովուրդները ըսին, Ասիկա Յիսուս մարգարէն է Գալիլէայի Նազարէթէն:

12 - Եւ Յիսուս Աստուծոյ տաճարը մտաւ, ու դուրս հանեց ամէն անոնք որ տաճարին մէջ կը ծախէին ու կը գնէին, եւ ստակ փոխողներու սեղանները ու աղանձի ծախողներուն ամօտները կործանեց: 13 - Եւ ըսաւ անոնց, Գրուած է թէ Իմ տունս աղօթքի տուն պիտի կոչուի. բայց դուք տաճար կառուցուեցաւ այր ըրիք:

14 - Եւ տաճարին մէջ կայրեր ու կայրեր կան իրեն, եւ թշկեց զանոնք: 15 - Եւ քահանայապետները ու գպիրները տեսան անոր ըրած Տրաչքերը, եւ աղաղակեցին անոնց, Տէր, որ աչքերնիս բացուին: 16 - Աւ ըսին անոր, Կր լսե՞ս ինչ կ'ըսեն ասոնք. եւ Յիսուս ըսաւ անոնց, Այո. բնաւ չէք կարգաւոր, թէ Մանիան ու կաթնիկը աղայոց բերնէն զովութիւն կու տարեցիր:

*Ո՛րնո՞ւ, նստեցուցին

*Ո՛րնո՞ւ, պարանր
†Յո՛ւն. վերադարձն ծննդեան մէջ

17 - Եւ թողուց զաննիք՝ քաղաքէն դուրս Բեթանիա կլաւ, ու զիշերէ հոն կեցաւ:

18 - Եւ առաւանց երբ քաղաքը կը դառնար, ածօթեցաւ: 19 - Ու ճամբունէ վրայ թղենի մը տեսնելով քովը դնաց, և անոր վրայ տերեւներէն զատ բան մը չգտաւ. ու ըսաւ անոր, Ասկէ ետեւ քեզմէ պտուղ չըլլայ յաւիտեան. և խկոյն թղենին տնայցաւ: 20 - Եւ աշակերտները երբ տեսան, զարմացան ու ըսին թէ Ինչպէս թղենին շուտ մը չորցցաւ: 21 - Յիսուս պատասխան տուաւ ու ըսաւ անոնց, Ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի, Եթէ հաւատք ունենաք ու չերկմոխք, ոչ թէ միայն այդ թղենին եղածը պիտի ընէք, հապա նաև եթէ այս լեռանը բռնէք, Ելէր, ու ծովը ինկրէր, պիտի ըլլայ: 22 - Եւ առէն ինչ որ աղօթքի մէջ հաւատքով կը խընդրէք, պիտի առնէք:

23 - Ու երբ անիկա տաճարը եկաւ, քահանայապետները և ժողովուրդին ձեռերը անոր մօտեցան երբ իր սրբկեցներ, ու ըսին, Ինչ իշխանութիւնով կ'ընես այդ բաները, և ո՞վ տուաւ քեզի այդ իշխանութիւնը: 24 - Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ անոնց, Ես ալ ձեզի բան մը հարցնեմ, զոր եթէ ինձի բռնէք, ես ալ ձեզի պիտի բռնեմ թէ ինչ իշխանութիւնով կ'ընեմ այս բաները: 25 - Յովհաննէսի մկրտութիւնը ուրիշ էր, երկինքէն թէ մարդոցմէ. և անոնք իրենց մէջ կը խորհէին ու կ'ըսէին, 26 - Եթէ բռնէք՝ Երկինքէն, մեզի պիտի բռնէ թէ Լապա ինչո՞ւ հաւատացէր անոր. իսկ եթէ բռնէք՝ Մարդոցմէ, ժողովուրդէն կը վախճանէք, վասն զի բոլորն ալ Յովհաննէսը իրեն մարգարէ կ'ընդունին: 27 - Եւ պատասխան տալով Յիսուսին ըսին, Չենք գիտեր. և ինք ըսաւ անոնց, Ես ալ ձեզի չեմ ըսեր թէ ինչ իշխանութիւնով կ'ընեմ այս բաները:

28 - Բայց ինչպէս կ'երևնայ ձեզի. մարդ մը երկու որդի ունէր, ու գնաց առաջինին ըսաւ, Որդեակ, գնա այսօր այդ գիւղի մէջ գործէ: 29 - Անիկա պատասխան տուաւ ու ըսաւ, Չեմ ուզեր երբեք: Բայց ետքը զոչացաւ ու գնաց: 30 - Միւսին ալ գնաց և այնպէս ըսաւ. անիկա պատասխան տուաւ ու ըսաւ, Կ'երթամ, տէր. և չգնաց: 31 - Հէ՛մ այս երկուքէն ո՞րը ի՞նչ հօրը կամքը

կատարեց. ըսին անոր, Առաջինը. Յիսուս ըսաւ անոնց, Ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի որ մաքաւորները ու պոռնիկները ձեզմէ առաջ կը մտնեն Աստուծոյ թագաւորութիւնը: 32 - Վասն զի Յովհաննէս արդարութեան ճամբը բացեց եկաւ ձեզի, և դուք անոր չհաւատացէք. բայց մաքաւորները ու պոռնիկները անոր հաւատացին. և դուք տեսաք ու ետքը չզոյզուցիք անոր հաւատարմը:

33 - Ուրիշ առակ մըն - Լ լսեցէք. Տանուտէր մարդ մը կար՝ որ այդի մը անկեց ու ցանդով պոտեց զանիկա, և անոր մէջ հնձան փորեց ու աշտարակ շինեց, և զանիկա մշակներու յանձնեց, ու ինք օտար երկիր մը գնաց: 34 - Երբ պտուղի ժամանակը մտաեցաւ, իր ծառաները մշակներուն զրկեց, որպէս զի անոր պտուղները առնեն: 35 - Եւ մշակները անոր ծառաները բռնեցին, մէկը ծեծեցին, միւսը սպաննեցին, մէկ ուրիշը բարկոծեցին: 36 - Նորէն ուրիշ ծառաները զրկեց առաջիններէն շատ, և անոնց ալ այնպէս բրին: 37 - Վերջը իր որդին զրկեց անոնց բոլորով, Թէրեւ՝ անշնան իմ որդիէս: 38 - Բայց մշակները երբ տեսան որդին, իրարու ըսին, Ասիկա է ժառանգը. եկէք զանիկա սպաննէք ու անոր ժառանգութեանը տիրենք: 39 - Եւ առին զանիկա, այգիէն դուրս հանեցին ու սպաննեցին: 40 - Ուստի երբ այդիին տերը գայ, ինչ պիտի ընէ այն մշակներուն: 41 - Ըսին իրեն, Այն չարերը չարաչար պիտի կորսնցնեն. և այգիին պիտի յանձնեն ուրիշ մշակներ, որոնք պտուղները իրենց ժամանակին պիտի տան իրեն: 42 - Ըսաւ անոնց Յիսուս, Ինչա՞ք կարգացրէ զիրքին մէջ, Այն բարձր չիտոյնները անարգեցին, անիկա անկիւնին գլուխը եղաւ. ասիկա Տերոյմէն եղաւ և զարմանայի է մեր աչքերուն: 43 - Ասոր համար կ'ըսեմ՝ ձեզի, որ Աստուծոյ թագաւորութիւնը ձեզմէ պիտի առնուի, ու այն պիտի ազգի մը պիտի արու՛ի՝ որ անոր պտուղները բերէ: 44 - Եւ ով որ այս քարին վրայ կնայ, պիտի կորստի, և որո՞ւ վրայ որ կնայ, պիտի փորէ զանիկա:

45 - Ու երբ քահանայապետները և փարիսեցիները անոր առակները լսեցին, խմայան որ իրենց համար կ'ըսէր:

46 - Եւ կը փնտռէին Բէ Ինչպէս բռնեն զանիկա, բայց ժողովուրդէն վախցան, վասն զի մարգարէի պէս կ'ընդունէին զանիկա:

ԳԼ. ԻԲ

Քարձեալ պատասխան տուաւ Յիսուս և առակներով ըսաւ անոնց, 2 - Երկինքի թագաւորութիւնը թագաւոր մարդու մը կը նմանի, որ իր սրբույն համար հարսնէք ըրաւ: 3 - Եւ իր ծառաները զրկեց, որպէս զի կանչէն հարսնէքի հրաւիրուածները, և անոնք չուզեցին գայ: 4 - Նորէն ուրիշ ծառաներ զրկեց ու ըսաւ, Ըսէք հրաւիրուածներուն, Ահա իմ ճաշը պատրաստեցի, զուարկներու ու գէր կենդանիներու մորթուած են, և ամէն բան պատրաստ է. հարսնէք եկէք: 5 - Բայց անոնք անհոգութիւն ընելով գացին, մէկը իր արտը ու միւսը իր առուտուրին: 6 - Եւ ուրիշները անոր ծառաները բռնեցին, նախանցին ու սպաննեցին: 7 - Թագաւորն ալ երբ ընց՝ բարկացաւ, և իր զօրքերը զրկեց ու այն սպաննողները ստակեցուց, ու անոնք քաղաքը պրեց: 8 - Այն ատեն իր ծառաներուն ըսաւ, Հարսնէք պատրաստ է, բայց հրաւիրուածները արժանի չէին: 9 - Ուստի գացեք ճամբու գլուխները, և ո՞վ որ գանելու ըլլաք, հարսնէքի հրաւիրեցէք: 10 - Եւ այն ծառաները ելան ճամբաներու վրայ, ու ո՞վ որ գտան, թէ՛ չար և թէ՛ բարի, առնեն ալ ժողովեցին, ու հարսնէքը հարսնորներով լեցուեցաւ: 11 - Եւ թագաւորը երբ մտաւ հարսնորները տեսնելու, հոն մարդ մը տեսաւ որ հարսնէքի հանդերձ հագած չէր: 12 - Եւ ըսաւ անոր, Ընկեր, ինչո՞ւ համար հոս մտար առանց հարսնէքի հանդերձ ունենալու. և անիկա պատասխանեցաւ: 13 - Այն ատեն թագաւորը սպառնալով ըսաւ, Կապեցէք ստոր սաքիքը ու ձեռքերը, և տաէք ու հանեցէք զանիկա դուրս խաւարը. հոն պիտի ըլլայ լայ ու սղուաներ կը ծածկուին: 14 - Վասն զի կանչուածները շատ են ու ընտրուածները քիչ: 15 - Այն ատեն փարիսեցիները գալին խորհուրդ բրին, թէ ինչպէս անոր որդայթ մը գնեն խօշորով: 16 - Եւ

իրենց աշակերտները Հերովդեսեաններուն հետ մէկտեղ զրկեցին անոր ու ըսին, Վարդապետ, զիտենք որ ճշմարիտ ես, և ճշմարտութեամբ Աստուծոյ ճամբան կը սորվեցնես, ու մարդու համար հոգի չէ, քանզի մարդոց երեսօպաշտութիւն չես ընէր: 17 - Ուստի մեզի բռնէ, քեզի ինչպէս կ'երևնայ, Կայսրին սուրբ տալ տրժամն է՝ թէ՛ սոյ: 18 - Յիսուս գիտնալով անոնց խորամանկութիւնը՝ ըսաւ, Ինչո՞ւ զիս կը փորձէք, կեղծաւորներ, 19 - Յուցուցէք ինձի սուրբին դրամբ. և անոնք գահեկան մը բերին իրեն: 20 - Ու ըսաւ անոնց, Որո՞ւն է այս պատկերը ու գիրը: 21 - Ըսին անոր, Կայսրին. այն ստեղծ ըսաւ անոնց, Ուստուծոյ քա՛նք: 22 - Երբ լսեցին՝ զարմացան, և թողուցին զանիկա ու գացին:

23 - Նոյն օրը անոր քով եկան սուղակեցիները, որոնք կ'ըսէին թէ յաւուրութիւն չկայ, և անոր հարցուցին: 24 - Ըսելով, Վարդապետ, Մովսէս ըսաւ, Եթէ մէկը առանց զաւակի մեռնելու ըլլայ, անոր եղբայրը առնէ անոր կնիք, և իր եղբորը գաւակ հանէ: 25 - Արդ եօթը եղբայրներ կային մեր մէջ. և առաջինը կին տուաւ՝ ու մեռաւ, և զաւակ չունենալուն համար իր կնիք ձգեց իր եղբորը: 26 - Նոյնպէս ալ երկրորդը ու երրորդը՝ մինչև եօթներորդը: 27 - Ամենէն ետքը կին ալ մեռաւ: 28 - Ուրեմն յարութեան ատեն այն եօթնէն որո՞ւն կնիք պիտի ըլլայ. վասն զի ամէն ալ զանիկա ինչ ունեցան: 29 - Եւ Յիսուս պատասխան տալով անոնց ըսաւ, Կու՛ք մոյսրած էք, որ ո՛չ գիրքերը գիտէք և ո՛չ Աստուծոյ զօրութիւնը: 30 - Քանզի յաւուրութեան ատեն ոչ կին կ'առնեն և ոչ երկան կը արուին, հապա երկինքի մէջ Աստուծոյ հրեշտակներուն պէս են: 31 - Բայց մեռելներուն յարութիւն առնելուն համար չէ՞ք կորուցցրէք Աստուծոյ ձեզի ըսած խօսքը: 32 - Ես եմ Աբրահամի Աստուածը, և Իսահակի Աստուածը, ու Յակոբի Աստուածը. Աստուած մեռելներուն Աստուածը չէ, հապա կենդանիներուն: 33 - Ու ժողովուրդները լսելով կը զարմանային անոր վագապետութեանը վրայ:

34 - Բայց փարիսեցիները երբ լսեցին թէ անկեալ պատանձեցուց սաղոսկեցիները, մէկտեղ ժողովուեցան: 35 - Եւ անոնցմէ մէկը, օրինակաւ մը, Հարցուց, զանկեալ փորձելով, ու բաւաւ, 36 - Վարդապետ, որ պատուիրանքը մեծ է օրէնքին մէջ: 37 - Եւ Յիսուս բաւաւ անոր, Գու Տէր Ատուածդ սիրես քու բոլոր սրտովդ: 38 - Այս է առաջին ու մեծ պատուիրանքը: 39 - Աւ երկրորդը ասոր նման, Գու ընկերդ սիրես քու անձնիդ պէս: 40 - Այս երկու պատուիրանքն կախուած են բոլոր օրէնքը և մարդարէները:

41 - Աւ երբ փարիսեցիները ժողովուեցան, Յիսուս հարցուց անոնց ու բաւաւ, 42 - Քրիստոսի վրայով ի՞նչ կարծիք ունիք. անկեալ որո՞ւն որդին է: 43 - Ըսին իրեն, Գու ի՞նչ: Բաւաւ անոնց Յիսուս, Հապա ի՞նչպէս Գու ի՞նչ Հոգիով զանկեալ Տէր կը կոչէ ու կ'ըսէ: 44 - Տէրը իմ Տէրոջս բաւաւ, Կտակ իմ՝ աջ կողմս, մինչև քու թշնամիներդ ոտքերուդ պատուանդան ընեմ: 45 - Առբնեմ ի՞նչ Գու ի՞նչ զանկեալ Տէր կը կոչէ, ի՞նչպէս անկեալ անոր որդին կ'ըլլայ: 46 - Եւ մէկը չէր կրնար անոր խօսք մը պատասխանել. ու այն օրէն խօս մէկը չէր համարձակեր անոր բան մը հարցնել:

Գ.Լ. ԻԳ

Այն ատեն Յիսուս խօսեցու ժողովուրդներուն և իր աշակերտներուն ու բաւաւ: 2 - Մովսէսի արժանքը դպիրները և փարիսեցիները նստած են: 3 - Առբնեմ ինչ որ ձեզի կ'ըսեն որ պահէք, պահեցէք ու բրէք, բայց անոնց գործերուն պէս մի բնէք, վասն զի կ'ըսեն ու չեն իրեն: 4 - Գանդի ծանր և առանձնու գծուար բեռներ կը կապեն ու կը դնեն մարդոց ուսերուն վրայ, և իրենց մտառով չեն ուզեր զանոնք շարժել: 5 - Եւ իրենց ամէն գործերը մարդոց երեւոյաւ համար կ'ընեն. կը լայնցնեն իրենց դրապանակները ու կ'երկնցնեն իրենց հանգերձներուն քառանցքները: 6 - Ընթրիքներու մէջ առաջին բազմոցները կը սիրեն, և ժողովարաններուն մէջ առաջին ամբիսները, ու շուկաներուն մէջ բարեները: 7 - Եւ մարդոցմէ Ռարբի, Ռարբի

կոչուել: 8 - Բայց դուք Ռարբի մի կոչուեք, վասն զի ձեր Աստուցը մէկ է, այսինքն Քրիստոս. և դուք ամէնդ երկայր էք: 9 - Աւ երկրի վրայ մ'ապրէ՛ք: 10 - Եւ չայրը մէկ է, որ երկինքն է: 11 - Եւ դուք ուսուցիչներ մի կոչուեք, վասն զի ձեր Աստուցը մէկ է, այսինքն Քրիստոս: 12 - Եւ ձեր մէջէն մեծը ձեր սպասուորը պիտի ըլլայ: 13 - Բայց վայ ձեզի, կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ, որ երկինքի թագաւորութիւնը մարդոց առջև կը բռնէք: 14 - Վայ ձեզի, կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ, որ որբերուն տուններ կ'ուսուցէք, ու մարդոց երեւոյս համար աւելի դատապարտութիւն պիտի ընդունէք: 15 - Վայ ձեզի, կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ, որ ծով ու ցամաք կը պարտիք մէկը նորահաւատ ընելու, ու երբ ըլլայ զանկեալ ձեզմէ երկու անգամ աւելի գէշներ որդի կ'ընէք: 16 - Վայ ձեզի, կայր առաջնորդներ, որ կ'ըսէք թէ Ով որ տաճարին վրայ երդում ընէ, բան մը չէ, բայց ով որ տաճարին մէջի տակին վրայ երդում ընէ, պարտաւոր կ'ըլլայ: 17 - Ով յիմարներ ու կայրեր, որք մեծ է, ոսկին թէ տաճարը որ կը սրբացնէ սակին: 18 - Եւ թէ Ով որ սեղանին վրայ երդում ընէ, բան մը չէ, բայց ով որ սեղանին վրայի պատարագին վրայ երդում ընէ, պարտաւոր կ'ըլլայ: 19 - Յիմարներ ու կայրեր, որք մեծ է, պատարագը թէ սեղանը որ կը սրբացնէ պատարագը: 20 - Առտի ով որ սեղանին վրայ երդում ընէ, երգում կ'ընէ անոր վրայ և անոր վրայի ամէն բաններուն վրայ: 21 - Եւ ով որ տաճարին վրայ երդում ընէ, բնակողին վրայ: 22 - Եւ ով որ երկինքի վրայ երդում ընէ, երգում կ'ընէ Ատուածոյ արժանիքի վրայ և անոր վրայ նստողին վրայ: 23 - Վայ ձեզի, կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ, որ անանուխին ու սամթին և չամառնի սասանորդը կը վճարէք, ու կը

ձգէք օրէնքին ծանր ծանր բաները, դատաստան և սղոթութիւն ու հասարակ. տանք պէտք էր ընել, և զանոնք չձգէք: 24 - Կայր առաջնորդներ, որ մեղքուր կը բռնէք և ուղարկէք կը կլլէք: 25 - Վայ ձեզի, կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ, որ դաւաժին ու սնակին դուրսի կողմը կը մտրէք, ու ներսէն յափշտակութեամբ և անիրաւութեամբ լեցուն են: 26 - Կայր փարիսեցի, առաջ գաւաթին ու սնակին ներսի կողմը մտրէ, որպէս զի անոնց դուրսի կողմն ալ մտրուր ըլլայ: 27 - Վայ ձեզի, կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ, որ կը նմանիք ծեփած գերեզմաններու, որոնք գուրտն գեղեցիկ կ'երևան, և ներսէն մեռելներու սոսկորներով և ամէն ի՞նչ պղծութիւնով լեցուն են: 28 - Կայր զուգուր դուրսի մարդոց արդար կ'երևանք, ու ներսէն կեղծաւորութեամբ և անօրէնութեամբ լեցուն էք: 29 - Վայ ձեզի, կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ, որ մարգարէներուն տապաններ կը շինէք, և արդարներուն գերեզմանները կը դարձրէք: 30 - Աւ կ'ըսէք, ի՞նչ մեր հարցերուն օրերը ըլլայինք, անոնց հետ մարգարէներուն արեւոյ մասնակից չէինք ըլլար: 31 - Առբնեմ դուք ձեր վերջի վկայէք թէ անոնց զուակներն էք որ մարգարէները կը սպաննէին: 32 - Առաջ դուք ալ ձեր հայրերուն չափը լեցուցէք: 33 - Ո՞րք, ի՞նչ բաւ ծնունդներ, ի՞նչպէս պիտի փախչէք գէշներն զատապարտութենէն: 34 - Անոր համար ահա ես կը զրկեմ ձեզ մարգարէներ և իմաստուններ ու դպիրներ, և անոնցմէ զի առաջինը պիտի սպաննէք ու խաչը հանէք, և մէկ քանակները ձեր ժողովարաններուն մէջ պիտի ծեփէք: 35 - Որպէս զի երկրի վրայ թափուած բոլոր արդար արիւնը ձեր վրայ գայ, արդար Արեւի արիւնէն մինչև Բարսաբայի որպէս Զաքարիայի արիւնը, զոր տաճարին ու սեղանին մէջտեղ սպաննեցիք: 36 - Չմարտա կ'ըսեմ ձեզի, Այս ամէն բաները պիտի դաւաժայ անոնց վրայ: 37 - Ով կրտսեպեմ, Երուսաղէմ, որ մարգարէները կը սպաննէիր, ու

ձեզի զրկուածները կը քարկոծէիր, քանի անգամ քու տղաքներդ ժողովել ուզեցի, ինչպէս հաւք իր ձագերը թմերուն տակ կը ժողովէ, և դուք չուզեցիք: 38 - Ահա ձեր տունը ձեզի աւերակ պիտի մնայ: 39 - Վասն զի ձեզի կ'ըսեմ որ այն ամէն ետե պիտի չտաննէք զիս, մինչև բռնէք, Օրհնեալ է ան որ Տէրոջը անունովը կու գայ:

Գ.Լ. ԻԳ

Եւ Յիսուս տաճարէն դուրս ելլելով կ'երթար, ու աշակերտները անոր վրայ գաղտնի տաճարին չէնքերը իրեն ցուցնելու: 2 - Եւ Յիսուս անոնց բաւաւ, Զէք տեսներ այդ ամէն բաները: Չմարտա կ'ըսեմ ձեզի, Պիտի չմնայ հաւք քար վրայ որ չքակուի: 3 - Աւ երբ անկեալ Ձի՞նէնց լեռք նստեր էր, աշակերտներ իրեն եկան առանձին ու բռնի, Ըսէ մեզի, երբ պիտի ըլլան այդ բաները. և քու գալուատիդ ու աշխարհիս վերջին նշանը ի՞նչ պիտի ըլլայ: 4 - Եւ Յիսուս պատասխան տուաւ ու բաւաւ անոնց, Զգայ՛ ի՞նչ կեցէք, չըլլայ որ մէկ ձեզ խարէ: 5 - Վասն զի շատերը պիտի գան իմ անունովս ու բռնի թէ Ես եմ Քրիստոս, ու շատերը պիտի մոլորեցնեն: 6 - Եւ պիտի լսէք պատուազաններ ու պատերազաններ լուրեր զգայ՛ ի՞նչ կեցէք որ չխաղկէք. վասն զի այն ամէն բաները պէտք է որ ըլլան, բայց դուք վերջը չէ: 7 - Վասն զի սող ազգի վրայ պիտի ելլէ, ու թագաւորութիւն թագաւորութեան վրայ, և տեղ տեղ ամբիս ու մտատարութիւն և երկարաւորութիւններ պիտի ըլլան: 8 - Բայց ատնք ամէնը ցաւերուն սկիզբն են: 9 - Այն ատեն ձեզ նեղութեան պիտի մտանն և ձեզ պիտի սպաննեն, ու իմ անուան համար ամէն սողերուն տակ պիտի ըլլայ: 10 - Եւ այն ատեն շատեր պիտի գայնակեցնեն, ու մէկմէկ պիտի մտանն և մէկմէկ պիտի տանն: 11 - Եւ շատ տուտ մարգարէներ պիտի ելլեն ու շատերը պիտի մոլորեցնեն: 12 - Եւ անօրէնութեան շատանուն համար շատերուն սերը պիտի պաղի: 13 - Բայց ով որ մինչև վերջը համբերէ, անկեալ պիտի ապրի: 14 - Եւ արքայութեան այս աւետարանը

*Ռանտ, անբարեխառնութեամբ

բովանդակ աշխարհի մէջ պիտի բարոզուի բոլոր ազգերուն վկայութիւնն ըլլալու, և անկէ ետե վերջը պիտի գայ:

15 - Ուստի երբ տեսնէք աւերման քին պղծութիւնը որ Գանդիկ մարդարէին ձեռքով բուսած է, թէ սուրբ տեղը կը կենայ. (սլ որ կարդայ, թող հասկնայ): 16 - Այն ատեն Հրէաստանի մէջ եղողները լեռները թող փախչին: 17 - Եւ ան որ տանիքին վրայ է, թող չիջնէ իր տունէն բան մը առնելու: 18 - Եւ ան որ արտին մէջ է, թող ետ չգառնայ իր հանդերձները առնելու: 19 - Բայց վա՛յ այն օրերը յոյ եղողներուն ու ծիծ առողներուն: 20 - Եւ այդքէ բրէք որ ձեր փախելը ձմեռը ըլլայ, ոչ ալ շաբաթօրը: 21 - Բանդի այն ատեն այնպիսի մեծ նեղութիւն պիտի ըլլայ, որու նմանը աշխարհի սկիզբէն մինչև հիմա եղած չէ, ոչ ալ պիտի ըլլայ: 22 - Եւ եթէ այն օրերը չքիչնային, ընտւ մտորմին մը պիտի չապրէր: Բայց ընտրեալներուն համար այն օրերը պիտի քիչնան: 23 - Այն ատեն եթէ մէկը ձեզի բռն թէ Ահա հոս է Քրիստոսը կամ Հոն, մի հաւատար: 24 - Վասն զի սուտ Քրիստոսներ և սուտ մարդարէներ պիտի ելլեն, ու մեծ նշաններ և հրաշքներ պիտի ցուցնեն, որ եթէ կարելի է՝ ընտրեալներն ալ մոլորեցնեն: 25 - Ահա ձեզի առաջաւորն է բռն: 26 - Ուստի եթէ ձեզի բռն թէ Ահա անապատին մէջ է, մի ելլէք: Եւ թէ՛ Ահա ներքին սենեակներուն մէջ է, մի հաւատար: 27 - Վասն զի ինչպէս փայլակը արեւելքէն կ'ելլէ ու մինչև արեւմուտք կ'երևնայ, այնպէս պիտի ըլլայ Որդւոյ մարդը գալուստը: 28 - Քանզի ուր մեռած մայրին կայ, հոն պիտի ժողովուրն արծիւները:

29 - Եւ շուտ մը այն նեղութեան օրերէն ետե արեգակը պիտի խաւարի, ու լուսինը իր լոյսը պիտի չտայ, և աստղերը երկինքէն պիտի իջնան, ու երկինքի զօրութիւնները պիտի շարժին: 30 - Եւ այն ատեն Որդւոյ մարդը նշանը պիտի երևանայ երկինքի մէջ, ու այն ատեն երկրի բոլոր ազգերը կոծ պիտի ընեն, ու պիտի տեսնեն Որդին մարդը երկինքի ամպերուն վրայ կեան զօրութիւնով ու մեծ փառքով: 31 - Եւ անիկա իր հրէշտակները պիտի զրկէ մեծաձայն

փողով, ու պիտի ժողովն իր ընտրեալները շորս հոգեբէն, երկինքի մէջ ծայրէն մինչև միւս ծայրը:

32 - Թողնի՛ն առակ մը սորվեցէք, որ երբ անոր ոտերը կը կապուողան ու տերները կը ցցուին, դիտէք թէ ամառը մտն է: 33 - Նոյնպէս դուք երբ այս ամէն բաները տեսնէք, դիտեցէք որ մտն է դռներուն քով: 34 - Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի որ այս ազգը պիտի չանցնի մինչև այս ամէն բաները ըլլան: 35 - Երկինքը ու երկիրը պիտի անցնին, բայց իմ խօսքերս ընտւ պիտի չանցնին:

36 - Իսկ այն օրուան և այն ժամուն համար մտ'ըդ չգիտեր, ոչ ալ երկինքի *հրէշտակները, հապա միայն իմ Հոյրս: 37 - Բայց ինչպէս Նոյի օրերը եղաւ, Որդւոյ մարդը գալուստն ալ այնպէս պիտի ըլլայ: 38 - Քանզի ինչպէս էին այն օրերը ջրհեղեղէն առաջ, կ'ուտէին, կը խմէին, կին կ'առնէին ու երկան կու տային, մինչև այն օրը որ Նոյ տապանը մտաւ, 39 - Եւ չգիտցան՝ մինչև ջրհեղեղը եկաւ ու ամէնքը վերցուց, Որդւոյ մարդը գալուստն ալ այնպէս պիտի ըլլայ: 40 - Այն ատեն էթէ երկու հոգի արտի մը մէջ ըլլան, մէկը պիտի առնուի ու միւսը ձուրի: 41 - Եւ էթէ երկու կին մէկ աղօթքի մէջ աղալու վրայ գտնուին, մէկը պիտի առնուի ու միւսը ձուրի:

42 - Ուրեմն արթուն կեցէք, վասն զի չէք գիտեր թէ ո՞ր ժամուն ձեր Տէրը կու գայ: 43 - Բայց զայս դիտեցէք, որ եթէ տանուտէրը զիանար թէ գէշ բան ո՞ր պահուն գտը կու գայ, արթուն կը կենար և թող չէր տար որ իր տունը ծակեն: 44 - Անոր համար դուք ալ պատրաստ կեցէք, քանզի Որդին մարդը կու գայ այնպիսի ժամու մէջ որ դուք չէք կարծեր: 45 - Ուստի ո՞վ է այն հաւատարիմ ու իմաստուն ծառան՝ զոր իր տէրը իր ծառաներուն վրայ դրաւ, որպէս զի աստեանին անոնց կերակուր տայ: 46 - Երանի՛ք է այն ծառային, զոր իր տէրը եկած ատեն այնպէս ըրած պիտի գտնէ: 47 - Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի որ իր բոլոր ունեցածին վրայ պիտի կեցնէ զանիկա: 48 - Հապա

*Ո՞րքա՞ն, հրէշտակները, և ոչ Որդին

եթէ այն տար ծառան իր սրտին մէջ լաւ, իմ տերս իր գալը կ'ուշացնէ: 49 - Եւ սկիտ իր ծառայակիցները ծեծել, ու գինովներուն հետ ուտել ու խմել, 50 - Այն ծառային տէրը պիտի գայ յնշտէ՛ որ մը որ չ'ապասեր, և յնշտէ՛ ժամ մը որ չգիտեր: 51 - Եւ զանիկա մէջտեղէն պիտի կտրէ, ու անոր բաժինը կեղծաւորներուն հետ պիտի գնէ. հոն պիտի ըլլայ լալ ու ակուսներ կը ձտել:

ԳԼ ԻԵ

Այն ատեն երկինքի թագաւորութիւնը պիտի նմանի տասը կոյսերու, որոնք իրենց լապտերները առնելով փեռան դիմաւորելու ելան: 2 - Ասոնցմէ հինգը իմաստուն էին, և հինգը յիմար: 3 - Իմարները առին իրենց լապտերները, ու իրենց հետ իւր չառին: 4 - Բայց իմաստունները իրենց լապտերներուն հետ ամեններով իւր ու առին: 5 - Եւ երբ փեռան ուշացաւ, ամէնն ալ թմրեցան ու քնացան: 6 - Եւ կեպիւններն ձայն մը եղաւ, Ահա փեռան կու գայ. զանիկա դիմաւորելու ելէք: 7 - Այն ատեն բոլոր կոյսերը ելան ու իրենց լապտերները շտակեցին: 8 - Եւ յիմարները բոլոր իմաստուններուն, Տուէք մեզի ձեր իւղէն, վասն զի մեր լապտերները մարելու վրայ են: 9 - Պատասխան տուին իմաստունները ու բոլոր, Չլլայ որ մեզի ու ձեզի չբաւականանայ, այլ յաւէտ ծախողներուն գացեք և զնեցէք ձեզի համար: 10 - Երբ անոնք գացին գնելու, փեռան եկաւ, ու պատրաստ եղողները անոր հետ հարստերը մտան, և դուռը գոցուեցաւ: 11 - Ետքը միւս կոյսերը եկան ու բոլոր, Տէր, Տէր, բաց մեզի: 12 - Բայց անիկա պատասխան տուաւ ու բոսաւ, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ իսկ ձեզ չեմ ծաննար: 13 - Ուրեմն արթուն կեցէք, վասն զի ո՛չ օրը գիտէք և ո՛չ *ժամը:

14 - Քանզի ինչպէս օտար երկիր գացող մարդ մը կանչեց իր ծառաները, և իր ունեցածը անոնց յանձնեց: 15 - Մէկուն տուաւ հինգ տաղանդ, ու մէկուն՝ երկուք, և մէկուն՝ մէկ, ամէն մէկուն իր կարողութեանը չափ, ու անիկապէս ծամուց ելաւ: 16 - Եւ ան օր հինգ տաղանդը առած էր,

զնաց անոնցմով գարծ տեսաւ, և ուրիշ հինգ տաղանդ չափեցաւ: 17 - Եւ անտեսաւ ան որ երկուքը առած էր, ուրիշ երկուք ալ չափեցաւ: 18 - Իսկ ան օր մէկը առած էր, զնաց գետինը փորցր, ու իր տէրը ստաղը պահեց, և յետ ժամանակէ ետե այն ծառաներուն տէրը եկաւ, և անոնցմէ հաշիւ ուզեց: 20 - Եւ հինգ տաղանդը առնողը եկաւ՝ ուրիշ հինգ տաղանդ ալ բերաւ, ու բոսաւ, Տէր, հինգ տաղանդ յանձնեցիք ինծի, ահա ուրիշ հինգ տաղանդ ալ անոնց վրայ չափեցայ: 21 - Բոսա անոր իր տէրը, Ապրիս, բարի ու հաւատարիմ ծառայ, դուք որ քիչ բանին մէջ հաւատարիմ եղար, քիչ շատ բաներու վրայ պիտի կեցնեմ: մոտիք բու տէրոջ ու բարեութեանը մէջ: 22 - Երկու տաղանդը առնողն ալ եկաւ ու բոսաւ, Տէր, երկու տաղանդ յանձնեցիք ինծի, ահա ուրիշ երկու տաղանդ ալ անոնց վրայ չափեցայ: 23 - Բոսա անոր իր տէրը, Ապրիս, բարի ու հաւատարիմ ծառայ, դուք որ քիչ բանին մէջ հաւատարիմ եղար, քիչ շատ բաներու վրայ պիտի կեցնեմ: մոտիք բու տէրոջ ու բարեութեանը մէջ: 24 - Մէկ տաղանդը առնողն ալ եկաւ ու բոսաւ, Տէր, գիտէի որ դուք խիտ մարդ մի՛ն ես, չսերմանած տեղէդ կը ժողկու: 25 - Ուստի վախճալով՝ դացիք բու տաղանդդ գեանին սակ պահեցի. ապա՛ ահա բու կը քեզի: 26 - Պատասխան տուաւ անոր տէրը ու բոսա անոր, Չար և ծոյլ ծառայ, գիտէի որ չսերմանած տեղէս կը հնձեմ՝ ու չցանած տեղէս կը ժողկու: 27 - Ուրեմն պէտք էր քեզի որ իմ ստակ սեղանաւորներուն տուցի, որպէս զի եկած ատենս չափով առնէի իմս: 28 - Արդ ասէք ասակ տաղանդը, ու տասր տաղանդ ունեցողին տուէք: 29 - Վասն զի ամէն ունեցողին պիտի տրուի, ու պիտի աւելնայ, և չունեցողին ունեցածն ալ անկէ պիտի առնուի: 30 - Եւ այդ անպիտան ծառան գուրտի խաւարը հանեցէք. հոն պիտի ըլլայ լալ ու ակուսներ կը ձտել: 31 - Ու երբ Որդին մարդը իր փառքով գայ, և բոլոր քուրը հրէշտակ-

*Ո՞րքա՞ն, ժամը, որուն մէջ Որդին մարդը կու գայ: †Ո՞րքա՞ն և ոչ ոնք:

ները իրեն հետ, այն ատեն իր փառաց
աթոռը պիտի նստի: 32 - Եւ անոր
տաջն պիտի ժողովուրն բոլոր ազգերը,
ու զանոնք իրարմէ պիտի դատէ, ինչ-
պէս հոյիւ մը ոչխարները այծերէն կը
զատէ: 33 - Եւ ոչխարները իր աջ կողմը
պիտի կայնցնեն, ու այծերը ձախ կողմը:

34 - Այն ատեն Թադաւորը իր աջ
կողմը եղողներուն պիտի բռնէ, Եկէք,
իմ Հօրս օրհնածները, աշխարհի սկիզ-
բէն ձեզի համար պատրաստուած Թա-
դաւորութիւնը ժառանգեցէք: 35 -
Վասն զի անօթեցայ, և ինծի ուտիլք
տուիք: Ծարաւեցայ, ու ինծի խմցու-
ցիք: օտարական էի, և զիս ներս
տաիք: 36 - Մերկ էի, և զիս հագուե-
ցուցիք: Տիւտնդ էի, ու ինծի տես ե-
կաք: Բանտի մէջ էի, և ինծի եկաք:
37 - Այն ատեն արջարները անոր պա-
տասխան պիտի տան ու բռնեն, Տէր,
ե՛րբ քեզ անօթեցած տեսանք ու կե-
րակիրեցինք, կամ ծարաւած՝ ու խմցու-
ցինք: 38 - Ե՛րբ քեզ օտարական տե-
սանք, և ներս առինք, կամ մերկ՝ ու
հագուեցուցինք: 39 - Ե՛րբ քեզ հի-
ւանդ կամ բանտի մէջ տեսանք, ու
քեզի եկանք: 40 - Եւ Թադաւորը պա-
տասխան տալով պիտի բռնէ անոնց,
ձշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի, Որովհետեւ այս
իմ եղբայրներուս ամէնէն պղտիկներէն
մէկուն ըրէք, ինծի ըրէք:

41 - Այն ատեն ձախ կողմը եղող-
ներուն ալ պիտի բռնէ, Մէկզի գացէք
ինծմէ, անիծեալներ, յախտնակաւ
կրակին մէջ՝ որ պատրաստուած է
Սատանայի ու իր հրեշտակներուն:
42 - Վասն զի անօթեցայ, և ինծի ու-
տիլք չտուիք: Ծարաւեցայ, ու ինծի
չխմցուցիք: 43 - Օտարական էի, և զիս
ներս չառիք: մերկ էի, և զիս հագուե-
ցուցիք: Տիւտնդ ու բանտի մէջ էի, և
ինծի տես չեկաք: 44 - Այն ատեն
անոնք ալ պատասխան պիտի տան ու
բռնեն, Տէր, ե՛րբ տեսանք քեզ անօթե-
ցած, կամ ծարաւած, կամ օտարական,
կամ մերկ, կամ հիւանդ, կամ բանտի
մէջ, ու քեզի սպասարութիւն չըրինք:
45 - Այն ատեն պատասխան
պիտի տայ անոնց ու բռնէ, ձշմարիտ
կ'ըսեմ՝ ձեզի, Որովհետեւ անոնց ամէնէն
պղտիկներէն մէկուն չըրէք, ինծի ալ
չըրէք:

*Ուստի, տան անոր

46 - Եւ ատնք պիտի երթան յաւի-
տնակաւ տանջանքը, իսկ արգարները՝
յախտնակաւ կեանքը:

ԳԼ ԻԶ

Ու երբ Յիսուս լնացուց այս բոլոր
խոսքերը, բաւ էր աշակերտներուն,
2 - Գիտէք որ երկու օրէն ետե զատիկ
կ'ըլլայ, և Որդին մարդոյ կը մատնուի
խաչը ելլելու:

3 - Այն ատեն քահանայագետները
ու դպիրները և ժողովուրդին ծերերը
ժողովուրդեցան քահանայագետին օրաՏը,
որուն անունը կոչուիսա էր: 4 - Ու
խորհուրդ ըրին որ նենգութեամբ
բռնեն Յիսուսը ու մեռցնեն: 5 - Բայց
կ'ըսէին թէ Ոչ տօնին ատենը, որպէս զի
ժողովուրդին մէջ խռովութիւն չըլլայ:
6 - Ու երբ Յիսուս Բեթանիա էր,
բորտա Սիմոն առնէր, 7 - կին մը ե-
կաւ անոր՝ որ ունէր ծանրազին իւղի
շէշ մը, և Թափեց անոր գիրուն վրայ
բեր անիկա սեղան նստած էր: 8 - Եւ
անոր աշակերտները տեսնելով՝ դժուա-
րեցան ու բռնին, Ինչո՞ւ այս կորուստը
ըլլայ: 9 - Բայցիկ այդ իւղը կընար
սուղ դնով ծախուիլ, ու աղքատնե-
րուն տրուել: 10 - Եւ Յիսուս իմա-
նալով՝ բաւ անոնց, Ինչո՞ւ տնհան-
գիտա կ'ընէք կինը: քանոյի առիկա
բարի գործ մը գործեց ինծի: 11 -
Վասն զի աղքատները ամէն ատեն
ձեզի հետ ունէք, բայց զիս ամէն ա-
տեն չունէք: 12 - Վասն զի առիկա
որ այդ իւղը իմ մարմինիս վրայ Թա-
փեց, իմ Թաղուսիս համար բրաւ:
13 - Ձշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի թէ Բոլոր
աշխարհի մէջ ուր որ այս աւետարանը
քարոզուի, տարր բրածն ալ պիտի
խօսուի իրեն յիշատակ ըլլալու համար:
14 - Այն ատեն աստուերկուքէն
մէկը, որ Յուդա Իսկարիովտացի
կ'ըսուէր, գնաց քահանայագետնե-
րուն ու բռաւ, 15 - Ինչ կ'ըսէք ինծի
տալ, ու ես ձեզի մատնեմ՝ զանիկա:
և անոնք երեսուն իւր արծաթ՝ խոս-
տացան անոր: 16 - Եւ անկէ ետե
պատեհութիւն մը կը փնտռէր, որպէս
զի զանիկա մատնեմ անոնց:

17 - Եւ բաղարջակերոց տաւջին
օրը աշակերտները Յիսուսի եկան ու

*կամ, կըռեցին

անոր ըրին, Ո՞ւր կ'ուզես որ քեզի
պատրաստենք՝ զատիկը ուտելու հա-
մար: 18 - Եւ անիկա բաւ, Գացէք
քաղաքը այս ինչ մարդուն ու բռնէք
անոր, Վարդապետը կ'ըսէ, Ժամա-
նակ մտա՛ւ: աշակերտներուս հետ
մէկտեղ քու քովդ պիտի ընեմ զա-
տիկը: 19 - Աշակերտներն ալ ըրին
ինչպէս Յիսուս իրենց հրաման բրաւ,
ու պատրաստեցին զատիկը:

20 - Ու երբ իրիկուն եղաւ, տասու-
երկուքին հետ սեղան նստաւ: 21 - Եւ
քանի որ կ'ուտէին, բաւ, ձշմարիտ
կ'ըսեմ՝ ձեզի որ ձեզմէ մէկը
զիս պիտի մատնէ: 22 - Ու շատ
արամեցան, և անոնցմէ ամէն մէկը
սկսաւ բռնի անոր, Տէր, միթէ ե՛ս եմ:
23 - Անիկա պատասխան տուաւ ու
բաւ, Ան որ ինծի հետ իր ձեռքը
պնակը խօթեց, նոյնը պիտի մատնէ
զիս: 24 - Յիսուս Որդին մարդոյ կ'եր-
թայ, ինչպէս գրուած է իրեն համար:
Բայց վաչ այն մարդուն, որուն ձեռ-
քով Որդին մարդոյ կը մատնուի: ու-
ղէկ էր այն մարդուն որ ծնած չըլլար:
25 - Պատասխան տուաւ Յուդա որ
յանիկա պիտի մատնէր՝ ու բաւ,
Վարդապետ, միթէ ե՛ս եմ: բաւ ա-
նոր, Ի՞նչ ըրի:

26 - Եւ քանի որ անոնք կ'ուտէին,
Յիսուս հաց առաւ, օրհնեց ու կտրեց,
և տուաւ աշակերտներուն ու բաւ,
Առէք, կերէք, այս է իմ մարմինս:
27 - Եւ դաւաթը առաւ, զօհացաւ,
ու տուաւ անոնց և բաւ, Ամէնդ ալ
խմեցէք սակէ: 28 - Վասն զի առիկա
է իմ արիւնն նոր ուխտի, որ շատերու
համար կը թափուի մեղքերու թողու-
թեան համար: 29 - Բայց կ'ըսեմ՝ ձե-
զի, Ասկէ ետե որթին բերքէն բնաւ
պիտի չխամ մինչև այն օրը՝ երբ ձեզի
հետ զանիկա նոր խմեմ իմ Հօրս Թա-
դաւորութեանը մէջ:

30 - Եւ օրհնութիւն մը երգելէ
ետե Ձիթենեաց լեռը ելան: 31 - Այն
ատեն Յիսուս բաւ անոնց, Իուք ա-
մէնդ այս գիշեր իմ վրայովս պիտի
չայլածակիք: վասն զի գրուած է թէ
Հովիւը պիտի գարնեմ, ու հօտին ոչ-
խարները պիտի ցրուին: 32 - Բայց
յարութիւն առնելէն ետե ձեզմէ ա-
ռաջ Իսկարիա պիտի երթամ: 33 -
Պատասխան տուաւ Պետրոս ու բաւ
անոր, Թէպէտ ամէն ալ քու վրայովդ

չայլածակիցն, բայց ես բնաւ պիտի
չգայլածակիցմ: 34 - Բաւ անոր Յի-
սուս, ձշմարիտ կ'ըսեմ՝ քեզի, Այս
գիշեր գեա հաւը չխօսեմ՝ երեք ան-
գամ զիս պիտի սրբանայ: 35 - Բաւ
անոր Պետրոս, Թէեւ քեզի հետ մեռնե-
լու ալ ըլլամ, բնաւ քեզ պիտի չու-
րանամ: այսպէս կ'ըսէին նաև ամէն
աշակերտները:

36 - Այն ատեն Յիսուս անոնց հետ
սեղ մը եկաւ որուն անունը Գեթե-
մանի էր, ու բաւ աշակերտներուն,
Հոս նստեցէք մինչև որ ես երթամ հան-
աղօթք ընեմ: 37 - Եւ իրեն հետ առ-
նելով Պետրոսը ու Ջերեզէտի երկու
երկրները, սկսաւ արամիլ ու վշտա-
նալ: 38 - Այն ատեն բաւ անոնց,
իմ անձն մեռնելու չափ արուամ է
հոս կեցէք և ինծի հետ արթուն մնա-
ցէք: 39 - Ու քիչ մը առաջ երթալով
իր երեսն վրայ ինկաւ և աղօթք բրաւ՝
բռելով, Ով Հայր իմ, եթէ կարելի է,
թող այս գաւաթը ինծմէ անցնի:
Բայց ոչ թէ ինչպէս ես կ'ուզեմ, հա-
պա ինչպէս գու՛ն է՝ ոչ ոք: 40 - Եւ ե-
կաւ աշակերտներուն ու զանոնք քնա-
ցած գտաւ, և բաւ Պետրոսի, Այ՞ր
պէս մէկ ժամ ալ չկրցար ինծի հետ
արթուն կենալ: 41 - Արթուն կեցէք
և աղօթք ըրէք, որպէս զի փորձու-
թեան մէջ չմտնէք: հոյից յօժար է,
բայց մարմինը տկար: 42 - Իսրաէլաւ
երկրորդ անգամ գնաց աղօթք բրաւ՝
բռելով, Ով Հայր իմ, եթէ անկարելի
է որ այս գաւաթը ինծմէ անցնի ա-
ռանց անկէ խմելուս, թող քու կամեց
ըլլայ: 43 - Եւ եկաւ զանոնք նորէն
քնացած գտաւ, վասն զի աշքերնին
ծանրացած էր: 44 - Եւ թողուց զա-
նոնք, ու նորէն գնաց երրորդ անգամ
աղօթք բրաւ՝ նոյն խօսքը բռելով:
45 - Այն ատեն եկաւ իր աշակերտ-
ներուն ու բաւ անոնց, Ասկէ ետե
քնացէք ու հանգչեցէք: ահա ժամը
հասաւ, և Որդին մարդոյ մեղաւորնե-
րուն ձեռքը կը մատնուի: 46 - Ելէք
սակէ երթանք, ահա մօտեցաւ անիկա
որ զիս պիտի մատնէ:
47 - Եւ գեա անիկա զայս որ կը
խօսէր, ահա Յուդա, տասուերկուքէն
մէկը, եկաւ, և իրեն հետ շատ բազ-
մալութիւն սուրբերով ու ըրիւրով, քա-
հանայագետներէն և ժողովուրդին
ծերերէն: 48 - Եւ զանիկա մատնողը

անոնց նշան մը տուեր էր՝ բռնելով, Այլ որ ես համբուրեմ, ան է, բռնեցէք զանիկա: 49 - Եւ շուտ մը Յիսուսի մտանալով՝ ըսաւ, Ողջոյն քեզ, վարդապետ, ու համբուրեց զանիկա: 50 - Եւ Յիսուս ըսաւ անոր, Ընկեր, ինչո՞ւ համար եկար դուն. այն ատեն մտանցան, ձեռք զարկին Յիսուսի, ու բռնեցին զանիկա: 51 - Եւ ահա Յիսուսի հետ եղողներէն մէկը ձեռքը երկնցուց և իր սուրբ հանելով՝ զարկաւ քաջանայագետին ծառային, և անոր ախանջը մէկդի հանեց: 52 - Այն ատեն Յիսուս ըսաւ անոր, Սուրբ, իր տեղը դարձուր, վասն զի ամէն սուր աննողները սրով պիտի կորսուին: 53 - Կը կարծես թէ չե՞մ կրնար հիմա իմ Հօրս աղաչել, և ինձի հասցնէ տառուերկաւ: Գունդէն աւելի հրեշտակներ: 54 - Բայց ի՞նչպէս պիտի կատարուին զիրքերը, թէ պէտք է այլպէս ըլլալ:

55 - Այն ատեն Յիսուս ըսաւ այն բարձունքները, Իբր թէ աւաղակի՞մ վրայ ելաք սուրբերով ու բիրերով զիս բռնելու. ամէն օր տաճարին մէջ ձեզի հետ կը նստէի ու կը սորվեցնէի, և զիս չբռնեցիք: 56 - Բայց այս ամէն բաները եղան, որպէս զի կատարուին մարգարէներուն զիրքերը: Այն ատեն բոլոր աշակերտները թողուցին զանիկա ու փախան:

57 - Եւ անոնք որ Յիսուսը բռնեցին, Ասիլափա քաջանայագետին տարին, ուր դպիրները ու ծերերը ժողովուրդը էին: 58 - Եւ Պետրոս հեռուանց անոր ետեւէն դնաց մինչև քաջանայագետին գաւիթը, ու ներս մտաւ ապաստարներուն հետ նստաւ որպէս զի վերջը տեսնէ: 59 - Իսկ քաջանայագետները ու ծերերը և բոլոր ժողովքը Յիսուսի դէմ սուտ վկայութիւն մը կը փնտռէին, որպէս զի գանիկա մտեցնեն: 60 - Ու չգտան. թէ և շատ սուտ վկաներ ալ եկան, բայց չգտան. ետքը երկու սուտ վկայ եւ կան, 61 - Ու ըսին թէ Ասիկա ըսաւ, Ես կրնամ Աստուծոյ տաճարը քակել, և զանիկա երեք օրուս մէջ շինել: 62 - Եւ քաջանայագետը սոք ելլելով՝ ըսաւ անոր, Պատասխան մը չե՞ս տար. ի՞նչ կը վկայեն ասոնք քեզի դէմ:

*Յուս. Լեդենէն

63 - Եւ Յիսուս ըսաւ կը կենար. Պատասխան տուաւ քաջանայագետը ու ըսաւ անոր, Կենդանի Աստուծով քեզ կ'երգմնենեմ որ մեզի բռն, թէ դուն էս Գրիստոս Որդին Աստուծոյ: 64 - Ըսաւ անոր Յիսուս, Ի՞նչն ըրիք. բայց կ'ըսեմ ձեզի, Ասիկ ետե պիտի տեսնէք Որդին մարդոյ Չօրուժեան աջ կողմը նստած, ու երկինքի ամպերուն վրայ եկած: 65 - Այն ատեն քաջանայագետը իր հանդերձները պատռեց ու ըսաւ, Հայհուութիւն ըրաւ. ալ ի՞նչ պէտք էն մեզի վկաներ. ահա հիմա լսեցիք ստոր հայհուութիւնը: 66 - Զեզի ի՞նչպէս կ'երեւցայ. անոնք պատասխան տուին ու ըսին, Մահապարտ է: 67 - Այն ատեն անոր երեսը թուրքին, ու բռնեցով ձեծեցին զանիկան անոր ալ ապաստակ զարկելով՝ բռին, 68 - Մարգարէացիք մեզի, դուն Գրիստոս, ո՞վ է ան որ քեզի զարկաւ:

69 - Իսկ Պետրոս դուրսը գաւիթը նստեր էր, և աղաչելի մը եկաւ անոր ու ըսաւ, Ի՞նչն ալ Գալիլեացի Յիսուսի հետ էիր: 70 - Բայց անիկա ամենուն առջև ուրացաւ ու ըսաւ, Զեմ՝ զիտեր դուն ի՞նչ կը խօսիս: 71 - Ու երբ դուրս ելաւ, ուրիշ զառի՛մ մը զանիկա տեսաւ, և հոն եղողներուն ըսաւ, Ասիկա ալ Յիսուս Նազովրեցիի հետ էր: 72 - Եւ Պետրոս նորէն երգում ընելով՝ սուրացաւ, թէ Ես այն մարդը չեմ՝ ձանձնար:

73 - Ու քեզ մը ատենէն ետե հոն եղողները եկան և բռին Պետրոսի, Արդարեւ դուն ալ աննոցմէ ես, վասն զի քու զրուցումքդ ալ քեզ յայտնի կ'ընէ: 74 - Այն ատեն սկսաւ անի՛ծել ու երգում ընել՝ ԸԵԼՎԻ ԹԷ ԵՍ այն մարդը չեմ՝ ձանձնար: Ե Իսկոյն Յիսուսը խօսեցաւ: 75 - Եւ Պետրոս մտքը բերաւ Յիսուսի խօսքը զոր իրեն ըսեր էր թէ Ի՛նչ հաւր չխօսած՝ երեք անգամ պիտի ուրաննաս զիս. ու դուրս ելլելով՝ դառնապէս լացաւ:

ԳԼ ԻԷ

Երբ սուտու եղաւ, բոլոր քաջանայագետները ու ժողովուրդին ծերերը Յիսուսի դէմ խորհուրդ ըրին որ գանիկա մտեցնեն: 2 - Եւ կապելով զանիկա տարին, ու Պետրոսի Պիղատոս կուսակալին ձեռքը տուին:

3 - Այն ատեն Յուզա, որ զանիկա մտանեց, տեսնելով թէ դատապարտուեցաւ, զեղջի եկաւ, ու երեսուն արծաթը ետ դարձուց քաջանայագետներուն և ծերերուն, 4 - Ու ըսաւ, Մեղայ, որ անեղ արին մտանցիք. և անոնք ըսին, Մեզի ի՞նչ, դուն նայէ: 5 - Եւ արծաթը տաճարին մէջ ձգեց ու դուրս եկաւ, և գնաց ինքզինք թեղդեց: 6 - Քաջանայագետներն ալ արծաթը առնելով ըսին, Արժան չէ ափիկա՝ կորսանին մէջ՝ դնել, վասն զի արեան զին է: 7 - Ուստի խորհուրդ ըրին, և անով բրուտին արքը ծախու առին՝ օտարներու զերգումնառուն ըլլալու համար: 8 - Այս պատճառով այն արքը Արեան արտ բուռեցաւ մինչև այսօր: 9 - Այն ատեն կատարուեցաւ յերթիս մարգարէին ձեռքով ըսուած խօսքը, Եւ առին երեսուն արծաթը, զին կտրուածին զինը, զոր Իսրայէլի օրգաններէն մէկն էին կարեցին, 10 - Ու ասին զանիկա բրուտին արտին, ինչպէս ինձի հիման ըրաւ Տէրը:

11 - Եւ Յիսուս կուսակալին առջև կայնեցաւ. և կուսակալը հարցուց անոր ու ըսաւ, Հրեկեց թագաւորը գո՞ւն ես: Եւ Յիսուս ըսաւ անոր, Ի՞նչն կ'ըսես: 12 - Ու քաջանայագետներէն և ծերերէն ամբաստանուած ատենը ընաւ պատասխան մը չտուաւ: 13 - Այն ատեն Պիղատոս ըսաւ անոր, Զե՞ս լսեր թէ ո՞ր չափ քեզի դէմ կը վկայեն ասոնք: 14 - Եւ անոր բան մը պատասխան չտուաւ, մինչև շատ զորմացաւ կուսակալը:

15 - Բայց կուսակալը սովորութիւն ունէր որ տօնին ատենը կապուած մը արձակէր ժողովուրդին, ով որ ուզէին: 16 - Այն ատեն Բարբարոս անունով երևելի բանասրկեալ մը ունէին: 17 - Երբ ժողովուրդն ըսաւ անոնց Պիղատոս, Ո՞րը կ'ուզէք որ ձեզի արձակեմ: Բարբարոսը թէ Յիսուսը՝ որ Քրիստոս կ'ըսուի: 18 - Քանզի զիտեր թէ նախնանի համար մտանցին զանիկա:

19 - Ու երբ անիկա տեսանը նստեր էր, անոր կինը Քեյ զրկեց անոր ու ըսաւ, Ի՞նչն այն արդարին հետ բան մը չուեննաս, վասն զի այսօր երազիս մէջ շատ զիպուածներ անցան զիսէս անոր համար:

20 - Բայց քաջանայագետները և ծերերը ժողովուրդը համոզեցին որ Բարբարոսն ինչդրին ու Յիսուսը կորսնցնեն: 21 - Պատասխան տուաւ կուսակալը ու ըսաւ անոնց, Այս երկուքէն մըր կ'ուզէք որ ձեզի արձակեմ. և տնայք ըսին, Բարբարոս: 22 - Ըսաւ անոնց Պիղատոս, Հայտ ի՞նչ բնեմ Յիսուսը, որ Քրիստոս կ'ըսուի: 23 - Ամէնն ալ ըսին անոր, Թող խաչուի. և կուսակալը ըսաւ, Բայց ի՞նչ չար գործ ըրաւ. և անոնք էս սուսաւ կ'ողջարկեին ու կ'ըսին, Թող խաչուի: 24 - Եւ Պիղատոս տեսնելով որ օգուտ մը չըլլար, հապա ալ աւելի խաղովութիւն կ'ըլլայ, ջուր տուաւ, ձեռքերը լուաց ժողովուրդին առջև ու ըսաւ, Ես այդ արդարին արեւուն անպարտեմ. դուք մտածեցէք: 25 - Եւ բոլոր ժողովուրդը պատասխան տալով ըսաւ, Աստը արեւը մեր վրայ ու մեր օրդներուն վրայ ըլլայ: 26 - Այն ատեն Բարբարոսն արձակեց անոնց, և Յիսուսը ձեծեցով անոնց ձեռքը տուաւ որպէս զի խաչուի:

28 - Այն ատեն կուսակալին զինուորները պալատին ներքո տուն Յիսուսը, ու բոլոր զինասարձերուն գունդը անոր վրայ ժողովեցին: 28 - Եւ զանիկա մերկացնելով կարծիր վերարկու մը հագցուցին անոր: 29 - Աւ փուշերէ պակ մը հիւսեցով՝ անոր գլուխը դրին, ու եղէք մը անոր աջ ձեռքը. և անոր առջև ծուռնի վրայ գալով ծաղը կ'ընէին զանիկա, ու կ'ըսին, Ողջոյն քեզ, Էրեկց թագաւոր: 30 - Եւ թքեցով անոր վրայ՝ եղէք կ'առնէին ու անոր գլուխը կը ձեծէին: 31 - Ու երբ ծաղը բրին զանիկա, վերարկուն վրայէն հանեցին ու իր հանդերձները հագցուցին անոր և տարին զանիկա խաչը հանելու:

32 - Եւ դուրս ելլելով Կիւրենացի մարդ մը գտան Սիմոն անունով, զանիկա պահակ բռնեցին որպէս զի անոր խաչը վերցնէ: 33 - Ու եկան Գողգոթա ըսուած տեղը, որ է գանկի տեղ: 34 - Եւ լեղիով խառնուած քրտախ սուսին անոր որպէս զի խմէ. ու երբ համը առաւ, խմել չէր ուզեր: 35 - Եւ զանիկա խաչը հանելով, անոր հանդերձները վիճակով բաժնեցին: Ընդհանուր զի մարգարէն ըսուածը կատարուի, Իմ հանդերձներս իրենց մէջ

*Սյուրբ, սուրբին գանձանակը իմանալու երեմիս

բաժնեցին, և իմ պատմութեանս փրայ վիճակ ձգեցին: 36 - Ու նստեր զանկիս կը պահէին: 37 - Եւ անոր գրչխառն վրայ իր յանցանքը գրուած գրին, թէ Աստուծոյ է Յիսուս, Հրեից թագաւորը: 38 - Այն ատեն անոր ճեղք երկու սառակի խաչուեցան, մէկը անոր աջ կողմէն, ու մէկը ձախ կողմէն:

39 - Եւ անոնք որ կ'անցնէին կը հայհոյէին անոր, գլուխին կը շարժէին, 40 - Ու կ'ըսէին, Ի՞նչն որ տաճարը կը քակէիր և երեք օրուան մէջ կը շինէիր, ինքզինքդ ազատէ. եթէ Աստուծոյ Որդին ես, ինչի որ այդ խաչէն: 41 - Նոյնպէս ալ քահանայականները զպիղիբերուն ու ձերբերուն ճեղք ծաղր ընելով կ'ըսէին, 42 - Ուրիշները ազատեց, ինքզինք չիրեստ ազատէ. եթէ Խորալէի թագաւոր է, թող հիմա իջնէ խաչէն, և իրեն հուստանը: 43 - Ատուծոյ յուսացիր է, հիմա թող փրկէ ատիկա՝ եթէ կ'ուզէ ատիկա վասն զի բաւ, թէ ես Որդի Աստուծոյ եմ: 44 - Իրեն ճեղք խաչուած սառակներն ալ նոյնպէս կը նախատէին զանկիս:

45 - Եւ վեցերորդ ժամէն մինչև իններորդ ժամը բոլոր երկրին վրայ խուստ եղաւ: 46 - Եւ ժամը իննին ատենները Յիսուս մեծ ձայնով աղաղակեց ու բաւ, Եյի, Եյի, լսմա սաբաբթանի. որ բոլի է՝ Աստուած իմ, Աստուած իմ, ինչո՞ւ զիս թողուցիր: 47 - Անոնցմէ տմանք, որ հոն կայներ էին, երբ լսեցին կ'ըսէին, Ատիկա Եղիան կը կանչէ: 48 - Եւ շուտ մը անոնցմէ մէկը վազեց սպուռոյ մը առաւ՝ քացախով լեցուց, ու եղէգի մը անցրելով տուաւ անոր օրդէս զի խմէ: 49 - Ու միւսները կ'ըսէին, Թող տուր, տեսներ թէ Եղիան կու գայ ատիկա աղատելու:

50 - Եւ Արտուս զարձեայ մեծ ձայնով աղաղակեց, ու հոգին աւանդեց:

51 - Եւ ահա տաճարին վարագոյլը վերէն վար երկու քի ձեղքուեցաւ, ու երկիր շարժեցաւ, և քարերը պատուեցան: 52 - Եւ գերեզմանները բացուեցան, ու շատ սուրբ ննջեցեալներու մարմիններ յարուցեցին առին, 53 - Եւ գերեզմաններէն ելան անոր յարութենէն ետեւ, մասն սուրբ քաղաքը ու շատերու երեցան:

54 - Բայց հարիւրապետը և անոր

ճեղք Յիսուսը պահողները, երբ տեսան երկրաշարժը ու եղած բաները, շատ վախեցան ու ըսին, Արդարև ասիկա Որդի Աստուծոյ էր:

55 - Եւ հոն շատ կիներ կային որոնք հեռուէն կը նայէին, որոնք Գալիլէայէ Յիսուսի ետեւէն եկան իրեն ծառայող թիւն ընելու: 56 - Որոնք մէջ էր Մարիամ Մագդաղենացի և Յակոբոսի ու Յովսէփ մայրը Մարիամ և Ջերեզեսի որդիներուն մայրը:

57 - Ու երբ իրկուսն եղաւ, Արեւմտեայէ հարուստ մարդ մը եկաւ, որուն անունը Յովսէփ էր, որ ինքն ալ Յիսուսի աշակերտ էր: 58 - Ասիկա Պիղատոսի քով կ'ըմբարով Յիսուսի մարմինը խնդրեց. այն ատեն Պիղատոս հրաման քրաւ որ մարմինը տրուի: 59 - Եւ Յովսէփ մարմինը առաւ, մաքուր կտաւով պատեց, 60 - Ու դրաւ իր նոր գերեզմանին մէջ՝ զոր քարէ փորած էր. և գերեզմանին դուռը մեծ քար մը գլորելով զնաց: 61 - Եւ հոն էր Մարիամ Մագդաղենացի և միւս Մարիամը՝ գերեզմանին դիմացնաւոր: 62 - Եւ հետեւեալ օրը, որ ուրբաթ էն ետեւ էր, քահանայականները ու փարիսեցիները ժողովուեցան Պիղատոսի քով, 63 - Ու ըսին, Տէր, կը յիշենք որ այն մայրեցեցիք իր կենդանութեան ատեն կ'ըսէր թէ Երեք օրէն ետեւ յարութիւն կ'առնեմ: 64 - Ուստի հրաման քրէ որ մինչև երրորդ օրը գերեզմանին զգուշութիւն ընեն. չըլլայ թէ իր աշակերտները գիշերով զան զանկիս գողնան, և ժողովուրդին ըսեն թէ Մեռելներէն յարութիւն առաւ. ու ետքի մոլորութիւնը առաջինէն գէշ ըլլայ: 65 - Պիղատոս անոնց բաւ, Դուք ունիք պահապան զինուորներ, գացէք, զգուշութիւն ըրէք ինչպէս որ գիտէք: 66 - Անոնք ալ գացին գերեզմանին զգուշութիւն ըրին, քարը կնքելով ու պահապան զինուորներ դնելով:

62 - Եւ հետեւեալ օրը, որ ուրբաթ էն ետեւ էր, քահանայականները ու փարիսեցիները ժողովուեցան Պիղատոսի քով, 63 - Ու ըսին, Տէր, կը յիշենք որ այն մայրեցեցիք իր կենդանութեան ատեն կ'ըսէր թէ Երեք օրէն ետեւ յարութիւն կ'առնեմ: 64 - Ուստի հրաման քրէ որ մինչև երրորդ օրը գերեզմանին զգուշութիւն ընեն. չըլլայ թէ իր աշակերտները գիշերով զան զանկիս գողնան, և ժողովուրդին ըսեն թէ Մեռելներէն յարութիւն առաւ. ու ետքի մոլորութիւնը առաջինէն գէշ ըլլայ: 65 - Պիղատոս անոնց բաւ, Դուք ունիք պահապան զինուորներ, գացէք, զգուշութիւն ըրէք ինչպէս որ գիտէք: 66 - Անոնք ալ գացին գերեզմանին զգուշութիւն ըրին, քարը կնքելով ու պահապան զինուորներ դնելով:

ԳԼ. ԻԸ

Եւ շարժ գիշերը երբ մէկշաբթին կը լուսնար, եկաւ Մարիամ Մագդաղենացի ու միւս Մարիամը գերեզմանը տեսներու: 2 - Եւ ահա մեծ երկրաշարժ մը եղաւ, վասն զի Տէրաջը հրեշտակը երկիրէն իջնելով, զնաց դռնէն

մէկդի գլորեց քարը, ու անոր վրայ նստաւ: 3 - Եւ անոր տեղը փայլակի պէս էր, ու անոր հանդերձները՝ ձիւնի պէս ձերմուկ: 4 - Եւ անոր վախէն պահապանները խռովեցան, ու մեռածի պէս եղան: 5 - Պատասխան տուաւ հրեշտակը ու բաւ կիներուն, Դուք մի վախեալ, բանդի գիտեմ որ կը փնտռէք Յիսուսը, որ խաչուեցաւ: 6 - Անկիս հոս չէ, վասն զի յարութիւն առաւ, ինչպէս բաւ. եկէք տեսէք այն տեղը, որ Տէրը պատկած էր: 7 - Եւ շուտ մը գացէք անոր աշակերտներուն քուէք թէ Անկիս մեռելներէն յարութիւն առաւ, և տհաճ ձեզմէ առաջ Գալիլեայ կ'երթայ, հոն պիտի տեսնէք զանկիս: 8 - Եւ անոնք շուտ մը գերեզմանէն ելան վախով ու մեծ ուրախութիւնով, և կը վազէին աշակերտներուն գտածելու:

9 - Ու երբ կ'երթային անոր աշակերտներուն պատմել, ահա Յիսուս անոնց գէմը եկաւ ու բաւ, Ողջոյն ձեզ: Եւ անոնք մտնեցան յովանոր սուրբըր ըսեցին, ու երկրպագութիւն ըրին անոր: 10 - Այն ատեն Յիսուս բաւ անոնց, Մի վախեալ, գացէք իմ երաջաններու քուէք որ Գալիլեայ երթան, ու հոն զիս պիտի տեսնեն:

11 - Երբ անոնք կ'երթային, ահա

պահապան զինուորներէն մէկ քանին քաղաքը եկան, ու քահանայականներուն պատմեցին բոլոր եղած բաները, 12 - Եւ անոնք ձերբերուն ճեղք մեկտեղ ժողովուեցան որ խորհարար ընելով, շատ ստակ տուին զինուորներուն, 13 - Ու ըսին, Ըսէք թէ Անոր աշակերտները գիշերով եկան զանկիս գողցան, երբ մեզ կը բնանային: 14 - Եւ եթէ այդ բանը կուսակալին ակոնջը հասնի, մենք զանկիս կը հաճեցնենք, և ձեզ պահապան կ'ընենք: 15 - Անոնք ալ ստակը առին, ու սրբաձնուս պէս ըրին. և այս ձայնը Հրեաներուն մէջ տարածուեցաւ մինչև այսօր:

16 - Իսկ տասնութիւն աշակերտները գացին Գալիլեայ, այն լեռը ուր Յիսուս իրենց որոշըր էր: 17 - Ու երբ զանկիս տեսան, երկրպագութիւն ըրին անոր, բայց ոմանք տարակուսեցան: 18 - Եւ Յիսուս մտնեցաւ յովանոր սուրբըր ու բաւ, Ամէն իշխանութիւն ինձի սրբուեցաւ երկիրի ու երկրի մէջ: 19 - Ուրեմ գացէք բոլոր աղգեք աշակերտեցէք, միլիոնեք զանոնց յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ: 20 - Սրբեցեցէք անոնց որ այն ատեն բաները պահէին ինչ որ ես ձեզ պատուիրեցի. և ահա ամէն օր ես ձեզի հետ եմ մինչև աշխարհիս վերջը: Ամէն:

ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ

ԳԼ. ՈՒԽ Ա

Աստուծոյ Որդւոյն Յիսուս Բրիտոսի աւետարանին սկիզբը: 2 - Ինչպէս մարգարէներուն մէջ գրուած է. Ահա ես իմ զեապանս կը բրկեմ՝ քու երեսիդ առջևէն, որ քու ճամբադ պիտի պատրաստէ քու առջևէդ: 3 - Անտապտի մէջ կ'անցան ձայնը, Տէրաջը ճամբանս պատրաստեցէք, անոր շաւիղները փակեցէք: 4 - Յովհաննէս անապատին մէջ կը մկրտէր, և ապաշխարութեան մկրտութիւն կը քարոզէր:

գեր մեղքերու թողութեան համար: 5 - Եւ բոլոր Հրեաստանի երկիրը ու երուսաղեմացիք կ'երթային անոր, ու ամէնը կը մկրտուէին անկէ Յորդանան գետին մէջ՝ մեղքերին խոստովանելով: 6 - Եւ Յովհաննէս հազար էր ուղտի մազ, և իր մէջքը կաշիէ գօտի. ու իր կերակուրը մարտիս ու վայրենի մեղք էր: 7 - Եւ կը քարոզէր ու կ'ըսէր, Իմ ետեւէս ինձ մէ զորակոր կու գայ, որ ես արժանի չեմ՝ ծառայելու ձեզ: անհոգ.

և անոր կոշիկներուն կապերը արձա-
կելու: 8 - Եւ ձեզ ջրով մկրտեցի,
բայց անիկա ձեզ Սուրբ Հոգիով պի-
տի մկրտել:

9 - Աւ եղաւ որ այն օրերը Յիսուս
Գալիլեայի Նազարեթէն եկաւ, ու
Յովհաննէսէս մկրտուեցաւ Յորդանա-
նու մէջ: 10 - Եւ շուտ մը ջուրէն ել-
լելուն պէս երկինքը բացուած տեսաւ,
և Հոգին աղաւնիի պէս՝ որ իր վրայ
կ'իջնէր: 11 - Եւ ձայն մը եկաւ եր-
կինքէն, «բ' է՛ւր, Իոան ես իմ սիրելի
Որդի, որու հաւանք եմ»:

12 - Եւ շուտ մը Հոգին անապատը
հասնելու գտնեցաւ: 13 - Աւ քառասուն
օր հոն էր անապատին մէջ՝ Սասանայի
փորձուած, և զապաւններու հետ էր,
ու հրեշտակները իրեն սպասաւորու-
թիւն կ'ընէին:

14 - Եւ Յովհաննէսի մտանուելէն
ետեւ Յիսուս Գալիլեա եկաւ, Աստու-
ծոյ արքայութեան աւետարանը կը
քարոզէր: 15 - Աւ կ'ըսէր, թէ ժամա-
նակը լրացած է, և Աստուծոյ թա-
գաւորութիւնը մտեցած է. ապաշ-
խարհեցէք ու աւետարանին հաւատա-
ցէք:

16 - Երբ Գալիլեացոց ծովուն քո-
վերը կը պտտէր, տեսաւ Սիմոն ու
Սիմոնի եղբայրը Անդրէասը, ծովը
ուսկան ձգած, վասն զի ձկնորս էին:

17 - Եւ Յիսուս ըստ անոնց, իմ ետե-
ւէս եկէք, ու ես ձեզ ընծա՞մ որ մարդու
օրսորդ ըլլաք: 18 - Սիմոն ալ շուտ
մը իրենց ուսկանները թողոյցին ու
անոր ետեւէն գացին: 19 - Եւ անկէ
քիչ մը առաջ երթալով տեսաւ Զե-
եբեդեան Յակոբսը ու անոր եղբայրը
Յովհաննէսը, որ անոնք ալ նաւին մէջ
ուսկանները կը կարկտէին: 20 - Եւ
շուտ մը զանոնք կանչեց, անոնք ալ
իրենց չայր Զերեդէոսը վարձկաննե-
րուն հետ նաւին մէջ ձգելով՝ անոր
ետեւէն գացին:

21 - Աւ մտած Կափառնայում. և
խկոյն չարաթի օրը ժողովարանը մրտ-
նելով՝ կը սորվեցներ: 22 - Եւ կը գար-
մանային անոր վարդապետութեանը
վրայ, վասն զի իշխանութիւն ունեցողի
մը պէս կը սորվեցներ անոնց, ու ոչ
թէ Գալիլեաներու պէս: 23 - Եւ անոնց
ժողովարանին մէջ մարդ մը կար, որ
պիղծ ոգի ունէր իր ներսիցին, ու ա-
զաղակեց՝ ըսելով, 24 - Թող տուր,

դուն մեզի հետ ի՞նչ բան ունիս, Յի-
սուս Նազովրեցի. ժիթէ մեզ կոր-
սընցնելու եկար. դիտեմքե՞զ՝ ո՞վ ես.
Աստուծոյ Սուրբը: 25 - Եւ Յիսուս
սասանց անոր՝ ըսելով, Պապանձէ ու
եւ ատկէ: 26 - Եւ պիղծ ոգին սաս-
տիկ ցնցեց զանիկա, ու մեծ ձայնով մը
աղաղակեց ու անկէ ելաւ: 27 - Եւ
ամէնը զարմացան, սոնպկա որ իրարու
հարցաւորած կ'ընէին ու կ'ըսէին, Այս
ի՞նչ է. ի՞նչ նոր վարդապետութիւն է
այս, որ իշխանութիւնով պիղծ ոգինե-
րուն ալ կը հրամայէ, ու իրեն կը հնա-
զանդին: 28 - Եւ շուտ մը իր համբաւը
Գալիլեացոց ամէն կողմերը ելաւ:

29 - Եւ շուտ մը ժողովարանէն ել-
լելով՝ Սիմոն ու Անդրէասի տունը
մտան Յակոբոսի և Յովհաննէսի հետ:
30 - Աւ Սիմոնի զգաւնը ջերմէ բըռ-
նուած՝ պրտկած էր, և շուտ մը անոր
համար ըսին իրեն: 31 - Աւ Յիսուս մո-
տեցաւ, անոր ձեռքէն բռնեց, վեր-
ցուց զանիկա. և խկոյն ջերմը թող
տուաւ զանիկա, ու անոնց սպասաւո-
րութիւն կ'ընէր:

32 - Աւ երբ իրիկուն եղաւ, արե-
գակին մտած ատենը բոլոր հիւանդ-
ները և դիւահարները իրեն կը բերէին:
33 - Աւ բոլոր քաղաքը դուռը ժող-
վուրէր էր: 34 - Եւ շուտ հիւանդներ
կերպ կերպ ցաւերէ՝ բժշկեց ու շատ
դեւեր հասնեց. ու դեւերուն խօսիլ չէր
տար, վասն զի զինք կը ճանչնային:

35 - Եւ առաւօտուն շատ կանուխ
ելլելով դեռ չըլուցած՝ ելաւ ու գնաց
անապատ տեղ մը, և հոն աղօթք կ'ը-
նէր: 36 - Աւ Սիմոն և իրեն հետ եղող-
ները գացին անոր ետեւէն: 37 - Աւ
երբ դառն զանիկա, ըսին անոր թէ
Ամէնը քեզ կը փնտռեն: 38 - Եւ
ըստ անոնց, ի՛նչ էր թմար մերձակայ
զի զաղաղակները, որպէս զի հոն ալ
քարոզեմ, քանզի այս բանին համար
կ'էր եմ: 39 - Եւ անոնց ժողովարան-
ներուն մէջ կը քարոզէր բոլոր Գա-
լիլեայի մէջ, ու դեւեր կը հանէր:

40 - Բորոտ մը եկաւ անոր, կ'աղա-
չէր, ծունկ կը գնէր ու կ'ըսէր անոր,
Եթէ ուզես, կրնաս զիս մաքրել: 41 -
Եւ Յիսուս խղճալով՝ ձեռքը երկնցուց,
դպաս անոր ու ըստ անոր, Կ'ուզեմ,
մաքրուէ: 42 - Աւ երբ զայս ըստ ա-
նոր, շուտ մը բորոտութիւնը անկէ
գնաց, ու մաքրուեցաւ: 43 - Եւ ասա-

տիկ պատուէր տալով անոր՝ շուտ մը
դուրս գատեց զանիկա, ու ըստ անոր,
44 - Զգալը կեցող, մարգո՞ւս բուն մը
չըսես, հապա գնա քեզ քահանային
ցուցուր, և տուր քու մաքրուելու գ-
նի՞նք, զոր Մովսէս պատուեցեր անոնց
վկայութիւն ըլլալու համար: 45 -
Բայց անիկա ելլելով՝ սկսաւ շատ հրա-
տարակել ու բանը տարածել, այնպէս
որ ա՛լ ինք չէր կրնար յայտնի կերպով
քաղաք մը մտնել. հապա դուրսը ա-
նապատ տեղեր էր, և ամէն կողմերէն
իրեն կու գային:

ԳԼ Բ

Եւ նորէն Կափառնայում մտաւ
քանի մը օրէն ետեւ. 2 - Աւ լուսեցաւ
որ անիկա տան մէջ է, և շուտով շատ
մարդիկ ժողովուցան, այնպէս որ ա՛լ
տեղ չկար, ոչ ալ դրանք քովերը. ու
կը խօսէր անոնց Արարչո՞ւն խօսքը: 3 -
Եւ կու գային իրեն շուր մարդով վեր-
ցուած անգամալոյծ մը կը բերէին:
4 - Աւ երբ բազմութիւնէն չէին կրնար
անոր մօտենալ, քակեցին դուռը յարկը
ուր Յիսուս էր, ու ծակ էր րանալով
վար իջեցուցին մահի՞ծը, որուն վրայ
պառկած էր անդամալոյծը: 5 - Եւ
Յիսուս անոնց հաւատքը տեսնելով՝
ըստ անդամալոյծին, Որդեակ, քու
մեղքերդ քեզի ներուած են: 6 - Աւ
զպիրներէն մէկ քանիները կային որ
հոն նստեր էին, և իրենց սիրտերուն
մէջ կը խորհէին՝ Եւ ի՞նչու՞
համար անիկա այսպիսի հայհոյու-
թիւններ կը խօսի. ո՞վ կրնայ մեղքերու
թողութիւն տալ, բայց միայն Աստու-
ուած: 8 - Եւ Յիսուս իսկոյն իմանա-
լով իր հոգւոյն մէջ՝ որ անոնք այն-
պէս կը խորհին իրենց մէջ, ըստ ա-
նոնց, Այդ ի՞նչ կը խորհէք սիրտեր-
նուդ մէջ: 9 - Ո՞րք աւելի դիւրին է,
անդամալոյծին ըսել՝ Կու մեղքերդ
ներուած են, թէ բո՞ւլ Ելիը, մահի՞ծդ
առ ու քալէ: 10 - Բայց որպէս զի
գիտնաք թէ Որդին մարդոյ իշխանու-
թիւն ունի երկրի վրայ մեղքերու թա-
ղութիւն տալու, (ըստ անդամալոյ-
ծին,) 11 - Քեզի կ'ըսեմ, ելիը, մահի՞ծդ
առ ու տունդ գնա: 12 - Ան ալ շուտ
մը ելաւ, և էր մահի՞ծը առնելով՝ ա-
մէնուն առջև դուրս եկաւ, այնպէս որ
ամէնը ապշած մնացին, և փառք

տուին Աստուծոյ, ու ըսին թէ Այս-
պիսի բան մը ամենեւին տեսած չենք:
13 - Եւ ելաւ նորէն ծովեզերքը, ու
բոլոր ժողովուրդը իրեն կու գային, և
կը սորվեցներ անոնց: 14 - Աւ երբ
կ'անցնէր, տեսաւ Դևի Ափեռոսանը,
որ մաքր ընդունելու տեղը նստեր էր,
ու ըստ անոր, Եկուր իմ ետեւէս. ան
ալ ելաւ անոր ետեւէն գնաց: 15 -
Աւ եղաւ որ երբ սեղան նստած էր ա-
նոր տանը մէջ, շատ մաքրաւորներ
ու մեղաւորներ ալ սեղան նստած էին
Յիսուսի հետ ու անոր աշակերտներուն
հետ. քանզի շատուոր էին, ու անոր
ետեւէն կ'երթային: 16 - Եւ զպիրնե-
րը ու փարիսեցիները երբ տեսան թէ
անիկա մաքրաւորներուն ու մեղաւոր-
ներուն հետ կ'ուսէ, ըսին անոր աշա-
կերտներուն, Ինչո՞ւ համար մաքրա-
ւորներուն ու մեղաւորներուն հետ
կ'ուսէ ու կը խմէ: 17 - Եւ Յիսուս
երբ լսեց ըստ անոնց, Աստղջներուն
բժիշկ պէտք չէ, հապա հիւանդնե-
րուն. ես արդարները կանչելու չեկայ,
հապա մեղաւորները:

18 - Եւ Յովհաննէսի ու փարիսեցի-
ներուն աշակերտները ծոմ կը պահէ-
ին. և եկան ու ըսին անոր, Ինչո՞ւ Յով-
հաննէսի ու փարիսեցիներուն աշա-
կերտները ծոմ կը պահեն, ու քու ա-
շակերտներդ ծոմ չեն պահեր: 19 -
Եւ Յիսուս ըստ անոնց, Մի՞թէ կա-
րելի՞ է որ հարսնիքին տղաքը, քանի որ
փեսան իրենց հետ է, ծոմ պահեն. որ-
չափ ժամանակ որ փեսան իրենց հետ
ունի, կարելի չէ ծոմ պահել: 20 -
Բայց օրեր պիտի գան ու երբ փեսան
իրենցմէ վերցուի, ապա այն օրը ծոմ
պիտի պահեն: 21 - Մէկը կարկտան
չձգէր նոր լաթի կտոր մը հին հան-
դերձի վրայ. եթէ ոչ՝ այն նորը որ ա-
նոր լրութեանը համար դուրս էր, հի-
նէն կ'առնէ ու պատուածքը ա՛լ
ուսկից գէշ կ'ըլլայ, 22 - Այլ մէկը նոր
գինին հին տիկերու մէջ կը դնէ. եթէ ոչ՝
նոր գինին տիկերը կը պտտուէ, ու գինին
կը թափի և տիկերը կը կորսուի. հապա
նոր գինին նոր տիկերու մէջ դնելու է:

23 - Աւ եղաւ որ պատմ օրը ինք
արտերուն մէջէն կ'անցնէր, և իր ա-
շակերտները երբ կ'երթային, սկսան
շարժել հասկեր փրցնել: 24 - Աւ փա-

*Ո՞րք ու ի՞նչ, ապաշխարութեան

ընեցինքը բոն երևն, Նայե շարաթ
 որը ինչ կ'ընեն, որ արժան չէ: 25 -
 Ինք ալ անոնց բուռ, Բնա չէք կար-
 գացեր դուք Իսաիթի բրածը երբ
 պետք ունեցաւ, և անօթեցաւ ինք ու
 անոնք որ իրեն հետ էին: 26 - Ինչպէս
 մտաւ Աստուծոյ տունը Արիաթար
 քահանայապետին օրով, և առաջա-
 ւորութեան հացեր կերաւ, ու առաւ
 անոնց ալ որ իրեն հետ էին, զոր զի-
 օրինաւոր չէ ուսել, բայց միայն քա-
 ճանանբուն: 27 - Եւ բոսւ անոնց,
 Նաբաթը մարդուն համար եղաւ, ու
 ոչ թէ մարդը շարաթին համար: 28 -
 Աւրեմն Արդի մարդոյ շարաթին ալ
 տէրն է:

ԳԼ. Գ

Եւ նորէն ժողովարանը մտաւ, ու
 հոն մարդ մը կար որուն ձեռքը չոր-
 ցած էր: 2 - Եւ իրեն կը սպասէին թէ
 արդեօք շարաթ որը զանկա պիտի
 բժշկէ, որպէս զի իր վրայով ամբաս-
 տանութիւն ընեն: 3 - Եւ ինք ձեռ-
 քը չորցած մարդուն բուռ, Եիբ մէջ-
 տեղը խնդէ: 4 - Աւ բոսւ անոնց, Նա-
 բաթ որը բարեբ ընել արժան է: Թէ
 շարիք ընել, հոգի մը տարեցնել թէ
 մեռցնել: Բայց անոնք լուս կեցան:
 5 - Եւ Յիսուս բարութեամբ շարաթ-
 նակի անոնց վրայ նայելով՝ անոնց սիր-
 տերուն կուրսութեանը համար տրտ-
 մած, բուս այն մարդուն, Ձեռքը
 երկնցուց. ան ալ երկնցուց, և անոր
 ձեռքը ողջացաւ: 6 - Աւ փորձե-
 ցինքը Հերոփոստաններուն հետ մկ-
 տեղ շուտ մը դուրս ելելով, անոր
 դէմ խորհուրդ կ'ընէին թէ ինչպէս
 կորսնցնեն զանկան:
 7 - Բայց Յիսուս իր աշակերտներով
 ձայնեցրէր զնայ. և շատ բազմութիւն
 անոր ետեւէն գացին Գալիլեայէ ու
 Հոբաասանէ: 8 - Եւ երուսաղէմէ ու
 Երուսաղէմէ և Յորդանանու անդիկ կող-
 մէն. ու անոնք որ Տիւրոսի ու Սիւրի
 շրջակայ տեղերէն էին, շատ բազմու-
 թիւն, երբ յայտնին ինչ որ կ'ընէր, ի-
 րեն եկան: 9 - Եւ իր աշակերտներուն
 բոսւ որ նաւակ մը պատրաստ կենայ
 իրեն համար՝ ժողովուրդին բազմու-
 թեանը պատճառաւ, որպէս զի զինք

չնեղէն: 10 - Գոնց շատերը բժշկեց,
 այնպէս որ ցաւ ունեցողները վրան կը
 դիզուէին որպէս զի իրեն զայլն: 11 -
 Եւ պիղծ ոգիները երբ զինք կը տես-
 նէին, կ'իջնային իր առջև, կը կանչ-
 ւրտաւէին ու կ'ընէին, 12 - Գոն Ես
 Աստուծոյ Արդի: և ինք աստիկ կը
 յանդիմանէր զանոնք, որ զինք չյայտ-
 նեն:
 13 - Եւ լեւր ելլելով իր ուզած-
 ները իրեն կանչեց, ու գացին անոր
 քով: 14 - Եւ աստուերիու հոգի ո-
 րոշեց, որպէս զի իրեն հետ ըլլան, և
 որպէս զի զանոնք զրկէ քարայրէ:
 15 - Աւ Եշխանութիւն ունենալ ցա-
 ւերը բժշկելու և զեւրը հանելու:
 16 - Եւ Սիմոնի անունը Պետրոս դրաւ:
 17 - Եւ Ձերեղեան Յակոբոսի ու Յա-
 կոբոսի եղբոր Յովհաննէսի՝ անոնց ա-
 նունները Բաներեգէս դրաւ, որ բուլ է
 Արդիք որոտան: 18 - Եւ Անդրէասը,
 ու Փիլիպպոսը, և Բարթողոմէոսը, ու
 Մատթէոսը, և Թովմար, ու Ալփի-
 ստեան Յակոբոսը, և Մարգէոսը, ու Սի-
 մոն Կոնանացին, 19 - Եւ Յուդա Իս-
 կարիովացին, որ նաև մտանց զա-
 նիկա:
 20 - Տուն մը եկան, և նորէն ժող-
 վուրդը ժողովուցաւ, այնպէս որ հաց
 ուտելու ալ թափափ չկարգան գրեւ:
 21 - Աւ երբ իրենները լսեցին, ելան որ
 զինք բռնեն, քանզի կ'ընէին թէ Եիսու-
 սած է: 22 - Եւ այն զպիղծները որոնք
 երուսաղէմէ իջեր էին, կ'ընէին թէ
 Ասոր ներսիցին Բեղզերուղ կայ, և
 զեւրուն իշխանովը զեւր կը հանէ:
 23 - Եւ իրեն կանչելով զանոնք՝ ա-
 ռակներով կ'ընէր անոնց, Ինչպէս
 կրնայ Սատանայ Սատանայ հանել:
 24 - Աւ եթէ թագաւորութիւն մը ի-
 րեն դէմ բաժնուի, այն թագաւորու-
 թիւնը չկրնար կենալ: 25 - Եւ եթէ
 տուն մը իրեն դէմ բաժնուի, այն
 տունը չկրնար կենալ: 26 - Աւ եթէ
 Սատանայ իրեն դէմ ելաւ ու բաժ-
 նուած է, անկա չկրնար կենալ, հա-
 պա անոր վերջը հասած է: 27 - Մէկը
 չկրնար զօրաւոր մարդու մը տունը
 մտնելով՝ անոր կարասիները յափշտա-
 կել, եթէ առաջ այն զօրաւոր մարդը
 չկապէ, ու ետք անոր տունը կողպ-
 տէ: 28 - Ճշմարտ կ'ըսեմ՝ ձեզի որ
 Ամէն մեղքերը պիտի ներուին մարդոց
 որդիներուն, և հայհոյութիւնները

որչափ որ հայհոյին: 29 - Բայց ով որ
 Հոգւոյն Սրբոյ դէմ հայհոյէ, յաւիտ-
 ան թողութիւն պիտի չունենայ,
 հոգա յաւիտենական դատաստանի
 պարտաւոր պիտի ըլլայ: 30 - Վասն
 զի կ'ընէին թէ Պիղծ ոգի կայ անոր
 ներսիցին:
 31 - Եւ քը անոր մայրը ու եղբայր-
 ները եկան, ու դուրսը կայնելով՝ չ-
 գրկեցին ու կը կանչէին զանկան: 32 -
 Եւ ժողովուրդը անոր բոլորակը նրա-
 տեղ էր, ու իրեն բոն թէ Ահա քու
 մայրդ ու եղբայրներդ դուրսը խնդ-
 ւն և քեզ կ'ուրին: 33 - Եւ անկա
 պատասխան տուաւ անոնց ու բուս,
 Ո՞վ է իմ մայր կամ եղբայրներս:
 34 - Աւ իր բոլորակը նստողներուն
 նայելով՝ բուս, Ահա իմ մայրս ու իմ
 եղբայրներս: 35 - Վասն զի ով որ Աս-
 տուծոյ կամքը կը կատարէ, անկա է
 իմ եղբայրս և քոյրս ու մայրս:

ԳԼ. Գ

Դարձեալ սկսաւ սորվեցնել ծովե-
 զերքին վրայ, և շատ ժողովուրդ անոր
 քով ժողովուցաւ, այնպէս որ ինք նա-
 ւը մտաւ ու նստաւ ծովուն վրայ, և
 բոլոր ժողովուրդը ցամաքը ծովուն ե-
 ղերքն էր: 2 - Եւ անոնց շատ բաներ
 կը սորվեցնէր առակներով, ու կ'ը-
 սէր անոնց իր վարդապետութեանը
 մէջ, 3 - Լսեցէք. ասք սերմ զանազը
 կ'ըսէ որպէս զի սերմ զանէ: 4 - Աւ երբ
 կը ցանէր, մէկ քանին ճամբուն քով
 ինկաւ, և թուշուները եկան ու կե-
 բան զանկան: 5 - Եւ ուրիշը ինկաւ
 տապաւածուտ տեղի վրայ, ու ք շատ
 հող չկար, և շուտ մը բուսաւ: հողին
 խորանկութիւն չունենալուն համար:
 6 - Սակայն արևուն ծաղկած ասերը
 պրիցաւ, ու արմատ չունենալուն հա-
 մար չորցաւ: 7 - Եւ ուրիշը ինկաւ
 փուշերու մէջ, և փուշերը եկան ու
 խեղդեցին զանկան, ու պտուղ
 չտուաւ: 8 - Եւ ուրիշը ինկաւ աղէկ
 հողի մէջ, ու պտուղ կուտար, որ ե-
 լաւ ու մեծցաւ, և կը բերէր մէկուն
 տեղ երեսուն, ու մէկուն տեղ վաթ-
 տուն, և մէկուն տեղ հարիւր: 9 - Աւ
 կ'ընէր, Ան որ լսելու ականջ ունի,
 թող լսէ:

10 - Աւ երբ առանձին էր, իր քով
 եղողները աստուերով քին հետ մէկ-
 տեղ հացուցին իրեն այն առակը:
 11 - Եւ բուս անոնց, Ձեզի տրուած է
 զիտնալ Աստուծոյ թագաւորութեան
 խորհուրդը, բայց անոնց որ դուրսէն
 են, ամէն բան առակներով կ'ըլլայ:
 12 - Որպէս զի տեսնելով տեսնեն ու
 չտեսնեն, և լսելով լսեն ու չիմանան,
 որպէս զի չըլլայ թէ դարձի գան, և ի-
 րենց մեղքերուն թողութիւն ըլլայ:
 13 - Աւ բուս անոնց, Այս առակը չէք
 զիտեր. ուրեմն Ինչպէս պիտի զիտեք
 ամէն առակները: 14 - Սերմ ցանողը
 խօսքը կը ցանէ: 15 - Եւ ճամբուն
 քովիները անոնք են, որոնց մէջ խօս-
 քը կը ցանուի, ու երբ կը լսեն, շուտ
 մը Սատանայ կու գայ և անոնց սիր-
 տերուն մէջ ցանուած խօսքը կը հանէ:
 16 - Կայնպէս ալ ապաւածուտ տեղե-
 ՛քու վրայ ցանուածները անոնք են, որ
 կը կը լսեն խօսքը, շուտ մը ուրախու-
 թեամբ կ'ընդունին զանկան: 17 - Եւ
 իրենց մէջ արմատ չունենալով՝ քիչ
 ժամանակ կը տեսն, ետք երբ ներս-
 թիւն կամ հարձակուի ըլլայ խօսքին
 համար, շուտ մը կը զայլթաղկի:
 18 - Եւ փուշերուն մէջ ցանուածները
 անոնք են, որ երբ խօսքը կը լսեն, 19 -
 Աշխարհիս զբողոքները ու հարբա-
 տութեան խաբէութիւնները, և ուրիշ
 բաներուն ցանկութիւնները մէջ մնա-
 նելով, խօսքը կը խեղդեն, ու կ'ըլլայ
 անպտուղ: 20 - Եւ աղէկ հողի մէջ
 ցանուածները անոնք են, որ խօսքը կը
 լսեն և կ'ընդունին, ու պտուղ կուտան
 մէկուն տեղ երեսուն, և մէկուն տեղ
 վաթսուն, ու մէկուն տեղ հարիւր:
 21 - Եւ բուս անոնց, Միթէ ծրա-
 գը գրուանին կամ Վիլիճին տուի
 գրուելու համար կու գայ, չէ՞ որ աշ-
 տանակին վրայ գրուելու համար:
 22 - Վասն զի ծածուկ բան մը չկայ,
 որ պիտի չյայտնուի: և զաղտուկ բան
 մը չէ եղաւ, որ երևան պիտի չըլլէ:
 23 - Եթէ մէկը լսելու ականջ ունի,
 թող լսէ:
 24 - Եւ բուս անոնց, Նայեցէք ինչ
 կը լսէք. Ինչ չափով որ դուք կը չա-
 փէք, Ինչ չափով պիտի չափուի ձեզի.
 և ձեզի, որ կը լսէք, պիտի աւելնայ:
 25 - Վասն զի ով որ ունի, անոր պի-
 տի տրուին. և ով որ չունի, ունեցածն
 ալ անկէ պիտի առնուի:

*Ո՞րն է, որ չստացաւ միւսին պէս

*Ո՞րն է, երկինքի թուշուները

ԳԼ Ե

26 - Եւ կ'ըսէր, Աստուծոյ թագաւորութիւնը այսպէս է, որպէս թէ մտադ մը հողին մէջ սերմ՝ ձգէ, 27 - Ու քանայի և արթննայ զիշեր ու ցորեկ, և սերմը բունն ու մեծնայ, և ինք չգիտեր թէ ինչպէս: 28 - Քանզի հողը ինքրիմէ պտուղ կու տայ. տուտջ խոտը, ետքը հասկը, անկէ ետև լեցան ցորենը հասկին մէջ, 29 - Ու երբ պտուղը հասուննայ, շուտ մը մանգաղը կը զրկէ, վասն զի հունձիք ստենը հասած է:

30 - Եւ կ'ըսէր, Աստուծոյ թագաւորութիւնը ինչ լամի նմանցները, կամ ինչ առակով զանկիա բարդատենք: 31 - Մանանխի հատին նման է, որ հողին մէջ ցանուած ատենը՝ երկրի վրայ եղած սերմերուն ամենէն պոտիկն է: 32 - Ու երբ ցանուի, կը բունի և ամեն խոտեղէններէն ալ մեծ կ'ըլլայ, ու մեծ ծիւղեր կ'արձակէ, այնպէս որ երկիրքի թռչուններուն հերիք կ'ըլլայ անոր շուքին տակ ընակերու:

33 - Եւ այսպէս շատ առակներով կը խօսէր անոնց հետ խօսքը, որչափ որ կրնային մտիկ ընել: 34 - Ու առանց առակի բան մը չէր խօսեր անոնց, բայց առանձին իր աշակերտներուն կը մեկնէր ամէնը:

35 - Եւ նոյն օրը երբ իրկուան կ'ըլլար, բուս անոնց, ինչէր շուտ անդիկի կողմը անցնին: 36 - Անոնք այ ժողովուրդը թող տալով՝ առին զինք ինչպէս էր նաւուն մէջ. և ուրիշ նաւակներ ալ կային անոր հետ: 37 - Ու հոգի մեծ փոթորիկ մը եղաւ. և ալիքները նաւուն վրայ կու գային, այնպէս որ զրեթէ կը լեցուէր: 38 - Ու ինք նաւուն ետևի կողմը բարձի վրայ կը քնանար. արթնցուցին զանկիա և կ'ըսէին անոր, Վարդապետ, հողդ չէ՞ որ կը կորսուի: 39 - Ու ելլելով՝ ստատեց հոյն, և ծովուն բուս, Բագարէ, լուս կեցիր. ու հոյն դադարեցաւ, և մեծ խաղաղութիւն եղաւ: 40 - Ու բուս անոնց, ինչո՞ւ այդպէս վախկոտ էք, ինչպէս կ'ըլլայ որ հաւատք չունէք: 41 - Եւ անոնք խիստ վախցան, ու կ'ըսէին իրարու, Արդեօք ո՞վ է սպիկա, որ հովը ու ծովը ստոր կը հնազանդին:

Եւ եկան ծովուն տնդիկի կողմը՝ Գաղաղալացոց երկիրը: 2 - Ու երբ ինք նաւէն ելաւ, գերեզմաններէն էլ շատ մտադ մը պատահեցաւ իրեն, որ պիղծ սզի ուներ. 3 - Որուն ընակած անդէն ալ գերեզմաններուն մէջ էր, ու շրջ թոյլով ալ մէկը չէր կրնար զանկիա կապել: 4 - Որով հետև շատ անգամ՝ սանակապերով և շղթաներով կապուեր էր, բայց անկիա շղթաները կտրեր ու սանակապերը կտորտեր էր, և մէկը չէր կրնար զանկիա նուաճել: 5 - Եւ միշտ զիշեր ու ցորեկ գերեզմաններուն մէջ ու յեաներուն մէջ՝ կը կանչուրուէր, ու իր մարմնը քարերով կը ծեղքուէր: 6 - Երբ հետուանց Յիսուսը տեսաւ, վաղեց ու երկրպագութիւն ըրաւ անոր: 7 - Եւ մեծ ձայնով մը աղաղակեց ու բուս, Գուն ինձի հետ ինչ բան ունի, Յիսուս, Որդի Աստուծոյ բարձրելոյ, քեզ Աստուծով կ'երդմնցնեմ, զիս մի տանջեր: 8 - (Քանզի կ'ըսէր անոր, Պիղծ սզի, եկի այդ մտադէն): 9 - Եւ անոր հարցուց թէ Անուոյ ինչ է. ու բուս անոր, Իմ անունա լէգէնն է, վասն զի մենք շատուք ենք: 10 - Եւ շատ չէ՛ աղաչէին անոր՝ որ զիրենք այն երկրէն զուր չզրկէ: 11 - Եւ հոն լեռանը մօտ խողբուս մեծ երամակ մը կար՝ որ կ'արածուէին: 12 - Ու բոլոր զեւերը աղաչեցին անոր ու բոլին, Մեզ խողբուս զրկէ, որպէս զի անոնց մէջ մտնենք: 13 - Եւ Յիսուս շուտ մը հրաման տուաւ անոնց. ու երբ պիղծ սզիները ելան, խողբուս մէջ մտան, և երամակը զատկալէս տեղէն ծովը վաղեց, (երկու հազարի չափ կային,) ու ծովուն մէջ խեղդուեցան: 14 - Եւ խողբարածները փոխուեց, ու պատմեցին քաղաքը ու աղաղակները. և Բարդի ելան տեսնելու թէ ինչ բան է որ եղաւ: 15 - Ու եկան Յիսուսի, և տեսան զիւսհարը, որ լէգէնն ուներ, որ հագուած ու խելքը վրան եկած նստեր էր, ու վախցան: 16 - Եւ անոնք որ տեսեր էին, պատմեցին անոնց թէ ինչ եղաւ զիւսհարին, նաև խո-

*ՈՒՆԻՎ, Գերեզմանացոց
†ՈՒՆԻՎ, յեաներուն մէջ ու գերեզմաններուն մէջ
‡ԿՈՍ, կ'աղաչէր

զերուն վրայով: 17 - Եւ սկսան աղաչել անոր, որպէս զի իրենց սահմաններէն երթայ: 18 - Ու երբ անկիա նաւը մտաւ, զիւսհարը կ'աղաչէր անոր թող անու հետ ըլլայ: 19 - Եւ Յիսուս ժող շուտաւ անոր, հապա բուս անոր, Գնա բուս տունդ բուս բնասանքիդ, ու պատմէ անոնց ինչ որ Տէրը քեզի ըրաւ, և սղարեցաւ քեզի: 20 - Ան ալ զնայ, և սկսաւ Ինկապոլիսի մէջ քարոզել ինչ՝ որ Յիսուս իրեն ըրաւ. և ամէնը կը զարմանային: 21 - Ու երբ Յիսուս նաւով նորէն Ժուձ անդիկ կողմը անցաւ, շատ բազմութիւն ժողովուցաւ անոր քով, և ինք ծովեզերքն էր: 22 - Եւ ահա ժողովորդապետներէն մէկը կու գար, որուն անունը Յայրոս էր, ու երբ տեսաւ զանկիա, անոր սաքը ինկաւ: 23 - Եւ շատ կ'աղաչէր անոր ու կ'ըսէր թէ Իմ աղջիկս մեռաւ երբ մօտ է, գաս՝ աւնոր վրայ ձեռք դնես, որպէս զի անոր, ու պիտի սպրի: 24 - Եւ զնայ անոր հետ, ու շատ բազմութիւն իր ետևէն կ'երթային ու կը նեղէին զինք: 25 - Եւ կ'ըսէր մը, որ տասուերկու տարի արեւն տեսաւտեսութեան մէջ էր, 26 - Ու շատ նեղութիւն կրած էր շատ բժիշկներ, և իր բոլոր ունեցածը վասնիկն էր, ու օգուտ մը չէր գտեր, հապա ևս առաւել զայլապէս էր, 27 - Երբ Յիսուսի վրայով լսեց, ետևէն եկաւ բազմութեանը մէջ, ու անոր հանդերձին դպաւ: 28 - Քանզի կ'ըսէր, ինչէ միայն անոր հանդերձներուն դպչեմ, պիտի բժշկուիմ: 29 - Եւ շուտ մը իր արեւնին սաքը ցամքեցաւ, ու իր մարմնին մէջ իմացաւ թէ սանջանքէն բժշկուեցաւ: 30 - Եւ Յիսուս շուտ մը զիւսնայով իր անձին մէջ այն գորութիւնը որ իրմէ ելաւ, դարձաւ բազմութեանը մէջ ու բուս, Ո՞վ դպաւ իմ հանդերձներուն: 31 - Եւ իր աշակերտները բոլին իրեն, կը տեսնես որ բազմութիւնը քեզ կը նեղէ, ու կ'ըսես թէ Ո՞վ ինձի զըպաւ: 32 - Եւ իր բոլորտեքը կը նայէր որպէս զի այս բանը ընտր տեսնէ: 33 - Ու կ'ըսէր վախցաւ ու դողաւ, վասն զի զիտեր թէ իրեն ինչ եղաւ, և եկաւ՝ անոր սուջև ինկաւ, ու բոլոր Բարդի շիտկէ շիտակ գրուցեց անոր: 34 - Եւ Յիսուս բուս անոր, Աղջիկ, բուս հաւատքդ քեզ բժշկեց:

զն խաղաղութեամբ, ու բժշկուած եղիւ բուս ամբողջութեամբ:

35 - Երբ ինք դեռ կը խօսէր, ժողովորդապետին տունէն մտնէր և կան ու բոլին թէ Աղջիկդ մեռաւ, ալ ինչո՞ւ վարդապետը կը յոգնեցնես: 36 - Իսկ Յիսուս բուսաւ խօսքը յամեն պէս ժողովորդապետին բուս, Մի վախեար, միայն թէ հաւատա: 37 - Եւ մէկը թող շուտաւ իրեն հետ երթալ, բայց միայն Պետրոսը ու Յակոբոսը և Յակոբոսի եղբայրը Յովհաննէսը: 38 - Ու ժողովորդապետին տունը գալով՝ տեսաւ աղմուկ և ստտիկ լացողներ ու աղաղակներ: 39 - Եւ ներս մտնելով՝ բուս անոնց, ինչո՞ւ խաղաղ էք ու կու լաք. մանուկը մեռաւ չէ, հապա կը քնանայ: 40 - Եւ ծաղր կ'ընէին զանկիա. բայց ինք ամէնը գուրս հանելով՝ իրեն հետ առաւ մանուկին հայրը ու մայրը, և զանեք որ իրեն հետ էին, ու մտաւ հոն ուր մանուկը պառկած էր: 41 - Եւ մանուկին ձեռքէն բռնելով՝ բուս անոր, Տալիթա, կուսի. որ կը թարգմանուի, Աղջիկ, (քեզի կ'ըսեմ): Եկի: 42 - Եւ իսկոյն աղջիկը սաք ելաւ ու կը քալէր, վասն զի տասուերկու տարեկան էր. ու մեծ աղաղութեամբ աղչեցան: 43 - Եւ տասուերկու պատուէր տուաւ անոնց՝ որ մարդ չգիտնայ այս բանը, ու բուս որ անոր ուտելիք տան:

ԳԼ Զ

Եւ անկէ ելլելով եկաւ իր երկիրը, ու անոր աշակերտները իր ետևէն գացին: 2 - Եւ երբ շարժեթ օրը հասաւ, սկսաւ ժողովարանին մէջ սորվեցնել. ու շատերը լսելով կը զարմանային ու կ'ըսէին, Ասիկա ուրի՞շ ունի այս անգիրը, և այս ինչ իմաստութիւն է ստոր արուած, որ այսպիսի հրաշքներ կ'ըլլան ստոր ձեռքով: 3 - Ասիկա հիւսը չէ՞, Մարիամի որդին, և Յակոբոսի ու Յովսէփի և Յուդայի ու Սիմոնի եղբայրը. ու ստոր քրոյրը հոս մեր քով չե՞ն. և անոր վրայով կը գոյթակողդէին: 4 - Բայց Յիսուս բուս անոնց, Մարգարէ մը անպատիւ չէ՛ բայց միայն իր երկրին մէջ ու իր ազգականներուն և իր տանը մէջ: 5 - Ու չէր կրնար հոն մէկ հրաշք ալ ընել, միայն թէ

քանի մը հիւանդներու վրայ ձեռք դրաւ ու բժշկեց շահաւորս: 6 - Եւ անոնց անհասարակներ վրայ կը զարմանար. ու շքեղակայ գեղերը պարտելով կը սորվեցնէր:

7 - Եւ իրեն կանչեց տասուերկու քրոջ, ու սկսաւ երկու երկու զրկել զանոնք, ու անոնց իշխանութիւն տուաւ պիղծողիներուն վրայ: 8 - Եւ պատուիրեց անոնց որ ծամբու համար բան մը չառնեն, բայց միայն գաւազան մը. ոչ պարկ, ոչ ճաց, ոչ ստակ գոտիներուն մէջ: 9 - Հապա հողաթփօսի հազնին. և կրկին հանդերձ մի հաքիթք՝ շահաւորս: 10 - Ու բաւ անոնց, Որ ստուն որ մտնէք, հոն կեցէք մինչև անկէ ելլէք:

11 - Եւ անոնք որ ձեռք չեն ընդունիր ու ձեզի մտիկ չեն ընէր, երբ անկէ կ'ելլէք, ստքերնուդ տակի փոշին թփօղկեցէք՝ անոնց վկայութիւն ըլլալու համար: *Ճշմտիքս կ'ըսեմ ձեզի, Սողոմոնացոց ու Գոմորացոց աւելի զիւրին պիտի ըլլայ դատաստանին օրը՝ քան թէ այն քաղաքին:

12 - Եւ անոնք ելլելով կը քարոզէին որ Բարթէլ ապաշխարեն: 13 - Եւ շատ դէեր կը հանէին, ու շատ հիւանդներ իւզով կ'օժէին ու կը բժշկէին զանոնք:

14 - Եւ Հերովդէս թագաւորը լսեց, (քանզի անոր անունը յայտնի եղաւ) ու կ'ըսէր թէ Յովհաննէս մկրտիչը մեռելներէն յարութիւն առեր է, ու անոր համար Տրաքսեր կ'ըսէին անոնք:

15 - Ուրիշներն ալ կ'ըսէին թէ Մարգարէ մըն է, կամ մարգարէներէն մէկուն պէս: 16 - Բայց երբ Հերովդէս լսեց, բաւ: Ասիկա Յովհաննէսն է, որուն գլուխը ես կտրեցի, մեռելներէն յարութիւն առեր է:

17 - Քանզի Հերովդէս ինք Բարթէլից, Յովհաննէս ըստնեց, ու կապեց բանալը քրոջ իր եղբորը Փիլիպպոսի կնոջ, Հերովդիայի, համար, քանզի իրեն կին առեր էր զանիկա: 18 - Վասն զի Յովհաննէս Հերովդէսի կ'ըսէր, Քեզի օրինաւոր չէ քու եղբորդ կինը ունենալ: 19 - Եւ Հերովդէս օրէնքներ անոր դէմ, ու կ'ուզէր զանիկա մեռցնել ու չէր կրնար: 20 - Վասն զի Հերովդէս կը վախճար Յովհաննէսէ,

զիտնալով թէ անկիւ արգար և սուրբ մարդ մըն է, և անոր բերանը կը նայէր, ու անկէ լսելով շատ բաներ կ'ընէր, և քաղցրութեամբ անոր մտիկ կ'ընէր: 21 - Ու երբ զիպուկ օր մը եղաւ, որ Հերովդէս իր ծննդեան օրը ընթրիք կ'ընէր իր մեծամեծներուն և հարազատներուն ու Գաղիլայի երեւելիներուն, 22 - Եւ Հերովդիայի աղջիկը հանդէսէ բարձր մանկով խաղաց, ու հաճելի եղաւ Հերովդէսի և իրեն հետ նստողներուն, թագաւորը բաւ աղջկան, խնդրէ ինձմէ ինչ որ կ'ուզես, ու պիտի տամ՝ քեզի: 23 - Եւ անոր երգումը բաւ՝ ԸՆԵՆՆԱՆ, ինչ որ դուք ինձմէ խնդրես, պիտի տամ՝ քեզի, մինչև թագաւորութեանս կէտը: 24 - Եւ անկիւ դուրս ելլելով իր մօրը բաւ, ինչ ուզեմ. ան ալ բաւ, Յովհաննէս մկրտիչն գլուխը: 25 - Եւ շատ մը արտօրայով թագաւորին քով մտաւ ու խնդրեց՝ բաշխել կ'ուզեմ որ շուտով սկսեցի մը վրայ Յովհաննէս մկրտիչն զլուխը տաս ինձի: 26 - Եւ թագաւորը խիտ արտակեցաւ, բայց երգումներուն համար ու իրեն հետ նստողներուն համար չուզեց որ անոր Ինքեքէ մերժէ: 27 - Եւ թագաւորը խիղճն զահիճ զրկեց, ու հրաման բրաւ անոր դրուխը բերել. ան ալ գնաց բանտին մէջ գլխատեց զանիկա, 28 - Եւ սկսեց զիջելով մը բերաւ անոր գլուխը ու տուաւ աղջկան. և աղջիկը զանիկա իր մօրը տուաւ: 29 - Եւ անոր անուկերտները լսելով՝ եկան անոր մարմինը վերցուցին ու գերեզմանի մէջ դրին:

30 - Եւ առաքելները Յիսուսի քով ժողովուեցան, ու պատմեցին անոր ամէն ինչ որ ըրին և ինչ որ սորվեցուցին: 31 - Եւ անիկա բաւ անոնց, եկէք զուգ առանձին անապատ տեղ մը, և քեզ մը հանգչեցէք. քանզի շատերը կային որ կու գային ու կ'երթային. և հոն ուտելու ալ ժամանակ չէին ունենար: 32 - Եւ նաւով անապատ տեղ մը գացին առանձին: 33 - Ու Ժողովուեցան տեսան զանոնք որ կ'երթային, և շատերը զանիկա ծանցան, ու ոտքով ըսլոր քարակներէն հոն կը վազէին, և անոնցմէ առաջ հասնելով անոր քով ժողովուեցան: 34 - Ու Յիսուս երբ

*Որքան շահաւորս:

չուրս ելաւ, շատ ժողովուրդ տեսնելով խզճաց անոնց վրայ, վասն զի հովիւ չունեցող ոչխարներու պէս էին, և սկսաւ շատ բաներ սորվեցնել անոնց:

35 - Ու երբ ժամանակը շատ ուշացաւ, իր աշակերտները իրեն եկան ու ըսին, Հոն անապատ տեղ մըն է, ու ժամանակը ուշացած է: 36 - Արձակէ Ժողովուրդը որպէս զի երթան բուրբախի ագարակները ու գեղերը ու իրենց հաց գնեն, վասն զի ուտելու բան մը չունին: 37 - Բայց անիկա պատասխան տուաւ ու բաւ անոնց, Ինչքա՞նք տուեց անոնց որ ուտեն: Եւ ըսին իրեն, Երթանք երկու հարիւր զահիկանի հաց գնե՞լք և տանք անոնց որ ուտեն: 38 - Բաւ անոնց, Քանի՞ նկանակ ունիք, գացէք նայեցէք. ու երբ զիտցան ըսին, Հինգ, ու երկու ձուկ: 39 - Եւ հրաման բրաւ անոնց՝ որ ամէնը կանանց խոտին վրայ գուռը գուռը նստեցնեն: 40 - Եւ դաս դաս նստան, հարիւրական ու յիսուական: 41 - Եւ հինգ նկանակ ու երկու ձուկը առաւ ու դէպ ի երկինք նայելով՝ օրհնեց, և մանրեց նկանակները ու տուաւ իր աշակերտներուն, որպէս զի անոնց առջև դնէ: 42 - Եւ ամէնը կերան ու կշտացան: 43 - Եւ տասուերկու կողով լեցուն՝ կտորուանները վերցուցին, և ձուկերէն ալ: 44 - Եւ այն հացերէն ուտողները հինգ հարիւր չափ այր մարդիկ էին:

45 - Եւ շատ մը իր աշակերտները արտօրացոց որ նաւը մտնեն, և Էփօ առաջ միւս կողմը ինթապիդա անցնին, մինչև ինք ժողովուրդը արձակէ: 46 - Եւ անոնցմէ զատուելով ինք ելաւ աղօթք ընելու: 47 - Ու երբ իրկուս եղաւ, նաւը ծովուն մէջուղէն էր, ու ինք մինակ ցամաքն էր: 48 - Եւ տեսաւ զանոնք որ կը տագնապէին հալէլ իրենց դէմ էր. և զիջեցաւ չորրորդ պահուն տոտները ծովուն վրայ քաշելով կու գայ անոնց, ու կ'ուզէր անոնցմէ անցնել: 49 - Անոնք երբ տեսան որ ծովուն վրայ կը քայլէր, կարծեցին թէ աչքի երեւոյթ բան մըն է, ու կանչուրուտեցին: 50 - Քանզի ամէն ալ զանիկա տեսան ու խառ-

վեցան. և ինք շատ մը խօսեցաւ անոնց հետ ու բաւ անոնց, Քաջ եղէք, ես եմ, մի վախճաք: 51 - Եւ նաւը ելաւ անոնց քով, ու հովը դադարեցաւ. և անոնք մտքերուն մէջ չափէ դուրս ապշած էին ու կը քարամանային: 52 - Վասն զի հացին վրայ ելաւ հրաշք չիմացան, քանզի սիրտերն թմարած էր:

53 - Ու միւս կողմ անցնելով՝ Գլենեսարէթի երկիրը հասան ու նաւը տեղաւորեցին: 54 - Ու երբ նաւէն ելան, այդ Էփօ խիղճն ծանցան զանիկա: 55 - Եւ աղջին անդին վազելով բոլոր շքեղակայ տեղերը, սկսան մահիճներով հիւանդները բերել ու որ կը լսէին թէ հոն է: 56 - Եւ ուր որ կը մտնէր, գեղերը կամ քաղաքները կամ ագարակները, հրապարակներուն մէջ կը գնէին հիւանդները, ու կ'ողաչէին իրեն որ գտնէ իր հանգերէն քրտնցքէն դաշին. և որոնք որ գպան, բժշկուեցան:

ԳԼ Ե

Եւ իր քով ժողովուեցան փարիսեցիները ու դպիրներէն ոմոնք՝ որ Երուսաղէմէ եկած էին: 2 - Ու երբ տեսան որ անոր աշակերտներէն ոմոնք պիղծ, սյոնիքն անյուսայ, ձեռքերով հաց կ'ուտէին, մեղադրեցին: 3 - Վասն զի փարիսեցիները ու բոլոր Հրեաները մինչև աղէկ մը ձեռքերն չլուան հոն չեն ուտեր, քանզի ձեռքերուն աւանդութիւնը կը բռնեն: 4 - Եւ շուկայէն ելաւ Գլենեսարէթի չլուացոյցին՝ չեն ուտեր. և Եւրիշ շատ բաներ կան զորոնք ընդունած են ու կը բռնեն, սյոնիքն գաւաթներու և փարջերու ու պղնձե ամաններու և անկողիներու լուացմանը: 5 - Այն ատեն փարիսեցիները ու դպիրները հարցուցին անոր, թէ Ինչո՞ւ քու աշակերտներդ ձեռքերուն աւանդութիւնը պէս չեն երթար, հապա անլուսայ ձեռքերով հաց կ'ուտեն: 6 - Ան ալ պատասխան տուաւ ու բաւ անոնց, Աղէկ մարգարէութիւն բրաւ Եսայի ձեզի կեղծաւորներու համար, ինչպէս գրուած է, Այս ժողովուրդը Գլենեսարէթի անցնելով զիտ կը պատուէ, բայց իրենց սիրտը հեռացած զատուած է ինձմէ: 7 - Ու պարսպ

տեղ զիս կը պաշտեն, մարդոց պատուերիս զաները էբբև վարդապետութիւն որովցնելով: 8 - Վասն զի Աստուծոյ պատուիրանքը թողելով մարդոց աւանդութիւնը կը բռնէք, էնդէ՛ք փարչերու և զաւանթներու լուացմունքներ, և ասոնց նման շատ ուրիշ անքեր կ'ընէք: 9 - Ու ըստ անոնց, Ազգի կ'անարգէք Աստուծոյ պատուիրանքը, որպէս զի ձեր աւանդութիւնը պահէք: 10 - Քանզի Մովսէս ըստ, Քու Տայրդ ու մայրդ պատուէ. և, Ով որ էր Տայրը կամ մայրը անիծէ, մահով թող մեռնի: 11 - Բայց դուք կ'ըսէք, եթէ մէկը իր Տոր կամ մորը բռնէ, Այն բանը զոր ինծիմ պիտի շահն, Աստուծոյ պատուէ և, (որ բռնէ և ընծայ,) արդ ԲՆԱՆՆԻՆ: 12 - Եւ ա՛լ թող չէք տար անոր բան մը ընել իր Տոր կամ իր մոր: 13 - Ու Աստուծոյ խօսքը կը խափանէք ձեր աւանդութիւնովը զոր կ'աւանդէք. և ասոր նման շատ ուրիշ բանքեր կ'ընէք:

14 - Եւ բոլոր ժողովուրդը իրեն կանչելով ըստ անոնց, Լսեցէք ինծի ամենք ու հասկցէք: 15 - Բան մը չկայ որ դուքն մարդուն ներք մտնէ, ու կարող բոլոր զանիկա պղծել, հասցա այն բաները որ անկէ կ'ելլեն, անքեր են որ մարդը կը պղծեն: 16 - Ով որ լսելու ականջ ունի թող լսէ: 17 - Ու երբ այն բազմութիւնն զարթարու առաւ, իր աշակերտները հարցուցին իրեն այն առակին համար: 18 - Ու ըստ անոնց, Ինչ որ այդպէս անմիտ էր, չէք հասկնար թէ ամեն ինչ որ դուքն մարդուն ներսիդի կը մտնէ, չկրնար զանիկա պղծել: 19 - Վասն զի ոչ թէ անոր արտին մէջ կը մտնէ, հասցա փորը, և արտաքնոցը կ'ելլէ, ու բոլոր կերածները կը մարդէ: 20 - Եւ կ'ըսէր թէ ինչ որ կ'ելլէ մարդուն ներսէն, անիկա կը պղծէ մարդը: 21 - Վասն զի ներսէն, մարդոց արտէն, կ'ելլեն չոր խորհուրդներ, շութիւններ, պոռնկութիւններ, սպանութիւններ, 22 - Գողութիւններ, ազատութիւններ, չարութիւններ, նենգութիւն, զիճութիւն, չոր աչք, հայցոյցութիւն, ամբարտաւանութիւն, անպատուութիւն: 23 - Այս բոլոր չար բաները ներսէն կ'ելլեն, ու կը պղծեն մարդը:

24 - Եւ անկէ ելլելով Տերութիւն ու Սիրանի սահմանները գնաց, և տուն մը մտնելով չէր ուզեր որ մէկուն լսուածայ պատուիրանքը թողնուի: 25 - Քանզի կին մը, որուն աղջիկը պիղծ ոգի ունէր էր Իբրտի, լսեց անոր վրայով, ու եկաւ, անոր ոտքը ինկաւ: 26 - Եւ այն կինը *Տէթանոս էր, աղբով փռնիկ Ատրի, և կ'աղաչէր անոր որ դէպ իր աղջիկէն հանէ: 27 - Եւ Յիսուս ըստ անոր, Թող տուր որ առաջ տղաքը կշտանան, քանզի աղէկ չէ տղոց հացը առնել ու շուններուն ձգել: 28 - Անիկա պատասխան առաւ ու ըստ անոր, Այո, Տեր, վասն զի շուներն այ սեղանին տակ տղոցը փշտանքներէն կը կերակրուին: 29 - Եւ ըստ անոր, Այդ խօսքիդ համար գնա, քու աղջիկէդ դէպ կ'աւ: 30 - Եւ Ինչ իր տունը երթալով չէ տղոց հացը կ'աւ: 31 - Եւ նորէն Տերութիւն ու Սիրանի սահմաններէն ելլելով, եկաւ Գալիլէայի ծովեզերքը, Գեղապոլիս սահմաններուն մէջէն: 32 - Եւ մէկը բերին անոր առջև, խուլ ու զժուարախոս, ու կ'աղաչէին որ անոր վրայ ձեռք դնէ: 33 - Եւ ժողովուրդէն մէկը ի առնելով զանիկա, իր մատերը անոր ականջներուն մէջ խոթեց ու թքու, և անոր լեզուին դպաւ, 34 - Ու երկինք նայելով հռուսացեց ու ըստ անոր, Եփփաթա, (որ բռնէ և Բացուէ) 35 - Եւ իսկոյն անոր ականջները բացուեցան, ու անոր լեզուին կայքը բախուեցաւ, և շտակ կը խօսէր: 36 - Ու պատուիրեց անոնց որ մարդո՛ւ չընեն. և որչափ ինք կը պատուիրէր անոնց, անոնք ա՛լ աւելի կը բարոյէին: 37 - Ու չափե դուրս կը գար մամուլին և կ'ըսէին, Առնէն բաները աղէկ ըրաւ ասիկա, որ խուլներուն լսել կու տայ և համբերուն խօսի:

ԳԼ Ը

Այն օրերը ժողովուրդը խիստ շատ բլլալով, և ուսելու բան մը չունենալով, Յիսուս իրեն կանչեց իր աշակերտները ու ըստ անոնց, 2 - կը խոչնակ ալդ ժողովուրդին վրայ, վասն

*Յու. Յոյն

զի հիմա երեք օր է որ իմ քովս են, և բան մը չունին ուսելու: 3 - Եւ եթէ ասոնք անօթի զրկեմ իրենց առնէրը, ճամբոս մէջ պիտի մարին, վասն զի ասոնցմէ ոմմար Տեառ տեղէ կ'աւան: 4 - Եւ իր աշակերտները պատասխան առին իրեն, Այո անապատին մէջ ուրի՛շ կ'ընենք: 5 - Եւ հարցուց անոնք, Քանի՛ նկանակ ունիք, ու անոնք բռնեցին, եթէ 6 - Եւ հրաման ըրաւ ժողովուրդին որ գեանին վրայ նստին, ու առաւ եթէ նկանակը, գոհացաւ և կարեց ու տուաւ աշակերտներուն, որպէս զի ժողովուրդին առջև գնէն, և գրին: 7 - Ու քանի մը մտնը ձուկեր ունէին, և օրհնեց ու բնոց որ զանոնք ալ գնէն անոնք առջև: 8 - Եւ կերան ու կշտացան, ու աւելցած կտորուանքները վերցուցին եթէ զամբիւղ: 9 - Եւ աստղները չորս հազարի չափ էին, ու արձակեց զանոնք: 10 - Եւ շուտ մը նաւը մտնելով աշակերտներուն հետ եկաւ Գաղմանութայի կղզիները: 11 - Եւ փարիսեցիները ելլելով սկսան անոր հետ վիճարանութիւն ընել, և զանիկա փորձելով իրմ նրան մը կ'ուզէին երկինքէն: 12 - Եւ անիկա իր հոգիին մէջ հառաչելով ըստ, Ինչ է որ այս աղբը նշան կ'ուզէ. ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի որ այս աղբին նշան պիտի չարուի: 13 - Ու զանոնք թող տալով նորէն նաւը մտաւ, ու կնաց ծովուն միտ կողմը:

14 - Եւ հաց առնելու մտքեր էին, ու նաւուն մէջ իրենց հետ միայն մէկ նկանակ ունէին: 15 - Եւ կը պատուիրէր անոնց որ կ'ըսէր, Նայեցէք և զգուշացէք փարիսեցիներուն խմորէն ու Հերովդէսի խմորէն: 16 - Եւ իրարու հետ կը խոսէին ու կ'ըսէին թէ Հաց չունենալուս համար է: 17 - Իսկ Յիսուս անոնց իրարմէ զիտաւով ըստ անոնց, Ինչո՞ւ կը խորհէր թէ հաց չունիք. տակաւին չէ՞ք հասկնար որ իմաստը դեռ սիրտերնիդ թմրած է: 18 - Աչքեր ունիք ու չէք տեսներ, և ականջներ ունիք ու չէք լսեր, և չէք յիշեր: 19 - Երբ հինգ նկանակ հինգ հազարի կարեցի, քանի՛ կողով լեզուն կտորուանք վերցուցէր բռն անոր, Տասուերկու: 20 - Ու երբ եթէ նկանակ չորս հազարին Իբրտի, քանի՛ զամբիւղ լեցուն կտոր-

ուանք վերցուցիք. անոնք ալ բռնեցին, եթէ 21 - Ու ըստ անոնց, Հարցուցէ՛ք չէք հասկնար:

22 - Եւ ինթսայիտ եկաւ, ու անոր առջև կոյր մը բերին, ու կ'աղաչէին իրեն որ դպի անոր: 23 - Եւ անիկա կոյրին ձեռքէն բռնելով գեղէն դուրս հանեց, ու անոր աչքերուն թըքելով զանոնք 24 - Եւ հարցուց անոր, Եւ Տորքեր անոր թէ բան մը կը տեսնե՞ք: 24 - Ան ալ նայեցաւ ու կ'ըսէր, Մարդիկ կը տեսնեմ՝ ծառերու պէս որ կը ստորանան: 25 - Նորէն ձեռքը անոր աչքերուն վրայ դրաւ, ու անոր նայիլ տուաւ. և ողջացաւ ու ամեն բան համարձակ կը տեսներ: 26 - Երբ զանիկա իր տունը զրկելով ըստ, Գեղը մի մտնէր ու գեղին մէջ մարդո՛ւ մի բեր:

27 - Եւ Յիսուս իր աշակերտներուն հետ մէկտեղ Փիլիպոսի և Կեսարիայի գեղերը եկաւ, ու ճամբուն մէջ կը հարցնէր իր աշակերտներուն ու կ'ըսէր անոնց, Ինչի՛ համար ո՞վ կ'ըսեն մարդիկ թէ եմ: 28 - Եւ անոնք պատասխան առին -- Ըսէ՛ք, Ո՛րք: Եւ ինչ համար մարդիկ թէ եմ: 29 - Եւ ինք ըստ անոնց, Հապա գուք ինծի համար ո՞վ կ'ըսէր թէ եմ. պատասխան առաւ Պետրոս ու ըստ անոր, Իսկ ու Քրիստոս: 30 - Եւ աստիկ պատուիրեց անոնց որ իրեն համար մարդո՛ւ չըրցեցին:

տարանը ծածկուած ալ է , կորուածներուն մէջ ծածկուած է . 4 - Արնոց մէջ այս աշխարհի աստուածը անհաւատներուն միտքերը կուրցուց , որպէս զի Քրիստոսի փառաց աւետարանին լոյսը անոնց վրայ չծագէ , որ է Աստուծոյ պատկերը : 5 - Վասն զի ոչ թէ անձերնիս կը քարոզենք , հապա Քրիստոս Յիսուս Տէրը , ու մեզ՝ ձեր ծառաները Յիսուսի համար : 6 - Վասն զի Աստուած որ հրաման քրաւ խաւարէն լոյս ծագելի՛ ինք մեր սիրտերուն մէջ ծագեց՝ Աստուծոյ փառաց գիտութեան լոյսը տուց համար Յիսուս Քրիստոսի անձայր : 7 - Արդ մեք այս գանձը հոգէ ամաններու մէջ ունինք , որպէս զի զօրութեան առաւելութիւնը Աստուծոյ ըլլայ , ու ոչ թէ մեզմէ : 8 - Ամէն կողմանէ վշտացած ենք , բայց նեղը ինկած չենք . կարօտեալ ենք , բայց յաւատարմութեամբ չենք : 9 - Հաղածուած ենք , բայց երես ձգուած չենք . վար ձգուած ենք , բայց կորսուած չենք . 10 - Ամէն տանն *Յիսուսի մասը մեր մարմիններուն մէջ կը կրենք , որպէս զի Յիսուսի կեանքն ալ մեր մարմիններուն մէջ յայտնուի : 11 - Վասն զի մեք որ կենդանի ենք՝ Յիսուսի համար միշտ մասնաւոր կը մատնուինք , որպէս զի Յիսուսի կեանքն ալ մեր մասնակցուած մարմիններուն մէջ յայտնի ըլլայ : 12 - Առտի մասը մեր մէջ կը ներգործէ , և կեանքը՝ ձեր մէջ : 13 - Բայց հաւատքին նոյն հոգիանինք , ինչպէս գրուած է , Հաւատացի , անոր համար խօսեցայ . մեք ալ կը հաւատանք , ու անոր համար կը խօսինք : 14 - Չայս գիտնալով թէ ան որ Տեր Յիսուսը յարուց մեզ՝ մեզ Յիսուսով պիտի յարուցանէ , ու առաջ աւել պիտի կայնեցնէ ձեզմով մեկտեղ : 15 - Վասն զի ամէն բան ձեզի համար է , որպէս զի այն շնորհքը առատացած՝ յատկերուն գոհութիւն ընելովը աւելնայ Աստուծոյ փառքին համար : 16 - Վասն որդի չենք ձանձրանար . բայց թէպէտ այս մեր գուրքի մարդը կ'ապականի , սակայն մեր ներքին բարքը օրէ օր կը նորոգուի : 17 - Վասն զի մեր վայրկեանական թէթեւ նեղութիւնը աւաւաւ բան զառաւել փառաց յաւատնական գերազանցութիւն կը գոր-

*Ո՞րն է , Տեր Յիսուսի

ծէ մեզի : 18 - Վասն զի մեք երեցած բաներուն չենք նայիր , հապա չերեցածներուն . բունդի երեցած բաները ժամանակաւոր են , բայց չերեցածները՝ յաւատնական :

ԳԼ Ե

Վասն զի գիտենք որ եթէ մեր վրանի առ երկրաւոր տունը քակուի , շինուածք մը ունինք Աստուծոյ , անձեռագործ յաւատնական տուն մը երկինքի մէջ : 2 - Եւ յիշուէր ասոր մէջ ի՞նչ հաւաչենք՝ մեր երկնաւոր բնակութիւնը հաղնելու փափագելով : 3 - Միայն թէ երբ զայն հաղնելու ըլլանք , մերկ չգտնուինք : 4 - Վասն զի մեք որ այս վրանին տակ ենք , կը հաւաչենք ծանրութիւն քաշելով . վասն զի չենք ուզեր մեր վրանին չտեսնել , հապա զանի՛ս ասոր վրանին հաղնելի , որպէս զի մահկանացութիւնը ընկզկի կեանքէն : 5 - Իսկ ան որ մեզ այս բանին կը պատրաստէ , Աստուած է , որ նաև մեզի տուաւ Հոգւոյն գրարք : 6 - Առտի ամէն տանն վստահութիւն ունինք , և գիտենք թէ որչափ մարմին մէջ կը կենանք , Տերօջմէ հեռու ենք : 7 - (Վասն զի հաւատքով կը բախենք , ու ոչ թէ երեւութով .) 8 - Առտի վստահութիւն ունինք՝ և ալ աւելի կ'ուզենք մարմինէն հեռանալ ու Տերօջը քով կենայ : 9 - Ասոր համար կը ջանանք ալ , որ թէ՛ կենանք և թէ՛ հեռանանք՝ անոր հաճոյ ըլլալը : 10 - Վասն զի պէտք է որ ամէն ալ Քրիստոսի առաւելին առջև ներկայանանք , որպէս զի ամէն մեք իր մարմնովը ըրածներուն փոխարենը տանէ՛ ինչ որ գործեր է , թէ՛ բարի և թէ՛ չար :

11 - Առտի Տերօջը վախը գիտնալով՝ մարդոց միտքը կը հաճեցնենք՝ սակայն մեք Աստուծոյ առջև յայտնի ենք , և կը յուսած որ ձեր խղճմտանքին մէջ մը յայտնի ենք : 12 - Այ թէ մեք անձերնիս ձեզի կ'ընծայենք . հապա առիթ կու տանք ձեզի՝ մեր վրայով պարծենալու . որպէս զի Բարի ոչ ունենալը գոտաբանելու անոնց որ աչքի երեցածով կը պարծենան , ու ոչ թէ սրտով : 13 - Վասն զի եթէ խելքուած ենք՝ այն Աստուծոյ համար է , և եթէ զգաստ ենք՝ այն ձեզի հա-

մար է . 14 - Վասն զի Քրիստոսի սէրը մեզ կը ստիպէ . բանդի մեր դատումը այս է որ եթէ մեզ ամէնուն համար մեռաւ , ուրիշ ամէնուն ալ մեռան . 15 - Եւ ամէնուն համար մեռաւ , որպէս զի կենդանի եղողները ալ իրենց անձերուն կենդանի ըլլան , հապա անոր՝ որ իրենց համար մեռաւ ու յարութիւն տուաւ : 16 - Առտի տակեան մեք մե՛կ մարմնով չենք գիտեր . ու թէ և Քրիստոսը մարմնով ձանձրեցանք , բայց հիմա ալ ոչ ոք չենք ձանձրար : 17 - Արեւմտեան եթէ մեզ Քրիստոսի մէջ է , անկեղ նոր սեղծուած մըն է . հինները անցան , և ահա ամէն բան նոր եղաւ : 18 - Սակայն ամէն բան Աստուծոյ է , որ մեզ իրեն հետ հաշտեցուց Յիսուս Քրիստոսի ձեռքով , ու առաւ մեզի հաշտութեան պատճառը : 19 - Այսինքն Աստուած էր , որ Քրիստոսով աշխարհս իրեն հետ հաշտեցուց , և անոնց յանցանքները իրենց չսեպեց , ու հաշտութեան խօսքը մեր մէջ գրաւ : 20 - Արեւմտեան Քրիստոսի կողմանէ գեազանութիւն կ'ընենք , երբ թէ Աստուած կը բարկանայ մեզմով . կ'աղաչենք Յեզե՛ Քրիստոսի կողմանէ , հաշտեցուցէ Աստուծոյ հետ : 21 - Վասն զի Աստուծոյ գանձիկն որ մեզ չէր գիտեր , մեզի համար՝ մեղաւոր սեպեց՝ , որպէս զի մեք անոր միջոցով Աստուծոյ արգարներն ըլլանք :

ԳԼ Զ

Առտի մեք ալ գործակից ըլլալով կ'աղաչանք որ Աստուծոյ շնորհքը պարուպ տեղ ընդունած ըլլալը : 2 - Վասն զի՛ ինչպէս թամամակի մը մէջ լսեցիք քեզի , կ'ըսէ , և փրկութեան օրը օգնութիւն ըրի քեզի . ահա հիմա է ընդունելի ժամանակը , ահա հիմա է փրկութեան օրը : 3 - Բնաւ բանով մը գայլթակողութիւն չենք ստար , որպէս զի Բեր պաշտօնը շարտաւարի . 4 - Բայց ամէն բան մէջ մեր անձը կ'ընծայենք Աստուծոյ պատարաններու պէս՝ շատ համբերութեամբ վիշտերու մէջ , տուտարաններու , նեղութիւններու , 5 - Մեծերու , բանտերու , խալովութիւններու , աշխատութիւններու , հակուսներու , ծովերու մէջ ,

*Յուս . մեզք քրաւ

6 - Մտքորոշիւնով , գիտութիւնով , երկայնմտութիւնով , բարոյրութիւնով , Սուրբ Հոգիով , անկեղծ սիրով , 7 - Ճշմարտութեան խօսքով , Աստուծոյ զօրութիւնով , արդարութեան զէնքերով՝ որ աջ կողմէն ու ձախ կողմէն է : 8 - Փառքով ու անարութիւնով , պարտականով և գովութիւնով : միտքեցողներու պէս՝ ու ճշմարտներ : 9-Անձանօթներու պէս՝ և ծանօթներ . մեռնողներու պէս՝ և ահա կենդանի ենք . պատճառներու պէս՝ ու չպարանշուածներ : 10 - Տրամաձներու պէս՝ ու միշտ ուրախ ենք . աղքատներու պէս՝ ու չառեղ կը հարտասցնենք . բան մը չունեցողներու պէս՝ և ամէն բան ստացած ենք : 11 - Մեր բերանը ձեզի բացուած է , ով Կորնթացիք , և մեր սիրար լայնցած : 12 - Գուք մեր կողմէն չէք նեղուիր , հապա * ձեր անշնչած գութին կողմէ՝ կը նեղուիք : 13 - Ուստի անոր հատուցումը ընելու համար (իբրև սրբիներուս կը խօսիմ ձեզի ,) գուք ալ դեռ չե՛ս լայնցէք : 14 - Անհաստաներուն հետ օտարախառն լծակից մի բլլաք . քանզի ինչ մասնակցութիւն ունի արդարութիւնը անօրէնութեան հետ , և ինչ հաղորդութիւն ունի լցար խաւարին հետ , 15 - Եւ ինչ միտքանութիւն ունի Քրիստոս Բեկիարի հետ , կամ ինչ լուսինն ունի հաստացելու անհաստահին հետ : 16 - Եւ ինչ յարմարութիւն ունի Աստուծոյ տաճարը կուսքերու հետ , վասն զի գուք կենդանի Աստուծոյ տաճարն էք . ինչպէս Աստուած ըսաւ , թէ Անոնց մէջ պիտի բնակիմ , ու անոնց մէջ պիտի քայլեմ , և անոնց Աստուած պիտի բլլամ : 17 - Ասոր համար ելէք անոնց մէջէն ու գատուեցէք , կ'ըսէ Տէրը , և պիղծ բանի մի դպչիք : 18 - Ու ես ձեզ պիտի բնդուեմ , և ես ձեզի Հայր պիտի բլլամ , ու գուք ինձի աղարկներ ու աղջիկներ պիտի բլլաք , կ'ըսէ Ամենակալ Տէրը :

ԳԼ Է

Աւստի , սիրելիներ , որովհետև մենք այս խոստմունքները ունինք , մեր անձեւը մարմինն ու հոգիին ամէն կերպ պղծ

*կա՛մ , ձեր ներսիդին

ծուլեմ են մարքինք , և որովհետեւ կատարելագործենք Աստուծոյ վախովը : 2 - Ընդարձակեցէք մեզ՝ մարդո՛ւնք : Գնաս չտուինք , ոչ մէկը եղծեցինք , և ոչ մէկը կրեցինք : 3-Այ թէ ձե՛ր գատուապարտելու համար շա՛ր կը լրուցեմ : որովհետև ես առաջուրէն բերեմ որ գուք մեր սիրտերուն մէջ էք՝ մեռնելու և ապրելու ձեզի հետ : 4 - Ծոտ է իմ համարձակութիւն ձեր վրայ . շատ է իմ պարծանքը ձեզի համար : լեցուն եմ մխիթարութիւնով , աւելցած եմ ուրախութիւնով մեր ամէն նեղութիւններուն մէջ : 5 - Վասն զի երբ մենք Մակեդոնիս հասանք , բնաւ մեք մարմինը հանգստութիւն չունեցաւ , հապա ամէն կողմանէ նեղութիւն կը քաշէինք . դուրսէն պատերազմներ կուսին , և ներսէն՝ վախեր : 6-Բայց Աստուած , որ խոնարհները կը մխիթարէ , մեզ մխիթարեց Տիտոսի գալովը : 7 - Եւ ոչ թէ միայն անոր գալովը , հապա այն մխիթարութիւնովն ալ որով կը մխիթարուեր էր ձեզմով , երբ մեզի պատմեց ձեր բազմաճքը , ձեր ողբը : 8 - Վասն զի եթէ ձեզ արտմեցուցի այն լծակովով , չե՞մ զղջար , (թէև զղջացիք էի) . քանզի կը տեսնեմ որ այն լծակովը ձեզ արտմեցուց , թէև երբ մը ատեն : 9 - Արդ ուրախ եմ , ոչ թէ՛ որ արտմեցուց , հապա որ ապաշխարութեան համար արտմեցուց . որովհետև գուք Աստուծոյ անշնչին պէս արտմեցար , այնպէս որ բանով մըն ալ մեզմէ փաս չբաշէք : 10 - Վասն զի Աստուծոյ անշնչին պէս եղած արտմութիւնը փրկութեան համար ապաշխարութիւն կը գործէ , որ զղջանալու բան չէ : Բայց աշխարհէ արտմութիւնը մահ կը գործէ : 11 - Քանզի ահա այս բանն որ գուք Աստուծոյ անշնչին պէս արտմեցուց , ձեր մէջ ո՛րչափ ջանք գործեց , ո՛րչափ չքմեղութիւն , ո՛րչափ սրտմտութիւն , ո՛րչափ վախ , ո՛րչափ բողբոջեց , ո՛րչափ նախանձաւորութիւն , ո՛րչափ վրէժխնդրութիւն . ամէն կերպով կը զինքնիդ ցուցուցիք թէ այդ բանին մէջ մտքուր էք : 12 - Ուրեմն այն զոր ես ձեզի գրեցի , ոչ թէ զրկանքը ընողին

*կա՛մ , Համբերեցէք մեզի

համար էր , և ոչ թէ զրկանքը կրողին համար , հապա որպէս զի ձեր վրայ մեր ունեցած հոգը յայտնի բլլայ ձեզի Աստուծոյ առջև : 13 - Աւստի այն ձեր մխիթարութեանը համար մենք մխիթարուեցանք . շատ աւելի ալ ուրախացանք Տիտոսի ուրախութեանը համար , վասն զի անոր հոգին ձեր ամէնէն հանգստութիւն գտեր էր : 14 - Վասն զի ինչ որ ես անոր առջև ձեզի համար պարծենցայ՝ ամենով չեղայ . հապա ինչպէս ամէն բան ճշմարտութիւնով խօսեցանք ձեզի , նոյնպէս Տիտոսի առջև պարծենալինս ալ ճշմարտ եղաւ : 15 - Դաս անոր ձեր աւելի է ձեր վրայ , նոյնպէս ալ ընիր ունեցածներուս չափով բլլայ : 12 - Վասն զի եթէ անոնց յոյսով ընդունելի է , ու ոչ թէ չունեցածին չափովը : 13 - Վասն զի ոչ թէ ես ուրիշներուն հանգստութիւն Կա՛ղիս մե՛ ձեզի նեղութիւն : 14 - Հապա հաւատարմութիւնով հիմակուան առեղը ձեր աւելին անոնց պակասութիւնը լե՛ցէ . որպէս զի անոնց աւելին ալ որ է օգնութեւն բլլայ ձեր պակասութեանը , որպէս զի հաւատարմութիւն բլլայ : 15 - Ինչպէս զրուած է , թէ Ան որ ըսէ քաղկեդոն չունեցաւ , ու ան որ քե՛զ չպակեցաւ : 16 - Բայց գոհութիւն Աստուծոյ , որ նոյն հոգը ձեր վրայ Տիտոսի սիրար ձեզ . 17 - Վասն զի զի սպառնալք ընդունեց , և իր յօժարամտութիւնը շատ բլլալով իր կամքովը եղաւ ձեզի քա՛ղկեդոն : 18 - Ու անոր հետ զրկեցինք այն եղբայրը , որուն գովութիւնը աւետարանին մէջ է՝ բոլոր եկեղեցիներուն մէջ : 19 - Եւ ոչ միայն այդքան , հապա նաև եկեղեցիներէն ընդուրեցաւ մեզի ճամբորդութեան ընկեր բլլալու այս տուրքերուն մէջ , որ մենք կը ծառայենք Տէրոջ փառքին համար , ու * ձեր յօժարութիւնովը : 20 - Բայց այս մասին զգուշութիւն կ'ընէինք , որ չբլլայ թէ մէկը արտա մը դնէ մեր վրայ այս առատութեանը մէջ , որս մենք կը ծառայենք : 21 - Քանզի ոչ թէ միայն Տէրոջ առջև , հապա մարգոց առջև ալ բարի բանի ընելու հոգ կը տանենք : 22 - Եւ անոնց հետ մեր եղբայրը զրկեցինք , զոր շատ բաներու մէջ փորձելով շատ անգամ յօժարամտ գտեր ենք , ու հիմա ալ աւելի յօժարամտ այն մեծ վատութիւնովը չէ՛ք ձեր վրայ անէ : 23 - Բայց թէ Տիտոսի

ԳԼ Ը

Արդ , եղբայրներ , ձեզի կը ծանուցանենք Աստուծոյ շնորհքը , որ Մակեդոնացի եկեղեցիներուն արուած է : 2 - Ու նեղութեան մեծ փորձին մէջ իրենց ուրախութեանը առաւելութիւնը երեցուց , և իրենց ծանր աղքատութիւնը աւելի մեծ առատութեանութիւնեղաւ : 3 - Վասն զի ես կը վկայեմ որ իրենց կարողութեան չափովը ու կարողութեանն ալ աւելի յօժարակամ բլլալով , 4 - Ծոտ աղաչանքով կ'աղաչէին որ տուրքերը ու սուրբերուն համար եղած պաշտմանն մատակցութիւնը ընդունինք : 5 - Եւ ոչ թէ որչափ մենք կը յուսայինք , հապա անձերինս ալ առեղն առաջ Տէրոջը ու երբեք մեզի Աստուծոյ կամքովը : 6 - Որ Տիտոսի աղաչեցինք թէ ինչպէս անկիա առաջուրէն սկսեց , նոյնպէս ալ ձեր մէջ կատարէ այդ շնորհքն ալ : 7 - Բայց ինչպէս ամէն բանով առատացած էք գուք , (հաւատարմով ու խօսքով ու գիտութիւնով և ամէն ջանքով ու ձեզմէ մեր վրայ եղած սիրովը) : Զայնչե՛ք որ այդ շնորհքով ալ առատանաք : 8 - Ոչ թէ հրամայելով մը կը զրուցեմ , հապա ուրիշներուն ջանքին պատճառաւ , և որպէս զի փորձեմ ձեր սիրոյն հարգատեութիւնը : 9 - Քանզի գուք գիտեք մեր Տէր

Յիսուս Քրիստոսի շնորհքը , թէ ինք ձեզի համար աղքատ եղաւ՝ ան որ հաւատաւ աք , որպէս զի գուք անոր աղքատանալովը հարտանաք : 10 - Եւ այս բանին մէջ իբրտա մը կու տամ : վասն զի սակիա ձեր օգոսին համար է , գուք որ ոչ թէ միայն ընէք , հապա կամենայն ալ առաջուրէն սկսեցէք անցած տարուրէն հետէ : 11 - Աւստի հիմա ընելն ալ կատարեցէք , որպէս զի ինչպէս կամքի յօժարութիւն կայ , նոյնպէս ալ ընիր ունեցածներուս չափովը բլլայ : 12 - Վասն զի եթէ անոնց յոյսով ընդունելի է , ու ոչ թէ չունեցածին չափովը : 13 - Վասն զի ոչ թէ ես ուրիշներուն հանգստութիւն Կա՛ղիս մե՛ ձեզի նեղութիւն : 14 - Հապա հաւատարմութիւնով հիմակուան առեղը ձեր աւելին անոնց պակասութիւնը լե՛ցէ . որպէս զի անոնց աւելին ալ որ է օգնութեւն բլլայ ձեր պակասութեանը , որպէս զի հաւատարմութիւն բլլայ : 15 - Ինչպէս զրուած է , թէ Ան որ ըսէ քաղկեդոն չունեցաւ , ու ան որ քե՛զ չպակեցաւ : 16 - Բայց գոհութիւն Աստուծոյ , որ նոյն հոգը ձեր վրայ Տիտոսի սիրար ձեզ . 17 - Վասն զի սպառնալք ընդունեց , և իր յօժարամտութիւնը շատ բլլալով իր կամքովը եղաւ ձեզի քա՛ղկեդոն : 18 - Ու անոր հետ զրկեցինք այն եղբայրը , որուն գովութիւնը աւետարանին մէջ է՝ բոլոր եկեղեցիներուն մէջ : 19 - Եւ ոչ միայն այդքան , հապա նաև եկեղեցիներէն ընդուրեցաւ մեզի ճամբորդութեան ընկեր բլլալու այս տուրքերուն մէջ , որ մենք կը ծառայենք Տէրոջ փառքին համար , ու * ձեր յօժարութիւնովը : 20 - Բայց այս մասին զգուշութիւն կ'ընէինք , որ չբլլայ թէ մէկը արտա մը դնէ մեր վրայ այս առատութեանը մէջ , որս մենք կը ծառայենք : 21 - Քանզի ոչ թէ միայն Տէրոջ առջև , հապա մարգոց առջև ալ բարի բանի ընելու հոգ կը տանենք : 22 - Եւ անոնց հետ մեր եղբայրը զրկեցինք , զոր շատ բաներու մէջ փորձելով շատ անգամ յօժարամտ գտեր ենք , ու հիմա ալ աւելի յօժարամտ այն մեծ վատութիւնովը չէ՛ք ձեր վրայ անէ : 23 - Բայց թէ Տիտոսի

*Ո՛րչա՛մ , մեր

Համար իւ հարցիւ, անհկա իմ ընկերս է, և ձեր մէջ իմ գործակիցս : Իսկ եթէ ձեր եղբայրներուն Համար՝ անոնք եկեղեցիներուն զրկածներն են, -- Գրիստոսի փառքը : 24 - Առտոի մեր սիրոյն և մեր վրայով պարծենալուն ապացոյցը ատենց վրայ ցուցուցէք եկեղեցիներուն առջև :

ԳԼ Թ

Քանզի սուրբերուն ըլլալու պաշտօնին վրայով ինծի աւելորդ է ձեզի գրել : 2 - Վասն զի դիտեմ ես ձեր յօժարամտութիւնը, որուն վրայով կը պարծենամ ձեզի Համար Մակեդոնացու մէջ, թէ Աքայեցիք անցած տարուրէն Հեռէ պատրաստ են . ու ձեր Բարի նախանձը շատերը զրգուեց : 3 - Եւ հա եղբայրները զրկեցի, որպէս զի մեր ձեզի Համար պարծենալը այդ մասին մէջ պարսպ չեղէ, հոգ պատրաստ գտնուիք, ինչպէս ըսեր եմ : 4 - Որ չըլլայ թէ երբ Մակեդոնացիք ինծի Հետ գան ու ձեզ անպատրաստ գտնեն, ալ մենք (որ չըսենք թէ դուք) ամօթով մնանք այս պարծանքին վատհալութեանը մէջ : 5 - Առտի Հարկուոր սեպեցի եղբայրներուն աղաչել, որ առաջուրէն ձեզի գան, ու առաջուրէն կարգի գնեն այն ձեր առաջուրէն ծանուցուած ընծան, որպէս զի պատրաստ ըլլայ, այնպէս որ ընծայի պէս ըլլայ, ու ոչ թէ ագահութեան պէս : 6 - Բայց ասիկա իւ ծանուցանի թէ Ան որ ինչայլով կը սերմանէ՝ ինչայլով պիտի Հնձէ, ու ան որ առատութիւնով կը սերմանէ՝ առատութիւնով պիտի Հնձէ : 7 - Ամէն մէկը ինչպէս իր որտով կը յօժարի՝ Բառ շնորհքով, ոչ թէ արամուտի կամ ստիպմամբ : Վասն զի Աստուած յօժարուկամ տուողը կը սիրէ : 8 - Բայց կարող է Աստուած բոլոր շնորհքները ձեզի առատօրէն տայ, որպէս զի ամէն բանի մէջ ամէն ատեն բոլոր ձեզի պէտք եղածը ունենալով՝ ամէն բարի գործերով առատանաք : 9 - Ինչպէս գրուած է, Տարածեց ու աղքատներուն տուաւ . անոր արդարութիւնը յաւիտեան կը թնայ : 10 - Եւ անիկա որ սերմ ցանս-

*Ո՞րն է շնորհքը

դին սերմ կը պարգևէ, * և կերակուրի Համար Հաց, ձեր սերմանքը պարգևէ և աւելցնէ, ու ձեր արդարութեան պատշէնը շառագնէ : 11 - Որպէս զի ամէն բանի մէջ Հորատանքը ամէն կերպ առատութիւնով, որ մեր ձեռքով կը պատճառէ գոհութիւն ու Աստուծոյ : 12 - Վասն զի այս պաշտօնին մատակարարութիւնը ոչ թէ միայն սուրբերուն պակասութիւնը լեցնելու Համար է, Հապա նաև աւելի շատցնելու Աստուծոյ գոհութիւն տալը : 13 - Երբ այս յէ պաշտօնին փորձով փառասուրեն զԱստուած՝ Գրիստոսի աւետարանը խոստովանելու հոգ յազանգուածեանք Համար, և այն առատաձեռութեանք Համար՝ որով Հաղորդակցութիւն կ'ընէք անոնց ու ամէնուն : 14 - Եւ իրենց աղօթքը ձեզի Համար հարգանքով, փոփոք ունենալով ձեր վրայ՝ Աստուծոյ դերակցանց շնորհքն Համար որ ձեր մէջ է : 15 - Ալ գոհութիւն Աստուծոյ՝ անոր անպատում պարգևին Համար :

ԳԼ Ժ

Բայց ես Պօղոս ձեզի կ'աղաչեմ՝ Գրիստոսի հեղուցութիւնով ու քայքայութիւնով, որ երես առ երես հոգաւորաբար խոնարհ եմ ձեր մէջ, բայց հեռուէն կը Համարձակիմ ձեզի : 2 - Կ'աղաչեմ զի չըլլայ թէ մտէն ալ Համարձակիմ այն վատհալութիւնով որով միտք ունիմ՝ յանդիմի մէկ քանիներուն վրայ, որոնք մեր վրայով այնպէս կը կարծեն թէ մարմնաւորապէս կը քայքայուին : 3 - Քանզի թէ պէտ մարմինի մէջ կը քայքայուին, բայց ոչ թէ մարմնաւորապէս զինուորութիւն կ'ընենք : 4 - Վասն զի մեր զինուորութեան զենքերը մարմնաւոր չեն, Հապա Աստուծոյ զօրութիւն առաջ՝ ամբողջներ քակելու : Ինչք խորհուրդներ կը քահկենք, 5 - Եւ Աստուծոյ զիտութեանը դէմ բոլոր Հպարտացած բարձր բաները, ու բոլոր միտքերը Գրիստոսի հազանգութեանը գերի կ'ընենք : 6 - Եւ

*Ո՞րն է, կերակուրի Համար Հաց ալ պիտի պարգևէ, և ձեր սերմանքը պիտի աւելցնէ
 †Ո՞րն է, պիտի շատցնէ

ԳԼ ԺԱ

պատրաստութիւն ունինք զրեժ տուներու ամէն անհաղանդութենէ, երբ ձեր հնազանդութիւնը կատարեալ ըլլայ : 7 - Կուրսի երկայթիւն կը նախքէ եթէ մէկը վատհալ ըլլայ իր անհոգի վրայ թէ ինք՝ Գրիստոսին է, զայս նորէն ինքիմէ խորհի՛ր որ ինչպէս ինք՝ Գրիստոսին է, նոյնպէս ալ մենք : 8 - Քանզի եթէ աւելի ալ պարծենալու ըլլամ՝ այս մեր ինչանտութեանը վրայով զոր Տէրը մեզի տուաւ՝ ձեզ չիներու և ոչ թէ քակելու Համար, պիտի չամէնամ : 9 - Որպէս զի այնպէս չսեպուիմ՝ որպէս թէ ես թուղթ երովն ձեզի վրայ մէկ կը ձգեմ : 10 - Քանզի Ան թուղթ երկը, կ'ըսէ Հէւ, ծանր ու զօրաւոր են, բայց անոր մարմինը երեւոյթը սկար է, ու խօսքը՝ անարգ : 11 - Սնչպիսի մտքը զայս թող խորհի, որ մենք հեռուէն ինչպէս ենք խօսքով մեր թուղթ երով, մտէն ալ այնպէս պիտի ըլլանք գործով : 12 - Վասն զի մենք չենք Համարձակիր մեր անձը կշիռքի գնել ու բաղդատել ումանց հետ, որ ինքզինքնին կը գովեն : Բայց անոնք իրենցմով իրենց անձերը չափելով, և զինքն իրենց հետ բաղդատելով՝ չեն հասկնար : 13 - Բայց մենք չափէ դուրս բաներով պիտի չպարծենանք, Հապա այն կունենին չափովը՝ զոր Աստուած մեզի բաժին տուաւ մինչև ձեզի հասնելու : 14 - Ոչ թէ որպէս թէ մենք ձեզի հասած չենք, ու ինքզինքնին չափեն աւելի կ'երկնցնենք : Վասն զի Գրիստոսի աւետարանով մինչև ձեզի հասանք : 15 - Եւ ոչ թէ չափէ դուրս բաներով՝ ուրիշներուն աշխատանքով կը պարծենանք, Հապա յոյս ունինք որ ձեր հաւատքը աւելնալուն՝ մեր կանոնին չափովը ձեզմով աւելի ընդարձակինք : 16 - Չգիտէ անդիի կողմերը աւետարանը քարոզելու, և ոչ թէ պատրաստ բաներու վրայ պարծենալու ուրիշի մը կանոնով : 17 - Բայց ան որ կը պարծենայ թող Տէրը ինքիմով պարծենայ : 18 - Վասն զի ոչ թէ ան որ իր անձը կը գովէ՝ անհկա է ընտրուածը, Հապա ան զոր Տէրը կը գովէ :

Մանի թէ քիչ մը ներկեք իմ անմտութեանս : Եւ իրացնէ Համբերեցէք ինծի : 2 - Վասն զի ձեր վրայ նախանձաւոր եմ Աստուծոյ նախանձալը : Վասն զի ես ձեզ կ'ըկամ մը նշանեցի՝ մտքուր կոյսի մը պէս՝ Գրիստոսի զիտեց Հանելու : 3 - Միայն թէ կը վստահամ՝ չըլլայ թէ ինչպէս օճը Եւսան խաղեց իր խորամտութիւնովը, նոյնպէս ալ ձեր միտքերը ազդեանին՝ Գրիստոսի վրայ եղած միամտութենէն : 4 - Վասն զի եթէ մէկը գտուր ըլլայ և ուրիշ Յիսուս քարոզէ՝ զոր մենք չքարոզեցինք, կամ ուրիշ հոգի տունէք՝ զոր չափէ, կամ ուրիշ աւետարան՝ զոր չէք ընդունած, շնորհակցե՛ք աղէկ կը Համբերեցէք : 5 - Քանզի ես այնպէս կը սեպեմ՝ որ ամէնէն երեւի առաքելայինքն ըսնով մըն ալ պատկա չեմ : 6 - Եւ թէ պէտ խօսքի կողմէ անկիրթ եմ, բայց ոչ թէ գիտութեան կողմէ : սակայն ամէն բանի մէջ բոլորովն անձերնու ձեզի յոյսանի ըրինք : 7 - Միթէ յանցանք գործած եղայ՝ որ Աստուծոյ աւետարանը ձեզի ձրի քարոզելով իմ անձս խոնարհեցուցի, որպէս զի դուք բարձրանաք : 8 - Ուրիշ եկեղեցիները կողոպտեցի, անհոգի թողուցի առնելով ձեզի ծառայելու Համար : 9 - Ու ձեր քով գտնուած ատենս երբ պակասութիւն մը ունենցուի, Վասն զի իմ պակասութիւն լեցուցին Մակեդոնիայէ եկող եղբայրները : Եւ ամէն կերպով ձեզի ծանրութիւն տալէ իմ անձս պահեցի ու պիտի պահեմ ալ : 10 - Գրիստոսի ճշմարտութիւնը իմ ներսիցիս է, որ այս իմ պարծենալու պիտի չխափանուի ինձմէ Աքայեցի կողմերը : 11 - Ինչո՞ւ որպէս թէ չեմ սիրեր ձեզ : Կո՛ւ Աստուած գիտէ : 12 - Բայց ինչ որ կ'ընեմ՝ պիտի ընեմ ալ, որպէս զի կարեմ անոնց պատճառը՝ որոնք պատճառ կը փնտաւեն, որպէս զի ինչ բանով որ կը պարծենան, իրենք ալ ձեզի պէս գրտնուին : 13 - Վասն զի այնպիսիներու սուտ առաքելայինք, խորհրոյս բանուորներ, ըլլալով, Գրիստոսի առաքելաներուն կերպարանքը իրենց վրայ կ'աւանդեն : 14 - Եւ զարմանք մը չէ՛ վասն զի ինք Աստուծոյ ալ լուսաւոր

*Ո՞րն է, Գրիստոսին ենք

Տրեշտակի կերպարանք կ'առնեն. 15 - Այլ մեծ բան մը չէ, որ անոր պաշտօնեաներն ալ արդարութեան պաշտօնեաներու նման կերպարանք կ'առնեն. որոնց վերջը իրենց գործերուն համեմատ պիտի ըլլայ: 16 - Գարձեալ կ'ըսեմ, Չըլլայ որ մէկը զիս անմիտ սեպէ, ապա թէ ոչ՝ գտնէ անմիտի մը պէս զիս ընդունեցաք, որպէս զի ես ալ քիչ մը պարծենայմ: 17 - Ինչ որ ես կը խօսիմ, պէ թէ Տէրոջը կ'առնէ պէս կը խօսիմ, հապա որպէս թէ անմտութիւնով մը այդ պարծենայուն վատահալ թիւնով: 18 - Որովհետեւ շատերը մտմտի կողմնէն կը պարծենան, ես ալ պիտի պարծենամ: 19 - Քանզի դուք իմաստուն ըլլալով, յօժարութեամբ կը համբերեք անմիտներուն: 20 - Վասն զի կը համբերեք, եթէ մէկը ձեզ ծառայեցնէ, եթէ մէկը չէր ստացածքք ուտէ, եթէ մէկը չէր չեղէ բան է՛ն առնէ, եթէ մէկը չէր էջայ հպարտանայ, եթէ մէկը ձեր երեսին զարնէ: 21 - Քամուհարձիկ ձեզ կը խօսիմ, իր թէ մեք տկար էինք. բայց ինչ բանով որ մէկը պարծենալու կը հայտնախոսի, (անմտութեամբ կը խօսիմ,) ես ալ կը համարձակիմ: 22 - Անոնք Երբայեցի՛ն են, ես ալ. Ինչպիսիացի՛ն են, ես ալ. 23 - Արասումք սերունդ են, ես ալ. Քրիստոսի պաշտօնեաներ են: (յիմարտար կը խօսիմ,) ալ աւելի ես. աշխատանքներով աւելի, ծեծերով ալ աւելի, բանաստեղծութիւններով աւելի, մտհոսուն էրանքներով շատ անգամ. 24 - Հրեաներէն հինգ տնգամ բնասուունէն մէկ պակաս չէ՛ք կերայ: 25 - Երեք անգամ ձողկով ծեծուեցայ, մէկ անգամ բարկածուեցայ. երեք անգամ նաւարկութեան ճանգիպեցայ. գիշեր մը ու ցորեկ մը ծախուանդուեցայ մտացի: 26 - Ես անգամ ճամբորդութիւններու մէջ շարժուեցայ. գետերէն վտանգներ, աւազակներէն վրտանգներ, իմ ազգէս վտանգներ, հեթանոսներէն վտանգներ, քաղաքի մէջ վտանգներ, անապատի մէջ վտանգներ, ծովու վրայ վտանգներ, սուտ եղբայրներու մէջ վտանգներ իբեջի: 27 - Զանքի ու աշխատանքի մէջ, շատ անգամ քնահատութեան մէջ, սնուցութեան մէջ ծարաւութեան մէջ, շատ անգամ ծով կենդանու մէջ, ցորու ու մերկութեան մէջ էի: 28 -

Չգէ արտաքին շեղումները, ամէն օրուան գրադմուէքը, բոլոր եկեղեցիներուն հոգք, վրաս կը դիպուէր: 29 - Ի՞նչ կը տկարանայ, ու ես չեմ տկարանար. ո՞վ կը գայլթակդի, ու իմ սիրտս չայլդի: 30 - Եթէ վարձեալ պէտք ըլլայ, տկարութեանս բաներուն վրայ պարծենամ: 31 - Աստուած և մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հայրը, որ յաւիտեան օրհնեալ է, գիտէ որ սուտ չեմ գրուցեր: 32 - Գամտակոտի մէջ Արեաս թագաւորին ազգապետը զիս բռնել ու զիջով Գամտակոտը քաղաք պահապաններ դրեր էր: 33 - Ես ես պատուհանէ մը զամբիւրով պարսպէն վար թող արուեցայ, ու անոր ձեռքէն փախայ:

ԳԼ ԺԳ

Պարծենայ Գիրացընէ ինծի սնուցուտ է. միայն թէ Տէրոջը տեսիլքներուն ու յայտնութիւններուն դամ: 2 - Մարդ մը գիտեմ Քրիստոսով տանըջոր տարի սուտը, (եթէ մտմտիմով էր չեմ գիտեր, և եթէ առանց մտմտիմի չեմ գիտեր, Աստուած գիտէ,) որ այնպիսի մէկը յոգեշտակուեցաւ մինչև երրորդ երկինքը: 3 - Ազգիտեմ այնպիսի մարդ մը, (եթէ մտմտիմով և եթէ առանց մտմտիմի չեմ գիտեր. Աստուած գիտէ,) 4 - Որ դրստար յոգեշտակուեցաւ ու լսեց չպատմուելու խօսքեր, զորոնք մարդու տրժան չէ խօսիլ: 5 - Ես այնպիսին համար պիտի պարծենամ. բայց իմ անձիս համար պիտի չպարծենամ, հապա միայն տկարութեանս վրայ: 6 - Վասն զի եթէ պարծենալ ալ ուղիւմ, անմիտ պիտի ըլլամ, որովհետեւ շետակը պիտի գրուցեմ. բայց կը խնայեմ իրանքս՝ որ ըլլայ թէ մէկը իմ վրաս աւելի համարում ունենայ, բան որչափ իմ վրաս կը տեսնէ կամ ինծի կը լսէ: 7 - Ես որ ըլլայ թէ ես հպարտանամ խիտ շատ յայտնութիւններուն համար, ինծի մտմտիմի խոյլոց մը տրուեցաւ, Ստատույի Տրեշտակ մը, զիս նեղելու համար, որ ըլլայ թէ հպարտանամ: 8 - Ասոր համար երեք անգամ աղաչեցի Տէրոջը, որ մէկդի ընէ ինձմէ: 9 - Ու բաւ ինձի, իմ շնորհք Տրեք է քեզի, վասն զի

*Ունէ, պէտք է, բայց

իմ զօրութիւնս տկարութեան մէջ կը կատարուի. ուստի մեծ յօժարութեամբ աւելի իմ տկարութիւններուս վրայ պիտի պարծենամ, որպէս զի Քրիստոսի զօրութեամբ իմ վրաս հանգչի: 10 - Անոր համար հաւանք եմ ես տկարութիւններու, նախատինքներու, ստուապանքներու, հայածանքներու և նեղութիւններու՝ Քրիստոսի համար. վասն զի երբ կը տկարանամ, այն ատեն զօրուտ եմ: 11 - Ես անմիտ եղայ պարծենալով. դուք ստիպեցիք զիս. վասն զի ինձի պէտք էր ձեզմէ վկայութիւն առնել, բանզի ես երեւելի առաքեալներէն ըսնով մը պակաս չգանուեցայ, թէ ես ոչինչ եմ: 12 - Յիբաւի ձեր մէջ առաքեալի նշաններ գործուեցան ամէն համբերութիւնով, նշաններով և սրանչեկքներով ու զօրութիւններով: 13 - Վասն զի ալ ինչ կայ, որով պակաս գանուեցաք ուրիշ եկեղեցիներէն, միայն թէ անով որ ես ձեզի ձանձրութիւն չառեք. ներքեք ինձի այդ յանգանքը: 14 - Ահա այս երրորդ անգամ է որ կը պարտաստուիմ ձեզի գալու. և ես ձեզի ձանձրութիւն պիտի չառմ, վասն զի ձեր ունեցած չեմ փնտուեր, հապա ձեզ. որովհետեւ որդիներ պարտաւոր չեն ծնողներուն համար բան դիզել, հապա ծնողները որդիներուն համար: 15 - Ես ես մեծ յօժարութեամբ ծախք պիտի ընմ, ու ծախք պիտի ըլլամ ալ ձեր անձերուն համար, թէ պէտեւ ձեզ աւելի սիրելովս չեմ քիչ սիրուով ալ: 16 - Սակայն թող ըլլայ որ ես ձեզի ծանրութիւն մը չառեի, բայց գոչեմ ձեզ լսէ ի՛նչ խորագէտ ըլլալովս նեղութեամբ ձեզ բռնեցի: 17 - Եթէ իմ ձեզի դրկաններէս մէկուն ձեռքով ձեզմէ բան մը քաշեցի՞: 18 - Տիտոսի աղաչեցի, ու անոր հետ այն եղբայրը զիկեցի. միթէ Տիտոս ձեզմէ բան մը քաշեց. չէ՞ որ երբեք ալ նոյն հոգիով քաշեցիք, չէ՞ որ նոյն ճամբով դուրս գոչեցիք: 19 - Գարձեալ, կը կարծեք որ ձեր առջև ջատագովութիւն կ'ընէք մեր անձերուն. Աստուծոյ առջև Քրիստոսով կը խօսիք. և ամէն բան, սիրելիներ, ձեր շնութեանը համար է: 20 -

Գնահի կը վախճամ որ ըլլայ թէ երբ գամ՝ ձեզ ուզածիս պէս չգտնեմ, և ես ալ ձեզի ձեր չուզածին պէս գտնուիմ. ըլլայ թէ չէր ձեզ գոչեմ ձեզ, նախանձներ, արամուտութիւններ, գրգռութիւններ, շարխոսութիւններ, բանաստեղծութիւններ, ամբարտանութիւններ, խուսովութիւններ: 21 - Չըլլայ թէ երբ նորէն գամ, իմ Աստուածս զիս նկուսնէ ձեր քով, ու սուգ ընմ շատ բուն համար, որոնք առաջուրէն մեզք գործեցին, ու չապաշխարեցին իրենց գործած պրծութեանը և պոնկութեամբ ու զիճութեանը վրայ:

ԳԼ ԺԶ

Այս երրորդ անգամ է որ ձեզի կուգամ. երկու կամ երեք վկաներու բերնէ պիտի հաստատուի ամէն բան: 2 - Առաջուրէն ըսեր եմ՝ և նախև առաջուրէն կը գրուցեմ (որպէս թէ երկրորդ անգամ ներկայ կը գտնուիմ) թէ ես հիմա հեռուէն կը գրմ. առաջուան մեղանչողներուն և ուրիշ ամէնուն, որ եթէ նորէն գամ՝ պիտի չինայեմ: 3 - Որովհետեւ Քրիստոսի ինձմով խօսելուն տպացոյցը կը փնտուէք, որ ձեր վրայ տկարացած չէ, հապա ձեր մէջ զորացած է: 4 - Որ թէ պէտ խաչուեցաւ տկարութեանով, բայց կենդանի է Աստուծոյ զօրութեանով. բանզի մեք ալ թէ պէտ կը տկարանալու անով, բայց կենդանի պիտի ըլլանք տնոր հետ Աստուծոյ զօրութեանով: 5 - Փորձեցէք ձեր անձեր թէ հուսաւորին մէջ էք. բնեցեք ձեր անձերը. չէ՞ք գիտեր ինչպիսիքիք, որ Յիսուս Քրիստոս ձեր մէջ է, միայն եթէ խոտելի ըլլալք: 6 - Բայց կը յուսեմ որ պիտի գիտանաք թէ մեք խոտելի չեմք: 7 - Ես կը ինչընէմ Աստուծոյ սր գուք շարութիւն մը չընէք. ոչ թէ որպէս զի մեք ընտիր երկինք, հապա որպէս զի դուք բարին գործեք, թէ ես մեք իրեւ խոտելի ըլլանք: 8 - Վասն զի ճշմարտութեան դէմ կարողութիւն մը չունինք, հապա ճշմարտութեան համար: 9 - Քանզի ուրախ եմ՝ երբ մեք կը տկարանալու ու դուք զօրուտ երբ ըլլալք, և մեք ալ այդ ձեր հաստատութեանը համար կ'այլով ենք: 10 - Ուստի զայս կը քրեմ ձեզի հեռուէն,

*Ունէ, չեմ ինչ

որ չբլլայ թէ երբ գամ ստատիւ-
թեամբ վարուիմ այն իշխանութեանը
համեմատ, զոր Տէրը ինծի տուաւ շի-
նեկաւ և ոչ թէ քակելու համար:
11 - Վերջապէս, երբայրներ, ողջ
եղէք, հաստատ կեցէք, միխթարուե-
ցէք, միարան եղէք, խաղաղութիւն
ըրէք. և սիրոյ ու խաղաղութեան

Ատուածը ձեզի հետ պիտի բլլայ:
12 - Բարե տուէք իրարու սուրբ համ-
բուրով. բարե կ'ընեն ձեզի բոլոր սուր-
բերը: 13. Տէր Յիսուս Քրիստոսի շնորհ-
քը և Ատուածոյ սէրը ու Հոգւոյն Սրբոյ
հաղորդութիւնը ձեր ամէնուն հետ
բլլայ: Ամէն:



Թ Ո Ւ Ղ Թ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

Ա Ռ Գ Ա Ղ Ա Տ Ա Յ Ի Ս



ԳՂՈՒԽ Ա

Պօղոս, առաքելայ էլ, ոչ թէ
մարգարէն ու ոչ թէ մարգու ձեռքով,
հապա Յիսուս Քրիստոսի ձեռքով, և
Հօր Ատուածոյ՝ որ զանկաւ մեռելնե-
րէն յարուց, 2 - Եւ բոլոր եղբայրները
որոնք ինծի հետ են, Գաղատիոյ եկե-
ղեցիներուդ: 3 - Ենորհք և խաղաղու-
թիւն ձեզի Հօր Ատուածով ու մեր Տէր
Յիսուս Քրիստոսէ, 4 - Որ իր անձը
տուաւ մեր մեղքերուն համար, որպէս
զի մեզ փրկէ հիմնական չար աշխար-
հէն՝ Ատուածոյ ու մեր Հօրը կամքին
համեմատ, 5 - Որու փառք յաւիտե-
անս յաւիտեանից Ամէն:
6 - Կը զարմանամ որ այդպէս շու-
տով ուրիշ աւետարանի կը փոխուէք
անկէ՝ որ ձեզ Քրիստոսի շնորհքին
կանչեց. 7 - Որ չկայ ուրիշ - երբեմն
միայն թէ կան անոնք՝ որոնք ձեզ կը
խառնեցնեն, ու կ'ուզեն Քրիստոսի ա-
ւետարանը խանգարել: 8 - Բայց եթէ
մենք կամ երկինքէն հրեշտակ մը քոյ,
աւետարանէ ձեզի անկէ ուրիշ զոր
մենք աւետարանեցինք ձեզի, նզովեալ
բլլայ: 9 - Ինչպէս առաջ բարե, հիմա
այ նորէն կ'ըսեմ, Եթէ մէկը ձեր
ընդունածէն ուրիշ աւետարան քա-
րողելու բլլայ ձեզի, նզովեալ բլլայ:
10 - Բանդի հիմա մարդիկ կը հաճե-
ցնեն թէ զԱտուած. կամ մարգոյ

հաճելի բլլալ կը փնտռեմ. բանդի
եթէ ես տակաւին մարգոյ հաճելի բլ-
լայի, ալ Քրիստոսի ծառայ չէի բլլար:
11 - Կը ծանուցանեմ ձեզի, եղբայր-
ներ, այն աւետարանը որ ինձմէ քա-
րողուեցաւ, թէ անկաւ մարգու բան
չէ: 12 - Որովհետեւ ես ալ մարդէ չա-
ռի զանկաւ, և ձէլն ու չարովեցայ,
հապա Յիսուս Քրիստոսի յայտնութե-
անէն: 13 - Վասն զի լսած էք դուք իմ
առաջուան ժամանակի վարմունքս
Հրեութեան մէջ, ինչպէս չափէ գուր
կը հալածէի Ատուածոյ եկեղեցին, ու
կը կործանէի զանկաւ. 14 - Եւ իմ
հոգիսն աւանդութիւններու իրաւ
նորանմաւ որ բլլալով իմ աղգիս մէջ
եղած շատ հասակակիցներէն անկի
յոռաշարէմ էի Հրեութեան մէջ:
15 - Բայց երբ ուզեց Ատուած, (որ
որտեց զիս իմ մօրս որովայնէն, և իր
շնորհքովը դէս կանչեց): 16 - Ինծի իր
Որդին յայտնել, որպէս զի զանկաւ
հեթանոսներուն մէջ քարոզեմ, մե-
կէն ի մէկ բան մը չիմացուցի մարմն-
ինն ու տրեւնի, 17 - Ոչ ալ երուսա-
ղէմ էլայ ինձմէ առաջ առաքելու ե-
ղողներուն քով, հապա Արարիտ գա-
ցի, ու նորէն Իրանակա զարծայ: 18 -
Ետք երբ տարիէն ետեւ երուսղէմ
էլայ Պետրոսը տեսնելու, և տանը հինգ

կամ, ինձ մով

որ անոր քով կեցայ. 19 - Սակայն ա-
ռաքելներէն ուրիշ մէկը շտեայ,
բայց միայն Յակոբոս, Տէրոջը եղ-
բայրը: 20 - Բայց զայս որ կը գրեմ
ձեզի՝ ահա Ատուածոյ առջև է չարա-
բէ՛, որ սուս չեմ գրուցեր: 21 - Անկէ
ետք եկայ Սիւրբոյն ու Կիկիկոյի
կողմէր: 22 - Եւ զիս դեմ առ դեմ չե-
ին ծանշնար այն եկեղեցիները՝ որոնք
Հրեաստանի մէջ էին Քրիստոսով:
23 - Միայն թէ անոնք լսած էին թէ
Ան որ առեւորք մեզ կը հալածէր, հե-
մա ինք այն հաւատքը կը քարոզէ՝ զոր
ատեն մը կը կործանէր: 24 - Ու ինձ-
մով զԱտուած կը փառաւորէին:

ԳՂ Բ

Ետք տանըջորս տարիէն ետեւ նո-
րէն երուսղէմ էլայ Բաւնարասի
հետ Տիտոսն ալ մեկտեղ աննելով:
2 - Ու ելայ յայտնութիւնով, և ա-
նոնց խնցուցի այն աւետարանը՝ զոր
հեթանոսներուն մէջ կը քարոզեմ,
բայց առանձին անոնց՝ որոնք երեւի-
ներ էին, որ չբլլայ թէ պարսպ տեղ
վաղեմ կամ վաղած բլլամ: 3 - Բայց
ալ թէ ինձի հետ եղող Տիտոսն ալ,
որ Յոյն էր, պարտաւորեցաւ թրփա-
ուիլ: 4 - Մանուանդ ներս սարգոզ
սուս եղբայրներուն համար՝ որոնք սա-
հելով ներս մտան Քրիստոս Յիսուսով
մեր ունեցած ազատութիւնը լրտեսե-
լու համար, որպէս զի մեզ ծառայեցը-
նեն: 5 - Որոնց քիչ մը ստանանգամ մտիկ
չըրբեք չնազանդելու, որպէս զի աւե-
տարանին ճշմարտութիւնը հաստա-
տան մնայ ձեր մէջ: 6 - Բայց անոնք
որ կը կարծուէին բան մը բլլալ, ինչ
որ էին այն իմ հոգս չէ. Ատուած
մարգոյ աշտարութիւն չըներ. վասն զի
- յոյ՛ - կարծուածները բան մը չիմա-
ցուցին ինձի: 7 - Հապա անոր հակա-
ուսի՛ր՝ երբ տեսան որ անթրփառներուն
աւետարանը ինձի յանձնուած է,
ինչպէս Պետրոսի ալ թրփառուածնե-
րեց, 8 - (Վասն զի ան որ Պետրոսի
յաջողեց թրփառուածներուն տառքե-
լութիւն ընել, ինձի ալ յաջողեց հե-
թանոսներունը) 9 - Ու երբ ինձի
տրուած շնորհքը գիտցան Յակոբոս ու
Կեփաս և Յովհաննէս, որոնք սիւներ
սեպուած էին, աջ ձեռքերնին տուին
ինձի ու Բաւնարասի էլաւս հաղոր-

դակցութեան, որպէս զի մենք հեթա-
նոսներուն մէջ երբեք, ու անոնք՝
թրփառուածներուն: 10 - Միայն թէ
էլ իմէն որ աղքատները լիշեկը. զոր
ես ալ փոյ՛ լուսնեցայ այն քան ընե-
լու: 11 - Բայց երբ Պետրոս Անտիոք
եկաւ, ես անոր դեմ կեցայ. որովհետեւ
ինք մեղադրուելու էր: 12 - Վասն զի
դեռ Յակոբոսի քովէն մէկ քանի հոգի
չեկած, ինք հեթանոսներուն հետ ա-
ւորաբար կ'ուտէր. բայց երբ եկան
մէկդի կը քաշուէր, և ինքզինք կը զա-
ւատէր, վախնալով անոնցմէ՝ որոնք թրփ-
առուածներէն էին: 13 - Եւ անոր
հետ կեղծաւորեցան միւս Հրեաներն
ալ, այնպէս որ Բաւնարաս ալ անոնց
կեղծաւորութեանը ծոցու: 14 -
Բայց ես երբ տեսայ որ աւետարանին
ճշմարտութեանը մէջ շտապ չեն քա-
լեր, ամէնուն առջև Պետրոսի զրուցե-
ցի, Եթէ դուն, որ Հրեայ ես, հեթա-
նոս պէս ու ոչ թէ Հրեայ պէս կ'ապ-
րիս, ինչպէս հեթանոսները կը ապրիս
Հրեայ պէս վարուելու: 15 - Մեկը որ
բուն Հրեայ էր, և ոչ թէ հեթանոս-
ներէն մեղաւորներ, 16 - Զայս գիտ-
նալով՝ որ մարդ օրէնքին գործերէն
չիբնար սրգարանալ, հապա Յիսուս
Քրիստոսի հաւատացինք, որպէս զի
արդարանալք Քրիստոսի հաւատքէն, և
ոչ թէ օրէնքին գործերէն, որովհետեւ
օրէնքին գործերէն մարմին մը պիտի
չարդարանայ: 17 - Իսկ եթէ մենք, որ
կ'ուզենք Քրիստոսով արդարանալ,
մեղաւոր գտնուիք, ուրեմն Քրիստոս
մեզքի պաշտօնեայ եղաւ. քա՛ւ լիցի:
18 - Բանդի եթէ իմ քակած բաներս
նորէն կը չիեն՝ իմ անձս յանցուոր
կը ցուցնեմ: 19 - Վասն զի ես օրէն-
քով մեռայ օրէնքին, որպէս զի Ա-
տուածոյ կեղանի բլլամ: 20 - Քրիս-
տոսի հետ խաջ ելայ. և ալ կենդանի
եմ ոչ թէ ես, հապա Քրիստոս կեն-
դանի է իմ մէջս. բայց ես որ հիմա
մարմնովս կ'ապրիմ՝ Ատուածոյ Որդ-
ւոյն հաւատարմը կ'ապրիմ, որ զիս
սիրեց ու իր անձը ինձ համար մտա-
նեց: 21 - Ես Ատուածոյ շնորհք չեմ
խափաներ. վասն զի եթէ արդարու-
թիւնը օրէնքէն էր, ուրեմն Քրիստոս
պարսպ տեղ մեռաւ:

Ով անմիտ Գաղատացիներ, ո՞վ ձեզ հրապարակեց՝ որոնց աչքերուն առջև Յիսուս Քրիստոս ձեր մէջ խաչը երած նկարագրուեցաւ։ 2 - Ասիկա միայն կ'ուզեմ ձեզմէ սորվիլ։ Օրէնքին գործերովը դուք Հոգին առեք թէ հաւատաբան լսելովը։ 3 - Այդպիսի անմիտ էք։ Հոգիով սկսեցիք, ու հիմա մարմին ունցան, (եթէ պարսպ ըլլայ այլ)։ 5 - Ուստի ան որ ձեզի Հոգին բաշխեց և ձեր մէջ զորութիւններ գործեց, օրէնքին գործերովը եր' թէ հաւատաբան լսելովը։ 6 - Ինչպէս Աբրահամ Աստուծոյ հաւատաց, ու անոր արգարութիւն սեպուեցաւ։ 7 - Ուրեմն զիտեք թէ անոնք որ հաւատաբան են՝ անոնք են Աբրահամի որդիները։ 8 - Եւ զիբքը առաջուրեւէ զիսնայով թէ Աստուած հեթանոսները հաւատաբով կ'արգարացնէ, առաջուրեւէ աւետիտ առաւ Աբրահամի, թէ Քիզմով պիտի օրհնուին բոլոր ազգերը։ 9 - Ուստի անոնք որ հաւատաբան են, կ'օրհնուին հաւատացեալ Աբրահամի հետ։ 10 - Վասն զի անոնք որ օրէնքին գործերէն են, անեծքի տակ են - վասն զի գրուած է թէ։ Անիծեալ ըլլայ ամէն մարդ՝ որ օրէնքին զիբքը ամէն գրուածներուն մէջ չկենար՝ որ զանոնք կատարէ։ 11 - Եւ թէ օրէնքով մէկը չկրնար արգարութնայ Աստուծոյ առջև, այն յայտնի է. քանզի Արդարը հաւատաբան պիտի սպրի։ 12 - Բայց օրէնքը հաւատաբան չէ, հապա Ան որ կ'ատարէ այն բաները՝ աննոցմով պիտի ապրի։ 13 - Քրիստոս մեզ ծախու առաւ օրէնքին անեծքէն ինք մեզի համար անեծք ըլլալով։ (Վասն զի գրուած է թէ։ Անիծեալ է ան ամէնը՝ որ փայտէ կը կտաւուի։) 14 - Որպէս զի Աբրահամի օրհնութիւնը հեթանոսներուն վրայ ըլլայ Քրիստոս Յիսուսով։ որպէս զի մենք ալ Հոգւոյն խոստմունքը առնենք հաւատաբով։ 15 - Մարդու սովորութեան պէս կը զրուցեմ. եղբայրներ, իրաւ որ մարդու մը հաստատած կտակը մէկը չխափաներ, ոչ ալ անոր վրայ ուրիշ

պատուեր մը կ'աւելցնէ։ 16 - Արդ խոստմունքները Աբրահամի ու անոր սերունդին եղան, չբեր, եւ բաւ սերունդներուց՝ որպէս թէ շատերու համար, հապա որպէս թէ մէկի համար, եւ քու սերունդիդ, որ Քրիստոս է։ 17 - Բայց զայս կը զրուցեմ։ Այն կտակը, որ առաջուրեւէ Աստուծո՛ւ հաւատացեալ Քրիստոսով, օրէնքը չորս հարիւր երեսուն տարիէն ետեւ որ գրուեցաւ, չկրնար անվաւեր ընել խոստմունքը թէ ժառանգութիւնը համար։ 18 - Վասն զի եթէ ժառանգութիւնը օրէնքէն կ'ըլլայ, ուրեմն ա՛լ խոստմունքէն չէ։ Բայց Աբրահամի խոստմունքով շնորհեց Աստուած։ 19 - Հապա ինչո՞ւ համար է օրէնքը. յանցանքի համար վրայ աւելցաւ։ (մինչև զայս այն սերունդը՝ որու խոստացուեց էր) հրեշտակներով արուած՝ միջնորդի մը ձեռքով։ 20 - Բայց միջնորդը մէկի Բեթուր չէ. սակայն Աստուած մէկ է։ 21 - Ուրեմն օրէնքը հաւատով է բաւ թէ Աստուծոյ խոստմունքներուն. քա՛ւ լիցի. քանզի եթէ արուած ըլլար այնպէ՛ օրէնք մը, որ կարող ըլլար կենդանի ընել, այն օրէնքներուցնէ որդարութիւնը օրէնքէն կ'ըլլար։ 22 - Բայց զիբքը ամէնը մեղքի տակ գոցեց, որպէս զի խոստմունքը Յիսուս Քրիստոսի հաւատաբովը արուէ հաւատացեալներուն։ 23 - Բայց քանի որ հաւատաբան չէր եկած, օրէնքին տակ գոցուած կը պահուէինք, ոպտեւա՛ւ այն հաւատաբան որ պիտի յայտնուէր։ 24 - Ուրեմն օրէնքը մեր դատարարակը եղաւ՝ մը Քրիստոսի Բեթուր, որպէս զի մենք հաւատաբով արգարանանք։ 25 - Բայց երբ հաւատաբան եղանք, ալ դատարարակի տակ չենք։ 26 - Վասն զի ամէնը ալ Աստուծոյ որդիներ էք, Քրիստոս Յիսուսի վրայ եղած հաւատաբով։ 27 - Բանիկ դուք ամէնը որ Քրիստոսով մկրտուեցաք, Քրիստոսը վրանիդ հաղած էք։ 28 - Այսպէս զի ոչ Հրեայ կայ, ոչ ալ Յայն. ոչ ծառայ կայ, ոչ ալ ազատ. ոչ արու կայ, ոչ ալ էգ. վասն զի դուք ամէնը ալ մէկ էք Քրիստոս Յիսուսով։ 29 - Ապա եթէ դուք Քրիստոսին էք, ուրեմն Աբրահամի սերունդն էք, ու խոստմունքին նայելով ժառանգներ։

Որտե՛ս է Գաղատացիներ, ճշմարտութեանը հետապնդիլ

Բայց ի՞նչ կը զրուցեմ, որչափ ժամանակ որ ժառանգը տայլ է, ծառայէ տարբերութիւն մը չունի, թէեւ ամէնուն աւերն է։ 2 - Հապա խնամակալներու ու հազարարձաններու տակ է, մինչև հօրը որոշած ժամանակը։ 3 - Նոյնպէս մենք ալ երբ տայլ էնիք, աշխարհի սկզբունքներուն տակ ծառայ եղած էնք։ 4 - Բայց երբ ժամանակը լեցուեցաւ, զրկեց Աստուած իր Որդին՝ որ կնոջմէ եղաւ, ու օրէնքին տակ եղանք փրկի, որպէս զի մենք որդեգրութիւնը ընդունինք։ 6 - Եւ որովհետեւ դուք որդիներ էք, Աստուած իր Որդւոյն Հոգին՝ ձեր սիրտերուն մէջ զրկեց, որ կ'աղաղակէ Աբրահամի համար։ 7 - Ուստի ա՛լ ծառայ չես, հապա որդի. և եթէ որդի, ա՛լ Աստուծոյ ժառանգը Քրիստոսով։ 8 - Բայց այն առան որ չէիք զիտեր զԱստուած, կը ծառայէիք անոնց՝ որոնք իրեն Աստուծոնք չէին։ 9 - Սակայն հիմա որ ծանցաք զԱստուած, մտնուանք որ դուք Աստուծո՛ւ ծանցուցաք, ինչպէս նորէն կը գառնաք այն սակարու չքարու սկզբունքներուն, որոնց նորէն կ'ուզէք ծառայութիւնը ընել։ 10 - Օրերը կը գանապանէք, ու ամիսները և ժամանակները ու տարիները։ 11 - Կը վախճամ ձեզմէ, որ դուք պարսպ տեղ ձեր վրայ աշխատած ըլլաք։ 12 - Ինծի պէս եղէք, վասն զի ես ալ ձեզի պէս եղայ, եղբայրներ, ձեզի կ'աղաչեմ, դուք ինծի փեսա մը հաւատացած չէք։ 13 - Գիտե՛ք դուք որ մարմինի տկարութիւնովը ձեզի առաջին անգամ աւետարանը քարոզեցի. եւ իմ մարմինի վրայ եւ՛ծ փորձութիւնս իմ Չանարգեցիք ու չարհամարհեցիք, հապա Աստուծոյ հրեշտակի մը պէս զիս ընդունեցիք։ Քրիստոս Յիսուսի պէս։ 15 - Ուրեմն ի՞նչ էր՝ այն ձեր երանութիւնը. քանզի ես կը վկայեմ ձեզի, որ եթէ կարելի ես, ձեր աչքերը պիտի հանէիք ու ինծի տայլէ։ 16 - Ուստի ձեր թշնամին եղայ ձեզի ճշմարտարար խոսելուս համար։ 17 - Չեղի նախանձաւոր են անոնք՝ ոչ թէ բա-

րին, և կ'ուզեն ձեզ արգելել, որպէս զի իրենց նախանձաւոր ըլլաք։ 18 - Սակայն աղէկ է ամէն տան թերին նախանձաւոր ըլլալ, ու ոչ թէ միայն երբ ձեր մէջ ըլլամ։ 19 - Իմ որդեակներս, որ ձեզմով նորէն ծննդուկան ցաւ կը քաշեմ, մինչև Քրիստոս ձեր մէջ ձեւակերպի։ 20 - Կ'ուզէի հիմա ձեր մէջ ներկայ ըլլալ, ու փոխել իմ ձայնը. վասն զի ես ձեր վրայով տարակուսած եմ։ 21 - Ըսէք ինծի, դուք որ օրէնքին տակ կ'ուզէք ըլլալ, օրէնքը չէք լսեր։ 22 - Վասն զի գրուած է թէ Աբրահամ երկու որդի ունէր, մէկը՝ աղաբիներն, ու միւսը՝ ազատ կնոջմէ։ 23 - Բայց ան որ աղաբիներն էր, մարմին կողմնէ ծնած էր, իսկ ան որ ազատ կնոջմէն խոստմունքին համեմատ։ 24 - Այս բաները պարտաւորէն կը մեկնուին. վասն զի ամէնը ինք կտակարաններն, մէկը Սինա լեռնէն՝ որ ծառայութեան համար կը ծնանի, որ է Հազար։ 25 - Վասն զի Հազար Աբրահամի մէջ Սինա լեռնէն, և կը համեմատի հիմնական երուսաղէմի, որ իր զաւակներով մեկտեղ կը ծառայէ։ 26 - Բայց վերի երուսաղէմը ազատ է, որ մեր խմելուան մայրն է։ 27 - Վասն զի գրուած է, Ով չծնանող ամուլ, ցնծաւ ձեզի ներքին քանզի երեսէ ձգուածին ազաւները սյր ունեցողին ուշտէրէն շատ պիտի ըլլամ։ 28 - Ուստի մենք, եղբայրներ, իստահակի պէս խոստմունքին որդիներն ենք։ 29 - Բայց ինչպէս այն տանն մարմին կողմնէ ծնածը կը հաղածէր զանիկա որ հոգիին կողմնէ էր, նոյնպէս հիմա ալ։ 30 - Սակայն զիբքը ի՞նչ կ'ընէ։ Գուր հասն այդ աղաբիներն ու անոր որդին, վասն զի աղաբիներն որդին ազատ կնոջը որդւոյն հետ ժառանգութիւն պիտի չառնէ։ 31 - Ուստի, եղբայրներ, մենք աղաբիներն զաւակները չենք, հապա ազատներն։

Ուստի ամուր կեցէք այն ազատութեամբ, որով Քրիստոս մեզ ազատեց. և նորէն ծառայութեան լուծի տակ մի մտնէք։ 2 - Այս ես Պողոս կը

Որտե՛ս, մեզ + Որտե՛ս, լուծի

Որտե՛ս, մեր + կամ, ո՛ւր է

գրուցեմ՝ ձեզի որ եթէ թրփատուիք, Գրիստոս ձեզի օգուտ մը չընէր : 3 - Եւ գարծնայ ամէն թրփատուող մարդու կը վկայեմ թէ պարտական է բարձր օրէնքը կատարել : 4 - Խափանուած էք դուք Գրիստոսէ : որ օրէնքով արդարանայ կ'ուզէք : - շնորհքէն ինկած էք : 5 - Վասն զի մենք Հոգիով կը սպասենք արդարութեան յոյսին՝ հաւատքով : 6 - Վասն զի Գրիստոս Յիսուսի բով ոչ թրփատութիւնը բանի մը կարող է, ոչ ալ անթրփատութիւնը, հապա հաւատքը, որ սիրով է գործ կը դրուի : 7 - Ինչք առէկ կը վազէիք : 8 - Դեզ Ետ կեցուց՝ որ ճշմարտութեան չհասանալէք : 8 - Այս գործումը անկէ չէ՝ որ ձեզ կանչեց : 9 - Քիչ մը խմոր բարձր գանգուածը կը խմորէ : 10 - Բայց ետ յոյս ունիմ՝ ձեր վրայ Տէրոջմով, որ ուրիշ կերպ բան մը պիտի չխորհիք : և ան որ ձեզ կը խռովեցնէ, գառապարտութիւն պիտի կրէ՝ սո՛վ որ ըլլայ : 11 - Սակայն, եղբայրներ, եթէ ետ սակաւին թրփատութիւն կը քարոզեմ, ալ ինչո՞ւ կը հայածուիմ : արեմն խաչին գայթակղութիւնը խափանուած է : 12 - Երանի՛ թէ բոլորովին կտրուէին անոնք որ ձեզ կը խռովեցնեն :

13 - Վասն զի դուք ազատութեան կանչուած էք, եղբայրներ - միայն թէ չեք ազատութիւնը մարմնի շնչով թեւեւ - պատճառ ըլլայ, հապա սիրով իրարու ծառայութիւն ըրէք : 14 - Վասն զի բոլոր օրէնքը այս մէկ խօսքին մէջ կը կատարուի, թէ Բու ընկերդ սիրես քու անձիդ պէս : 15 - Ապա եթէ իրար խոստենք և ուտէք, զգոյշ կեցէք որ ըլլայ թէ իրարմ սպասէք : 16 - Միայն թէ պա՛ր կը դրուցեմ : Հոգիով գտցէք, ու մարմնին ցանկութիւնը պիտի չկատարէք : 17 - Վասն զի մարմնը կը ցանկայ հոգիին հակառակ, ու հոգին՝ մարմնին հակառակ : և ասոնք իրարու հակառակ են, որ ըլլայ թէ ինչ որ կ'ուզէք՝ զուր ընէք : 18 - Բայց եթէ Հոգիին կ'առաջնորդուիք, ալ օրէնքին սակ չէք : 19 - Արդ մարմնին գործերը յայտնի են, որ ասոնք են . շնութիւն, պրոսութիւն, պղծութիւն, զիճութիւն, 20 - կռապաշտութիւն, կախարդութիւն, թշնամութիւններ, կռիւներ, նախանձներ, բարկութիւններ, հակառակութիւններ,

երկպառակութիւններ, բաժանումներ, 21 - Չար նայուածքներ, մարդասպանութիւններ, գլխովութիւններ, առաւելութիւններ, ու ինչ որ ասոնց նման են : զոր հիմակուրէն ետ ձեզի կը դրուցեմ, ինչպէս առաջուրէն ալ կը դրուցէի, որ այսպիսի բանի գործողները Աստուծոյ արքայութիւնը պիտի չժառանգեն : 22 - Բայց Հոգիին պատշաճ այս է : սէր, ինքուրթիւն, խաղաղութիւն, երկայնամտութիւն, 23 - Քաղցրութիւն, բարութիւն, հաւատարմութիւն, հեղուցիւն, ժուժկալութիւն : այսպիսի բաներու դէմ օրէնք չկայ : 24 - Եւ անոնք որ Գրիստոսին են՝ էրեւ ճարմինը խաչ հանեցին բռնակիրքերով ու ցանկութիւններով մէկտեղ : 25 - Եթէ Հոգիով կ'ապրինք, Հոգիին համեմատ քայլենք : 26 - Մնապարծ չըլլանք՝ մէկմէկ զրգուելով - երարու վրայ նախանձելով :

ԳԼ 2

Եղբայրներ, եթէ մէկը յանկարծ ինչ և իցէ յանցանքով բռնուելու ըլլայ, դուք որ հոգեւոր էք, այնպիսին հեղութեան հոգիով ուղղութեան բերէք : քու անձիդ ալ զգուշութիւն ըրէ որ ըլլայ թէ փորձութեան մէջ ինչապէս 2 - Իրարու նեղութիւնները կրեցէք, և այնպէս Գրիստոսի օրէնքը կատարեցէք : 3 - Քանզի եթէ մէկը ինքզինք բան մը ըլլալ կը սեպէ ու չէ, անիկա իր անձը կը խորէ : 4 - Բայց ամէն մարդ իր գործը թող կշռէ, ու ետքը միայն իր անձին վրայ պարծանք ունենայ, և ոչ թէ ուրիշի վրայ : 5 - Վասն զի ամէն մէկը իր բեռը պիտի կրէ :

6 - Խօսքին աշակերտութիւն ընողը եւ վարդապետը ամէն բարի բաներու մասնակից ընէ : 7 - Մի խորութեք, Աստուած ծաղր չըլլաք : 8 - Վասն զի ինչ որ մարդ թէ սերմանէ, նոյնը պիտի հնձէ : ան որ իր մարմնին կը սերմանէ, այն մարմնին ապականութիւն պիտի հնձէ : ու ան որ Հոգիին կը սերմանէ, այն Հոգիին յաւիտեանական կեանք պիտի հնձէ : 9 - Բայց բարի գործերէն չձանձրանանք, քանզի յարմար ժամանակին պիտի հնձենք : Եթէ չթաշտանք : 10 - Ուտաի քոնի որ ժամանակը ձեռքերնիս է, բարիք ընենք

ամէնուն, մտնաւանդ հաւատքին ընտանիներուն : 11 - Նայեցէք՝ ինչպիսի գիրքով գրեցի ձեզի իմ՝ ձեռքովս : 12 - Որով որ կ'ուզէն մարմնի կողմանէ բարի երեւնալ, անոնք ձեզ կը ստիպեն որ թրփատուիք, միայն որ Գրիստոսի խաչին համար չհայածուին : 13 - Քանզի անոնք ալ որ թրփատուած են, իրենք օրէնքը չեն պահէր, հապա կ'ուզէն որ դուք թրփատուէք, որպէս զի իրենք ձեր մարմնով պարծենան : 14 - Բայց ես՝ քա՛ւ իցի որ պարծենամ, հապա միայն մեր Տէր Յիսուս Գրիստոսի խաչով, որով աշխարհ ինձի խաչը ելած

է, ես ալ աշխարհէ : 15 - Վասն զի Գրիստոս Յիսուսով ոչ թրփատութիւնը բան մըն է, ոչ ալ անթրփատութիւնը, հապա նոր ստեղծուած ըլլա՛ւ է քա՛ւ : 16 - Եւ ան ամէնը որ այս կանոնին համեմատ կը քայլեն, խաղաղութիւն ու ողորմութիւն ըլլայ անոնց վրայ, ու Աստուծոյ Իրողային վրայ : 17 - Ապէ է ետե մէկը զիս թող չյոգնեցնէ՝ վասն զի ես Յիսուսի վէրքի նշանները իմ մարմնիս վրայ կը կրեմ : 18 - Եղբայրներ, մեր Տէր Յիսուս Գրիստոսի շնորհքը ձեր հոգիին հետ ըլլայ : Ամէն :

Թ Ո Ւ Ղ Թ

ՊՈՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

Ա Ռ Ե Փ Ե Ս Ա Ց Ի Ս

ԳԼ ՈՒԽ Ա

Պօղոս, Յիսուս Գրիստոսի առաքելուը Աստուծոյ կամքովը, Եփեսոսի մէջ եղած սուրբերուն և Գրիստոս Յիսուսի հաւատացողներուն : 2 - Ենթոյնք և խաղաղութիւն ձեզի՛ Աստուծո՛ւ մեր Հորմէն ու Տէր Յիսուս Գրիստոս : 3 - Օրհնեալ է Աստուած և մեր Տէր Յիսուս Գրիստոսի Հայրը, որ մեզ օրհնեց ամէն հոգեւոր օրհնութիւններով երկնաւորներուն մէջ՝ Գրիստոսով : 4 - Ինչպէս մեզ անով աշխարհի սկիզբէն ստեղծ ընտրեց, որպէս զի մենք սուրբ ու անարատ ըլլանք իր առջև սիրով : 5 - Եւ առաջուրէն մեզ սահմանեց իրեն որդեգիր ըլլալ Յիսուս Գրիստոսի ձեռքով իր կամքին հաճութեանը պէս, 6 - Իր փառաւոր շնորհքին գովութեանը համար, որով մեզ զարդարեց Սիրելիին ձեռքով : 7 - Որով փրկեց Սիրելիին ունինք մենք իր սրբանք միջոցով, մեզքի թողութիւնը իր շնորհքին ճարտութեան չափովը : 8 - Չոր մեր վրայ աւելցուց բոլոր իմաստութեանը

ու գիտութեանը, 9 - Մեզի յայտնելով իր կամքին խորհուրդը իր հաճութեանը պէս, զոր չ'ըր մէջ՝ նախասահմաններ էր : 10 - Որպէս զի ժամանակներուն լրանալուն անստեղծեանք մեջ ամէն բան բովանդակէ Գրիստոսով, ինչ որ երկինքը ու ինչ որ երկրի վրայ կայ, անով : 11 - Որով մենք ալ ժառանգութիւն առինք, առաջուրէն որոշուած ըլլալով անոր նախասահմանութիւնովը, որ ամէն բան իր կամքին խորհրդովը ի գործ կը գնէ : 12 - Որպէս զի մենք անոր փառքին գովութիւն ըլլանք՝ առաջուրէն Գրիստոսի վրայ յաւատացողներ : 13 - Որուն վրայ դուք ալ յաւատարմ եր Լեզուի ճշմարտութեան խօսքը, ձեր փրկութեան աւետարանը, որու նաև հաւատարմ խոտացեալ Սուրբ Հոգւոյն Ընդհանրեցեալ : 14 - Որ մեր ժառանգ ըլլալուն զբաւն է մինչև ստացուածքին փրկութիւնը իր փառքին գովութեանը համար :

*Ո՛՛՛՛՛, անով

15 - Առաօի ես ալ երբ լսեցի Տէր Յիսուսի վրայ ունեցած հաւատքնիդ, ու բար սուրբերուն վրայ չէր ունեցած սէրը, 16 - Զեմ գործարիք ձեզի համար գործութիւն ընելի՛ք ձեզ իմ ազօթքներուս մէջ յիշելով: 17 - Արպէս զի մեր Տէր Յիսուս Քրիստոսի Աստուածք, փառաց չայրը, տայ ձեզի իմաստութեան ու յայտնութեան հոգին իր գիտութիւնով: 18 - Արպէս զի սիրտերնուդ աչքերը լուսաւորուելով՝ գիտնաք թէ ի՞նչ է անոր ձեռք կանչելուն յայր, ու ի՞նչ է անոր ժառանգութեանը փառքն ճոխութիւնը սուրբերուն մէջ, 19 - Եւ ի՞նչ է իր գորութեան գերազանց մեծութիւնը հաւատացեալներուս մէջ՝ իր կարող զօրութեանը գործարարութիւնովը, 20 - Զոր Քրիստոսի վրայ ի գործ գրաւ, երբ գանձեկա մեռելներէն յարուց, ու նստեցուց իր ալ կողմը երկինքի մէջ 21 - Ամէն իշխանութեան ու պետութեան և զօրութեան ու տէրութեան վրայ, և ամէն անունի վրայ որ կ'անուանի, ոչ թէ միայն այս աշխարհին մէջ, հասցա գաղիբին մէջ ալ: 22 - Եւ ամէն բան անոր ոտքերուն տակ հնազանդեցուց, և գանձեալ ամէն բաներու վրայ եկեղեցիին զուլի գրաւ, 23 - Ար անոր մարմինն է, անոր լուսմը՝ որ կը լեցնէ ամէնը ամէն բանի մէջ:

ԳԼ Բ

Եւ գուք որ յանցանքներու և մեղքերու մէջ մեռած էիք, բն չէր ինչո՞ւնեցուց: 2 - Արոնց մէջ աստե՛նք կը բաղէիք այս աշխարհի բանած ճամբովը, այս ոգին իշխանութեանը իշխանին ուղտնի պէս, այն ոգին՝ որ իջնա ապոստամութեան որդիներուն ներսիդին կը ներգործէ: 3 - Արոնց մէջ աստե՛նք մենք ամէնս ալ կը պորտէինք մեր մարմինն ցանկութիւններովը և մարմինն ու միտքն ուզումը կը կատարէինք: Ե բնութեամբ բարկութեան որդիներ էինք՝ ինչպէս ուրիշները: 4 - Բայց Աստուած, որ մեծ է սղորմութիւնով, իր առաւ սիրոյն համար, որով մեզ սիրեց, 5 - Նրը յանցանքներու մէջ մեռած էինք, մեզ Քրիստոսի հետ կենդանացուց, (գուք շնորհքով փրկուած էք:) 6 - Եւ անոր հետ մը յարուց, ու անոր հետ նստե-

ցուց երկնաւորներուն մէջ Քրիստոս Յիսուսով, 7 - Արպէս զի գայտ գործերուն մէջ ցուցնէ իր շնորհքն գերազանց մեծութիւնը՝ Քրիստոսի Յիսուսով մեզի յո՞ւսուցած քաղցրութիւնովը: 8 - Վասն զի շնորհքով փրկուած էք գուք հաւատքի միջոցով: և այս ոչ թէ ձեզմէ է, հասցա Աստուծոյ պարգէնն է: 9 - Ոչ թէ գործերէն, որ մէկը չպարծի: 10 - Վասն զի մենք անոր ձեռագործն ենք, Քրիստոսի Յիսուսով ստեղծուած՝ բարի գործերու համար, որոնց Աստուած առաջուրէն գաղարուտեց մը, որպէս զի անոնց մէջ քաղնէք: 11 - Առաօի միտքերնիդ բերէք որ գուք տանն մը մարմնով Տէթանուներ ըլլալով, (որքէ անխիտութիւն կ'ըսուին անոնցմէ՝ որ թշխաութիւն կ'ըսուին մարմինի մէջ ձեռքով եղած,) 12 - Ար այն տանն գուք առանց Քրիստոսի էիք, ու հեռացած էիք Եւրոպիայէն քաղաքակցութենէն, և օտարացած՝ խոտմունքն ուխտերէն, ու յոյս մին ալ չունէիք, և աշխարհի մէջ անաստուած էիք: 13 - Բայց իջնա Քրիստոս Յիսուսով գուք որ տանն մը հեռաւոր էիք, մերձաւոր եղաք Քրիստոսի արեւնովը: 14 - Վասն զի անիկա է մեր խաղաղութիւնը, որ երկուք մէկը բրաւ, ու մէջանցի յաժանող պատր, այսինքն էրբէն ձեռք իջնութիւնովը, իր մարմնովը բաղկեց, 15 - Եւ հրամաններով եղած պատուիրաններուն օրէնքով խափանեց: որպէս զի իրմով այն երկուք նոր մարդ մը հաստատէ, ու ոչ ոքի խաղաղութիւն ընէ: 16 - Եւ երկուքն ալ մէկ մարմին եղած հաշտեցնէ Աստուծոյ հետ էր խաղաղ: վասն զի անով սպաննեց թշխանութիւնը: 17 - Եւ եկաւ խաղաղութիւնը քարոզեց ձեզի որ հեռուն էիք, ու անոնց՝ որ մօտ էին: 18 - Քանզի անոր ձեռքով մենք երկուքս ալ մէկ Հոգիով՝ Հօրը մօտեցուաւ: որքանի՞նչ ունինք: 19 - Արուրեմն ա՛յ սակէ ետև գուք օտար ու պանդուխտ չէք, հասցա սուրբերուն քաղաքակիցները և Աստուծոյ բնասիրքը: 20 - Առաքեալներուն ու մարգարէներուն իջնան վրայ շինուած, որուն անկիւնին զուլիք Յիսուս Քրիստոս է: 21 - Արով բոլոր չէնք մէկտեղ յարմարութեամբ լեցան: կ'աճի սուրբ ասա՛նք մը կ'ըլլայ Տէրաջմով: 22 -

Արով գուք ալ մէկտեղ կը շինուէք՝ Աստուծոյ բնակարան ըլլալու Հոգւով Սբբով:

ԳԼ Գ

մար, 3 - Ոչ գինեմուլ, ոչ զարնող, * հոգա հանգարտ, ոչ կաւուղ, ոչ արծաթասէր, 4 - Որ իր տանը աղէկ վերակացութիւն ընող ըլլայ, եր գաւազակները հնազանդութեան մէջ պահելով՝ բոլոր ծանրաբարոյութեամբ : 5 - (Ապա եթէ մէկը իր տանը վերակացութիւն ընել չգիտնայ, ինչպէս Աստուծոյ եկեղեցին հոգաբարձու պիտի ըլլայ.) 6 - Ոչ ալ նորոհաւատ ըլլայ, որ չըլլայ թէ հպարտանալով Աստանայի դատապարտութեանը մէջ կենայ : 7 - Հապա պէտք է անոր դուրսէն երդնելուն ալ բարի վկայութիւն ունենալ, որ չըլլայ թէ նոխարիքի մէջ ու Աստանայի սրբոյցութիւն մէջ կենայ :

8 - Նոյնպէս ալ սարկաւազները ըլլան ծանրաբարոյ, ոչ երկեղու, ոչ գինեակէր, ոչ անարգ շահեմնդրութեան ետեւ եղող : 9 - Հապա հաւատքին խորհուրդը պահեն մարդը խղճմբտանքով : 10 - Եւ ասոնք ալ առաջ թող փորձուին, ետքը եթէ անհոգազրելի գտնուին, սարկաւազութեան պաշտօնը կատարեն : 11 - Նոյնպէս ալ անոնք կեները ծանրաբարոյ ըլլան, ոչ շարախօս, հապ զգաստ, ամէն բանի մէջ հաւատարիմ : 12 - Սորկաւազները մէկ կնոջ այր ըլլան, և երէն զաւակներուն ու իրենց տանը աղէկ վերակացութիւն ընող ըլլան : 13 - Քանզի անոնք որ սարկաւազութեան պաշտօնը աղէկ կը կատարեն, բարի տասիճան մը իրենց կը շահին, ու Քրիստոս Յիսուսի վրայ եղած հաւատքին մէջ շատ համարձակութիւն :

14 - Այս բաները կը զրեմ քեզի, յուսալով մտարք քեզի գալ : 15 - Բայց եթէ ուշանալու ըլլամ, որպէս զի գիտնալ թէ ինչպէս պէտք է քեզի Աստուծոյ տանը մէջ պարտիլ, որ կենդանի Աստուծոյ եկեղեցին է, ճշմարտութեան սիւնը ու հաստատութիւնը : 16 - Եւ յայտնապէս մեծ է աստուած պաշտութեան խորհուրդը . Աստուած մարմինով յայտնուեցաւ, Հոգիով արդարացաւ, Տեխնոններուն երևցաւ, Տեխնոններուն մէջ քարոզուեցաւ, աշխարհի մէջ հաւատցուեցաւ ու փառքով համարձակ :

*Ո՛րն է, ոչ անարգ շահեմնդրութեան ետեւ եղող, հապա

ԳԼ. Դ

Բայց Հոգին յայտնի կ'ըսէ թէ վերջին տոնները մէկ բանիները հաւատքէն պիտի ազատաւորեն, և մորթեցուցիչ ոգիներու ու զեւեբու ուսմանընտրու ուշագրութիւն պիտի ամն, 2 - Աստուած իր կեղծաւորութիւնովը, որոնց խղճմտները խանձուած է : 3 - Արմք ամուսնանալէ պիտի արդիւն, ու ետ պիտի պահեն կերակուրներն՝ զարմը Աստուած ստեղծեր է որպէս զի հաւատացեալները և ճշմարտութիւնը ճանչցողները գոհութեամբ վայելին : 4 - Վասն զի Աստուծոյ ամեն ստեղծածը բարի է, ու մերժելու բան մը չկայ, եթէ գոհութեամբ ընդունուի : 5 - Քանզի Աստուծոյ խօսքովը ու աղօթքով կը սրբուի : 6 - Այս բաները եղբայրներուն յիշեցնելով միտուս Քրիստոսի բարի պաշտօնեայ մը պիտի ըլլաւ, ու պիտի անանիս հաւատքին խօսքովը և այն բարի վարդապետութիւնովը՝ որու հետեղ եղար : 7 - Բայց պիտի ու պառակաւան առապելներէն և զի կեցի, և թու անձգ աստուած պաշտութեան վարժեցուց : 8 - Վասն զի մարմինն վարժութիւնը քիչ բանի օգտակար է, բայց աստուած պաշտութիւնը ամէն բանի օգտակար է, որ թէ՛ ներկայ է թէ՛ սպասելի կենդանի խոտմուռք սենի : 9 - Այս խօսքը հաւատարիմ է և բոլորովին ընդունուելու արժանի : 10 - Վասն զի բուն տար համար կ'աշխատիք ու նախատիք կը կրենք, քանզի կենդանի Աստուծոյ յաւատք ենք, որ ամէն մարդոց Փրկիչն է, մանաւանդ հաւատացեալներուն : 11 - Այս բաները պատուիրէ ու սորվեցուց : 12 - Չըլլայ որ մէկը քու մանկութիւնը անարգէ, հապա դուս օրինակ եղիք հաւատացեալներուն խօսքով, վարժեցնելով, սիրով : * հաւատքով ու մարքութեամբ : 13 - Մինչև ես գամ՝ միտք դիր կարգադրու յորդարելու, սորվեցնելու : 14 - Անհոգ վրայը քու վրագ եղած պարգևին վրայով որ մարգարեութեամբ քեզի արուեցաւ՝ երեցներուն ձեռքերը քու վրագ դրուելովը : 15 - Աստուծոյ վրայ խորհէ ու աստուծ յաւատարմէ, որպէս զի քու յաւատարմութիւնը

* ամենուն յայտնի ըլլայ : 16 - Չգուշացիր քու անձիդ ու վարդապետութեանը, ու միշտ աստուծ մէջ կեցիր, քանզի այդպէս ընելով՝ քեզ ալ պիտի ստեղծես, ու զանոնք ալ որոնք քեզ մտիկ կ'ընեն :

ԳԼ. Ե

Սերք աստիկ մի յանգիմաներ, հապա հօր պէս յորդարէ չունի . երեսուսորդները՝ եղբայրներու պէս, 2 - Պառուսները՝ մայրերու պէս, գեւաճասակ կեները՝ քրոյրերու պէս ամէն կերպ մարքութիւնով : 3 - Արեւարիները պատուէ զանոնք որ ճշմարտապէս որբուարի են : 4 - Իսկ եթէ որբուարի մը զաւակներ կամ թոռներ ունենայ, թող անոնք առաջ սորվին իրենց տանը մէջ որդիական գով ջուցնել, ու փոխարէն հաստուցանել իրենց ծնողներուն : 4 - Վասն զի այն է բարի և ընդունելի Աստուծոյ առջև : 5 - Բայց ան որ ճշմարտապէս որբուարի է ու միակ մնացած, իր յոյսը Աստուծոյ վրայ դրած է, և զիշեր ցորեկ ազօրքի ու կողտանքի կը պարտուի : 6 - Բայց փափկապէս որբուարի կենդանայն մեռած է : 7 - Եւ այս բաները պատուիրէ որպէս զի անարատ ըլլան : 8 - Բայց եթէ մէկը իրեններուն ու մեռուակը իր ընտանեքին հօգ չտանիր, անիկա հաւատքը ուրցած է, ու անհաւատ մըն ալ գէշ է : 9 - Արեւարի որբուարիները կարգը թող սեպուրի, որ վախճան տարուրէն պակաս չէ, մէկ երկան կին եղած, 10 - Բարի գործերով վկայուած . եթէ զուսկներ մեծցուցած ըլլայ, եթէ սուրբերուն ոտքերը լուսացած ըլլայ, եթէ նեղեալներուն օգնութիւն ըրած ըլլայ, եթէ ամէն ոչնայ արեւարիները մերժէ . բանի երբ Քրիստոսի գեմ յանգնելու հեշտաւորութեան ամենամտար կ'ըլլայ, ամենամտար կ'ուզեն : 12 - Եւ դատապարտութիւն կ'ընդունին, վասն զի առաջուան հաւատքնին մէկը կ'ընդունին, 13 - Նաև ծոյլ ըլլալ կը սորվին, ասուն տունն սորվողները և ոչ միայն ծոյլ, հապա

* Կեմ, ամէն բանի մէջ

շատախոսներ ու հետաքրքիրներ, և անպատեհ բաներ կը խօսին 14 - Աւստի կ'ուզեմ որ դեռահասակ կիները ամուսնանան, հասակներ ծնանին, անաշէն ըլլան, գաւառները պատճառ շատն հակառակորդին: 15 - Քանզի արդէն ոմանք Ստասնայի ետեւէն ելին: 16 - Եթէ հաւատացեալ այր մտրդ մը կամ կին իր որբեարիներ ունենայ, թող օգնութիւն քնն աննոց, և եկեղեցին չծանրարեանի, որպէս զի ճշմարտագէտ որբեարիներուն օգնութիւն քնն:

17 - Աղէկ վերակացութիւն ընող երէցները կրկին պատուոյ արժանի թող սեպուին, մտնականդ անոնք որ կ'աշխատին խօքըր արդէն 18 - Վասն զի գրբըր կ'ըսէ թէ կայի մէջ աշխատող եղին դուռնը չկապես. և թէ Մշարը իր վարձքին արժանի է: 19 - Երեցի վրայով ամբաստանութիւն մի ընդունիր, բայց միայն երկու կամ երեք վկաներով: 20 - Չանոնք որ մեղք կը գործեն, ամենուն առջև յանդիմանեն, որպէս զի ուրիշներն ալ վախնան: 21 - Վկայութիւն կը գնենմ Աստուծոյ առջև և Յիսուս Քրիստոսի ու ընտրեալ Տրեշտաններուն, որ այր անոնքը պահեստ առնոց նախապաշարման, բան մը աշատութեամբ չընէրով: 22 - Ետտով մեկուն վրայ ձեռք չդնես, և ուրիշներուն մեղքերուն հաղորդ չըլլաս. դուն քեզ մտրուր պահէ:

23 - Ասկէ ետեւ լոկ ջուր չիմես, հապաքել մըն ալ զինի գործածէ քեռ ստամբարիդ ու յաճոխ հիւանդութիւններուդ համար:

24 - Կան մարդիկ որոնք մեղքերը յայտնի են, ու առաջուրէն գատատանի հասած. և կան որոնք ետեւէն կ'երթան: 25 - Նոյնպէս ալ անոնք բարի գործերը յայտնի են. ու անոնք որ ուրիշ կերպ բան մըն են, չեն կրնար ծածուկ մտալ:

ԳԼ. 9.

Այն ամէնը որ ծառայութեան լուծի տակ են, իրենց տերերը ամէն պատուոյ արժանի սեպեն, որպէս զի Աստուծոյ անունը ու վարդապետու-

թիւնը չհայհոյուի: 2 - Եւ անոնք որ հաւատացեալ տերեր ունին, թող չարհամարհեն եղբայրները ըլլանուն պատճառաւ, հապաքելի ծառայութիւն քնն, վասն զի անոնք հաւատացեալ են ու սիրելի, որոնք բարեբարութիւն քնն: 3 - Եթէ մէկը ուրիշ կերպ բան մը սորվեցրէ, ու մտիկ չընէ մեր Տերոջը Յիսուս Քրիստոսի ողջամիտ խօսքերուն, և այն վարդապետութեանը որ աստուած պաշտութեան համեմատ է, 4 - Այնպէս հպարտացած է ու բան մը չզրտեր, հապաքել ձեռքով ու հակառակութիւններով ախտացած է. որոնցմէ կ'ըլլայ նախանձ, կուր, հայհոյութիւններ, գէշ կասկածներ, 5 - Միտքով ապականած ու ճշմարտութենէ հեռացած մարդոց զբարանութիւնները, որոնք աստուած պաշտութիւնը շահավաճառութիւն մը կը սեպեն. այնպիսիներէն մէկդի կեցիր: 6 - Ասկայն աստուած պաշտութիւնը գոհունակութեանով մեկտեղ մեծ շահավաճառութիւն մըն է: 7 - Վասն զի բան մը չըրերնք աշխարհ, ու յայտնի է որ չունք կրնար անկէ բան մը տանիլ: 8 - Հապաքելի արդուր ու հանգերձ ունենալով աննոցմով բաւականանիր: 9 - Բայց անոնք որ հարտանալ կ'ուզեն, կ'ընան փորձութեան ու սրտայթի և շատ յիմարտական ու քնատակար ցանկութիւններու մէջ, որոնք աստուածի ու կորուստի մէջ կ'ընկղան մարդիկ: 10 - Վասն զի ամէն շարութիւններուն տրամար արժանիութիւն է. որոնք մէկ քանինքը անձնատուր ըլլալով հաւատքէն մոլորեցան, ու ինքզինքնին շատ ցաւերով խոցեցին:

11 - Բայց դուռ, ով մարդ Աստուծոյ, փախիր այր բաներէն, ու գնա արդարութեան, աստուած պաշտութեան, հաւատքի, սիրոյ, համբերութեան ու հեղութեան ետեւէն: 12 - Պատերազան հաւատքին բարի պատերազմը, բունէ յաւիտենական կեանքը որոն կանչուեցար, և շատ վկաներու առջև դաւանեցար բարի դաւանութիւնը: 13 - Կը պատուիրեմ քեզի Աստուծոյ առջև, որ կենդանի կ'ընէ բոլորը, և Քրիստոս Յիսուսի ուն, որ Պննտայի Պիզատոսի առջև վկայեց բարի դաւանութիւնը, 14 - Որ դուն

այն պատուէրը ամբիծ. անարատ պահեստ մինչև մեր Տերոջը Յիսուս Քրիստոսի յայտնութիւնը: 15 - Չոր իր առեւնին պիտի ցուցնէ Երանելին ու միայն Հզորը, թագաւորներուն թագաւորը ու տերերուն Տէրը: 16 - Որ միայն ունի անմահութիւն աններքէնայի լոյսի մէջ ընկած, զոր մարդոցմէ մէկը չտեսաւ, ոչ ալ տեսնելու կարող է, որոն պատիւ և զօրութիւն յաւիտենաւ Ամէն:

17 - Այս աշխարհին մէջ հարուստ եղողներուն պատուէր տուր որ չհպարտանան, և անաղոյդ հարստութեան վրայ յայտերնին չդնեն, հապաքելիդ:

նի Աստուծոյ վրայ, որ ամէն բան մեզի տաւատորէն կու տայ վայելելու: 18 - Բարեք գործեն, բարի գործերով հարստանան, աստուածուն, և սրբիքդ զեռնաբնէ հաղորդ ըլլան: 19 - Բարի հիմ անձնէն անձներուն հանդերձ, եպիս ցամար, որպէս զի յաւիտենական կեանքը ձեռք ձգեն:

20 - Ով Տիմոթէոս, չէիք որոնք անոնք պահէ, փախելով սրտէն անոնցնարանութիւններէն և ստանուն գիտութեան հակառակութիւններէն, 21 - Չորոնք մէկ քանինքը դաւանելով հաւատքէն մոլորեցան: Ենթադրեցի զի իմ ըլլայ: Ամէն:

ԵՐԿՐՈՐԿ ԹՈՒՂԹ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ
ԱՌ ՏԻՄՈՒԷՆՈՍ

ԳԼՈՒԻ Ա.

Պօզոս, Յիսուս Քրիստոսի աւարտեալ, Աստուծոյ կամբով կենաց խտուսներին պէս որ Քրիստոս Յիսուսով է, 2 - Տիմոթէոսի, է՛ սիրելի որդիիս, շնորհք, սղորմութիւն և խաղաղութիւն մօր Աստուծոյ ու Քրիստոս Յիսուս մեր Տերոջմէն:

3 - Ենթահալ կեմ Աստուծոյ, զոր կը պաշտեմ է՛ նախնիքներէս մտրուր խղճմտանքով, (երբ անպակաս քեզ իմ աղօթքներուս մէջ կը յիշեմ զի երբ ու ցորեկ, 4 - Յանկալով քեզ աննել, ու միայն բերելով բու արեւունքներդ, որպէս զի ուրախութիւնով լինցուիմ) 5 - Մտածելով քու վրայ եղած անկեղծ հաւատքը, որ առաջ քու մեծ մարդ Լուսողեայի ու քու մօրդ Եւնիկիէ վրայ ընակեցաւ, և համոզուած եմ որ քու վրայ ալ կայ: 6 - Անոր համար քու միտքդ կը ձգեմ որ արժարձես Աստուծոյ պարգևը, որ քեզի որոնք է՛ իմ ձեռքերուս քու վրայ գրուելով: 7 - Վասն զի Աստուած մեզի երկչառութեան հոգի չտեսաւ, հապաքութեան ու սիրոյ և զգաստութեան: 8 - Աւստի ամօթ մի սեպեր մեր Տերոջը

վկայութիւնը, ոչ ալ զիս անոր համար կապուածո. հապաք մտնակեց եղբւր և ետարանին շարտարաններուն, Աստուծոյ զօրութեանը համեմատ: 9 - Որ մեզ փրկեց ու աւարտ կոչուեց կանչեց, ոչ թէ մեր գործերուն նախով, հապաք իր նախաստձանութեանը ու շնորհքին նայելով, որ Քրիստոս Յիսուսով մեզի արուեստ յաւիտենական գարեբէն աւարտ: 10 - Բայց հիմա յայտնուեցաւ մեր Փրկչին Յիսուս Քրիստոսի երևնալովը. որ մահը խափանեց, և ի լոյս հանեց կեանքը ու անմահութիւնը աստուծոյ անորանին միջոցաւ: 11 - Որոն էս քարոզիչ ու աւարտեալ զբուցեցայ ու հեթանոսներուն վարդապետ: 12 - Անոր համար այս շարտարաններն ալ կը կրեմ. բայց ամօթ չեմ սեպեր, վասն զի գիտեմ թէ որոնք եմ հաւատացեր, և համոզուած եմ որ իմ էլէն աւանդած բան կրնայ պահել մինչև այն օրը: 13 - Ահա՛ որունէ այն ողջամիտ խօսքերուն օրինակ զորոնք ինձմէ լսեցիր, հաւատարմով ու սիրով որ Քրիստոս Յիսուսով է:

ՊՏՆԻԿ, Ճշմարիտ

14 - Այն բարի աւանդք պահէ Հոգւոյն Սրբոյ ձեռքով որ մեր մէջ բնակած է: 15 - Զայն գիտես որ ինձմէ երես դարձուցին այն ամէնը որոնք Ասիա էին, որոնցմէ են Փիղեզոս ու Հերմոզիւնէս: 16 - Տէրը սղարմութիւն տայ Սնեփիսիոսի տանը, վասն զի շատ անգամ զիս հանգստացուց ու իմ շղթա աւամբ շնակեց: 17 - Հապա երբ Հուովմ եկաւ, շատ ջանքով փնտռեց զիս ու գտաւ: 18 - (Տէրը իրեն տայ որ այն օրը Տէրջմէն ողորմութիւն գտնէ.) և Եփեսոսի մէջ ալ որչափ սպասուորութիւն որ բրաւ Էքէի, դուռն զանկիա շատ աղէկ գիտես:

ԳԼ Բ

Արդ դուն, իմ որդեակս, զօրացիր այն շնորհքով որ Քրիստոս Յիսուսով է: 2 - Եւ այն բաները զորոնք ինձմէ լսեցիր շատ վիպանքով հաւատարիմ մտրդոց յանձնէ, որոնք կարող ըլլան ուրիշներու ալ սորվեցնել: 3 - Արդ դուն ներշնչութիւններու համբերէ Յիսուս Քրիստոսի բարի ղեկավարի մը պէս: 4 - Զինուորեալ մը այս կեանքին գործառնութիւններովը չըրազիր, որպէս զի զօրավարու հաճոյք ըլլայ: 5 - Եւ եթէ մէկը մրցի, չպակուիր՝ եթէ ըստ օրինի չմրցի: 6 - Աշխատող երկրագործին պէտք է առաջ պտուղներէն վաճիլել: 7 - Եւ մտքը ինչ որ կ'ընեմ՝ Տէրը քեզի իմաստութիւն տայ ամէն բանի մէջ: 8 - Մտաք դուրս Գաւթի զեղէն եղող Յիսուս՝ Քրիստոսով մտնել ներքէն յարութիւն առած, իմ քաղաքէ մեծաբանին համեմատ: 9 - Որուն մէջ չարագործի մը պէս կը չարարուեմ մինչև անգամ կապերով: Բայց Աստուծոյ խօսքը կարուած չէ: 10 - Ուստի ամէն բանի կը համբերեմ ընտրեալներուն համար, որպէս զի անոնք ալ հասնին այն փրկութեանը որ Քրիստոս Յիսուսով է յաւիտեանակա փառքով: 11 - Այս խօսքը հաւատարիմ է. վասն զի եթէ անոր հետ մեռանք, ահա հետ պիտի ապրինք ալ: 12 - Եթէ համբերեմք, ահա հետ պիտի թարգմանուինք ալ: Եթէ պէս սուրբնանք, ինք ալ մեզ պիտի սուրբանայ: 13 - Եթէ չհաւատանք, ինք հաւատարիմ կը մնայ, իր անձը չկրնար սուրբանայ: 14 - Այս բաները անոնց միտքը

ձէք՝ Տէրոջը առջև վկայութիւն դնելով, խօսքերու վրայ վէճ չընել որ բանի մը օգտակար չէ, հառ-ձայն լսողներուն կործանութեան համար է: 15 - Զանք բրէ քու անձը բնաբը ցուցնել Աստուծոյ առջև, այնպիսի բանուոր մը ըլլալով որ պիտի չամէնք, ճշմարտութեան խօսքը շիտակ բացատրելով: 16 - Բայց պիտի ու փուճ խօսքերէն մէկգիկ կեցիր, քանզի անոնք աւելի յառաջ կ'երթնան ամբարշտութեան մէջ: 17 - Եւ անոնց խօսքը քողակեցի պէս կը ճարպիկ. որոնց կարգն են Հիմնոս ու Փիղեզոս: 18 - Որոնք ճշմարտութեան մտրեցան, ու կ'ընեն թէ Էքէի յարմարութիւնը արդէն եղած է, և կը կործանեն մէկ քանիներուն հաւատքը: 19 - Բայց Աստուծոյ հիմը հաստատուն կը կենայ, ու այս կեկքը ունի, թէ Տէրը կը ճանչնայ գտնոնք որ իրն են: և՛ Անիրաւութեան մէկգիկ թող կենայ այն ամէնը որ Քրիստոսի անուրը կանուանէ: 20 - Սակայն մեծ տան մը մէջ ոչ թէ միայն ոսկին ու արծաթէն ամաններ կան, հապա փայտէ ու հողէ առանձնէ ալ կան: և անոնք պատուի համար են ու անոնք անարարութիւն համար: 21 - Ուստի եթէ մէկը իր անձը այնպիսի բաներէն մտքրէ, անկիա պատուական անթի մը պիտի ըլլայ, սրբուած ու էր Տէրոջը պիտանի, ամէն բարի գործերու համար պատրաստուած: 22 - Երեսուորական ցանկութիւններէն ալ փախիր, ու զիս արգարութեան, հաւատքի, սիրոյ, խաղաղութեան ետեւ անոնց հետ որ Տէրը ահա՛նք կը կանխէ մտքը որտով: 23 - Բայց յիմարական ու անիրեմտա վէճերէն մէկգիկ քաշուէ, զիտանալով որ անոնցմէ կուրներ կը ծնան: 24 - Ու Տէրոջը ծառային պէտք չէ կուր ընել, հապա հեզահողի ըլլալ ամէնուն, սորվեցնող, սի չպահայ: 25 - Քաղցրութեամբ խրատել հակառակ կեցողները, որ ըլլայ թէ Աստուած ապաշխարութիւն տայ անոնց՝ ճշմարտութիւնը ճանչնալու համար: 26 - Եւ Սատանայի որդայութեան զգաւորանան, որմէ բռնուած են իր կամքին ճշմարտութիւնը:

*Ուստի՛ Տէրոջը

ԳԼ Գ

Եւ զայս գիտցիր որ վերջին օրերը չար ժամանակներ պիտի գան: 2 - Վասն զի մարդիկ պիտի ըլլան անձնուներ, արժամատեար, ամբարտաւան, հպարտ, հայհայել, ծնողներու անհաղանգ, ապերախ, անուրբ: 3 - Անգուժ, անհաշտ, բանասրկաւ, անժամկալ, դատանարար, բարին չսիրող, 4 - Մտանիչ, յանգուգն, գուռոզ, աւելի Տեշտատեք քան թէ աստուածատեար: 5 - Որոնք աստուածայտաութեան կերպարանք ունին, բայց անոր զօրութիւնը սուրացած են: և դուն ասոնցմէ մէկգիկ կեցիր: 6 - Վասն զի ասոնցմէ են որ տուններն ներս կը մտնեն, ու գերի կ'ընեն մեղքով բեռնաւորուած ախարամիտ կիները զանազան ցանկութիւններէ վարձուած, 7 - Որ միշտ կը սորվին, ու բնաւ ճշմարտութիւնը ճանչնալու չեն կրնար հասնել: 8 - Հապա ինչպէս Յոնէս ու Յամբէս հակառակ կեցան Մովսէսի, նոյն, ու առաւպիչներու ետեւէ պիտի մտորին: 9 - Բայց դուն ամէն բանի մէջ սրթութիւն կեցիր, ներշնչութիւններու համբերէ, աւետարանիչը գործ գործէ, քու պաշտօնը կատարել: 6 - Վասն զի ես արդէն զո՛՛ջ ըլլալու նախապէս եմ, ու իմ մէկնելուս ատենը հասեր է: 7 - Բարի պատեալովը պատուովըցող, ընթացքը կատարեցի, հաւատքը պահէցի: 8 - Ասկէ ետեւ կոյ կը մնայ ինձի արգարութեան պատիք, զոր Տէրը, սուրբ Գաւթոս օրը, ու ալ թէ միայն ինձի հոգա պն ամէնուն ալ՝ որ անոր յայտնուելը սիրեցին:

9 - Զանք բրէ շուտով ինձի գալ: 10 - Վասն զի Գեմա զիս թողուց ու այս աշխարհը սիրեց, և զնայ թեոսը զնիկէ: Կրէսկէս քա՛նք Գաղատիա, Տեսոս՝ Գաղատիա: 11 - Միայն Դուկայն ինձի հետ է: Մարկոս առնես՝ քեզի հետ բերես, վասն զի ինձի օգտակար է այսպատարութեան համար: 12 - Եւ ես Տիւքիսիոսը Եփեսոս զրկեցի: 13 - Այն վերաբերուէ՛ զոր հրովագար թողուցին Կարգոսի քով, երբ գաս՝ բեր, քերը գիտես, որն ք կրնան իմաստուն ընել քեզ փրկուի՛ Քրիստոս Յիսուսի վրայ եղող գիշերատարովը: 16 -

*Բոլոր գիրքը Աստուծոյ շունչն է, և օգտակար է սորվեցնելու, յանդիմանելու, շնորհելու և արգարութեան խրատելու համար, 17 - Որպէս զի Աստուծոյ մարդը կատարեալ ըլլայ՝ ամէն բարի գործերու պատրաստուած:

ԳԼ Դ

Այս վկայութիւնը կը դնեմ Աստուծոյ առջև և Յիսուս Քրիստոսի, որ պիտի դատէ կենդանիները ու մեռելիները իր յայտնուելուն ու թաղուորութեան ատենը: 2 - Խօսքը քաղուցէ, մտադրութեամբ քննէ՛ք պարագէ ատենին ու ատենէ դուրս, յանգիմանէ, աստուէ, յորդաբէ ամենայն երկայնմտութեամբ ու վարդապետութեամբ: 3 - Վասն զի ժամանակ պիտի գոյ որ սղջամիտ վարդապետութեամբ պիտի չհամբերեն, հապա իրենց յեկեղիս ես լավոր իրենց ցանկութիւններուն համեմատ վարդապետներ պիտի դիպեն իրենց: 4 - Եւ ճշմարտութեան ակամօքներին պիտի դարձրնան, ու առաւպիչներու ետեւէ պիտի մտորին: 5 - Բայց դուն ամէն բանի մէջ սրթութիւն կեցիր, ներշնչութիւններու համբերէ, աւետարանիչը գործ գործէ, քու պաշտօնը կատարել: 6 - Վասն զի ես արդէն զո՛՛ջ ըլլալու նախապէս եմ, ու իմ մէկնելուս ատենը հասեր է: 7 - Բարի պատեալովը պատուովըցող, ընթացքը կատարեցի, հաւատքը պահէցի: 8 - Ասկէ ետեւ կոյ կը մնայ ինձի արգարութեան պատիք, զոր Տէրը, սուրբ Գաւթոս օրը, ու ալ թէ միայն ինձի հոգա պն ամէնուն ալ՝ որ անոր յայտնուելը սիրեցին:

9 - Զանք բրէ շուտով ինձի գալ: 10 - Վասն զի Գեմա զիս թողուց ու այս աշխարհը սիրեց, և զնայ թեոսը զնիկէ: Կրէսկէս քա՛նք Գաղատիա, Տեսոս՝ Գաղատիա: 11 - Միայն Դուկայն ինձի հետ է: Մարկոս առնես՝ քեզի հետ բերես, վասն զի ինձի օգտակար է այսպատարութեան համար: 12 - Եւ ես Տիւքիսիոսը Եփեսոս զրկեցի: 13 - Այն վերաբերուէ՛ զոր հրովագար թողուցին Կարգոսի քով, երբ գաս՝ բեր, քերը գիտես, որն ք կրնան իմաստուն ընել քեզ փրկուի՛ Քրիստոս Յիսուսի վրայ եղող գիշերատարովը: 16 -

*Կա՛, Բոլոր աստուածաշունչ Գիրքը օգտակար ալ

Նեկուպոլիս, վասն զի միաքս զրի ձևեւը
հան անցնել : 13 - Չեմաս օրինականը
ու Ապոստոլ փութով ճամբոյ զիր ,
հոգ Կաթողոս որ անոնց բան մը չպակսի :
14 - Եւ մերկններն ալ թող սորվին
բարի գործեր ընելու վրայ ըլլալ հար-

կուսը պարագաներու մէջ , որպէս զի
անպատեղ չըլլան : 15 - Բարե կ'ընեն
քեզի ամէնն ալ որ ինծի հետ են . բա-
րե տար անոնց որ մեզ կը սիրեն հա-
ւատարմ . շնորհքը ձեր ամէնուն հետ
ըլլայ : Ամէն :

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

ԱՌ ՓԻԼԻՄՈՆ

Պօղոս, Յիսուս Քրիստոսի կապեալը,
և Տիմոթէոս եղբայրը, Փիլիմոնի , մեր
սիրելիին ու գործակցին , 2 - Եւ Ապ-
փիս սիրելիին, ու Արքեպպոս մեր զին-
ուարակցին , ու բու տանդ մէջի եկե-
ղեցիին . 3 - Շնորհք և խաղաղութիւն
ձեզի Աստուծակ մեր Հօրուն և Տէր
Յիսուս Քրիստոսէ :

4 - Ար գոհանամ միշտ իմ Աստուծ-
մէն՝ քեզ իմ աղօթքներուս մէջ յի-
շելով , 5 - Երբ կը լսեմ՝ քու սերդ ու
հաւատարգ՝ զոր ունիս Տէր Յիսուսի վրայ
և բոլոր սուրբերուն վրայ , 6 - Արպէս
զի քու հաւատարեղ հաղորդակցութիւ-
նը պողարեր ըլլայ՝ Քրիստոս Յիսու-
ս թէ՛ մեր վրայ եղած ամեն բարու-
թեանը ճանչցուելովը : 7 - Քանզի շատ
ուրախութիւն և մխիթարութիւն ու-
նինք քու սիրոյդ վրայ , որ սուրբերուն
սիրտերը քեզմով հանգստացած են ,
կըպայր :

8 - Ասոր համար թէեւ շատ համար-
ձակութիւն ունիմ՝ Քրիստոսով վայր-
լուջ եղածը քեզի հրամայելու , 9 -
Բայց խուէտ սիրոյ համար կ'աղաչեմ ,
այնպիսի մէկը ըլլալով՝ ինչպէս եմ ես
Պօղոս ձերացած , ու հիմա Յիսուս
Քրիստոսի համար կատուած ալ : 10 -
Աղաչեմ քեզի իմ որդւոյս Սնեփոն-
սի համար, զոր իմ կապանքներուս մէջ
ծնայ , 11 - Ար ատեն մը անպիտան էր
քեզի, բայց հիմա քեզի ալ ինծի ալ

պիտանի է . 12 - Չանկա ես զրկեցի-
դուն ալ ընդունէ զանկա , որ է իմ
աղերս . 13 - Չոր կ'ուզէի իմ քովս
պահել , որպէս զի քու տեղդ ինծի
սպասուարութիւն ընէ աւետարանին
կապանքներուն մէջ : 14 - Բայց առանց
քու կամքիդ չուզեցի բան մը ընել ,
որպէս զի քու բարեբարութիւնդ իբր
թէ տիպանոք եղած չըլլայ , հապա
կամաւ : 15 - Քանզի թերեւ այր պատ-
ճառաւ անկա քիչ մը ատեն զատ-
ուեցաւ , որպէս զի զանկա յաւիտ-
եան ունենաւ , 16 - Ոչ թէ ալ ծառա-
յի մը պէս , հապա ծառայէ վեր , սի-
բելի եղբոր պէս . ե իբէ ինծի այսպէս
եքեք է , որչափ աւելի պիտի ըլլայ
քեզի թէ՛ մարմնին կողմանէ ու թէ՛
Տէրոջը : 17 - Ուստի եթէ զիս Էդէ հա-
ղորդ կը սեպեա , ընդունէ զանկա՝ որ-
պէս թէ զիս : 18 - Եւ եթէ քեզի սնի-
բաւութիւն մը բրած է կամ պարտք մը
ունի , զայն իմ հաշիւես անցուր : 19 -
Ես Պօղոս իմ ձեռքով զրեցի , ես կը
վճարեմ . որ չլսեմ՝ քեզի թէ զուն
ալ քու անձդ ինծի պարտական ես :
20 - Այս , եղբայր , թող քեզմէ ունե-
նամ այս օգուտը Տէրոջմով . հանգչե-
ցուր իմ աղերս՝ Տէրոջմով : 21 - Քու
հաղաւորութեանդ փառահանալով
քեզի զրեցի , քանզի զիտեմ որ բա-
ձեա ալ աւելի պիտի ընեա :

22 - Ասկէ զատ ինծի ընկալարան մըն
ալ պատարաստէ , վասն զի կը յուսամ

*Ո՞ւնէ, մեր

*Ո՞ւնէ, Քրիստոսով

թէ ձեր աղօթքներուն միջոցաւ ձեզի
պիտի շնորհուիմ : 23 - Բարե կ'ընէ
քեզի Եպափրատ , իմ գերութեան ըն-
կերս Քրիստոս Յիսուսով . 24 - Եւ

Մարիս , Արիստարքոս , Իւմաս , Ղու-
կաս , իմ գործակցներս : 25 - Մէր Տէր
Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր հոգիին
հետ ըլլայ : Ամէն :

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

ԱՌ ԵՔՐՈՅԵՑԻՍ

ԳԼՈՒԻ Ա

Շատ մատերով ու շատ կերպերով
աւաղած ընէ խօսելով Աստուած հայ-
րերուն հետ մարդարէներով , 2 - Այս
վերջին օրերս եր Արդիով խօսեցաւ մեզի
հետ , զոր ամէն բանի ժառանգ գրաւ-
կը փառաց լայն է և իրեութեան բուն
պատկերը . որ իր գործութեան խօսքովը
ամէն բան կը բանէ , իր անձով մեր
մեղքերը սրբելով բարձրելով , Ապոս-
տոլոս մեծութեան աջ կողմը նստաւ : 4 - Եւ
պինչափ աւելի եղաւ հրեշտակներէն ,
որչափ անոնցմէ աւելի աղէկ անուն
ժառանգեց : 5 - Վասն զի հրեշտակ-
ներէն օրո՞ւ բաւ երբէք , Գուն իմ Ար-
դիս ես , ես այսօր քեզ ծնայ . և գարձե-
կալ՝ ես անոր Հայր պիտի ըլլամ , ու
անկա ինծի Արդի պիտի ըլլայ : 6 - Եւ
գարձեալ եր Անդրանիկ աշխարհ կը
մտցնէ՝ կ'ընէ , Աստուծոյ բոլոր հրեշ-
տակներն ալ անոր երկրպագութիւն
թող ընեն : 7 - Եւ հրեշտակներուն
վրայով կ'ընէ , որ իր հրեշտակները
հոգիներ կ'ընէ , ու իր պաշտօնեաները
կրակի բոց , 8 - Սակայն Արդիին կ'ընէ
Քու տիպար , ով Աստուած , յաւիտ-
եան յաւիտենից է . քու թագաւորու-
թեան գաւազանդ ուղղութեան գա-
ւազան է : 9 - Արդարութիւնը սիրեցիր
ու անորութիւնը ստեղծեց . անոր հա-
մար , ով Աստուած , քու Աստուածդ
ուրախութեան իւզով օժեց քեզ քու
ընկերներդ աւելի : 10 - Եւ Գուն ,
ով Տէր , սկիզբէն երկրի հիմերը գրել ,

ու երկինք քու ձեռքերդ գործն է .
11 - Անոք պիտի կարուին , բայց դուն
կը կենաս ու կը մնաս . ու ամէնը լավի
պէս պիտի մաշին , 12 - Ու վերաբիւր
պէս պիտի գալարես զանոնք , և պիտի
փոխուին . բայց դուն նոյն ինքն ես , ու
քու տարիներդ պիտի չպակսին : 13 -
Եւ հրեշտակներէն օրո՞ւ բաւ երբէք ,
Իմ աջ կողմն նստէ , մինչև քու թշու-
սիներդ սուրբութեան պատուանդան
դնեն : 14 - Չե՞ որ անոնք ամէնը սպա-
սուորող հոգիներ են , օրոնք սպասա-
ւորութեան կը զրկուին անոնց համար՝
որ փրկութիւն պիտի ժառանգեն :

ԳԼ Բ

Անոր համար պէտք է մեզի ալ ա-
ւելի ուշադրութիւն տալ Քր լուծ բա-
ներուն , որ չըլլայ թէ երբէք պակսինք :
2 - Վասն զի եթէ այն խօսքը որ հրեշ-
տակներուն ձեռքով գրուեցաւ ,
հաստատուն եղաւ , և ամէն յանցա-
ւորութիւն ու անհասկանալիութիւն
արդար հաստացում առաւ , 3 - Հոգ-
մեք ինչպէս պիտի աղափոխէ եթէ
անհոգ ըլլանք այնպիսի մեծ փրկութե-
նէ մը , որ խօսելուն սկիզբը Տէրոջմէն
առաւ , ու լսողներուն ձեռքով մեզի
հաստատուեցաւ . 4 - Աստուած ալ
վկայեց նշաններով ու հրաշքներով և
զանազան գործութիւններով ու Սուրբ
Հոգիին պարգևներով , ինչպէս ինք
կամեցաւ :
5 - Վասն զի ոչ թէ հրեշտակնե-
րուն հապանդեցուց այն գալու աշ-

ԳՂ. Գ

խարճը, որուն վրայով մենք կը խօսինք. 6 - Հապա մէկ տեղ մը վկայեց ու բառ, Մարդը ինչ է՞ որ զաննիկա կը սիշուս, կամ՝ մարդու որդին՝ որ անոր այցելուութիւն կ'ընեն. 7 - Քիչ մը վար բրիր զաննիկա հրեշտակներէն. փառքով ու պատուով պակեցներ զաննիկա, և բառ ձեռքերուդ գործերուն վրայ կեցուցներ զաննիկա. 8 - Ամէն բան անոր ստեղծութեան սակ հնազանդեցուցներ. ուստի ամէնը որ անոր հնազանդեցուց, անոր չհնազանդած բան մը չձգեց. բայց հիմա դեռ չենք տեսներ ամէնը անոր հնազանդած: 9 - Սակայն Յիսուսը փառքով ու պատուով պակեցուած կը տեսնենք՝ որ հրեշտակներէն քիչ մը վար եղած էր մահուան չարարանքին համար, որպէս զի Աստուծոյ շնորհքովը ամէնուն համար մահ ճաշակէ: 10 - Արովհետեւ կը վայելէր Անոր, (որու համար ամէնը, և անով ամէն բաները եղած են,) շատ որդիներ փառքին մէջ մոցնելու տեսնը՝ անոնց փրկութեան Առաջնորդը չարարանքով կատարել:

11 - Վասն զի ան որ կը սրբէ ու ան որ կը սրբուի, ամէնն ալ մէկէ են. անոր համար ինք ամօթ չտեսներ եղբայր կոչել զանոնք՝ բռեցով, 12 - Գուտնեղը եղբայրներուն պիտի պատահի, ժողովքին մէջ քեզ պիտի զովեմ: 13 - Եւ դարձեալ՝ Ես անոր պիտի յուսամ. ու դարձեալ՝ Ահա ես ու այն զաւակները զորոնք Աստուծո՞ւմ ինծի տուաւ: 14 - Առաջի որովհետեւ զաւակները մարմինն ու սրիւնն հաղորդ եղան, ինք ալ նմանապէս անոնց բաժանորդ եղաւ, որպէս զի էր մահովը փճացնէ զաննիկա որ մահուան իշխանութիւնը ունէր, այսինքն է Սասանեան. 15 - Եւ ազատե զանոնք որ մահուան վախովը միշտ ծառայութեան մէջ կ'ազդէին: 16 - Քանզի բնաւ հրեշտակներուն ձեռք չընեն, հապա Արրահամ սերունդին ձեռք կը բռնէ: 17 - Անոր համար պէտք էր անոր բոլորովին եղբայրներուն նման ըլլալ, որպէս զի ինք պարմած ըլլայ ու հաւատարիմ՝ քահանայապետ՝ Աստուծոյ կողմանէ, ժողովուրդին մեղքերը բաւելու համար: 18 - Քանզի ինչ բանով որ ինք չարարուեցաւ փորձութիւն կրելով, կրնայ փորձանաւորներուն ալ օգնական ըլլալ:

Առաջի, սուրբ եղբայրներ, երկնային կոչումին մասնակիցներ, նայեցէ՛ք մեր զաւանթութեանը Առաքեալին ու Քահանայապետին, Քրիստոս Յիսուսի. 2 - Որ հաւատարիմ է անոր՝ որ զինք դրաւ, ինչպէս Մովսէս ալ՝ անոր բոլոր ասանք մէջ: 3 - Վասն զի ինք Մովսէսէն շուտ աւելի փառքի արժանացաւ, որչափ աւելի պատիւ կ'ունենայ քանք շինողը քան թէ տուներ: 4 - Քանզի ամէն տուն մէկէ կը շինջը բայց ան որ ամէն բաները բրաւ՝ Աստուծո՞ւմ է: 5 - Եւ յիշուի Մովսէս անոր բոլոր ասանք մէջ հաւատարիմ էր ծառայի մը պէս՝ զրուցուելու բաներով վկայ ըլլալու համար. 6 - Բայց Քրիստոս որդիի մը պէս իր ասանք վրայ, որուն տունը մենք ենք, միայն թէ այն համարձակութիւնը և յոյսին պարձանքը մինչ կը շինջը հաստատուենք:

7 - Առաջի ինչպէս կ'ըսէ Հոգին Սուրբ, Այսօր եթէ անոր ձայնին պիտի լսէք, 8 - Զեր սիրտերը մի խտացնէք բարկացնելու տեսնին պէս անապախակ մէջ փորձութեան օրը, 9 - Ուր ձեր հայրերը զիս փորձեցին, քննեցին զիս, Եւ զիս քառասուն տարի իմ գործեր տեսան: 10 - Անոր համար զգուշացայ այն ազգէն ու բոսի, Միշտ մոլորած են օրսովն, և իմ ծամբաներս չճանչցան անոնք. 11 - Առաջի երգումը բրի իմ բարկութեան մէջ թէ իմ հանգանիս պիտի չմտնեն: 12 - Նայեցէ՛ք, եղբայրներ, չըլլայ որ ձեզմէ մէկուն ներսիդին անհաւատութեան շար սիրա ըլլայ՝ ապատմը ըլլալու կենդանի Աստուծո՞ւմ. 13 - Հապա ամէն օր մէկզմէկ յորդորեցէ՛ք, քանի որ Այսօր կ'ըսուի, որ չըլլայ թէ ձեզմէ մէկը խտանայ մեղքին խորտութիւնովը: 14 - Քանզի մենք Քրիստոսի մասնակից եղած ենք, միայն թէ այն հաստատութեան սկիզբը մինչև վերջը պինդ բռնելը. 15 - Քանի որ կ'ըսուի, Այսօր եթէ անոր ձայնին պիտի լսէք, ձեր սիրտերը մի խտացնէք բարկացնելու տեսնին պէս: 16 - Քանզի *ոմնակ լսեցին ու բարկացուցին, բայց ոչ թէ՛ ամէնը որ իզկրպատէ եղած էին Մովսէսի ձեռքով: 17 - Որոնցմէ՞ զգուցեալ այն քառասուն տարին. չէ՞ որ մեղան-

*Վա՛մ, որո՞նք լսեցին ու բարկացուցին. չէ՞ որ

չողներէն, որոնց ստորները անապախակ մէջ ինկան: 18 - Եւ որոնք հմա՛ւ էր գումը բրաւ իր հանգիստը չմտնէ, եթէ ոչ՝ անհաւատներուն հմա՛ւ: 19 - Եւ կը տեսնենք որ չկրցան մտնել էրեւոյ անհաւատութեանը համար:

ԳՂ. Գ

Արեմն ա՛լ վախանք, որ չըլլայ թէ անոր հանգիստը մտնելու խոտմտեցնէ, որ քեզ մնացեր է, ձեզմէ մէկը զրկուած գտնուի: 2 - Վասն զի մենք ալ անոնց պէս աւետիս առած ենք. բայց անոնց շահ չըլլաւ այն խօսքը լսելը, քանզի հաւատքով խառնուած չէր լսողներուն մէջ: 3 - Իսկ մենք որ հաւատացներ, հանգիստը կը մտնենք. ինչպէս բառ, Առաջի երգումը բրի իմ բարկութեան մէջ թէ իմ հանգիստս պիտի չմտնեն. թէ է և գործերը աշխարհի սիրտէն եղած էին: 4 - Վասն զի քեզ սպառն կ'ըսէ տեղ մը եթէ ներքոք օրս չմտնէ համար, Եւ Աստուծո՞ւմ եթէ ներքոք օրը հանգեցաւ որ բոլոր գործերէն. 5 - Ահ հա նորէն կ'ըսէ թէ իմ հանգիստս պիտի չմտնեն: 6 - Առաջի որովհետեւ անոնց կը մնայ հոն մտնել, և անոնք որ առաջուքն աւետիս տար առած էին, անհաւատութեան համար չմտնէ. 7 - Նորէն օր մը կը ստահանէ՛ ու կ'ըսէ Այսօրը Կուրիթի բերնով այնքան ժամանակէ ետեւ, ինչպէս բառեցաւ, Այսօր եթէ անոր ձայնին պիտի լսէք, ձեր սիրտերը մի խտացնէք: 8 - Վասն զի եթէ Յեսուս հանգեցուցած ըլլար զանոնք, ալ անկէ ետք ուրիշ օրուն համար չէր վրուցներ: 9 - Արեմն Աստուծոյ ժողովուրդին քե՛ր հանգիստ մը կը մնայ: 10 - Վասն զի ան որ անոր հանգիստը մտնաւ, ալ հանգեցաւ իր գործերէն, ինչպէս Աստուծո՞ւմ լսեցին: 11 - Արեմն զանանք այն հանգիստը մտնել որ չըլլայ թէ մէկը նոյն անհաւատութեան օրինակին պէս ինչպէս: 12 - Վասն զի Աստուծոյ խօսքը կենդանի է ու գործող, և ամէն երկայրի սուրբ կարող, որ կը թափանցէ մինչև շունջը քո՞ւսներու, և կը քննէ օրսին խորհուրդները ու մտածմունքները. 13 - Եւ չկայ արարած մը անոր զինոց չերեւցած, հապա ամէն բան բայց և յոյսին է

անոր աչքերուն առջև, որու պէտէ՛ր քե՛զ մեր հայեւը:

14 - Արք մենք որ մեծ Քահանայապետ մը ունինք երկրիցք անցած, Գիտուա՛ր Արդիս, ամառ բրաները Ժր գտումն ինչպէս: 15 - Քանզի ոչ թէ այնպիսի քահանայապետ մը ունինք՝ որ կարող չըլլայ մեր տկարութիւններուն կարեկից ըլլալ, հապա ինք ամէն կերպով փորձ առած է քեզ նման, Բայց առանց մեղքի: 16 - Առաջի ա՛լ համարձակութիւնով մտանանք շնորհաց ամթոսին առջև, որպէս զի ոգորմութիւն ընդունինք ու շնորհք գրանենք պէտք եղած ասնէ քեզ օգնելու:

ԳՂ. Ե

Վասն զի ամէն քահանայապետ մարդոց մէջէն առնուած՝ մարդոց համար կը կենայ Աստուծոյ կողմը, որպէս զի պատարագներ ու զոհեր մատուցանէ մեղքերու համար. 2 - Եւ կարող է կարեկից ըլլալ անոնց՝ որ աղէտ ու մարտիակ են, ժան զի ինք ալ տկարութիւնով պաշարուած է. 3 - Եւ այս պատճառաւ պարտաւոր է ինչպէս ժողովուրդին համար՝ նոյնպէս ալ իր անձին համար մեղքի պատարագ մատուցանել: 4 - Եւ ոչ թէ մէկը ինքիմէս պիտի պատիւը կ'առնէ, հապա ան որ Աստուծո՞ւմ կանչուած է, ինչպէս Ահա՛րան: 5 - Նոյնպէս ալ Քրիստոս ոչ թէ իր անձը մեծարեց քահանայապետ ըլլալու, հապա աննիկա՛ որ զրուցեց անոր թէ՛ Կու՛ն իմ՝ Որդիս ես, ես այսօր քեզ ծնայ. 6 - Ինչպէս ուրիշ քե՛զ մէն ալ կ'ըսէ, Կու՛ն յաւիտեան քահանայ ես Մեղքեղեղեկի կարգին պէս: 7 - Որ իր մարմինն օրերը սաստիկ գոռուով ու արցունքով աղօթք և աղաչանք մատուց անոր որ կարող էր զինք մահաւանջ ազատել, ու լուսեցաւ էր՝ բարկապաշտութեանը պատճառաւ. 8 - Թէ պէտ էր Որդի է, Բայց իր չարարանքներէն հնազանդութիւն ստղեցաւ. 9 - Առաջի կատարուեցաւ, բայց իրեն հնազանդողներուն յաւիտեական փրկութեան պատճառ եղաւ. 10 - Աստուծո՞ւմ կոչուեցաւ Քահանայապետ Մեղքեղեղեկի կարգին պէս: 11 - Որուն վրայով շատ բարեկէ ունինք, որ գրծ-

*Վա՛մ, երկրէն ուղարկուելու

յուն նմանութիւնովը ու շուքովը կը ծառայեն, ինչպէս Մովսէսի հրամայաւեցաւ, երբ խորանը պիտի շինէր. քանզի ըսաւ, «նայի որ լեւոր քեզի յուշուած օրինակին պէս շինես ամէնը» :

6 - Բայց հիմա Յեռու ա՛լ աւելի գեղազանց պաշտօնի մը հասաւ, որչափ որ լուսագոյն խոտանուէրն մը հաստատուած լուսագոյն ուխտի մը միջնորդ է :

7 - Վասն զի եթէ առաջինը անմուղադրելի ըլլար, «բէ՛ժ երկրորդին տեղ չէր փնտռուէր : 8 - Քանզի կը յանդիմանէ գանձը ու կ'ըսէ, Ա՛հ օրեր կուգան, կ'ըսէ Տէրը, որ Երուսաղէմ տանը հետ ու Յուդայի խորանը հետ նոր ուխտ պիտի ընեմ» :

9 - Այլ թէ այն ուխտին պէս՝ զոր անոնց հայրերուն հետ ըրի, այն օրը որ անոնց ձեռքէն բռնեցի՝ գանձը իջրպատի երկրէն հանելու համար . վասն զի անոնք իմ ուխտիս մէջ չէկցան, ես այ անհոգ եղայ անոնց վրայով, կ'ըսէ Տէրը :

10 - Քանզի այս է այն ուխտը՝ զոր Երուսաղէմ տանը հետ պիտի ընեմ՝ այն օրերէն ետքը, կ'ըսէ Տէրը . իմ օրէնքներս անոնց միտքին մէջ պիտի դնեմ, և անոնց արտին վրայ պիտի գրեմ զանոնք, ու ես անոնց Աստուած պիտի ըլլամ, և անոնք ինծի ժողովուրդ պիտի ըլլան :

11 - Աւ ընաւ պիտի շտրվեցնեն ամէն մէկը իր բնկերին, և ամէն մէկը իր եղբորը, ըսելով թէ Տէրը ճանցիր. քանզի անոնց պղտիկէն մինչև մեծը ամէնը զիս պիտի ծանշնան. 12 - Վասն զի ես անոնց անիրաւութիւններուն ներսը պիտի ըլլամ, և անոնց մեղքերը ու անօրէնութիւնները ա՛լ պիտի չլիչեմ :

13 - Երբ «-իտք ըսելովը առաջինը հինգուց . ու այն օր կը հիմնայ և կը ձերանայ, ա՛լ կորուստի մօտ է :

ԳԼ Թ

Արդարեւ առաջին «-իտքն ալ ունէր պաշտամունքին կանոնադրութիւնները որ աշխարհային սուրբ տեղը : 2 - Վասն զի առաջին խորանը, որ Սրբութիւն կ'ըսուէր, «-իտքն կողմնաեցաւ, որուն մէջ կար աշտանակը ու սուրբ և առաջաւորութեան հացը : 3 - Եւ երկրորդ վարագուրին ետին այն խորանը որ Սրբութիւն սրբութեանց կ'ըսուէր : 4 - Որուն մէջ էր սակի բուրբաւը, և ուխտին տապանակը, ամէն կողմէն սակիով

պատած . որուն մէջ էր սակի տապանակը մանանայով լեշու, և Ահարոնի գաւառանը որ ծաղկեցաւ, և ուխտին տապանակները, 5 - Եւ անոր վրայէն փառաց քերովընէնը՝ որ քառութիւնին վրայ հովանի կ'ընէին . որոնց համար դէպք չէ հիմա մէկիկ մէկիկ գրուցի :

6 - Եւ այս բաները այսպէս կարգադրուած ըլլալով, առաջին խորանը ամէն աստի կը մտնէին քահանաները՝ պաշտամունքը կատարելու : 7 - Բայց երկրորդը տարին անգամ մը միայն քահանայապետը էր ժողովրդի, ոչ թէ առաջնի արեւնի, զոր իրեն համար ու ժողովուրդին սխալմունքներուն համար կը մտաուցանէր : 8 - Հոգին Սուրբ զայս ցուցնելով թէ սրբարանին ճանապարհը յայտնի եղած չէր, քանի որ տակաւին առաջին խորանը կը կենար : 9 - Որ օրինակ մըն էր այն ժամանակին որ պատարագներ ու զոհեր կը մատուցուէին, որոնք խղճմտանքի կողմանէ չէին կրնար կատարելալ ընել պաշտօն մատուցանողը, հապա միայն կերակուրներով ու խմելիքներով : 10 - Եւ կերպ կերպ լուսացումներով մարմնաւ որ արարարութիւններ էին, որոնք մինչև ուղղութեան աստի կը կենային : 11 - Բայց երբ Քրիստոս եկաւ, գալու ըսելիքներուն Քահանայապետը, աւելի մեծ ու կատարեալ և անձեռնադրծ խորանով, ոչոնքն անով որ այս ստեղծուածներէն չէ, 12 - Այ ալ նախադնեալ ու զուարակներու արեւնով, հապա իր արեւնովը մէկ անգամ սրբարանը մտաւ՝ յաւիտեական փրկութիւն ստանալով : 13 - Վասն զի եթէ ցուցերուն ու նախադնեալ արեւնի և երկնջին մտիքը օրակուրով պղծեալները կը սրբէր մարմնի մաքրութեան կողմանէ, 14 - Այ ս'ըջափ աւելի Քրիստոսի արեւնը, որ յաւիտեական Հոգիին ձեռքով իր անձը անորատ դարձուց Մտաուց Մտաուց, պիտի սրբէ ձեր խղճմտանքը մեռած զործերէն՝ կենդանի Աստուածը պաշտելու :

15 - Եւ ասոր համար ինք նոր ուխտին միջնորդն է, որպէս զի երբ մահը առաջին ուխտի ժամանակը գործուած յանցանքներուն քառութեանը համար եղած ըլլալով, հրաւիրուածները յաւիտեական ժառանգութեան խոտանուէքը առնեն : 16 - Քանզի ուր կտակ մը ըլլայ, հարկ է որ կտակը ընդդիմ

մահը մտնէ : 17 - Վասն զի կտակը մեռնելէն ետե հաստատ կ'ըլլայ : քանզի ընտելուեցաւ թիւն չուներնար քանի որ կտակը ընողը ողջ է : 18 - Անոր համար առաջին «-իտքն ալ առաջնի արեւնի չէր հաստատուէր : 19 - Վասն զի երբ Մովսէս օրէնքին ամէն պատմելները բոլոր ժողովուրդին պատմեց, ցուէրուն ու նախադնեալ արեւնի ամէնովը ըսելով ու կորներն մի բուրգով և զարպով լուսն գրեցին և բոլոր ժողովուրդին վրայ սրկեց : 20 - Եւ ըսաւ, Ասիկա է այն ուխտին արեւնը, զոր Աստուած ձեզի պատուեցրեց : 21 - Եւ խորանին վրայ ու պաշտօնին բոլոր զործիքներուն վրայ նշան պէս սրկեց արեւնը : 22 - Եւ գրեթէ ամէն լուսն արեւնով կը մաքրուի օրէնքին նայիլով, ու արեւն շիտաբուած թողութիւն ըլլար :

23 - Աստի հարկ էր որ երկնաւոր բաներուն օրինակները ասանցով մաքրուէին. բայց ըսեմ երկնաւորները՝ առանց մեռելի աղէկ զոհերով : 24 - Քանզի Քրիստոս ոչ թէ ձեռնադրծ սրբարանը մտաւ, որ ճշմարտիտի օրակնակն է, հապա ըսեմ երկնիցը՝ որպէս զի հիմա մեզի համար Աստուծոյ առջև ներկայանայ : 25 - Այ թէ՛ որպէս զի շատ անգամ իր անձը «-իտքն ալ մտաուցանեմ, ինչպէս քահանայապետը որ ամէն ատրի սրբարանը կը մտնէ իրը չեղած արեւնով : 26 - Ապա թէ ոչ չեղած արեւնով չարչարուն հետե պէտք էր իրեն աշխարհի սկիզբէն հետե մեկ անգամ դարձուց Վերջը իր անձին պատարագովը յայտնուեցաւ՝ մեղք մեկիկի ձգելու համար : 27 - Եւ ինչպէս մտաուց սոսցանուած է մէկ անգամ մեռնել, ու անկէ ետքը դատաստան, 28 - Նայեալ ալ Քրիստոս մէկ անգամ «-իտքն ալ մտաուցուեցաւ՝ շատերուն մեղքերը վերջնելու համար, բայց երկրորդ անգամին առանց մեղքի պիտի յայտնուի փրկութեան համար անոնց որոնք անոր կը սպասեն :

ԳԼ Ժ

Քանզի օրէնքը գալու բարեբերուն չուէր, ու ոչ թէ այն բաներուն ըսեմ կերպանքը ունենալով, միշտ ամէն ատրի մատուցուած նոյն զոհերով երեք չկրնար կատարելալ ընել գանձը

որ կը մտանան : 2 - Ապա թէ ոչ պիտի չդադարէին մատուցուելէն, պաշտօն մատուցանողներուն մէկ անգամ մաքրուելէն ետե ա՛լ մեղքի վրայով խղճմտանքի կտակի մտաուցութիւն մը չունենայնուն համար : 3 - Բայց անոնց մով ամէն ատրի մեղքերու յիշատակութիւն կ'ըլլայ : 4 - Վասն զի նախադնեալ ու ցուէրուն արեւնը չկորուցաւ : 5 - Անոր համար իր աշխարհ մտնելու տակնը կ'ըսէ, Չո՛ս ու ընծայ չուզեցի դուն, հապա ինծի մարմնի մը պատարագներ : 6 - Ողջակէշներու ու մեղքի պատարագներու չհաւեցար : 7 - Այն ատմելի, Ահա կու գամ ես, (գիրքի տառի մէջ ինծի համար գրուած է) քու մէջ երբ բնելու, ով Աստուած : 8 - Վերջ բնելով թէ Չո՛ս ու ընծայ և ողջակէշներ ու մեղքի պատարագներ օրէնքին ու անոնց չհաւեցար, (որոնք չուզեցին) ու անոնց չհաւեցար, (որոնք օրէնքին համեմատ կը մատուցուին) : 9 - Ետքը կ'ըսէ, Ահա կու գամ ես, քու կամքդ բնելու, ով Աստուած . առաջինը կը թէքքեց հետ պիտի ընեմ հաստատ : 10 - Որ կամքով մեզ ալ սրբուցանեմ : Յիսուս Քրիստոսի մարմնին մէկ անգամ պատարագուելովը : 11 - Եւ ամէն քահանայ որ ըստ օրէնքի պաշտօնին մէջ կը կենայ, և նոյն զոհերը շատ անգամ կը մատուցանէ, որոնք երբէք չեն կրնար մեղքերը վերջնել : 12 - Բայց սակայն մէկ զոհ մատուցանելով մեղքերու համար, մշտնաջենաւորապէս Աստուծոյ աջ կողմը նստաւ : 13 - Եւ ասի ետե կը սպասէ, մինչև իր թշնամիները իր ոտքերուն պատուանդան դրուին : 14 - Վասն զի մէկ պատարագով մշտնաջենաւորապէս կատարեց օրուածները : 15 - Բայց Հոգին Սուրբ ալ մեղք վկայութիւն կու տայ, քանզի առաջ ուրեք բնելէն ետե 16 - Թէ Այս է այն ուխտը զոր ես անոնց հետ պիտի ընեմ՝ այն օրերէն ետքը, (կ'ըսէ Տէրը) իմ օրէնքներս անոնց արտին մէջ պիտի դնեմ, ու անոնց միտքին մէջ պիտի գրեմ զանոնք : 17 - Ետքը կ'ըսէ թէ Անոնց մեղքերը և անոնց անօրէնութիւնները ա՛լ պիտի չլիչեմ : 18 - Իսկ ուր անոնց թողութիւն կայ, ա՛լ մեղքի համար պատարագ դէպք չէ : 19 - Աստուած, երայրներ, համարձակութիւն ունենալով սուրբ տեղը

մտնելու Յիսուսի արևուտը, 20 - Այն նոր ու կենդանի ճամբուր՝ զոր բացաւ մեզի պարագութիւն մէջէն, որ է իր մարմինը, 21 - Եւ մեծ քահանայ մը «նշնաւով Աստուծոյ ասանք իրայ», 22 - Մօտենանք ճշմարտաւ սրտով, լեցուն հաւատաբով, սիրաբերին չար խղճէն մարբուած, ու մարմինն մարուր ջրով լուացուած . 23 - Անխախտ պահէնք յոյսին դաւանութիւնը, վասն զի հաւատաբարձ է անիկա որ խոտացաւ : 24 - Եւ իրարու հոգ ասնինք՝ սիրոյ և բարեգործութեան գրգռելով . 25 - Եւ մէկտեղ ժողովուրդ չիժողունք, ինչպէս ամանք սովորութիւն ունին . հապա Գեղեցի յորդորենք , ու այնչափ աւելի՛ որչափ այն օրուան մտանայր կը տեսնէք :

26 - Վասն զի եթէ ճշմարտութեան գիտութիւնը ընդունելէ՛ ետե կամուս մեղք գործելու ըլլանք, ալ անկէ ետե մեղքերու համար «բէշ գոհ մը չմար», 27 - Հապա զարթորելի սպասել մը գառատաննին, ու կրակի սրբութիւն մը էլ հոյ, որ պիտի լափէ հակառակորդները : 28 - Մէկը եթէ Մովսէսի օրէնքը անարգէր, առանց սղորմութեան երկու կամ՝ երեք վկաներով կը մեանէր : 29 - Ալ որչափ աստիկ պատժի արժանի պիտի սեպուի կը կարծէք անիկա, որ Աստուծոյ Արդին ստքի տակ առաւ , և ուստիս արեւը անմարուր սեպեց, որով ինք սրուեցաւ , և շնորհոյ Հոգին նախատեց : 30 - Քանզի գիտե՞ք զանիկա որ բաւաւ , իմս է վրէժ-ինգութիւնը , ես պիտի հասուցանեմ, կ'ըսէ Տէրը . Ե գարձեալ՝ Տէրը պիտի գատէ իր ժողովուրդը : 31 - Սորոսակիցի բան է կենդանի Աստուծոյ ձեռքը կիսայր :

32 - Արդ միտքերնիդ բերէք այն առաջին օրերը, որոնց մէջ լուսաւորուելէ ետե շատ աստիկ չարչարանքներ կ'ընդհարէ : 33 - Երբեմն նախատիքներով ու վիշտերով խայտառակուած , երբեմն ալ սլալիսի վիճակի մէջ կողդներով կ'զոր ըլլալով : 34 - Վասն զի՝ իմ կապերուս մէջ ինձի՛ չարչարակից եղաք, ու ձեր ստացաւ օձքին կողպատուիր ուրախութեամբ ընդունեցիք , գիտնալով որ լուսազոյն և մնայուն ստացուածքներ ունիք ձեզի երկինքը :

*Ո՛րնչ, կապուածներուն

35 - Ուստի չեղէ մի ձգէք ձեր վատահաւութիւնը, որ մեծ վարձքի հասուցեմ' անի : 36 - Վասն զի պէտք է ձեզի համբերութիւն , որպէս զի Աստուծոյ կամքը ընելով՝ խոտմուկը վայելէք : 37 - Քանզի ալ տակէ քիչ մը ատենն ան որ գտնէք՝ է պիտի գայ ու պիտի չուշանայ : 38 - Եւ Արդարը հաւատաբէն պիտի ապրի . ու եթէ մէկը ետ քաշուի, իմ՝ հոգիս անոր չհամբեր : 39 - Իսոյց մեկը ետ չենք քաշուել որ կորսուենք, հապա կը հաւատանք որ ձեռ հոգին փրկուի :

ԳԼ ԺԱ

Արդ հաւատքը յուսացուած բաներուն հաստատութիւնը - չերեցած բաններուն ապացոյցն է . 2 - Վասն զի անով առաջինները վկայութիւն ընդունեցին :

3 - Հաւատքով կ'իմանանք թէ աշխարհ Աստուծոյ խօսքովը հաստատուեցաւ, ու աներեւոյթ՝ բաներէն այս երեցածները եղան :

4 - Հաւատքով Աբէլ Վայելն աւելի ազէկ զո՞հ մտաւոց Աստուծոյ, որով վկայուեցաւ որդար ըլլալը . վասն զի իր պատարագներուն վրայ Աստուծո՞ւ վկայութիւն եղաւ էբէն . և անով, թէ պէտ մեռաւ, Բայց տակաւին կը խօսի :

5 - Հաւատքով Ենովք բեւեռ փոխադրուեցաւ որպէս զի մաշ չտեսնէ . ու Դեղձը չէր գանուեր, վասն զի Աստուած փոխադրելէն առաջ վկայուեցաւ թէ Աստուծոյ հաճելի էր : 6 - Իսոյց առանց հաւտաբի անհնար է Աստուծոյ հաճոյ ըլլալ . վասն զի ան որ Աստուծոյ կը մտանայ, պէտք է որ հաւատայ թէ Աստուծոյ կոյ, և թէ վարձահաստոյց կ'ըլլայ անանց օր զինք կը փնտռեն :

7 - Հաւատքով՝ Նոյ պատգամ' առնելով Աստուծոյ՝ գեռ չերեցած բաներուն համար , վախնալով քապանք շինեց իր տանը փրկելու համար, որով աշխարհս գառտպարտեց, և ժառանգաւոր եղաւ այն արգարութեանը որ հաւատքով կ'ըլլայ :

8 - Հաւատքով , երբ Աբրահամ կանչուեցաւ, մտիկ ըրաւ այն տեղը ելլելու, զոր ժառանգութիւն պիտի առնէր . և երա գնաց, ու չէր գիտեր թէ ո՛ւր կ'երթայ : 9 - Հաւատքով պան-

դըխացաւ աւետեաց երկրին մէջ որպէս թէ օտարութեան մէջ , և վրաններու մէջ ընակեցաւ Իսահակի ու Յակոբի հետ մէկտեղ, որոնք իրեն հետ ժառանգորդ էին նոյն խոտմուկներն . 10 - Վասն զի ինք կը սպասէր այն հիմերով հաստատուած քաղաքին, որուն ճարտարագետը ու արարիչը Աստուած է :

11 - Հաւատքով ինք Սառա ալ որդէնստեղծուեց սերմը առնելու զօրութիւն ընդունեց, և ատենը անցած՝ հասակի մէջ գաւաճ ծնաւ . վասն զի հաւատաբարձ սեպեց զանիկա որ խոտմուկը բերէր : 12 - Ուստի այն մեկէն ծնան, (այն ալ մեռածի պէս,) շատութեան կողմէ երկինքի աստղերուն պէս , ու ժողկեղբրը եղած աւաղին պէս առանց համարների :

13 - Ասանք ամենն ալ հաւատքով մեռան խոտմուկները չառած , հապա հեռուէն տեսան զանոնք ու *ողունեցին, և խոտովանեցան թէ իրենք օտարներ ու փոխառնութիւն են երկրի վրայ : 14 - Քանզի անոնք որ այսպիսի բաներ կը խօսին , յայտնի կ'ընեն թէ դառաւ մը կը փնտռեն : 15 - Եւ յիսուսի եթէ զանիկա յիշէին՝ ուրիշ որ էրան , ժամանակ ունեւին չոն դառնալու : 16 - Իսոյց հիմա լուսազոյն գաւաճ մը կը փայտարին, այսինքն երկնաւորին . ուստի ամբթ չտեպեր Աստուած անոնց Աստուածը ըսուել , վասն զի ինք անոնց քաղաք մը պատրաստեց :

17 - Հաւատքով Աբրահամ իր փորձուած ատենը Իսահակը պատրաստեց . և ան որ խոտմուկները առած են, էր մէկ հատիկ արգել կը մատուցանէր : 18 - Որու բուսեցաւ թէ Իսահակով քեզի սերունդ պիտի կոչուի : 19 - Քանզի զի մտածէր թէ Աստուած մեռելներէն ալ կարող է յարուցանել . ուրիշ օրինակով մը ընդունեց զանիկա :

20 - Հաւատքով Իսահակ զալու բաներուն համար Դաբեթընով՝ օրհնեց Յակոբը ու Իսուբը : 21 - Հաւատքով Յակոբ իր մեռնելու ատենը՝ Յովսէփի որդիներէն ամեն մէկը օրհնեց , և երկրպագութիւն րբաւ իր գաւազանին գլխուն վրայ : 22 - Հաւատքով Յովսէփ իր վախճանելու ատենը յիշեցուց Իսրայէլի որդիներուն Եֆեմարտէն :

*Ո՛րնչ, հաւատալով սղջունեցին :

Ելլելը, ու իր սակորներուն համար պատուէր տուաւ :

23 - Հաւատքով , երբ ծնաւ Մովսէս , իր ծնողներուն ձեռքով երեք ամիս գաղաւէկ պահուեցաւ . վասն զի աղան գեղեցիկ տեսան , ու չվախցան թագաւորին հրամանէն : 24 - Հաւատքով Մովսէս, երբ մեծցաւ, չընդունեց Փարաւոնի աղջկան որդի ըսուել . 25 - Քանզի ավելի ազէկ սեպեց Աստուծոյ ժողովուրդին հետ չարչարուել , քան թէ մեղքին ժամանակաւոր զուարճութիւնը վայելէլ : 26 - Եւ ավելի սեճ հարատուութիւն սեպեց Քրիստոսին նախասինքը՝ քան թէ Եղիպտոսի գանձերը . վասն զի գիտնալով կը սպասէր վարձքի հասուցումին : 27 - Հաւատքով Եղիպտոսը թողուց, ու չվախցաւ թագաւորին բարկութենէն . վասն զի համբերեց որպէս թէ Անտեսանելին կը տեսնէր : 28 - Հաւատքով ըրա զատիկը և արիւն սրակելը, որպէս զի անդամնիկները սատկեցնողը իրենց չդպչի :

29 - Հաւատքով Կարմիր ծովէն անցան որպէս թէ ցամաք . որուն փորձը ընելով Եղիպտացիները ընկղմեցան :

30 - Հաւատքով Երէքովի պարկապները ինկան եօթը օր անոնց բոլորաւք պարտուել :

31 - Հաւատքով Ռոստը պոռնիկը անհաւատներուն հետ չկորսուեցաւ , որ լրտեսները խաղաղութեամբ ընդունէր էր :

32 - Եւ ալ Ինչ՛ ըսեմ . վասն զի ժամանակը բաւական չէ որ պատմեմ Գեղեցիի ու Բարսիլի և Սամիսոնի ու Յեփթայի և Կաւիթիի ու Սամուելի և արէ մարգարէներուն համար : 33 - Որոնք հաղթեցին թագաւորութիւններու յաղթեցին, արգարութիւն գործեցին, խոտմուկներու հասան , աւելուծներու բերաններ գոցեցին , 34 - Կրակի զօրութիւն մարեցին , սուրբ բերնի աղաւտեցան , սկորութիւնն ու ժողցան , պատերազմի մէջ զօրաւոր եղան , օտարներու բնակները ցրուեցին , 35 - Այններ իրենց մեռելները ընդունեցին յարութիւն առած . ոմոնք չարչարուեցան և չընդունեցին ազատութիւնը, որպէս զի լուսազոյն յարութեան համարն : 36 - Ուրիշներ ալ նախտիքներու ու ձեճերու , նոն կապերու ու բնատերու փորձը առին : 37 - Քարկոսուեցան , սղջուեցան , փոր-

ձանքի մէջ ինկան, որով սպաննուելով մեռան, ոչխարի մորթ երով ու այծի մորթ երով պարտեցան, կարտուածիւն թաշելով, նեղը կիսով, չարչարուելով, 38 - (Որոնց արժանի չէր աշխարհս) անսպասներու ու լեւներու և պրերու ու երկրի խոտչներու մէջ մարտելով : 39 - Եւ ասոնք ամէնը հաւատարմով վկայուած խոտմուճքը չառին : 40 - Գանդի Աստուած մեղի համար աւելի աղէկ բան մը նախապատրաստեց, որպէս զի անոնք առանց մեղի չկատարուին :

ԳԼ ԺԲ

Աւստի մենք այ, որ այսօրով վկաներուն չազմութիւնը մեր բոլորովորդ պատած ունինք, ամէն ծանրութիւն մեր վրայէն մէկգի ձգենք, և Քրիստոսը պաշարող մեղքը, ու համբերութիւնով վաղենք մեր առջև դրուած ասպարէզի ընթացքը : 2 - Յիսուսի նախնիք, Քրիստոսային առաջնորդին ու կատարողին . որ այն ուրախութեանը համար որ իր առջև կեցած էր, խաչը յանձն առաւ, ամօթը արհամարհեց, ու Աստուծոյ ամօթին աջ կողմը նստաւ :

3 - Արդ միայն բերեք զանկիս, որ այսպէս համբերեց մեղաւորներուն խրեն զէմ հակառակ խոսելուն, որ չլլայ թէ ձեր անձով յոգնիք ու թուլնայ : 4 - Տակուին արիւն խաչելու չափ պտտեղակելով հակառակ չիցեցք մեղքին : 5 - Եւ մտցաք այն յորդորանքը որ ձեզի հետ կը խօսի որպէս թէ որդիներու հետ, Որդեակ իմ, Տերօջը խրատը մի անարգել, ու անկէ յանդիմանուելով մի թուշար : 6 - Վասն զի Տէրը իր սիրածը կը խրատէ, և կը ծեծէ ամէն որդին զոր կ'ընդունի : 7 - Եթէ խրատի համբերեք, Աստուած ձեզի հետ որպէս թէ որդիներու հետ կը վարուի . բանզի մը որդին է ան զոր հայրը չպատժեր : 8 - Իսկ եթէ դուք առանց խրատի ըլլաք, որու ամէնը մասնակից եղան, ուրեմն խորթ էք դուք ու ոչ թէ որդիներ : 9 - Կսե մեր մարմնաւոր հայրերը Քրիստոսին ունինք որով շնորհ չունինք : չէ որ այ աւելի պիտի հնազանդենք հոգիներուն չորր ու սարկինք : 10 - Վասն զի ասոնք քեչ օրեր Քրիստոսին

*Յ-ն. ամբը

իրենց հաճոյ երեցածին պէս, բայց անկա մեր օգուտին համար՝ որպէս զի իր սրբութեանը հաղորդ ըլլանք : 11 - Եւ յիշուի ամէն խրատ նոյն ասոնք ուրախարար չլծուի, հայտարարուած կան, բայց ետք արդարութեան խաղարար պտուղը կը հատուցանէ անով վարձուողներուն :

12 - Աստի թուցած ձեռքերը ստիկար ծունկերը հաստատեցէք : 13 - Եւ շիտակ ծամբաներ բրէք ձեր ոտքերուն, որ չլլայ թէ ան որ կառ է խոտորի, այլ մտնուանդ բժշկուի : 14 - Խաղաղութեան ետէէ եղէք ամէնուն հետ և սրբութեան, առանց որոյ մէկը պիտի չտեսնէ Տէրը : 15 - Զգուշացէք, չլլայ որ մէկը Աստուծոյ շնորհքին ետ մնայ : չլլայ որ դառնութեան արմատ մը վեր երևնայով չեչ նեղէ, ու անով շատերը պղծուի : 16 - Չլլայ որ մէկը պոռնիկ ըլլայ, կամ անտարբէր կտակ պէս, որ կերակուրի մը համար իր անկողնակութիւնը ծախսեց : 17 - Գանդի գրեւոր որ թէպէտ ետք ուղիք օրհնութիւնը ժողովուրդէ, Բայն մերձեցաւ : Վասն զի սպառնալով թեան տեղ չգտաւ հօրէ և այն, թէպէտե տրցունքով խնդրեց զանկիս :

18 - Վասն զի դուք մտեցած չէք չօշափելի լեռանը, որ կրակով կը վառուի, ոչ այլ մեղին և խաւարին ու մրկիկին, 19 - Եւ փողին հնչուելուն, ու խօսքերուն ձայնին, զոր լսողները աղաչեցին որ մէկմը այն խօսքը չըսուի իրենց : 20 - Վասն զի չէին կրնար տանիլ այն հրամանին, եթէ գողան մին ալ լեռանը գոչի պիտի բարեխօսի : 21 - Եւ այնպէս հազարի էր այն երեզլթը որ Մովսէս ըստ, Աստուծի կը վախնամ ու կը դողայ : 22 - Բայց դուք Սիոն լեռանը մտեցիք էք, ու կենդանի Աստուծոյ քաղաքին, երկնաւոր Երուսաղէմի, և ընդունաք հրեշտակներուն : 23 - Ու երկիրքը գրուած անդրանիկներուն հանդիսաւոր ժողովին ու եկեղեցիին, և Աստուծոյ որ ամէնուն Գառաւորն է, ու արգարներուն հոգիներուն՝ որոնք կատարուեք են, 24 - Եւ Յիսուսի որ նոր ուխտին միջնորդն է, ու սրբկուելու արիւնին՝ որ Արեւի բեռնի աւելի աղէկ կը խօսի :

*Կ-մ, գլորի +ՈՒ-ն+ Կ-տեւնէն, կամ նետով զարնուի

25 - Զգուշացէք, չլլայ որ մերժէք զանկիս որ չեչ կը խօսի . վասն զի եթէ անոնք երկրի վրայ Աստուծոյ պատգամները խօսող մերժելով չազատեցան, ու ընդիմաբար կ'ընէր իմէ երկիրքին խօսողներէս երես դարձնենք : 26 - Որուն ձայնը այն ասոնք երկիրը շարժեց, և հիմա խոտացել է ու կ'ընէ, Նորէն պիտի շարժուի, ոչ թէ միայն երկիրը, հայտարար երկիրքը : 27 - Եւ այն Նորէն Բաբել կը ցուցնէ շարժուած բաներուն յեղափոխութիւնը շինուած բաներու պէս, որպէս զի անշարժ բաները հաստատուած մնան : 28 - Աւստի անշարժ թագաւորութիւնը աւած ըլլալով մտնէ բաները այն շնորհքը, ուրով զԱստուած պաշտենք հաճոյական կերպով, ակնածութեամբ և բարեպաշտութեամբ : 29 - Վասն զի մեր Աստուածը մաշուց կրակ է :

ԳԼ ԺԳ

